ԻՍԱՅԻ.—Վհւնց չե գա, ամա մե անիծած գեղիդա յե ու-
նեցի ելի, վախինում իմ բանը չխարաբ անե. ուրիշ հանդն ե
խոսում, զահրումար ե ուղում. ասում ու ինչըու չիս բերե,
վուտն ել չիմ փոխիլ տա, կոսե, ու հիմի մնում ե ինձ տղի
տանը:

ԿԱՐԱՊԵՏ.—Տա, երեգ թե գեղիդին ել խոստացանք ու գե-
ղիդի մարթուն ել

ԻՍԱՅԻ.—Մեկն ել նուր լուս ննդավ, մե խիստ աշաղլար
իմքին ե:

ԿԱՐԱՊԵՏ.—Դե, գնա իրան տու, ինչ ուղում ե. ամա ել
մի ուշացնի, թե չե մե մամիդա ել ուրիշ կու լուս ննդնի: Ել
ետու համա մւր ոյիր գալի, հեր ոխնած:

ԻՍԱՅԻ.—Վահ, իսուն թումնեն մե գրոշ պակաս չե. ա-
նում:

ԿԱՐԱՊԵՏ.—Ե՞ս, գմիկի իս, թե հանաք իս անում:

ԻՍԱՅԻ.—Աստուձ գիղենա, զուրթ իմ ասում:

ԿԱՐԱՊԵՏ.—Աբա, յ'ես անմիդ խուն թուման կու գեն
զցիմ, խուրմա յի՞:

ԻՍԱՅԻ. — Զիս դեն զցի ու են տղեն չի զա:

ԿՈՐԱՊԵՏ. — (վախեցած) Ինչի՞:

ԻՍԱՅԻ. — Աստում վուչ գիդե են անիծած գեղիդի գլուխը, մերաշ ասավ թե Մարքրիտի սիրունութինը առջի իմանալս ե, կոսեւ:

ԿՈՐԱՊԵՏ. — (շիփոթված) Իժում:

ԻՍԱՅԻ. — Իժում ել ինչ, կինաղամ բանը մոշլա լեր ըլում, ասում իմ: Հայ դես, հայ դեն, վունցոր եւավ ելի աարքեցի:

ԿՈՐԱՊԵՏ. — (շունչ առնելով յեվ կիսածայն) Ուշի:

ԻՍԱՅԻ. — (շարունակելով) Հենց բոնե հոքիս ծալսեցի քուխաթիմ, իմ հոքին գիղենա, գեղիդին նշներով իմաց արի, վուք միթամ ինչ ուզում իս կու տանք, ու են աղին ասի անզճումը, թե գեղիդես խափում եւ Ախար, սիրունութինն ու զհճութինը հավնելւ վրա չե. թե կի տղեն մեկ հավնիլ ե ու ելի կու հավնի, մւմն ինչ դավի կա: Վիրչը, ինչ երգարացնիմ, գեղեն տուն տարավ տղին շուր հաջցնելու ու են անիծած գեղիդեն բաց ասավ ու չաման, եցավ, թե վիրչի գինը իսուն թուման ե, կոսե, թե չիս բերի, կոսե, դիմ մետի մոշլա կոնիմ, կոսե, յես գիդիմ վուր ուրիշ օմքին ե տեսի, կոսե: Հիմի ինչ խոսկ ունիս:

ԿՈՐԱՊԵՏ. — Ինչ... խոսկ ունիմ: Ի՞նչ... խոսկ... պիտի... ունենամ, ախպեր, տար սիվցու, ջանս դուս գա, պիտի համբըրիմ, ուրիշ ինչ չարա ունիմ. զնա վիկալ, ելախոտ կնդաս ձեռաց պահ տիլի:

ԻՍԱՅԻ. — Քի պես լավ մարթ աշխրքումը չի ըլի, Գարապիմ Յակուլիչ:

ԿՈՐԱՊԵՏ. — Դէ, զնա, ջալր աբա, Իսայի: Ուրիշ, գեղեն ինչ ե ասում տղինը:

ԻՍԱՅԻ. — Ուրիշ ինչ պիտի ասի, վունցոր քի մոդ խոսում եր, ելի ենենց և քսրողում տղին. ուրախու վուտի վրա չե կանզնում. ասում եւ ես՝ զագա փուղ ու բաժինը կուլի, կոսե:

ԿՈՐԱՊԵՏ. — Լավ կնիկ ե երեւմ, այ. ինձ շատ գուր եւ կավ:

ԻՍԱՅԻ. — Վահ, աստծու հոքի յե, ասում իմ:

ԿՈՐԱՊԵՏ. — Դէ, բաս չնւաս զնա, ամա ել տղիմեն չիսանաս, ինչուր չըերիս:

ԻՍԱՅԻ. — Ես սահաթիս եվես: (Շտապով զնում ե գեպի ծախս դուռը, հետո հետ ե դառնում:) Ամա, ինչ միտս եկավ,

Գարասիմ Յակուլիչ. խոմ զրմւատը գիդիս վոր են տղեն ուրիշ
ախչեկ յե տեսի. մվ գիդե, մեքաշ չխայտառակվի՛ք:
ԿԱՐԱՊԵՏ.—Աբա, քիմեն չիմ արմնում, իսայի՛, յես թա-
վաքալի բան կու կրոնիմ:
ԻՍԱՅԻ. — Ողորմի գու հորը, ես սահաթիս եվետ ընրիմ:
(Շտապով դուրս ե գնում ձախ դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԲ

ԿԱՐԱՊԵՏ, մենակ:

Հմ... զրուատ ճշնավուր ե ես իսային, աստուծ գիդենա,
իր հալալ միամտութենով... (կուռ անց ու դարձ ե անում:) Հիմի բանը վուր դուրթ բացվի... (Մտածմունքի մեջ ե ըն-
կըղմվում.) Զե, չե, ամեն բան լավ ունիմ սարքած... Ողունդ
մե նշանը տալ տամ ջեր, մնացածը իժում յես գիդիմ: (Դուրս
ե գնում աջ դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԳ

ԻՍԱՅԻ, ՆԱՏԱԼԻԱ

ԻՍԱՅԻ. — (շտապով դուրս գալով ձախ դռնից յեվ փո-
ղերը ծոցը դնելով:) Հա, հա, ես սահաթիս գալիս ինք,
ՆԱՏԱԼԻԱ. — (հետեւիլով իսայուն:) Ինչըու դուք կուզաք,
հոքին կու դուս գա խղճինը:

ԻՍԱՅԻ. — (շտապով) Երանի մեր գլուխ գա բանը, կես սը-
հաթ ուշ ըլի, ի՞նչ հաջաթ, Ամա, Նատալիա... (Բոնելով ծեռքը
առաջ ե բնրում) բեղամաղ մի ըլի, ինձ կու սիրիս, ելի իմ
հարցնում... Ծովի տալղի պես գնում ու գալիս ե մտկումս...
Խո զրմւատը գիդիս վուր երեկ ոչով տղա չե ռաստ եկի քիզ
հստի դռանը:

ՆԱՏԱԼԻԱ. — Ի՞նչ երազ իս տեսի, չիմ գիդի, թե վուր ասի՞
չե՞, քմնի հարցնիս:

ԻՍԱՅԻ. — Քու արիվը՝

ՆԱՏԱԼԻԱ. — Իմ արիվը, քա. չիս ավտոմամ:

ԻՍԱՅԻ. — (աջ ու ձախ նայելով գրկում ե Նատալիային:) լո՞հ, քնու հոքուն մեռնիմ, քու հնքուն: (Պինդ համբուրում ե
յեվ շտապով գնում:)

ՆԱՏԱԼԻԱՆ.—(բռնելով իսայուն։) Իմքին բան կմ. Բնչ իս
թաքցնում։

ԻՍԱՅԻ. — Իժում, իժում, ետ իժում, հիմի շտապում իմ...
(Մի քանի քայլ գնում ե։) Ինչըու դուն փիքը արա՝ են
հանգի լավը՝ ուրիշ ելի Բնչ գուղիս սրտով, առնիմ քիզ համաւ
(Վրա ընկնելով.) Ճիրի մե շենի, աղունակ։ (Կրկին համբու-
ղելով.) Ընմա։ (Կուրս ե վազում խորքի դռնից։)

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆԱՏԱԼԻԱՆ, մենակ

Ես Բնչ խարար ե. (Զեռքը ճակստին տանելով, մնում ե
անշարժ, մտածմունքի մեջ խորասուզված, Պատկեր։)

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆԻ

ՏԵՍԱՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում ե Կարապետի տան դավիթը։ Խորքում, ձախ կրողմը,
պարտեզ, խսկ աջ կողմը՝ տունը, վորի սաստիկ լուսավորված պատուհան-
ները գետնից բավական բարձր են. Գալիթում—աջ կողմը սրահ՝ կողպած
փոքրիկ պատուհանով առաջին կարգում և նույնպես կողպած դռնով յերկ-
ըորդ կարգում։ Այս սրահը այնպես ե զուրս դրած կուիները առջև. զոր
նրա պատուհանից, վոր գտնյում ե հանգըստականների դիմաց, անհնարին ե
տան պատուհանները տեսներ. Զախ կողմը, առաջին կարգում, մեծ ծառ, խսկ
յերկրողում գավթի դուռը, վորը յերկու փեղկերն ել վորոշ կերպով բոլորո-
վին բաց են մսում մինչև վերջը։ Ծառի յետերից յերկնքում փայում ե
յուսինը, վոր լուսավորում ե պարտեղի մեկ մասը։ Գալիթումը բավականին
ճռիքն ե.

ՏԵՍԻԼ Ա.

ԱԱՐԴԻԱՆ, մենակ. ավելը ծեռքին յերգելով մանում ե
գալիթի դռնից։

«Արագ զբաղվնուա յամ, լամո,
ՀԶեշմել չըրազնուա յամ. (Կրկնել.)

«Իթիրմիշամ յարըմի, լամո,
«Անուն սորադընդա յամ: (Կրկնել)

«Լամո, լամո, խան լամո, լամո,
«Սարզի սուսան ջան, լամո,
«Յարի վաֆադար, լամո,
«Ո բոյա՝ ղուրբան, լամո»: *)

(Ավելը մի կողմն ե ղնում.)

Ես ել պրծմավ... Դիփի հագիր ե. մնացիլ ե հիմի վուր նոռ
բափեսեն շնուր բերե ու հրեղեն Մարքրիտին պոսչոի անե-
ամա են սրտանց պաչ անելիս պոսչներուն վուր մե քիչ սիպ-
տըկադեղ կաչի, յես միդ չունենամ... Հաջաթ չե, կանքու կու
գիղենա, մայինց նշուանտեք ե ու նշուանտեք... Ահ, հա, հա,
հա, ջանդան բեզար ելա ևսոր շատ բան շնելեն: Հայ՝ ղեսը
գնա, ղենը գնա, ես տար, են րի, ես վիկալ, են վիր դի...
Դրուստ ցավ ե զուլուզ անիլն ելի՛... Երնեկ նոքարն բնչ ստեղ-
ծելու էնը, վուր ստեղծում եր աստուձ... Աւմ տանն ինչ պա-
տահի, նոքրի ջանը պիտի զուս զա. աղեքն ուրախանան՝ դռն
չարչըրվի, աղերը տիրին ելի գնւն չարչըրվի, դիմ չարչըրվի
ու չարչըրվի մե զլւկի... Եհ, աստուձ, բարեմց ստեղծում եիր
ու ստեղծում, դիփունին մետի պարուն կու ստեղծեցիր մերաշ
ու պրեծնեյի մե, ե... Վախտ ու բելախտ (Կարապետի ծայ-
նով.)—Մարքիս (եր ձայնով.)—Համմե:

ՏԵՍԻԼ Բ

ՍԱՐԳԻՍ, ԿԱՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ.—(ղուրս զալով ազ կողմից, կանչում եւ) Տհ,
Մարքիս:

*) Թուրքելեն եւ:

Արաքսի ափերումն եմ, հոդյակ
Աշքերիդ բոցերուսն եմ. (Կրկնել)
Կորցը լս սիրունուս, հոդյակ,
Նըրան վորանելումն եմ. (Կրկնել)
Հողյակ, հողյակ, խան, հոդյակ, հոդյակ,
Քալար ջուշան ջան, հո յակ.
Սիրույդ մաերմ, հոդյակ,
Հասակիդ մատաղ, հոդյակ:

ԱԱՐԳԻՍ. — (գոռալով.) Համեմետ:

ԿԱՐԱՊԵՏ. — (հանգիստ) Ի՞նչ իս զռում, տո, վճրթենն իտ:

ԱԱՐԳԻՍ. — Եսուի իմ, աղա ջան:

ԿԱՐԱՊԵՏ. — Տն, իսային խոմ չե եկի ելի:

ԱԱՐԳԻՍ. — Զե, աղա, չե եկի:

ԿԱՐԱՊԵՏ. — (նեղացած.) Լորի յե գըււստ հն մարթն, ելի
(կություն) Մարթ ինչ բան ունենա, նրան պահ ուա (Բար-
կած ման ե գալիս:)

ՏԵՍԻԼ, Գ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ

ԻՍԱՅԻ. — (ներս վազելով զավթի դռնից, կանչում եւ) Դժբիս, Սարքիս, տո, Սարքիս... Ի՞ւր ե կորի ևն անիծածը:

ԱԱՐԳԻՍ. — Ի՞նչ ե, աղա, ի՞նչ:

ԻՍԱՅԻ. — Տն, են տղին խոմ եսուի չե:

ԱԱՐԳԻՍ. — Ի՞նչ տղա:

ԻՍԱՅԻ. — Այ, միր փեսացուն:

ԱԱՐԳԻՍ. — Ռանզն ել չիմ տեսի:

ԻՍԱՅԻ. — Վայ մե, ի՞նչ անիմ հիմի. բաս իսկի ոչով չե եկի ուտի:

ԱԱՐԳԻՍ. — Զե, ասում իմ՝ վուր ոչով չե եկի:

ԻՍԱՅԻ. — Վարթենը ննդնիմ հիմի, ի՞նչ անիմ, ի՞նչ ասիմ կարապիտին, սաղսաղ կուտե ինձ, թոխլո ձուի պես կու խպըշ-
տ, վմւրդի գթնիմ, մւր գնամ, վմւրթենը գնամ, վմւր ջուրը
ննդնիմ, վմւր սարը կորչիմ... կուլի ելի տանը գթնիմ: (Կամե-
նում ե գնալը)

ԿԱՐԱՊԵՏ. — (բռնելով իսայուն) Մուլափ, մուլափ հալա,
բնու իս տում:

ԻՍԱՅԻ. — (կակազելով) Վը վը վը վունչիչ: (Մարգիսը քըր-
քիցը պահելով մի կողմն ե քաշվում:)

ԿԱՐԱՊԵՏ. — Հը, բերնումդ թիքա ունիս. յ'ես թե քեզ
ասի վուր են տղեմեն չհրոանաս:

ԻՍԱՅԻ. — Տանը տեսա ու հիուացա:

ԿԱՐԱՊԵՏ. — Բաս տանը չե, ի՞նչ ե ելի:

ԻՍԱՅԻ. — Վուր գիգենամ, խո ել սարեսար չիմ ննդնի:

ԿԱՐԱՊԵՏ. — Ախար, տեսնում իմ վուր շնորհը չունիս, ե

ԻՍԱՅԻ.—Յ'ես ինչ անիմ, Գարասիմ Յակովիչ. գնացի հաւալ միաժիտ, վուր ասիմ ջնուր բերե. ամա ինչըու իմ գնալը, չիմ զիդի թե թաղա ինչ միտկ և անց կենում են տղի դլխումը, գդակը վիր և կանում ու հայդա... Շատ գես ու դեն ննզա, չպթա. հիմի կի դեղիքեն ուսու եկալ ճամփին, ասավ վուր իր քվիր տղին եսոի յև եկի միթամ, ամա մեր եւ:

ԿԱՐԱՊԵՏ.—Խժում փուղն ինչ արիր

ԻՍԱՅԻ.—Փուղն ել են անիծած դեղիդեն առավ ձեռնեմես, դեմուղեմը եսոի յեր վաղում: Դիմ մետի ես սահաթիս եվետ քար ու քանդ կոնիմ, թե չիս տվի, կոսե. չարես ինչ եր:

ԿԱՐԱՊԵՏ.—(Քարկացած) Ա՛սած ե ախար, ե՛, իսայի, թե դիի շինքն ենդուր ե հաստ, վուր իր բանը իր ձեռով ե շինում: Յ'ես վուր քի վրա չեյի գցի ես բանը, ինչըու հիմի նշանը տված ել իր ու պոծած ել:

ԻՍԱՅԻ.—Ախար, ինձ վրա անմիղ իս չարանում, Գարասիմ Յակուլիչ, յ՛ես ինչ անիմ:

ԿԱՐԱՊԵՏ.—Են անիս, վուր եղ դեղիդեն ելախտ վուր զմհրումաքն ուղից, պիտի զունցոր ելիլ եր ավատացըիլ ելիր վուր կու տանք, ել ինձ մոդ մեր եյիր վաղում, մեր. վախենում եւ յիր վուր չեյի տվի:

ԻՍԱՅԻ.—Գանա լսից ինձ են անիծածը... Նրա անումը կտրե սսուռէ:

ԿԱՐԱՊԵՏ.—Մե խոսկով չեյիր պիտի ելախտ եկի, չե: Զիս զիդի՞ վուր նշնելու տղեն խամ թոչունք ե՛. մ.ր ելիր հիռանում, ուր, չեղ իմ հարցնում: (Քարկացած ման ե զալիս):

ԻՍԱՅԻ.—Բաս հիմի ինչ անիմ:

ԿԱՐԱՊԵՏ.—(առանձին) Այ, զահըումար անիս զլխիտ: (Իսայուն) Տե, ել ինչ իս ետի ցից ելի. զնա վուրդի վուր րվի զթի ու բի, թե չե միր մեջը չալեն կտրած ե, աստուծ զիդենա: ԻՍԱՅԻ.—Այս, Գիորդի ջան, ձեռնեմես թուր, ելի: (Դուրս ե զնում զավթի դոնից:)

ԿԱՐԱՊԵՏ.—(ձեռը թոթափելով յեվ առանձին) Քու ձարթ ասողին ել ինչ ասիմ: (Քարկացած դուրս ե գնում աչ կողմից:)

ՏԵՍԻԼ Դ

ԱԱՐԳԻՍ, մենակ

Զեռնեմես թուր, կոսե: Վահ, մկռալ ե, թե աղունակ... Թային սապոժնիկը բան ե՝ ասի են տղին ու նա յել թախ ե

կացին Խիղճ Մարքրիտ, բախտը չի կտրում, ինչ անիս: (Դուրս
ե զնում ազ կողմից)

ՏԵՍԻԼԵ

ԻՍԱՅԻ, ԳԵՈՐԳ

ԻՍԱՅԻ.—(զավթի դռան մեջ) Ախար, ես ինչեւ իս ա-
սում, Գիորդի ջան մարթ խափիմ ու են ել քիշ... Ըստենց իս
ճանչնում ինձ:

ԳԵՈՐԳ.—(նույն դռանը) Ուրեմն ինչի՞ փախար, ինչի՞
չսպասեցիր ինձ, ինչ առևտուր սարքեցիր մորաքրոջս հետ...
(Մանելով գավիթը խայուն մի քանի քայլ առաջ երերում
յել ցածր ծայնով) Այս կողմն արի, մարդիկ են անցնում...
ի՞նչ են շանակում այս բոլորը:

ԻՍԱՅԻ.—Վուր ել ձեռք չվիկալավ են ոխնած հոքին...

ԳԵՈՐԳ.—(զգուշացնելով) Կամաց... (խոսակցությունը շա-
րունակվում ե ցածր ծայնով):

ԻՍԱՅԻ.—ՅՇ ել ինչ եյի արի. եկա վուր Գարասիմ Յա-
կուլիչին հարցնիմ... ետ հանդի կնիկ գանա ելի ստիղծվիլ ե
աշխրքումը. անմըրթի իմ, քունը գեղիդա յեւ: (Առանձին) Ա՛յ,
նրա վիզը կոտրե աստուծ:

ԳԵՈՐԳ.—Ինչի՞ ինձ չարցրիր, ինձ, յեթե դու դրուստ
մարդ ես, ինչի՞... Բայց ձեղ հետ ինչ խոսի մարդ... Դու գնա
իսկույն Գարասիմ Յակուլիչից ներողություն խնդրիր իմ կող-
մանե. ասա, վոր այս գիշեր չկարողացա, բան պատահեցավ, ա-
սա. մեկ խոսքով՝ ինչ կամենաս հնարին, իսկ եգուց յես ինքս
բոլորը կապարզեմ....

ԻՍԱՅԻ.—Հանաքի վուխտը չե, Գիորդի ջան, ե՛:

ԳԵՈՐԳ.—Գնա, գնա... (կամենում ե զնալ)

ԻՍԱՅԻ.—(ծեռ քը բոնում ե) Ախար, ես խո քարուքանդ
ելավ դիփ. արի դիփիր գնանք, թե քու հոր գերեզմանը կու-
սիրիս. ելի թաղա բանիր մի մողոնի, ե՛:

ԳԵՈՐԳ.—(ազատվելով խայու ծեռքից) Զե, չե: (Խսա-
յուն առաջ բերելով) Այստեղ մեկ բան կա... իմ տեսածը Մարգ-
րիտը չե:

ԻՍԱՅԻ.—Վա... Արի, ախապեր, քու աճկով տիս սուտն ու
դուրթը:

ԳԵՐԱԳ. — Եղուց, եկուց: (Մի քանի քայլ գնում ե յեզ
տեսնելով Նատալիային սենյակումը պատուհանների մոտ
անցնելիս.) Ա՛հ, սա յեր, նա, Իսայի, կարծեմ նա յեր, (Նայում
ե պատուհաններին.)

ԻՍԱՅԻ. — (Նկատելով Նատալիային անհետանալիս յեզ
առանձին:) Վա, ես նա յեր... (Նայելով պատուհաններին.) Ել
ոչով չկա... (Գերգին, շվարված.) Մաւագի, սա լափ, լավ բան
միտս եկավ, յես ես նմուտիս ելետ Մարքրիտին քիզ շանց
տամ հենց ես ակոշկումը:

ԳԵՐԱԳ. — Ի՞՞նչպես:

ԻՍԱՅԻ. — Ե՞ս մե դիվիր գնամ, դուն ինչըու յետնցներումը
ման արի: (Գնալով.) Հենց ես նմուտիս եվետ:

ԳԵՐԱԳ. — Կաց, կաց:

ԻՍԱՅԻ. — Սնէ, վուր Փիլիսոփի խիլք իմ ունեցիր Մի վա-
խենա, ես դանիրն ինչըու կես դիվիրն եսենց բաց ե... (Վազում
ե դեպի աջ յեվ հետ ե դառնում:) Թու քու տեսածը չե, ախ-
պիր, թեգուղ ել բարի լուս մի տա ինձ հորեսի զինը: (Դուրս
ե վազում աջ կողմից:)

ԳԵՐԱԳ. — (Մենակ, փոքր լուսությունից հետո:) Գոնչա վեր-
ջապես բոլոր կասկածներս կփարատին... Բայց վուրի ձայն ե
լովում... (Դուրս ե գնում գավթի դռնից:)

ՏԵՍԻԼ Զ

ԿԱՐԱՊԵՏ, ԻՍԱՅԻ, վուրս են գալիս աջ կողմից:

ԿԱՐԱՊԵՏ. — Հը, ելի իմքին կա:

ԻՍԱՅԻ. — (Հշնջելով.) Սնէ, սնէ, Գարասիմ Յակուլիչ, ես
աղեն եստի յեւ Արա, վհանց անինք վուր եղ Մարքրիտին եստի
ակոշկումը դուս բերինք. Թող մեկ ելի տեսնե, չե ավառմ
վուր իր տեսածը Մարքրիտն ըլի:

ԿԱՐԱՊԵՏ. — (Նույնպես.) Ի՞նչ իս ասում, Իսայի, գովիլ
Բա: (Խոսակցությունը շարունակվում ե Հշնջելով:)

ԻՍԱՅԻ. — Աստուծ գիգենա, առանց ես չի ըլի:

ԿԱՐԱՊԵՏ. — Տն, թող տուն գա, ենդի վունցոր ուզենա
տեսնե:

ԻՍԱՅԻ. — Զի ըլի, ասում իմ, սիրտը խիստ ին խարաբ ա-
րի, դեհ, չնւստ, թե չե ելի ձեռնեմես կիհա:

ԿԱՐԱՊԵՏ.—(շփոթված) Հըմ... հըմ... հըմ... արա, վժենց
անինք. քիզ վուր տեսնին, ուփրո խիալ կու տանին... (Բար-
կացած.) Այս, իսակի:

ԻՄԱՅԻՆ.—Վա, յ'ես եստի կու մնամ:

ԿԱՐԱՊԵՏ.—Զե, չն... հա, լավ, լավ... Դուն եստի թախ
կացի, են աղեն չտեսնե քիզ, գնամ յ'ես սարքիմ. այ, եստի
սարայումը կաց, (տանում և իսայուն դեպի սրահը յեվ դուռը
բաց անում) վուտդ դրոշկին չխփիս: (Ներս մզելով իսայուն,
նշաններով զգուշացնում եւ նրան ձայն չհանել)

ԻՄԱՅԻՆ.—Լավ, լավ: (Մտնում եւ սրահը:)

ՏԵՍԻԼ Ե

ԿԱՐԱՊԵՏ, մենակ, սրահի դուռը փակում եւ իսայու
վրա, հետո յերկաթե փականով դուռը կողպում:

Նախաթ քի, չար սատանա... Զիր արիքը, իմ դամբի թի-
մբը սեկն երկուսով ավելցավ. գնամ սիմիր, Նատալիին հստեց-
նիմ, մե խաղ ել տսեցնուլ տամ, (խողալով) խելքեսեն կուզի
պարուն փեսացուս: (Գաղտագողի դուրս եւ գնում աջ կողմից:)

ՏԵՍԻԼ Ը

ԼՈՒՌ ՏԵՍԱՐԱՆ

ԳԵՐԻՐԻ, մենակ, մտնում եւ գավթի գոնից, ծածուկ նա-
յում եւ այս յեվ այն պատռեանին. բայց հանկարծ, վոտի
ձայն լսելով՝ դուրս եւ գնում նույն գոնից:

ՏԵՍԻԼ Թ

ՍԱՐԳԻՍ, մենակ, դուրս եւ գալիս աջ կողմից:

Ես ել քիզ նշուանտեք... Մենամ վուր բանն ել գլուխ չե
գալիք, թե չե մւր եւ են աղեն, ինչի՞ չե համեցոք ըլում..., Խեղճ
Մարքրիտի սիրաց կի ենդի գնում ու գալիս ե. իժում ավ-
տաս ինչ ումիկ ուներ, և... Փառ, զառաթ, ինչ ասիմ քիրա... Ա՛վ
սուտ իմ ամագ.... Հիմի վիկալ ու իմ շինած ու սարքած բանիրը
հիդ ելի իմ ձեռքով քամբ ու քանդ արա... Վաւր տառմ իմ, չի

ըլի, ախտր, Ե. ելի իմ միջկի զոլը պիտի կտրվի... Մե քանի
մանեթ բախչիցի ումիկ ունեյր, են ել փուստ ելա: (Ճուցա-
մատը ճակատին քսելով) Ի՞նչ գրած ե ևստի, գրած ե... Ե՛ս
են ել ձիր չարը տանե: (Թառ ածելու ծայն ե լավում: Սենյա-
կի պատուհաններում յերեվում են Նատալիան յեվ Կարա-
պետը. Նատալիան նստում ե միջի պատուհանի մոտ, իսկ
Կարապետը շուտով հեռանում ե.) Մու հալա... Հա, ես միր
դուքնի աշկիրտն ե թառ ածում. հալբաթ Մարգրիտին ուզում
ին իստիլաթ շանց տա:

ՏԵՍԻԼ Ժ

ՆԱՏԱԼԻԱ, սենյակում պատուհանի մոտ նստած, ԳԵՐՐԴ, ԿԱ-
ՐԱՊԵՏ, ՍԱՐԳԻՒՄ, գալվթում, ԻՍԱՅԻ, առաջ սրահի պատու-
հանում, հետո գալվթում:

ՆԱՏԱԼԻԱ.—(թառի ներդաշնակությամբ յերդում ե ա-
ռանց ընդհատելու մինչեվ վերը. իսկ մյուս գործող անձիք
խօսում են միայն այն ժամանակ, յերբ Նատալիան շունչ ե
առնում: Փակագծում նշանակած հայու յեվ Կարապետի խո-
սակցությունը վոչ միայն շշնչելով ե կատարվում, այլ ար-
տահայտվում ե նայեվ շարժված քներով:)

Այս, ի՞մ սիրեկան, ինձմեն նիռացար,

ՍԱՐԳԻՒՄ.—(ցածր ծայնով:) Ես ո՞վ ե:

ՆԱՏԱԼԻԱ.—(շրունակում ե յերգել:)

Քիզ ի՞նչ զեր արի, վուր ինձ ուրացար.

Վիրշը թէ ես եւ ել ո՞ւր մող կացար,

Քու սրի սերը ինձ ուր խոսացար:

ՍԱՐԳԻՒՄ.—(զմայլված յեվ դարձյալ ցածր ծայնով:) Վո-
խմկ,

(Կարապետը կամաց-կամաց դուրս ե գալիս աջ կողմից,
սրահի դռան փականը շոշափում ե, հետո սրահի մոտ կուչ ե
գալիս. Մարգիսն ապշած, ծածկվում ե ծառի տակ յեվ այն-
տեղից հետաքրքրությաւը հետեւելով բոլոր անցքին, հետըզ-
հետեւ զարմանք ե ցույց տալիս: Իսային սրահի դուռը ներ-

սից կամաց շարժում ե. Կարապետը, շփոթվելով, կրկին շբ-
շափում ե դռան փականը.)

ՆԱՏԱԼԻՅ. — (շարունակելով, յերգում ե յերկրորդ տունը.)

Սուր Եւսիս Եփաք սրտի խփեցիր,
Քու սիրու կրակը շանս զցեցիր.

ԳԵՂԻՐԴ. — (դարձյալ մտնելով գալթի դռնից յնվ ցածր
ճայնով.) Այս ձայնը...

(Իսային սրահի պատուհանը բաց ե անում, զլուխը դուրս
բերում յեվ զարմացած ականջ ե դնում, բայց Նատալիաին չե
կարողանում տեսնել:

ՆԱՏԱԼԻՅ. — (շարունակում ե յերգել:

Սրտի յարերուն մնամ շխեցիր,
Երած ու խուլած մտես զցեցիր:

ԳԵՂԻՐԴ. — (տեսնելով Նատալիային, ցածր ճայնով.) Նու
յեւ:

(Իսային ապշած յերեսը խաչ ե հանում:)

ԿԱՐԱՊԵՏ. — (տեսնելով Իսայուն, սաստիկ շփոթվում ե,
բարկանում յեվ շշնջում, առանձին:) Սատանականց սա ել ես-
տի յե դուս բերի գլուխոր: (Մոտենում ե նրան:)

ՆԱՏԱԼԻՅ. — (շարունակելով, յերգում ե յերրորդ տունը:)

Արի, սիրեկան, ինձ մե ռանմ արա,

ԿԱՐԱՊԵՏ. — (Իսայուն, շշնջելով:) Մարքրիտին նստեցը
ակոշկումն ու խաղ ել իմ ասեցնիլ տալի:

ՄԻԱՍԻՆ

ՆԱՏԱԼԻՅ. — (շարունակում ե յերգը:)

Եւեսը մի ուր տա, մեկ մտիկ արա.

ԻՍԱՅԻ. — (շշնջելով յեվ շարժվածքով.) [Մարիկ Բ. ինձ Նա-
տալիի ձենք թվաց:]

ԿԱՐԱՊԵՏ. — (նույնպես:) [Ի՞նչ իս սարսադ դուս տալի:]

(Կարապետը, վախենալով վոր Իսային չլսե Նատալիայի
ճայնը, վարպետությամբ մոտ ե քաշում նրա զլուխը յեվ,
մեկ ականջում փափալով, մյուս ականջը ձեռքով ծածկում ե:
Քեռզը զմայլվում ե.)

ՆԱՏԱԼԻԱ. — (շարունակում եւ յերգը:)

Խղճան բու դուլին, մես անզան արա,

ԻՍՈՅԻ. — (ցածրածայն:) Դոչաղ Մարքրիտ:

ԿԱՐԱՊԵՏ. — (Խսայու բերանը ծածկելով:) Սնւ...

ՆԱՏԱԼԻԱ. — (շարունակում եւ յերգը:)

Քու խաղը ձենին ինձ մաժան առաւ:

(Գնորդը հիացած առաջ եւ զալիս յեվ նորից մոտենում եւ պատուհանին:)

ՆԱՏԱԼԻԱ. — (վեր կենալով, կրկնում եւ:)

Քու խաղը ձենին մեկ արժան արա *):

(Պատուհանից հեռանում եւ Դադարում եւ թառը, Կարապետը սրահի դուռը բաց եւ անում:)

ԳԵՐԲԹ. — (ցածր ձայնով կանչում եւ:) Իսայի, Խսայի... (Հափշտակիված այս յեվ այն կողմն եւ ընկնում:) Ալս, թնչ յեղավ... (Անհետանում եւ:)

ԿԱՐԱՊԵՏ. — (Խսայուն, սրահի դուան մոտ, շշնչելով:) Արա, Խսայի ջան, հրմի դուն գիղիս:

ԻՍՈՅԻ. — (Հանդիպում եւ Սարգսին յեվ գրկելով նրան, շշնջում եւ:) Արա, Դիորդի ջան, հրմի...

ԱԱՐԳԻԱ. — Վայ մե, դեղիտ:

ԻՍՈՅԻ. — (հետ մըկելով Սարգսին:) Տն, անիծած, վեսին գիղեյի: (Կանչում եւ:) Գիրարդի ջան, Գիրարդի:

ԳԵՐԲԹ. — (առաջ զալով:) Ալս, Խսայի ջան, դժւ յես:

ԻՍՈՅԻ. — Բաս ալ կուլի... Հը, սիրտգ տիղն եկմավ. քու խաթիր խաղ ել ասիցնիլ տվի, այ. վմւնց եր:

ԳԵՐԲԹ. — Հիանալի, հիանալի, Խսայի ջան: Հիմա արի վերե գնանք:

ԿԱՐԱՊԵՏ. — (առանձին, ցածր ձայնով:) Հիմի հոքին ձեռիս է: (Գաղտազողի դուրս եւ զնում աջ կողմից:)

*) Այս յերգի շարունակությունն ու պերը՝

Թե աղանջախ դուն չիս իմանա,

Եւ եսենց կինքին յ'ես փմ դիմանա.

Գլուխս կու սպանիմ, ասուձ զիղենա,

Կուլի եւ սեր սրես վիրանա:

ԻՍԱՅԻ.—(Գեորգի ծեռքը բռնելով:) Արի, Գեորգին ջան,
արի (Տանում եղեալի ազ կողմը:)

ԳԵՈՐԳԻ.—(ազատվելով իսայու ծեռքից:) Զե, չե, հյուրեւ
րի ճանապարհով, իւայի: Գնում եղեալի ծախ:

ԻՍԱՅԻ.—(Գեորգի վեշը բռնելով:) Լավ, լավ! (Դուքս են
գնում գավթի դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԱ

ՍԱՐԳԻՍ, մենակ:

**ԵՇԵՆց ել ուին: (Ներկայացնելով ծեռնածու սլախկին
կապիկ խաղացնելիս:)**

«Փասլի բընալ,
«Սուրաթի չար,
«Չեշմի խուսալ,
«Լալի նըգաւար,
«Կողե շարար
«Բար զիլի զալ»
կըրը...

(Պարսկերեն ե:—

Գարնան ժամեր,
Անուշ պատկեր,
Խումար աշեր,
Կարսիր թակը
Սրբու նետոր
Սըտս ես ցցել):

Դուքս ել վազում ազ կողմից: Վարագույրն իշնում եւ:)

ԱՐԱՐՎԱԾ ԶՈՐՌՈՐԴ

Ամենաշքեղ դհիմ կարազեափ տանը՝ թանկադին կահ. կօրասիքով
զարդարած: Աչ, ձախ և խորքում դաներ: Դահիճին հատսկը մբողջապես ծած-
կած ե գորդով տաստաղ ց կախում ե քեզ ջահ վամ սոմերով: Զախ կողմը՝
բազմոց սեղանով և բազկաթոռներով, իսկ աշ կողմը՝ փոթուկ սեղան յերկո-

աթոռով. Աջ ու ձախ մեծ հայելիք և փոսկեղոծ կանդելաբրներ նույնպես վառ մոմերով, Առըզում՝ աթոռներ, դաշնամուր իր բոյրակ աթոռով և ժամառ ցուց, զորի սլաքները ցուց են տալիս ժամը ութը: Սեղանները ծածկած են գունավոր սփոցներով և դռները նույնպիսի դրապրիներով: Տեղ-տեղ ծաղկելու, Փառացույցը բանում են:

ՏԵՍԻԼՈՒ

ԳԵՂՐԴ. ԻՍԱՅԻ. մտնում են դիմացի դռնից:

ԻՍԱՅԻ.—Բաս ետենց համվնում իս, Ալի, Գիորգի ջան:

ԳԵՂՐԴ.—Անսման ե, Իսայի ջան, անսման:

ԻՍԱՅԻ.—Տհ, վուր ետենց ի ու ետենց, եսոր եվետ քննւթահ արա ու պրծի, Ալի, Ել լինչ իս ջանջլացնում:

ԳԵՂՐԴ.—Այս, Իսայի, ի սեր աստուծո, նորից մի սէսիր, յես իմ գործը գիտեմ... Դու միայն ծանոթացրաւ, ծանոթացրաւ շուտով:

ԻՍԱՅԻ.—Այ, Ես սահաթիս, Գիորգի ջան, ամա, քու արիվը, ես գիշեր եվետ վուր նշանը տաս ու վիրչացնիս, խիստ լավ կոնիս:

ԳԵՂՐԴ.—Նշանը, նշանը... դեռ թնդ մեկ ծանոթանաք, խոսենք, ասում եմ, նշանը մուր կերթա. այսոր չլինի, վաղը լինի, լինչ կա... գնա, գնա իմաց առւր, վոր այստեղ ենք:

ԻՍԱՅԻ—Ինչ քու աւածին իս, տո... Ո՛հ, հա, հա, հանց գիտի մետի պիտի քու խոսկն ըլի (Գիորգը ժպտում եւ) Հա, ծիծաղի, սհւտ իմ ասում... Այ, ալսպեր. ջեր ասիր՝ թե ինչ ըու չղնակոմանամ, վուտս ել չիմ տուն գնի, կոսե, ու ենենց բերիր բանը, վուր Գարասիմ Յակուլչին իր վուտով բերիր քու տուն, իժում ասրը, թե իմ տեսածը Մարգրիտը չե, կոսե, ու, փառք աստձու, վուր եստումն ել պարզերս դուս եկա քի սոդ մեկ ել տեսնիմ կանգնեցար, թե ջեր ան դարփա կտրեմեն ել պիտի տողդիմ, կոսե, վիկալ հիմի ու խիզճ ախչկան կտուրն ել դիվիր տար քու խաթիր:

ԳԵՂՐԴ.—(ժպտալով:) Մի վախենաը, Իսայի, հիմա գործը իր կարգին կերթա:

ԻՍԱՅԻ.—Զե, դուն ինձ ասա՞ վնանց իս մաշուր անում. բանը խոռ գլուխ գալու յե...

ԳԵՐՈՐԴԻ. — Ի հարկե, յեթե այսպես կերթա գործը, այստեղ
եւ ի՞նչ կասկած կարող եւ լինել:

ԻՍԱՅԻ. — Վոչինչ չիմ ուղի, ախազեր, ամազս աժենա ու մե
երկուսիտ մետի կուռը կռանը դցած տեսնիմ ձիղ բոլթա տա-
լիս... Հայ թե կու խիթարվիմ մրեներուտ. 'Պիրամալա կու
կանգնիմ ուրախու, աստուծ գիդենա:

ԳԵՐՈՐԴԻ. — Շուտով, շուտով, իսայի ջան, շատ կարելի յէ
վոր շուտով տեսնես այդ ուրախությունը:

ԻՍԱՅԻ. — Բաս դառավ վուր իմը փեսա կու դառնաս մերաշ,
ելի, Գիրդի ջան:

ԳԵՐՈՐԴԻ. — Այն ժամանակ փեսա յել, աղքական եւ իսայի
ջան իմ ցանկությունն ել այդ եւ:

ԻՍԱՅԻ. — (փաթաթվում եւ Գեորդին:) Ոհ, քու հոքուն
մեռնիմ, Գիրդի ջան: (Առանձին:) Եսենց եւ 'զսմաթն, այ...
(Գեորդին:) Գնամ ես նմուտիս եվետ Գարասիմ Յակովիչին ի-
մաց անիմ: (Գնալիս, առանձին:) Դրուստ աստծու բան եւ, ձիր
արիվը գիդենա, յա հենց հիմիսկեվնտ դեղիդեն ձեռաց թիւսմ
արավ իր մտկումն, անիծածը: (Դուրս եւ գնում ձախ դըռ-
նից:)

ՏԵՍԻԼ Բ

ԳԵՐՈՐԴԻ, մենակ:

Հետաքրքրական եւ մարդուս կրանքը, ճշմարիտ. մեկ չնչին
պատահմունք վորտեղից վորտեղ եւ հասցնում... Ցերկու որ ա-
ռաջ յես ի՞նչ կմտածելի, թե այսպես սիրով կընդունվեմ. այստեղ
կամ մինչև այս աստիճան կսիրահարվեմ... Այս, սիրահարված,
սիրահարված՝ առանց ճանաչելու, առանց ծանոթ լինելու... Զե,
պետք եւ խելքս ժողովիմ և աշխատեմ սխալ քայլ չաներ: Հեշտ
բան չե, այստեղ պետք եւ ամբողջ կրանքիս հարցը վճովի... Ոհ,
Մարդարիտ, յեթե քո հոգին համապատասխանում եւ քո գեղեց-
կությանը՝ դու պետք եւ լինիս իմ սրտակից բարեկամը, աղնիվ
ընկերու, իմ միիթարիչ հրեշտակը: Այս, այն ժամանակ յես
կնվիրեմ իմ բոլոր կյանքը քո զարդացմանը, քո յերջանկու-
թյանը:

ԳԵՐՈԳ, ԿԱՐԱՊԵՏ, ԽՍԱՅԻ

ԿԱՐԱՊԵՏ.—(դուրս գալով ծախս դոնից Խսայու ուղեկցությամբ) Բարի իրիգուն, վուրթի, ես ինչի ուշացար:

ԳԵՐՈԳ. —Ներեցք, Գարասիմ Յակովիչ, մի փոքր գործպատճեցափ: (Միմյանց ծեռք են տալիս:)

ԿԱՐԱՊԵՏ.—Համեցք, համեցք. բարի ըլի քու վուտը, վուրթի:

ԳԵՐՈԳ. —Շատ եցք, վոր ինձ վորդի յեք համարում:

ԿԱՐԱՊԵՏ.—(համբուրում և Գեորգին) Յես ել ուրախ եմ, վուրթի, վուր քի պես փեսա ճարեցի. (Գեորգը հեգնորդն ժըպտում եւ) շատ լավ տղա ին գովում քիզ. շատ ապրիս, վուրթի: Հերտ ել լավ մարթ եր, ողորմած հոքին, ելախտ խոմ քու դեղին ել ասի... Խառումնեն պիտի ըլիմ շնորակալ գուր քիզ ուստ եօի. (Գեորգը վողունում եւ) սրա. խոսկին խիստ իմ ավտում, սուտ խոսիլ չի գիդի:

ԳԵՐՈԳ. —Յես ինքս համողված եմ, վոր Խսային միշտ ճշմարիտ և խոսում:

ԽՍԱՅԻ. —Շատ մի զովիք, ախակեր, յես ել մե միղավուր յարթ իմ, տուանց սուտ՝ դուրթ ել չկա:

ԿԱՐԱՊԵՏ.—Համեցք, նստիցք, վուրթի... Նստի, Խսայի: (Գեորգը գնում և դեպի աջ՝ աթոռ վերցնելու:) Դեսը, դեսը համեցք: (Հրավիրում և դեպի բազմոցը:)

ԳԵՐՈԳ. —Միմնաւն ե:

ԿԱՐԱՊԵՏ.—Վա, դիթա՞ղիա, փեսա ջան: (Գեորգը նստում և բազմոցի վրա. իսկ Կարապետը յեվ Խսային նրա մոտ աթոռների վրա այնպես՝ վոր Կարապետը գտնվում և Գեորգի յեվ Խսայու մեշտեղը:) Բաս ամեն բանը վիրչացած ե միր մեջը, վուրթի, վունցոր Խսային առում ե:

ԳԵՐՈԳ. —Մենք վոչինչ հաշիվ չունինք, Գարասիմ Յակովիչ:

ԿԱՐԱՊԵՏ.—Մենակ փակի համա չիմ առում, վուրթի Ես եիմիկլան ջնելնիրը մե քիչ վուղ չիք սիրում, ամա փուղի զաղրը գիդացի, վուրթի ուսումը խիւթի յարաղ ե, ամա փուղը համ խիւթի յարսղ ե, համ կամքի, շատ բան, ինչ ուսումով չկանա չինի մարթ, փուղով կու շինե:

ԳԵՐԻՐԳ. — Ի հարկե վոր փողով մեծ դժվարությունների կարելի յե հաղթել:

ԻՍԱՅԻ. — Արան, Գարասիմ Յակուլիչ ջան, վուր գովում են ինք, հիմի խոմ տեսնում իս, վուր սուտ չեցի ասում. տիս վուր փուղի՝ ղաղըն ել ինչ հանդի զիգե:

ԳԵՐԻՐԳ. — (հանդիմանորեն:) Ի'սայի, Ի'սայի:

ԿՈՐԱՂԵՏ. — Ինձ մոդ պարզերես իս, Իսայի ջան, աստուճ տա, սրա մոդ ել պարզերես զուս գաս:

ԳԵՐԻՐԳ. — Յես հույս ունիմ:

ԻՍԱՅԻ. — (վեր կենալով, յերեսը խաչ ե հանում:) Փուխ և համ աստծու զորութենին: (Առանձին, նայելով դեպի յերկինքը:) Յարաբ ես վհւնց վրա բերիր:

ԿՈՐԱՂԵՏ. — Եսուի նստի՞ հալա, Իսայի: (Իսային նստում են:) Հա, են եցի ասում, վուրթի, վուր մենակ փուղի վրա չե միք հեսարը: Հիմի ինձ ասա, փեսա ջան. ախչկաս վուր դու բերիմ, զուրթ մտկումդ հաստատ կա, վուր ուղիս նրան, թե ենենց ժամանակ իս ուզում անց կացնի հիգը:

ԳԵՐԻՐԳ. — Յես ձեզ չեմ հասկանում, Գարասիմ Յակուլիչ... Յեթե յես ձեր աղջկան ուզելու միտք չունենայի, յես այս ըստ պեյշիս այստեղ չեցի գտնվիլ... Միայն, իհարկե, ինչպես խոստացել եք, ժամանակ կտաք ձեզ միմյանց հետ ծանոթանալու:

ԿՈՐԱՂԵՏ. — Շատ ապրիս, վուրթի: Ամա գիղիս ինչ ե, յես ելախտ ել խոստացա քիզ՝ վուր շնուր բերիս, Մարքրիսս միամիտ դուս զու քեր, բանի խարարութին չեր ունենա. անա ես խանի խարաբ իսալին տուն ննգավ ենդի գեմուգեմը, թե խիստ սրտով ուզում իս, կոսե. ախչիկս իմացավ ու սիրաը ջեր ելի թրթռում ե: (Գեորգը շիտթվում ե:)

ԻՍԱՅԻ. — Վա, հեր օխնած, յես ինչ անիմ. վունցոր առա, ենենց ել ծախսցի. ես տղեն վուր ետենց ասավ, յես իմ խելքեմեն խոմ բանիը չեցի մոգոնի ետենց չեմ, Գիորգի ջան:

ԳԵՐԻՐԳ. — Բայց...

ԿՈՐԱՂԵՏ. — (Իսայուն:) Ետի լե գալի ասածս, Ե: (Գեորգին:) Հին պայմանի վրա, վուրթի, ելի ենենց դուս կու բերեցի. ամտ հիմի վուր դուս բերիմ ու բան և մելաշ անմիզ անգեթ սիրտը կնտրեցիր ախչկաս:

ԳԵՐԻՐԳ. — Ինչի՞ յեք այդպես հրամայում, Գարասիմ Յակուլիչ: Իմ միտքը ձեզ հայտնի յե, մենք դորա մասին բավականին խոսեցանք այս յերեկո մեր տանը:

ԿՈՐԱՂԵՏ. — Հա, վուրթի, լավ փիքը արա ելի. հանաք մաս-

իսարութին չե ախչկաս բեղնամ անիլը: Քանի գուս չե եկի,
ելի վունցոր գուզիս կու վիրչացնիմ քի մոդ: թռղ փեսո շըլիս,
հաջաթ չե, բարեկամ ըլինք: գուզիս ելի վաւրթի կու համարիմ
քեզ, ինչ կա:

ԻՍԱՅԻ. — (Գեորգին.) Արա, եսենց ել մարթ կուլի:

ԿԱՐԱՊԵՏ. — Ամա թե գուս եկավ ու իժում մե խայտառա-
կութին բերիր գլուխը, իստակ նրա բողազն ել գուս կու կարիս,
իմն եր, մե խոսկով աշխաքումը մե մատը միղը կու դառնանք:

ԳԵՈՐԳԻ. — ինձ զարմացնում եք, ճշմարիտ, յես ձեզ ահղիք
չեմ տվել արդպես խոսելու:

ԿԱՐԱՊԵՏ. — Ի՞նչ անիս, վուրթի. ինչ են մե տղեն մե բան
արավ, աճկեներուս կոտրվեցավ, ախչկա հերն ու մերը հենց գի-
դեցին թե են սհաթին պիտի նշանը տա, ամա են անհավատը
գդակը վիկալավ ու փախավ:

ԻՍԱՅԻ. — (գլուխը շարժելով) Յես ել իմացիլ իմ:

ԳԵՈՐԳԻ. — Յեթե խոստացել եք և չե կատարել իր խոսքը,
շատ անազնիվ ե վարվել:

ԿԱՐԱՊԵՏ. — Արա, վուրթի, ետենց բան ելավ միր քայլ-
կումը. ենդումեն գեսը ել ջնել տղի ավտալը դժարացավ:

ԳԵՈՐԳԻ. — (վոտի կանգնելով) Ե՛ն, Գարասիմ Յակուլի՛ն,
մարդ ել կա, մարդ ել: Այդ կողմանե զուք իմ մասին բոլորո-
վին հանգիստ կացիք: (Ազ զոնից բերում են Սարգիսը՝ ար-
ծաթյա սկուտեղով թեյը, յիվ Արտեմը՝ նրան հետեվելով, ար-
ծաթյա ամանի մեջ պաքսիմատներ:)

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ, ԱՐՏԵՄ

ԿԱՐԱՊԵՏ. — (վոտի կանգնելով) Զորանաս, վուրթի: (Հրա-
վիրելով Գեորգին թեյ վերցնել:) Հասեցէք, փեսա ջան, անուշ
արեք: (Իսայուն՝ վոր նմանապես վոտի յև կանգնել:) Վիկաը
իսայի: (Ամենքը վերցնում են թեյ:) Ես սահաթիս գալիս իմ,
փեսա ջան, պնամ աղչկաս իմաց անիմ: (Իր բաժակը դնում ե
սեղանի վրա յիվ հրավիրելով Գեորգին պաքսիմատ վերցնել:)
Համեցէք, գեթաղվա: (Արտեմին՝ մինչդեռ իսային բռնով վերց-
նում ե պաքսիմատներ:) Դեսը թաղազա արա, տա: (Դուրս ե
գնում ձախ դռնից:)

ՍԱՐԳԻՑ.—(առանձին:) Վուր գիդենս, թե ինչ խարար են
(Ժպտալով, դեմքը ծամածում են հետո. Արտեմի հետ ծա-
ժուկ քչիչալով, դուրս են գնում աջ դռնից:)

ՏԵՍԻԼ Ե

ԳԵՐԻԳ, ԻՍՊՅԻ

ԳԵՐԻԳ.—Զարմանալի մարդ ես, Իսայի. յես քեզ բարե-
կամաբար մի քանի խոսք ասացի, Դիսկ դու գնում ես՝ մի առ-
մի բոլորն այնտեղ պատմում: Այդ թնչակն կարելի յե:

ԻՍՊՅԻ.—(բաժակը ծեռքին:) Վա, սուտ իսո վուշինչ չիմ
մոգոնի, Գիորդի ջան. ինչի՞ չեցի ասի, հազիր սրտներուն ու-
ժիկ տվեցավ ես գլխեն եվետ գլխունանցը:

ԳԵՐԻԳ.—Բայց մեկ մտածիր, թե ինձ ինչ տեղը հասցրիր.
Հշմարիտ, եւ չեցի իմանում, թե ինչ եյի պատասխանել Գարա-
սիմ Յակուլիին: (Անբավական նստում ե փոքրիկ սեղանի մոտ:)

ԻՍՊՅԻ.—Հաջաթ չե, Գիորդի ջան. հորես դիմ մետի կու
չքստվիր բանը: (Նստում ե նույն սեղանի մյուս կողմը, Գե-
ռզի հանունք. յերեսը դեպի ծախս դուռը դարձրած:)

ԳԵՐԻԳ.—Ա՛յս, Իսայի, դու ինձ շատ նեղացը/ը այսոր:

ԻՍՊՅԻ.—(թեյով զբաղված յեկ մեղմ ծայնով:) Հոքուտ
մեռնիմ, փեսա ջան:

ԳԵՐԻԳ.—(անբավականությամբ:) Ե՞ն, փեսա, փեսա,
քմնի ասեք:

ԻՍՊՅԻ.—Լավ ե, լավ, Գիորդի ջան, ողունդ դուն քու քեփը
խարար մի անի, ախպեր, վունցոր կու հրամալիս, ևնենց կու
ժաժ զամ. զուզիս դրուստ փեսա ել վուր դառնաս, ենչախն ել
փեսա չիմ ասի:

ԳԵՐԻԳ.—Յեկ շատ լավ ել կանես:

ԻՍՊՅԻ.—(առանձին:) Ամբիրը մոդ էլան... (Գիորդին:)
ԶԵ, զուն ինձ ասա՞ վնանց իս տեսնում Գարասիմ Յակուլիչին.
Լավ մարթ չե:

ԳԵՐԻԳ.—Այս, լավ ե յերեսում:

ԻՍՊՅԻ.—Ասում իմ, ե... զրուստ հերութին կոնե քիզ,
զու արիվը:

ԳԵՐԻԳ.—Շատ կարելի լե,

ԻՍՊՅԻ.—Ի՞նչս ասում, Գիորդի ջան. դըա պես բարի ու

Ճշմարիտ մարթ սազ թիվիլիզումը չկա... (Թեյլը նմելով.) Ու-
րեց մարթ և ասում իմ, ե... Մե խոսկով քանի գնաս, են՝ զա-
դա կու սիրիս Գարասիմ Յակուլիչին... (Պարսիմատ ծամելով.)
Ժամաներ... աստուածապաշտ... անկատին ողորմող... ու իր որումը
մարթու բեդամաղ չի անի... ասկականի համա խոմ դրուխը
հիդ դրած ունե... (Կարապետը Մարգրիտի ձեռքը բռնած դուրս
ե բերում ծախ դռնից.)

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԳՐԻՏ

ԻՍԱՅԻ.—(շարունակելով.) Այ, հիդ մտիկ տու, քու դու-
շնկեն ել դուս եկագ: (Գեորգը իսկույն վոտի յե կանգնում:)

ԿԱՐԱՊԵՏ.—(թողնում ե Մարգրիտին բազմոցի մոտ յեվ
մոտենալով Գեորգին:) Արի, փեսա ջան, աստուծ միասին ծի-
րացնե (Գեորգը շիտթվում ե) քիզ քու հավաճած Մարգրիտի
հիդ: (Չեռքը բռնում ե:)

ԳԵՂԻԹԳ.—(ազատելով ձեռքը:) Խնդրեմ: (Գնում ե դեպի
Մարգրիտը:)

ԻՍԱՅԻ.—(վոտքի կանգնելով յեվ առանձին:) Մեռնիմ
քու ողորմութենին, աստուծ:

ԳԵՂԻԹԳ.—(մոտենալով Մարգրիտին, վոքը ինչ շվարվում
ե, բայց իսկույն զսպելով իրեն՝ առնում ե նրա ձեռքը:)
Որիորդ... շատ... ուրախ եմ... (Թեթեվ վողջունում ե յեվ հե-
ռանալով, առանձին:) Ո՞հ, տեր իմ: (Մնում ե ապշած:)

ՄԱՐԳԻԹԻԾ.—(առանձին, ցածր ծայնով:) Այս... (Շիտթված-
ընկնում ե բազմոցի վրա:)

ԻՍԱՅԻ.—(մոտենալով Գեորգին յեվ շշնչելով:) Վա,
Բնչ իս անում, հեր ոխնած:

ԳԵՂԻԹԳ.—(Խսայուն, նմանապես շշնչելով:) Աս Մարգրիտը
չե:

ԻՍԱՅԻ.—(նույնպես,) Վհւնց թե նա չե, գժվիլ իս:

ԿԱՐԱՊԵՏ.—(անցնելով Խսայուն ծախս կողմը յեվ ցածր
ծայնով:) Հը, Բնչ ե, սիվ կատու անց կացավ:

ԻՍԱՅԻ.—Տհ, սիվ կատու կի չե, ասում ե Մարգրիտը չե,
կոսե:

ԿԱՐԱՊԵՏ.—(ժպտալով:) Ի՞նչ իս ասում, փեսա ջան, վմւնց

թե Մարգրիտը չե, թեզուզ սաղ աշխաքին հարցու: (Մարգրիտը
նեղանում եւ:)

ԳԵՐԻԴԻ.—(առանձին:) Տեր աստված, միթե սա նա յե...
Բայց այս անկարելի յե:

ԿԱՐԱՊԵՏ.—(անցնելով Գեորգի աջ կողմը:) Ե՞ն, լավ ե,
փեսա ջան, մի սպանի խիղճ ախչկաս, արի, կշտին նստի:

ԻՍԱՅԻ.—(մյուս կողմից յեվ ցածր:) Միխել ե, մի խայ-
տառակի խիղճ ախչկան:

ԳԵՐԻԴԻ.—(լուռ նայում ե Կարապետին յեվ իսայուն, հե-
տո առանձին:) Այս գորտեղ ընկա չես: (Գնում, նստում ե
Մարգրիտի մոտ:)

ԿԱՐԱՊԵՏ.—Աստուծ անփոշվնելի անե,

ԻՍԱՅԻ.—Ե՛մին, տեր աստուծ:

ԳԵՐԻԴԻ.—(արհամարիական հայացք ե ձգում Կարապետի
յեվ իսայու վրա, հետո Մարգրիտին:) Ներեցէք, որիորդ, իմ
վրդովմունքը... (Թեթեվ ժպտալով:) Յես բոլորովին չեյի սպա-
սում այսպիսի գիտվածի... Զեր հայրը խոստացավ ինձ ծանո-
թացնել ձեզ հետ և հանկարծ այսպիս ե վարվում... Ի՞նչպես ե
թվում ձեզ, որիորդ, այս բանը... (Մարգրիտը ամոթխածու-
թյամբ գլուխը բաշ ե զցում. լուսթյուն:) Խոսեցէք, որիորդ,
խոսեցէք, խնդրեմ... (Լուսթյուն:) Ի՞նչի՞ չեք խոսում, որիորդ:
(Մարգրիտը շփոթվում ե դարձյալ լուսթյուն: Գեորգը զայ-
քացած ուսերը բարձրացնում ե յեվ տեղից վեր կենալով, դի-
մում ե Կարապետին յեվ իսայուն:) Ասացէք, խնդրեմ, ի՞նչ ե
նշանակում րոլոր այս կոմեդիան: (Գնում ե դեպի իսային:)

ՄԱՐԳՐԻՏ.—(առանձին, ցածր ծայնով:) Ե՛խ, աստուծ:

ԳԵՐԻԴԻ.—(իսայուն:) Քեզ եմ հարցնում... (Զայնը ցած-
րացնելով:) Ո՞վ եր այն աղջիկը, վոր յերկում եր:

ԻՍԱՅԻ.—(նույնպես ցածր:) Ի՞նչ իս ասում, Գիորգի ջան.
ախար, հենց գա չեր ակոշկումը:

ԳԵՐԻԴԻ.—(բարկացած:) Իհարկե վոր չե... իրը թե ի՞նքո
չգիտես... Ո՞հ, իսայի, սպասիր,

ԻՍԱՅԻ.—(յերեսը խաչ ե հանում յեվ առանձին:) Միղմ
քի, տեր:

ԿԱՐԱՊԵՏ.—Պարուն փեսա, հանաք իս անում:

ԳԵՐԻԴԻ.—Ի՞նչպես թե հանաք եմ անում... Դուք ինձ մում
աեզ եք ընդունում, պարոն... Մտաբերեցէք թե ինչե՞ր եյիք
խոսում մի քանի ժամ առաջ, իսկ այժմ ինչպես եք վարվում...

(Զայնը ցածրացնելով:) Ո՞ւր եք բերել այդ խեղճին, այստեղ
նստացրել և խայտառակ անում. դուք լավ զիտեք, վոր գա իմ
տեսածը չե:

ԻՍԱՅԻ.—(լսելով Գեորգին, առանձին:) Սլմուրին պլուխտ
և ննզնում...

ԿԱՐԱՊԵՏ.—(մեղմաբար:) Լավ ե, քու հորն ողորմի, ե-
սա վուր չե քու տեսածը, բայ ուրիշ մի կուլեք, գուն ինձ
առաջ...

ՄՈՒԴՐԻԾ.—(առանձին:) Ես ինչ բան ե:

ԻՍԱՅԻ.—(Գեորգին, ցածր ձայնով:) Մե լավ այս, Գիոր-
դի ջան, թե ախպեր իս. կուլի աճկդ խափս ե տալի:

ԳԵՈՐԳ.—(առանձին:) Ցնորդել են, ինչ ե:

ԿԱՐԱՊԵՏ.—Ճեսնում իս լիզուն կսպիցավ մերաշ, զիփ
մետի խառնեցիր խղճին, ախար... Դուն ինձ ել ՀՀկլեցրիր, զուր-
թի, չե թե սրան... Սրա պես սիրուն ու կարտինկա զանա ելք
կա քախկումը, թեգուղ սաղ աշխրքումը... (Մոտենում և
Մարզրիտին:)

ԳԵՈՐԳ.—(առանձին, զայրացած:) Տես, տես...

ԻՍԱՅԻ.—(առանձին:) Ա՛խ, սիրաս ինչ հանգն ե դընդըն-
գում:

ԿԱՐԱՊԵՏ.—(շարունակելով:) Փառ, զրուստ հրիշառկ ե,
ելի... (Մարզրիտին տեղից վեր և կացնում:) Արա մե թամա-
շա արա...

ԳԵՈՐԳ.—(առանձին:) Ո՞հ, տնիրավ...

ԿԱՐԱՊԵՏ.—(Մարզրիտին աջ ու ծախս պտույտ տալով
միեվնույն կետի վրա:) Ի՞նչն ե պակաս՝ ընյին, բնւսաթը, մա-
զիրը, թե երեսի ուանդը... (Գեորգը սարսում ե:) Սադ աշխարքը
կոսե, վուր թաքափուրի արժանի յե, յես ու իմ հոքին:

ԳԵՈՐԳ.—(առանձին:) Խեղճ աղջիկ:

ՄՈՒԴՐԻԾ.—(առանձին:) Վայ իմ միխկը, (Նստում և իբ-
տեղը յեվ թաշկինակով աչքերը սրբում ե, Խայլին՝ մտառան-
ցության մեջ, ինքն իրան ծեռքերով խոսում ե:)

ԿԱՐԱՊԵՏ.—(մոտենալով Գեորգին:) Ա՛րի, վեսան ջան,
նշանը տու ու քննիքան արա, թե քու հոր գերեզմանը կու սի-
րիս:

ԳԵՈՐԳ.—Բավական ե, պարոն, բավական ե, վերջացըք,
խնդրեմ, / Գնում և յեվ վիրցնում ե զլխարկը:)

ԿԱՐԱՊԵՏ.—(առանձին:) Ե՞տ ե վուր գնացիր, (Պատրաստա-
վում ե ճանապարհը կտրելու:)

ՄԱՐԴՔԻԾ.—(առանձին:) ինչի՞ եստի եվետ չիս սպանում
ինձ, աստուծ:

ԻՍԱՅԻ.—(առանձին:) Ա' իս, աստուծ, վժւնց իմանամ
դրուստը...

ԳԵՂԻՉ.—(գլխարկը ծեռքին, մոտենում ե Մարգրիտին:)
Որիորդ, շատ յավում եմ, վոր ակամա պատճառ դարձա ձեզ նե-
ղությանը... Մնաք բարյալվ... (Դառնալով իսայուն) Շնորհա-
կալ եմ, իսայի. լմվ բարեկամություն արիր: (Կամենում ե
գնալ Աջ դռնից մտնում են Մարգիսը՝ ծեռքին արծաթյա
սկուտեղի վրա շամպանիայով լի բաժակներ, յեվ Արտեմը՝
դատարկ սկուտեղով:)

ՏԵՍԻԼ Է

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ, ԱՐՏԵՄ

ԿԱՐԱՊԵՏ.—(առանձին:) Աստուծ գիդենա, սաղ դուս չիմ
թողնի: (Զախ ծեռքով բռնում ե Գեղրգի ոճիքից:) Յ' ես քիզ
համով ասում իմ, ախարեր, արի, նշանը տու թե խիք ունիս,
թե չե դուն ինձ չիս ճանչնում. ինձ Գարասիմ Յակուլիչ Զամ-
բախով կոսին:

ԳԵՂԻՉ.—(ազատվելով կարապետից յեվ բարկացած:)
Թողեք, խնդրեմ... Դուք ձեզ մոռանում եք, պարոն... (Տեսնե-
լով Արտեմին, վոր փոքրիկ սեղանից հավաքում եք թեյի բա-
ժակները, ծեռքը խփում ե իր ճակատին:) Ա' ն... (Արտեմին:)
Ա' աղա, այն ինչ աղջիկ եր, վորի լետեկից էերեկ գալիս եյիր:

ԿԱՐԱՊԵՏ.—(շփոթված, խփում ե իր ճակատին յեվ ա-
ռանձին:) Վայ, ես մեկը մտես ննդավ: (Արտեմին նշաններով
հրամայում ե լրու մնալ՝ նետո Գեղրգի յեվ իսայու նետեվովն
անցնում ե Արտեմի ծախ կողմը:)

ԳԵՂԻՉ.—(շարունակելով:) Քեզ հետ եմ, ասա շուտ՝ մեր
և այն աղջիկը:

ԱՐՏԵՄ.—Ե՞նթի ոթախումն ե:

ԻՍԱՅԻ.—Ի՞նչ ախչիկ, տն:

ԱՐՏԵՄ.—Վայ, միը ախչիկ պարունն, աղա:

**ԿԱՐԱՊԵՏ.—(աջ արմնեկով խթում ե Արտեմին յեվ ցածր
ծայնով:)** Կնրի, տա անիծած:

**ԻՍԱՅԻ.—(Արտեմին, մեղմաբար հետ մղելով կարապե-
տին:)** Նատալիեն, տո:

ԱՐՏԵՄ. — Հրամիլ իս:

ԳԵՈՐԳ. — ԱՇ, խարերա անաստվածներ... Վերջապես...

ԻՍԱՅԻ. — (բարկացած) Ախար, ո՞յնքան իմանում եք, ե:
(Կամենում ե գնալ.)

ԿԱՐԱՊԵՏ. — (բռնելով Խսայու ծախս թեվից յեվ միամտաբար.) Ես ի՞նչ խարար ե:

ԻՍԱՅԻ. — (ազտվելով Կարապետի ձեռքից) Մե մնւլափ,
քու հարն ողորմի, ե: (Դուքս ե նետվում ծախս դոնից, Արտեմը
դատարկ սկսուածելով հետեւից դուքս ե վազում. Կարապետը
մնում ե շվարված:)

ՏԵՍԻԼ Բ

ԳԵՈՐԳ, ԿԱՐԱՊԵՏ, ՄԱՐԴՐԻԾ, ՍԱՐԳԻՄ

ՄԱՐԴՐԻԾ. — (բեմի աջ կողմը, շամպանիայով սկսուածեղը
ծեռքին յեվ առանձին:) Դեղի ծծիք, դաւն բարիխոսիս:

ՄԱՐԴՐԻԾ. — (առանձին:) Սիրտս գնում ե:

ԳԵՈՐԳ. — (Կարապետին, փոքր լուռէթյունից հետո) Այժմ
ի՞նչ եք ասում, պարօն, այժմ ի՞նչ եք հանրելու:

ԿԱՐԱՊԵՏ. — (շվարված:) Յ'ես վուր չիմ իմանում թե ի՞նչ
բան ե...

ԳԵՈՐԳ. — Գոյւք՝ պարօն, վհչ հոգի յեք ունեցեր, վհչ
խիզձ... Գոնե ձեր աղջկան կխնայելիք... (Վողջունելով Մարգրի-
տին, նետվում ե դեպի խորքի դուռը, ուր հանդիպում ե ի-
սայուն:)

ԿԱՐԱՊԵՏ. — (Գեորգի հետեւից մի քանի քայլ առաջ
գնալով յեվ թոթովելով:) Կաց, կաց,

ՏԵՍԻԼ Յ

ՆՐԱՆՔ, ԻՍԱՅԻ, ՆԱՏԱԼԻԱ, հետո ԱՐՏԵՄ

ԻՍԱՅԻ. — (այլայլված, ծախս ծեռքով կանգնեցնում ե Գե-
որդին դռան շնմքումը:) Մնւլափ, մնւլափ հալա:

ԳԵՈՐԳ. — Թնդ, ասում եմ...

ԻՍԱՅԻ. — (նույնպես:) Մե մնւլափ, ե...

ԳԵՈՐԳ. — (հետ դառնալով յեվ զայրացած:) Ո՛հ, ասուցած...

ՆԱՏԱԼԻԱ. — (դռան հետեւից:) ԳԵՂԱՂՎԱ, ԽՍԱՅԻ ջան: (Կարապետը շփոթված անցնում ե բեմի ծախս կողմը.)

ԻՍԱՅԻ. — (նույն դռանը:) ԱՌԻ, ասում իմ, Ե... (Բոնի ներս բերելով Նատալիային, դիմում ե Գեղրդին:) Սրան իս ասում, ախպէր: (Արտեմը խորքի դռնից գլուխը հանում ե յեվ մնում ե այնպես միշտվ վերջը:)

ԳԵՂԱՂՎԱ. — (առաջ գնալով:) ԱՌ, իմ տեսածը:

ՆԱՏԱԼԻԱ. — (ճչում ե:) ԱՌԻ, (Ամոթից յերեսը դարձնելով, ծածկում ե իր դեմքը յեվ մնում ե այնպես մինչեվ վերջը: Միեվնույն ժամանակ Մարգրիտը վոտի կանգնելով, կամենում ե առաջ գնալ, բայց ուշաթափ իսկույն վայր ե ընկնում բազմոցի վրա:)

ԻՍԱՅԻ. — (շվարված:) Քու տեսածը... Տհ, սա խոճ իմ կնիքն ե:

ԳԵՂԱՂՎԱ. — (զարհուրած հետ քաշվելով:) Քո կի՞նը... (Մնում ե արծանացած:)

ԿԱՐԱՊԵՏ. — (բեմի ծախս կողմը կանգնած յեվ սարսափելի դրության մեջ, բռնցքով խփում ե իր ճակատին:) Ենդուք ե ասած՝ վուր շուրբին ջլալումը չի թախ կենա: (Զեռքը ճակատին՝ մնում ե անշարժ:)

ԻՍԱՅԻ. — (փոքր լուսթյունից հետո, նայում ե Նատալիային յեվ յերկու ծեռքով իր գլխին խփելով:) Վայ քու իսայուն: (Մնում ե նույն դրության մեջ:)

ՍԱՐԳԻՍ. — (բեմի աջ կողմը, շամպանիայով սկուտեղը ծեռքին յեվ առանձին:) ԱՌ խաթարալա: (Ամենքը քարացած մնում են իրանց դրության մեջ:)

Պատկեր. Մի քանի վայրկյանից հետո վարագույրը կամաց-կամաց իջնում ե:

ՊԵՊՈ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՔ ԱՐԱՎԱԾՈՎ

1870

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ

ԱՐՈՒԹԻՆ.—Հարուստ վաճառական;
ԵՓԵՄԻԱ.՝ Արութինի յերկրորդ կինը;
ԳԻՊՈ — ձկնորս;
ՇՈՒՇԱՆ.՝ Պեպոյի մայրը, այրի կին;
ԿԵԿԵԼ.՝ Պեպոյի քրոյլը;
ԳԻԲՈ.՝ Պեպոյի ազգական;
ԿԱԿՈՒԷԼԻ.՝ Պեպոյի բարեկամ;
ԳԻԳՈԼԻ.՝ Արութինի գուքնի աշկերտ;
ՍԱՄՍՈՆ.՝ Արութինի տանու ծառան;
ՅԵՐԿՈւ այլ ծառա Արութինի տանը;

Առաջին յեկ յերօրդ արարվածները կատարվում են Պեպոյի տանը,
իսկ յերկրորդը՝ Առութինի տանը: Անցքը պատճենում է
Թիֆլիսում 1870-ին:

ՆԿԱՐԸԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

ԱՐՈՒԹԻՆ. 60 տարեկան, միջին հասակով և կազմվածքով. յերեսը կար-
մեր, լիքք և ածեած: Սկ ներկած կարճ մազոր, հասա հոնքեր և խուզած բե-
խեր, Յեղբուական հագուստ: Սպիտ և շապուկ, գունալոր փողպատ, նույնպի-
սի ժիշեա և պանտալոն: Սկ սերթուկ և գլխարկ սիլինդր: Վոսկե ժամացույց
զուկե զղթայոյի, Քործ և ածում զուն զոր մետաքսե թաշկինակ, փոքրիկ զե-
զին սաթի համբիչ և ծոցի մեջ պորտունե: Շարժվածքը, ման դալն ու խոսվածքը
ծանը: Հստ յերեսույթիս պատվազոր անձն:

ԵՓԵՄԻԱ. 80 տարեկան, գեղեցիկ և վայելչակազմ կին, զեկ մազերով:
Յեղբուական մողայի ամենաշքեղ բաց-կապույտ հագուստ, վրացնակ գլխով:

(Հեթեա, վոսկեկար ճակահ-տղլութ և այլն): Զարդարված ե վոսկե ժամացուցով, յերկար շղթայով և զանազան ակնեղեններով: Պարանոցին կը ըմբեռ քանակ և ակնոցությունը, Շշարժվածքը և ման դալը արագ ու կը ակուա Շառ և քրքրում:

ԳԵՂՈ. 35 տարեկան, թուի և գեղեցիկ զեմքով, բարձր հասակով, ամուր կազմվածքով և լայն կրծքով, Սև կտրճ մազեր, ճակատի վրա բերած, բարտէ հոնքեր և բեխեր յերեսն ածելած: Ունի յերկու ձեռք թղթի/զի բուն լոթու հաղուստ, մինը հաւարակ, մյուսը զարդի: Առաջինն և չին կամ սպիտակ շապիկ. մուգ-կապույտ դղշող, սև դարչանով բոլորած. սև նորուրի արթալուխ և եղջղու սև շալից չոփա առանց գ-րդարանքի. միենույն հայք լայն շալվար, ծայրերի ներսի կողմը զանդալի մեջ շարչութաղով ամրացրած. սև դափաղավոր լափչիսներ, արծաթի նեղ քամար. կարմիր մորթե յերկար դպակի, ծայրը փոքր ինչ ներս ծալած. կարմիր բամբակի թաշկինակ: Զարդի հաղուստն և մետաքսն կարմիր դոշուղ և սև արշալուխ, յերկումն ել բարակ գովկեթելով բոլորած. գալ յունի դեղին չոխա, սև լայն շ-փարիշով զարդարած նույն կտորից լայն շալվար, ծայրերը վորոհիշալ ձեռք ամրացրած. սպիտակ դափաղվոր լափչիներ կանաչ դայթաններով. Բ-ւսարու սև գոշակ, ծայրը կոտրած. իմերեւնու մետաքսն դոտիկ. կապույտ բամբակի թաշկինակ: Քայլը հաստատ, ձայնը քաղցր և ազգու. շարժվածքն ու խոսակցության ձևերը բուն ժողովը դական: Միշտ գլխարկով, բացի նշանակած տեղերոց:

ՃՈՒՇԱՆ. 50 տարեկան այրի կին. միջին հասակով և հաճելի գեմքովէ վրացնակ հասարակ հաղուստ: Մե տակ (ցածր կապած) դրւես (սև ճակտի աղուստ, սպիտակ հաստ լաշաք, սև փաթաթիւն): Մե տերնույից կամ արաւակայից հասարակ գերիա, կուրծքը ծածկած: Հասարակ սև շալ: Տանից գուբա գնալու ժամանակ դործ և ածում սպիտակ զաթիբատ:

ԿԵԿԵԼ. 18 տարեկան, միջին հասակով, թարմ, գրավիչ դեմքով, սև յեշեար մազերով: Վրացնակ հասարակ հադուստ (ճակտի-աղուստ, չիքիլա, չթե դերիս և այլն): Զայնը քաղցր, շարժվածքը համեստ:

ԳԻՔՈ. 65 տարեկան, միջին հասակով, մեջքը փոքր ինչ ծոած: Սպիտակ մտզեր և բեխեր, յերեսն ածելած: Վրացնակ հադուստ Մպիտակ շապիկը կուրծքը սև զայթանով բոլորած. սպիտակ դալամքարե կամ մուգ-կոտոյան արխայուխ. սև մահուլից կաբա և լայն շալվար և առազի սև լափչիներ շածը կրընկներով. Բուքարու սև գուակ, ծայրը ներս ծալած. հաստակ շալե կամ կապույտ դանավուզն դոտիկ: Գործ և ածում ձեռնափոյտ, քթախոտ և կապույտ չթե թաշկինակ: Ման զալը, շարժվածքն ու խոսակցությանը չափից գուբա զանդակ: Միշտ գլխարկով և ձևնափայտով:

ԿԵԿՈՒԽԵԼ. 25 տարեկան, հասակով փոքր ինչ ցածը Պեպոյից ներեաք կտրմիր և գեղեցիկ. սև մազեր ճակատի վրա թերած բարակ հոնեեր, բարակ քեխեր և նոր կարճ միրուք, թղթիզի բուն պամարնու կամ կինտոյի շքեղ հագուստ: Մազի մորթե մեծ դղակ: Բաւգի ձեր կարմիր մետաքսն շապիկ և գոշուղ: Կապույտ կամ սև զանազուզն արխայուխ: Քորչու սև շալից կարճ և շաքերով չոխա: մինույն շալից լայն շալվար, ծայրերը զանդյալում կամ պահճով բոլորովին ամրացրած: Քոչւալուղը, արխալուխը և չոխան ամենագեղեղ

Ճեռվ զարդարած են կլասիկառնե լայն բաֆթաներով։ Լեղզու յերկար ճակրագոր շուստիներ, բարակ գոսկեթերով բոլորած արձաթե լայն քամար Բաղդադի թաշկինակի։ Զայնը, շարժվածքն ու խոսակցության ձևերը կոչու Միշակուարկով։

Գիշուլի. 25 տարեկան։ Վլացնակ հասարակ հաշուստ։ Սոլիստակ չթե արխալուխ, կրծքի կոճակները մեր գցած, ու մահուղաց կարա, նույն մահուղաց կամ սպիտակ պարուսինից շալվար, արձաթե նեղ քամար, ձեռքին գըլիսարկ-փուրաժկատ

ՍԱՄՄՈՒՆ. 18 տարեկան ու յերկար մագեր, յերսովական ձևով սանդղած։ Յեղոսպական սպիտակ շապիկ, հասարակ չթե արխալուխ, կրծքի կոճակները բաց, նեղ քամար և գունավոր նեղ շարվար հետո չերքեզի շքեղ հագուստ Սոսանի ատլասէ արխալուխ, բոլոր կոճակները մեր գցած, սպիտակ մահուղեք չերքեզի արձաթե մասրաներով, նույն մահուղաց նեղ շարվար, ծայրերը կարծիք տահուղով։ Բոլոր հադուստը զարդարած ե կլասիկառնե բաֆթաներով։ Յեղոսպական փայյուն կոշիկներ, արձաթե շքեղ քամար արձաթազատ դաշույնով։ Արձաթե փոքրիկ վաստաման կլասիկառնե լայն բաֆթայով։ Բոլոր ժամանակ առանց զլիսարկի։

ՅԵՐԿՈՒ ալ ծառա՞ փրահով, սպիտակ ձեռնոցներով և առանց զլիսարկի։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում ե հին ձեր աղքատիկ սենյակ թարեքներով, դոցաբներով, լուսամուտով և յերեք զանով՝ աջ, ձախ և զինացը Զայս կողմը (հանգիստականների զլիքից) գորգով ծածկած տախտ նահալով և մութաքաներով, իսկ աջ՝ հասարակ սեղան, գունավոր սփռոցով ծածկած։ Սենյակի այս անկյունում մի թոկ կա կապաձ։ Դոլաբներում և թարեքների վրա դարսած են հինորյա պղնձե, կավե ու փայտե ամաններ և զանազան ձեր գինու բաժակներ։ Մի քանի հասարակ աթոռներ լրացնում են սենյակի զարդը կետոր ե։

ՏԵՍԻԼ Ա.

ՇՈՒՇԱՆ, տախտի վրա նստած, զուլպա յե զործում։ Կենել, սեղանի մոտ, աթոռի վրա նստած, շտապով կար ե անում, առօնվը կարի գույնզգույն բոխչա։

ՇՈՒՇԱՆ. — Զիս իմաննեմ, քա։

Կենել. — (թել վերցնելով բոխչից) Ա՛յ, ես ել պրծնիմ, դեղի։

ՇՈՒՇԱՆ. — Թնդ, մե քիչ գնջացի, իժում սլրծի։

Կենել. — Զի ըլի, դեղի, ե, հորես տերը գու քա։

ՇՈՒԽԾԱՆ.—Նրա աճկն ել կարիմ. խիստ շատ և տալիք:

ԿԵԿԵԼ.—Բանն ել ետ ե, ե՛, դեղի. ինչու նրա գալը դիմ հաղիր վուր չըլի, ել մամում զինը չի տա, խո զի՞դիս ինչ առաստուծն ե:

ՇՈՒԽԾԱՆ.—Ախար, աճկիդ լուսը խո չի՞ս կանա հանի. սաղ գիշիր հենց բունե, չիս քնի ու ջեր վուրդի յեր ծեքը, վուր եւ մ բանի նստեցար:

ԿԵԿԵԼ.—Ի՞նչ անինք, գեղի, խղճի հացը եժան չե ձար- վում:

ՇՈՒԽԾԱՆ.—Հերիք աըա, հերիք, վուրդի: Զանդամը միլ գլուխը, վունցոր լի կու ապրինք:

ԿԵԿԵԼ.—Ես ասհաթիս, գեղի ջան, այ. աստուծ գիդենա, քիչ ե մնացի:

ՇՈՒԽԾԱՆ.—Սաղ գիշիր ջում-ջումի բերիք ինձ՝ դուն մե կուսը, քու ախպուր փիքը մեկելը: (Լոռություն:) Նա ել ի՞նչ ելավ. իմքին բան չըլի եկի գլուխը:

ԿԵԿԵԼ.—(վախեցած:) Ի՞նչս ասում, գեղի, գանա լես անց ել չե մնացի դուսը գիշերնի:

ՇՈՒԽԾԱՆ.—Եսոր խիստ ուշացավ, կեկել. առանց են առուտ- նիրը տուն ե եկի ու հիմի հորես կեսորի վուխան ե:

ԿԵԿԵԼ.—Ի՞նչ հաջաթ, գեղի ջան. եպեքա փողոցումը բան- լուս ննդավի:

ՇՈՒԽԾԱՆ.—(հոգվոց հանելով:) Աստուծ տնե ետենց ըլի, վուրթի, սիրսա գնում ու դալիս ե... Ո՛վ գիզե ջուրը մինձա- ցավ, ավ գիզե իմքնի յեղնեն ննդավ ու ինքն ել հիգը գնաց... կեկել.—Ե՛, ինչե՞ր իս ասում, գեղի:

ՇՈՒԽԾԱՆ.—Նրա գլխին ել վուր մե բան գա, ջուր ածելու կու դառնանք:

ԿԵԿԵԼ.—Աստուծ գիդենա, անմիղ իս նիղանում, գեղի ջան- երեխա խո չե, սիրսա ել անմիղ շուռ ու մուռ իս բերում:

ՇՈՒԽԾԱՆ.—Ե՛սենց ել ապրիլ կուլի՛... Հախմիան տերն ա- նե քու դադաստանը, Ա՛րութին: (Դրսից վոտի ծայն ե լսվում:)

ԿԵԿԵԼ.—(ուրախ:) Ա՛յ, գեղի, հորեն:

ՇՈՒԽԾԱՆ.—(ականջ դնելով:) Նա յե... (Գլուխը շարժում ե:) Զե՞:

ԿԵԿԵԼ.—(նմանապես ականջ դնելով:) Գիշոն ե:

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ.—(ներս մտնելով դիմացի դռնից, գլւարկը ծածկած յեվ ծեռնափայտով.) Բարի լուս ձիգ:

ՇՈՒԾԱՆ.—(տխուր.) Աստծու բարին, Գիքո... Համեցեք:
ԿԵԿԵԼ.—(վեր կենալով, Գիքոյին գլուխ ետալիս, հետապոանձին) Աճկս քիզ եր մնում: (Նստում եր գործին:) ԳԻՔՈ.—(նստելով աթոռի վրա Շուշանի մոտ:) ՎՃԱՆՑՔ,
Բ' նչ ռարին հարցնինք:

ՇՈՒԾԱՆ.—Փառք աստծու, կանք,

ԳԻՔՈ.—Ե՛, փառք աստծու: Ես մւը և Պեղոն. ջեր չե տուն
եկի՞:

ՇՈՒԾԱՆ.—(վախեցած.) Հըմ, իմքին խարար կմ:

ԳԻՔՈ.—Հմ բան ունիմ ասելու:

ՇՈՒԾԱՆ.—(ծնկանը խփելով.) ՎՌԵՅ, քոռանամ յ'ես, Բ' նչ
խարար ե:

ԳԻՔՈ.—(ուղղվելով.) Ի' նչ խարար...

ՇՈՒԾԱՆ.—Հմ:

ԳԻՔՈ.—Լավ խարար չե, Շուշան:

ՇՈՒԾԱՆ.—(ավելի վախեցած.) Ի' նչ ե, խթիստվիլ ե: (Կեկելը, կարը թողնելով, վախեցած նայում ե նրանց.) ԳԻՔՈ.—(զարմացած.) Ա՞զ ե խիխտվի. Բ' նչ իր ասում:

ՇՈՒԾԱՆ.—Պեղոն, բաս չե խիխտվի՞:

ԳԻՔՈ.—(յերեսը խաչակնքելով.) Տեր ողորմած աստուծ.
Կա յ'ես չիմ իմանում, ինչ իր ասում:

ՇՈՒԾԱՆ.—Ախար. իրիգուն կես զիշիքին դամբը վիկալավ,
քնաց ու ջեր չե տուն եկի:

ԳԻՔՈ.—Վմ, ոխնած հոքի, վախեցա. նա ի' նչ խիխտվելու
ահ ունե... ես ի' նչ Քուռը պիտի ըլի, զուր նրան ախտե:

ՇՈՒԾԱՆ.—Բաս ի' նչ խարար եյիր ասում:

ԳԻՔՈ.—Ի' նչ խարար եյիր ասում...

ՇՈՒԾԱՆ.—Հմ, մե չնւստ ասա, թե աստուծ կու սիրիս:

ԳԻՔՈ.—Մհելափ, ե. մի քիչ համփիրութին ունեցի, հեր
ոխնած: Աստուծ շատ բանիր ե զըի մարթու ճակտին՝ վախա
կա ուրախութին, վախա կա տիրութին: (Դրականից հանում ե
քթախոտի տուփիը.)

ԿԵԿԵԼ.—(առանձին) Ի՞նչկը կոսե, իմն ինձ կու հասնիր
ՇՈՒՇԱՆ.—Միզ համա խո զարթնի տխրութինը, աստուծ

Աւրիշ բան չե տվի:

ԳԻՔՈ.—Ի՞նչ անիս, Շուշան, աստծու ձեռին ե՝ ուրախութինն ել, (հորանջում ե) տխրութինն ել... (Կրկին հորանջում ե յեվ քթախոտ քաշում.) Հըմ... Եե... Վունցոր աստուծ դուզե, ենենց կուլի մարթու բանը:

ՇՈՒՇԱՆ.—Նրա կամքն ըլի, ի՞նչ անինք:

ԳԻՔՈ.—Ե'տենց ե, Ետենց, Շուշան... Ախար, եսոր առուտ-աեհան լավ բան չիմացա. Ել չգնջացա, ինչըու չգնացի ու ձիք փեսի հիդ դեմուղեմը չխոսեցա, (Կեկելին.) Շատ հարց ու բա-րով արակ քիզ, այ, կեկել, (Կեկելը թեթեվ գլուխ ե տալիս Գիքոյին, առանձին աչքերը սրբում ե յեվ կարը շարունա-կում.) Խիստ իմ կարոտի, կոսե... (Քթախոտ քաշելով.) Հըմ... Եե... (Կեկելը նույն միջոցին դարձյալ սրբում ե աչքերը:)

ՇՈՒՇԱՆ.—Հալեցիր ու մաշեցիր խոմ, Գիքո, մե ասն ու պրծի, ելի:

ԳԻՔՈ.—Ե'ս սահաթիս, ես սահաթիս, Շուշան... (Քթախոտ քաշելով.) Հըմ.. Եըմ... վոխմկ... աստուծ, վուր մարթուն ստիղծիլ ե, համփիրութինն ել հիդն ե տվի: (Քիթը սրբում ե թաշկինակով:)

ՇՈՒՇԱՆ.—(առանձին) Քու աճկն ել:

ԳԻՔՈ.—(Կրկին քթախոտ քաշելով:) Հըմ... Են եյի ասում, վուր, (կամենալով փոշտալ) վուր, վուր, վուր... (Փոշտում ե,) ըա հըմ... (կրկին կամենալով փոշտալ) Ըա ըա ըա... (փոշտում ե) ըա հըմ... Ո, հա, հա, հա... ի՞նչ բուռնութի յե. խեր եկավ, այ:

ՇՈՒՇԱՆ.—Առուխչ ըլիս:

ԳԻՔՈ.—Վուրթիքդ (կամենալով փոշտալ) ա ա ա ապ-քին, (փոշտում ե) ըա հըմ...

ՇՈՒՇԱՆ.—(առանձին) Ս, չոռ ու ցավ, թե խոսիս:

ԳԻՔՈ.—Ես խեր ու կես... (կամենալով փոշտալ.) Ես ել, ել... (Կրկին փոշտում ե) ըա հըմ... Ես ել ջուխտ խեր... կուլի վերը խեր ուի:

ՇՈՒՇԱՆ.—Քունը վունց խերն իմացա ջեր ու վունց շառը:

ԳԻՔՈ.—Խերն ել ու շառն ել աստծու ձեռին ե, Շուշան: (Քթախոտի տուփը գրանը դնելով:) Ոհ, խիստ թեժ բուռ-նութի յե ելի անիծածը: Հազրենը մե ջեր չի պատահի, վուր բուռնութու վրա փոշտամ. ամա երեսում ե իմ սովոր բուռնու-

թին չին ավի...՝ Ղալբացավ աշխարքը, Շուշան, ինչ անիս: (Տուփը կրկին հանելով զբանից յեկ բաց անելով.) Ի՞մքին խո չկա մեջը խառը: (Զննելով.) Զե, վուշինչ չե երևում... Արա, Շուշան, քու աճկը կուլի ուփրո լավ ըլի կտրում:

ՇՈՒՇԱՆ.—(առանձին:) Քու աճկի պիտիկն ել կարիմ: ԿԵԿԵԼ.—(առանձին) Պատիմ ե:

ԳԻՐՈՒ.—Մե տիս, ե, թե աստուծ կու սիրիս:

ՇՈՒՇԱՆ.—(առանձին) Ղաղաք ե... (Սոնում ե տուփը յեվ զննում:) Լավ բուռնութի յե երևում. ամա, մե ասա, թե ստիղծողը կու սիրիս, ինչ խաբար իս բերի... Հոքեներուս խո հանեցիր: (Տուփը դնում ե Գիրոյի մոտ տախտի վրա:)

ԳԻՐՈՒ.—Տն, ինչ խիստ իս շտապում: Մուլափ տանք: Եգեռքա Պեպոն ել վրա հասնի, նրա բանն ուփրո յե: (Քիթը շարունակ սրբում ե թաշկինակով:)

ԿԵԿԵԼ.—(առանձին:) Ճաշն ել եստի ե ուզում անուշ անի, մինք խո խիստ զատ ունինք ուտելու, մնացիլ ե սա:

ՇՈՒՇԱՆ.—(առանձին:) Ըը... Բարի-բան ննդնի քնթումդ, հըմ... (Գիրոյին) Ախար, մե խոսկ ել ե մայինց ասա:

ԳԻՐՈՒ.—Գիրիս ինչ ե, Շուշան. (ծայնը ցածրացնելով:) Մե ախչիադ դուս զրդե ախար, ե:

ՇՈՒՇԱՆ.—(ցածր:) Նա իր բանին ե, ինչ կու իմանաւ ցածր ասա:

ԳԻՐՈՒ.—Վուր իմանա, լավ չե, Շուշան, ե. չիս գիդի: Թե Խիկարն (ցուցամատը ճակատին տանելով) ինչիր ե ասում եստու վրա:

ՇՈՒՇԱՆ.—Խիկարն մվ ե, քան, նա ել խառն ե եստումը:

ԳԻՐՈՒ.—(ծիծաղելով:) Հը, հը, հը, հը... (Ծիծաղը դառնում ե հազ:) Հու, հու, հու, հու...

ՇՈՒՇԱՆ.—(առանձին:) Ա՛յ, աստծու կրակ, թե ասիս ու պրծնիս:

ԳԻՐՈՒ.—(հազը շարունակելով:) Խիկարը, հու, հու, հու... Փիլիսոփա... յեր. հու, հու, հու... (Պեպոն կուլիսի հետեւ վից յերգում ե՝

«Շարաբի շամ շուդա ասթ,
Շուբհի նա դարդ»:)

ԿԵԿԵԼ.—(առաջ վազելով յեկ ուրախ:) Ա՛յ, Պեպոն:

ՆՐԱՆՔ, ՊԵՂՈ

ՊԵՂՈ.—(յերգը շարունակելով, ներս և մտնում դիմացի դռնից՝ զլխարկով, հասարակ սեվ հագուստով, թեվքերը հետ ծալած, դամբը (ուսկան) ուսին յեվ առջեվը գոտկից կապած կարմիր թաշկինակում կենդանի ծկներ.)

«Արաղի քիշմիշ ասթ,
Բար դար փիալա,
Դյալ ալլա»:^{*}

ԿԵԿԵԼ.—Աչքեներուս խո ջուր կտրեցիր, Պեղո:

ՇՈՒՇԱՆ.—Ինչի՞ն դիզիս, տն, կեհաս ու կու կորչիս:

ՊԵՂՈ.—(ուրախ.) Վա, Ասենց վուր չանիմ, աստուձ մանանա խո չե գելիր զրգում միդ համա... Ո՛, Գիքո, լավ վուխտն իս եկի: Մե մուրծեք ուտեցնիմ քիզ ևս սհաթիս, վուր քեփդ դա. ամա թի քնթես բուռնութի իս կաթեցրի վրեն, ել մե թիքա շիմ տուր տա, հըտ... (Հանելով մի մեծ ծուկը:) Արա... (Զկան պոչով Գիքոյի թշերին խիմելով:) Ո՛, շենի կի ճիրի մե... Մե թամաշա արա, եւ:

Գիքո.—Զանես, չանես, տն: (Կեկելը ծիծաղում եւ.)

ՇՈՒՇԱՆ.—(ժպտալով.) Մե մաւագի, տն, բա գրոս հանաք եւ, բան եր խոսում:

ՊԵՂՈ.—(թաշկինակը հավաքելով յեվ ծիծաղելով:) Բան եր խոսում. ավատաս խոսկը խոսկին կարկտի պես վրա տա: (Գիքոյի ծախս կուռը բռնելով ու ամուր շարժելով:) Վաւնց իս, վանց, Գիքո:

Գիքո.—Կուսոս, կուսոս, տն, երկաթ և մաջետ:

ՊԵՂՈ.—(ծիծաղելով:) Բաս չե ու քի պես փափա կուլի: (Թաշկինակով ձկները տալով կեկելին.) Արա, կեկել, իս տար մե ենդի յնուրն ածա ու մե կրակ եւ չաղ արա... (Ցածը ծայնով) Փետ խո ունինք:

*) Պարակեան եւ.—Գինին Դամասկոսի յի յեղել,

Կասկածանք չկա,

Հյութը քիշմիշի յի,

Վեր առ փիալան:

Թուրքերն եւ.—ՅԵկ նոսէր:

ԿԵԿԵԼ.—(ուրախ յեվ ցածր.) Մե երկու վառելու ելի էա:
(Առնում և կապողը.) Մըթոսիմ ել.

ՊԵՊՈ.—Չե, չե, չե, չե: Կակուլին աղաչանք արավ, զուր
նրան մուլափ տանք, խիստ ե սիրո մ ձկան մորթիլը, (Տնտղե-
լով ծուկը Կեկելի ծեռքին, թաշկինակի մեջ:) Մե մտիկ ես
բեձաթին՝ վարդի լի կուչ եկի. Ե... Տար, տար, յես սրանց հո-
քուն մեռնիմ: Ես ել վուր առանց փուղ չըլի ճարգում, մի ար-
ժանի կոներ միզ: (Իր ծոցին խիելով յեվ Կեկելին ցածր)
Փուղ ել ունիմ, Կեկել, այ, մի վախենա, հինգ մանեթի ծա-
լսեցի:

ԿԵԿԵԼ.—Ենդուր ել ուշացամբ:

ՊԵՊՈ.—Վա... բաս... Մե ես գիշեր ել գնամ, աստուձ աճկը
քաղցրացրիլ ե ինձ վրա:

ԿԵԿԵԼ.—Ա՛խ, Պեպո ջան, յարաբ քմնի չարչըրվիս միզ
համա: (Դուրս ե գնում ծախ*) դոնից, տանելով հետը կարը,
կարի բոխչան յեվ թաշկինակով ծուկը:)

ՏԵՍԻԼ Դ.

ՆՐԱՆՔ առանց ԿԵԿԵԼԻ

ՊԵՊՈ.—Ռւրիշ, Գիքո, ասա, Ե, փուղը լավ ե թե ջմնը:

ԳԻԲՈ.—Երկուսը մետի լավ ե, Պեպան, թե աստուձ կու
տա:

ՊԵՊՈ.—Տն, Կողադա տարի յե ապրում իս աշխաքումն
ու չիս գիղի, վուր փնտղը աստուձ չե բաժնում: Թհղ աստուձ
մենակ ջան տա մարթու, փնտղ ե ու փուղ: (Դամբր բաց անե-
լով:) Փնտղով իմ առի Ես: (Իր կրծքին խիելով:) Այ, սաղ
ըլի... (Կռացած դամբը զննում ե:) Ո, հա, հա, հա... Բնչ
դամբ ե, ենդադա զցեցի, ելի սաղ սալամաթ ե մնացի..., Պետ-
րե-Մորիկի պես տիզ չի ըլի. Փուռմ ելի թե չե զըմզըմ, գուս
եյին քալի լոթիքը խըլըլտալի Խալիքը վուր խիլք ունենա, ես
անց ել բան ու գուրձ չի ունենա: Են վուր զցում իս... ու ինչ-
ըու գուս քալիլը, սիրադ՝ գընդզընդ կոսիս թե ձահ ու կինքդ
պիտի բաժնին: Թե մութ գիշիք ել ե, հենց զիդենաս աստղիը
հիդդ մասրաճաթ ըլին անում, ու թե լուս ե խոժ՝ կոսիս լուս-

*) Ազ, ձախ պետք ե ընդունել միշտ հանդիսականների գիրքից նո-
յելով:

Նիսկը գլխիտ փարվնի պես կանգնած եւ լոթին... Եշուամն ել վուր տուն իս գնում ու վուանիրտ ել թաց եւ ըլում, ու մեքաջ փոռում իս... Ո՞հ, չենի կի ճիրի մե... (Հեռվից զցում եղամբը Գիքոյի գլխին, Գիքոն մնում եւ մեջը.) Ո՞հ, ահ, ահ... Գիքո, ինչ ձուգն իս, արդի պղինձ պիտի քիզ: (Ծիծաղում եւ:)

ՇՈՒՇԱՆ. — (ծիծաղելով:) Տն, ըա զրոս ետունք եւ:

Գիքո. — (ազատվելով:) Տն, վախեցա, եւ ես ինչ հանգի հանար եւ:

ՊԵՂՈ. — (դամբը հավաքելով:) Բաս գիփ մե՞ գլուխ իսո չիմ լաց ըլի... Սիրտս վուր դարդին տուր տամ, լուրի պես կուտպաքի:

Գիքո. — Զե, մայինց, մե քիչ անգնջում իս:

ՊԵՂՈ. — (դամբը թոկի վրա վուելով:) Բաս չե ու քի պես հում-հում խաշամա կուլմ. բուռնութին քնթեմես ծլծլալի գելիր ըլի գալի ու ինչըու մե բան առիմ, ուխտի լոխմի պես խոսկիրը բերնում ծամում ըլիմ... (Ծիծաղում եւ:) Հա հա, հա, հա:

Գիքո. — ՀԵյ գիղի, Պեղան:

ՇՈՒՇԱՆ. — Տն, քմնի ասիմ, մե անգամ գի ախար, եւ ալրտս շուռ եկավ... ինչոր փիս խաբար եւ իմացի միք փեսի պիյեր:

ՊԵՂՈ. — (վախենալով:) Ի՞նչ փիս խաբար:

Գիքո. — ՄԵ նստի, Պեղան, հենց ապրիս:

ՊԵՂՈ. — Եսինց ել լավ իմ, ասա:

Գիքո. — Զե, վուր նստիս, ուփրո լավ կուգի:

ՊԵՂՈ. — (նեղանալով:) ՏԵր ողորմած աստուծ: (Մոտ եքաշում մեկ աթոռ յեվ նստում Գիքոյի ծախ կողմը:) Հը, ես ել նստեցա:

Գիքո. — Մհելափ, եւ տաքանալով բան չի դառնա ախար: Պիտի փիքը անինք, թե վաւնց ոտկինք բանին: (Վորոնում եքթախոտի տուփը:) Ի՞նչ ելավ, ան, հստի յեր:

ՊԵՂՈ. — (տուփը գտնելով յեվ տալով նրան:) Հը, բռնեք, ինչըու չքաշիս, իսո չիս կանա խոսի:

Գիքո. — (վերցնելով քթախոտ:) Այ, ախպեր... Եսոր առուտեհան մե փիս հուտ իմացա... (Քաշում եւ քթախոտը:) Հըմ... Սիթամ ձիր պիսի համար ուրիշ ախչիկ ին լուս գցի:

ՇՈՒՇԱՆ. — Վեյ, քոռանամ յես:

ՊԵՂՈ. — (վախեցած յեվ ծայնը յերկրացնելով:) Եյ...

ԳԻՔՈ.—Բաս... Միթամ խիստ լավ ախշիկ ե, կոռե, ու փուղ ու բաժինքն ել ձիր խոստացածի վրա ուվիրո շատ: (Կը զին վերցնում ե քթախոտ յեվ քաշում:) Հը՛մ...

ՊԵՂՈ.—(բարկացած:) Հը՛մ, հը՛մ, տո, քաշե ու պրծի, Է՞լ լի... (Տուփիը խլիով՝ քթախոտը թափում ե Գիքոյի բուռը յեվ այդպես մոտեցնում նրա քթին,) Հը՛, կշտացի:

ԳԻՔՈ.—Վա, վա, բռւռնուռմիս, ընւռնութիս... ի՞նչ գիտ մողին իս, տո: (Քթախոտը կրկին տուփին ե ածում:)

ՊԵՂՈ.—Արփիլս գիգենա, Գիքո, ել սաղ չիս պրծնի, թե գիր մետի ես սհաթիս չիս հիդ ասի:

ԳԻՔՈ.—Ճա, ախար, վուր գաթար չիս տալի:

ՇՈՒՇԱՆ.—Դուն ուլփրո շշկեցրիր, քա:

ՊԵՂՈ.—Դէ, չնւստ:

ԳԻՔՈ.—Ճա, են եյի ասում, մտես ննդավ...

ՊԵՂՈ.—(կիսածայն, առանձին.) Ա՛յ, զահրումար:

ԳԻՔՈ.—(շարունակելով:) Ճա, վուր առուտեհան են հանգիքան իմացա:

ՊԵՂՈ.—Ը հ, քու մարթ ասողին ի՞նչ ասիմ. տո, ետ խոռ ասիր, իժաւմ:

ԳԻՔՈ.—Ա՛յ, իժում... Գնացի գեմուղեմը ձիր փեսի մող, տեսա տանը չեր, են՝ զանց գնացի զուքանը, տեսնիմ՝ են ալղիւ՝ զաշտի նաթելը հիդը քշիչում ե, են սհաթին ճկըտկիս կծեցիր: (ճկույթը բերանն ե տանում:) ասի բանը բանի նման ե: Մեքիչ մնացի, են սատանի կնիկը վուր քաշվեցավ, մող գնամ մելավ ծանդը ու բարակ հիդը խոսիմ ես միր պարնի հիդ:

ՊԵՂՈ.—(անհամբերությամբ:) Իժում ի՞նչ ասավ:

ԳԻՔՈ.—Ա՛յ, ես սհաթիս, կարքով գալիս իմ, ելի:

ՊԵՂՈ.—(բռլոնցքը բարձրացնելով:) Ը հ, Գիքո, եկալ, աստուծ գիգենա:

ԳԻՔՈ.—(հետ քաշվելով:) Յա, մի խառնի, ե:

ՇՈՒՇԱՆ.—(բռլոր խոսակցության ժամանակ անհամբերությամբ ծնկները տրորում ե,) Վա, բա գագեմարթա, Պետո:

ԳԻՔՈ.—Չեր անդանը բաղմնչու արավ, ամա վիրչը կոտրվեցավ ու իմացածս՝ զուրթ դուս եկավ: Կինա՝ զամ լիզուս վիզուը ննդավ, հորվան անմահ պատարաքը գիգենա:

ՇՈՒՇԱՆ.—Վայ, գեղինը պատռե ու նրան գեիեր տանե, վուչը:

ՊԵՂՈ.—(բարկանալով:) Վա, գժվիլ իս թե հանաք իս անում:

Գիրքն. — Իմ հոգին զիզենա:

ՊԵՂՈ. — Տն, իժում նա բնչ ասավ:

Գիրքն. — Նա ել են ասավ, վուր յ'ես ձիր կեկերին խիստ իմ ուղում, կոսե, ամա բանը վուր զլուխ չե գալի, կոսե, յ'ես բնչ անիմ, կոսե:

ՇՈՒԾԱՆ. — (յերկու ծեռքով ծնկներին խփելով:) Մտիկ են աննամուսին, ե:

ՊԵՂՈ. — (բարկանալով:) Վժւնց թե գլուխ չե գալի:

Գիրքն. — Ենենց, ելի՛, ասում ե՝ ինչի՞ ինչ խոստացիւ եք շեք տալի, կոսե: (Հոգվոց հանելով:) Ե՛հ, ասուռե:

ՊԵՂՈ. — Վժւնց թե չինք տալի... Տն, զանա ինքը չի գիդի բանի գորութինը:

Գիրքն. — Յ'ես ինչըու վժւը մե որը մնամ, կոսե:

ՇՈՒԾԱՆ. — Ո՞ւր ե մնում, ով ե ասում նրան վուր մնա: Թող ուղե, խոստացածն ենդի չե: Յ'եփոր գուս գու քա, իրն եւ ու իրը... աստուծ անեք քու գիվանն, Արութին:

Գիրքն. — Նա ել ետ ե ասում, Շուշան, ե. յ'ես ասում ե ախչիկ իմ ուղի, կոսե, գավի գառաքա խոմ չիմ առնում, կոսե: (Գլուխը շարժում եւ.)

ՊԵՂՈ. — Տն, ետունք դիփ մետի խո հարյուր ջեր խոսիլ ինք. հիմի նուր չար, նուր բարի:

Գիրքն. — Բանն ել են ե, Պեպո ջան, վուր նա ասում ե՝ եղ բանն, ասում ե, տարիք կու քաշե, կոսե, ու յ'ես ել չիմ կանա համփիրի, կոսե. կնիկ ուղիլը խիստ իմ ուղում սրառվ կոսե: (Աղաղակում եւ.) Միզա քիզ, աստուծ, միզա... Ես իմ միխկի պատիճն ե դիփ...

ՇՈՒԾԱՆ. — Մե խոսկով ասա, Գիքո, վուր կեկելին թողա նում ե, ելի՛...

ՊԵՂՈ. — Ու բանը մաշլա յե ըլում:

Գիքո. — Թե ես սահաթիս վուզը չճարեցիք, մաշլա արած եւ մաշլա արած:

ՊԵՂՈ. — Իստակ:

Գիրքն. — Իստակ, իստակ,

ՊԵՂՈ. — (չարացած վեր ե թռչում տեղից յեվ մի քանի քայլ առաջ նետվելով՝ ծեռքը ծեռքին խփում:) Վայ, քու տղիս տղա... (Դիմում ե Գիքոյին՝ ծեռքերը առաջ տանելով:) Տո, իժում բնչ ասիր:

Գիրքն. — (հետ քաշվելով վեր ե կենում տեղից:) Դուն ինձ ասա, ել բնչ պիտեյի ասիր:

ՊԵՂՈ.—(առաջ գնալով.) Տհ, ախար չհմսկացրիք իրան,
վուր չինք խափում.
ԳԻՔՈ.—(հետ քաշվելով.) Վա, բայ չհասկացըն:
ՊԵՂՈ.—(առաջ գնալով.) Իժում:
ԳԻՔՈ.—(հետ քաշվելով.) Խժում ելի են ասավ, ելի, վաճ
ՊԵՂՈ.—(առաջ գնալով.) Ու դուն ել՝ զարուլ արիր:
ԳԻՔՈ.—(հետ քաշվելով.) Վա,
ՊԵՂՈ.—(առաջ գնալով.) Զե, մե ինչ խիլք բանացրիր,
բնչ...

ԳԻՔՈ.—(հասնելով բեմի աջ կողմը յեվ նանապարհ
չգտնելով.) Վա, հեր ոխնած, յ'ես ինչ անիմ, թե կի են մարմն
հնենց և ասում:

ՊԵՂՈ.—Տհ, դուն ինչ ասիր, դուն:

ՇՈՒՇԱՆ.—Պեղան, գժվիլ ի՞ս, թե ինչ խաբար և: Ախար
ետ հանդի խոսիլ կուլի:

ԳԻՔՈ.—Տհ, յ'ես ել են ասի, ինչոր զիդիս, ելի՛: Ասի, յա մաս
ինչում աղա Արութինի փուղը դուս զա, են չախն ուղե, ասի,
յա թե չե, ասի, հիմիսկ եվետ ուղե ու Արութինին փուղը
դուն առ, ասի:

ՊԵՂՈ.—Իժում:

ԳԻՔՈ.—Իժում են, վուր նա կտրական ասավ, թե յ'ես դա-
վի-դառարի գլուխ չունիմ, կոսե: Գուղիք փուղը եսոր բերեք,
յ'ես ես գիշեր ելիտ փսակվիմ, կոսե: Յես իմ խոսկեմեն հիւ-
չիմ կանգնում, կոսե:

ՊԵՂՈ.—Տհ, բաս ետ եյիր քովլանում, թե խելոք մարթ-
իմ, կոսե: Ետ ելիր ասում, թե Խիկար իմաստունը գլխեմեն-
ինչու վուղքը գիֆ կարթացիլ իմ, կոսե: Ետ ե ելի քու-
շնուրը:

ԳԻՔՈ.—Ախար... (հազում ե) հմւ, հմւ... յ'ես ինչ միր
ունիմ... (Հազը սաստկանում ե) Հմւ, հմւ, հմւ...

ՊԵՂՈ.—Ա՛չ, զահրումար ու չոռ ու ցավ:

ՇՈՒՇԱՆ.—Պեղո, Պեղո, ինչ ելավ քիոզ:

ՊԵՂՈ.—(հեռանալով Գիքոյից) Զե, յ'ես գնամ մե ես
սհաթիս հիդը խոսիմ՝ տեսնիմ թե վնւնց և թողնում:

ՇՈՒՇԱՆ.—(վեր կենալով տեղից) Զե, դուն կաց ջեր, Պե-
ղո, յ'ես գնամ մե են կապտրած Նաթելին տեսնիմ: (Շտապով
զաթիքան հանում ե նահալու տակից յեվ գնալով:) Գիքո, մե
հիգս արի, թե քու աստուծ կու սիրիս, ես քուչեն անց կացրու-
(Դուրս ե գնում դիմացի դռնից)

Գի՞թ. — (գնալով յեվ հազից խեղդվելով:) Քի մոդ բան
բռնիւը գավիճ-գարարա յե գրուստ. (Դուրս և գնում Շուշանի
հետեւից.)

ԳԵՂՈ. — (Գիքոյի հետեւից.) Քու մարթ ասողին ել ինչ ա-
սիմ:

ՏԵՍԻԼ Ե

ՊԵՂՈ, մենակ. մի փոքր լուսթյունից հետո

Աւրիշ ախչիկ գուղիս. բաս Պեպոն մեռավ, Բլի... Տեսնիմ
վժւնց իս ուղում... (Նորից յուություն:) Զե, Պեպո, դուն հալալ
տղա իս, հալալութինը սիրում իս, քու բանումն ել հալալկաց, ին-
չնվ և ուստ քի մոդ քու փեսեն. խոստացիլ իս, պիտիս կատարի
քու խոսկը... Թե զլխիտ դրակ ունիս, պիտիս տա. թեգուզ կա-
շիտ պլոկվի, թեկուզ հոքիտ դուս դա, պիտիս տա... Աճա վնր-
դի ճարիմ են զանրումար փուղը... Ո՞վ կու տա ինձ են՝ զադա...
(Նայում ե պատերին:) Ո՞վ ինչ կուտա եստուը. դիփ մետի
վուը դրագ գնիմ, դիփ մետի վուը ծախիմ՝ տուն, տիդ, շուը...
ինչ կու տան... կիսի կեսն ել չի զուս դա... Աս ել վիրչն, Բլի.
ես եյիր ուղում, Բլի, Արութին. եստու համա եյիր չարչըրում,
Բլի, ինչըու հիմի... Աշխաքումը պիտի խայտառակ ըլիմ, Բլի...
ել իմ ննդրտերանց երեսին վժւնց մտիկ անիմ. ինչ կոսին: (Գլխարկը հատակին ե խփում:) Փու քու նամուսին...

ՏԵՍԻԼ Զ

ՆԱ, ԿԵԿԵԼ

ԿԵԿԵԼ. — (շփոթված ներս մտնելով ծախ գոնից:) Ես ի՞նչ
խաբար ե, Պեպո:

ԳԵՂՈ. — (զլխարկը վերցնելով յեվ թափ տալով:) Վուչինչ,
ի՞նչ խաբար պիտի ըլի:

ԿԵԿԵԼ. — Ի՞նչ իս ինձմեն թախկացնում... (Լալով:) Յ' ես
իմացա, դիփ իմացա, Պեպո...

ԳԵՂՈ. — (զլխարկը ծածկելով:) Ի՞նչ իմացար, Կեկել, ի՞նչ
իս լաց րում:

ԿԵԿԵԼ. — (թաշկինակով սրբում ե աչքերը յեվ կոկիծով:)

իմացա, Պեպո ջան, իմացա... Ես սհաթիս գեղեն ու Գիքոն վուր գնացին... Նրանց խոսիլն իմացա... Ինձ թողնում ին...

ՊԵՂՈ.—Մուլափ, մուլափ, Կեկել, ջեր ելի աստուծ ողոք-մած ե...

ԿԵԿԵԼ.—Աստուծ շատ վուխտ ե՝ խոռվ ե կացի իմ գլխին, ել ինչ ողորմած ե... Խալիումն ինձ պաշ անե, գիտունքը շնա-հալուրին, իժում ինձ թողնե ու զնա աւրիշին ուզել... Բատու համա ստիղդից ինձ աստուծ... Միթամ անմիզ փալաս եյի, քու-չեն գցեցին... միթամ քուչի ցեխ իմ, թռղ վուտի տակը կոխ-շրաբին... Վայ իմ նամուաին... (Լաց ե լինում յեվ աչքերը սըր-բում.)

ՊԵՂՈ.—Ախաթ, Ջեր անմիզ իս լաց ըլում, Կեկել, Ե:

ԿԵԿԵԼ.—(Չարունակելով լացը.) Ինչի՞ գեղինը չիմ մտնում ևս սհաթիս: Ել իմ տոլ ախչերանց երեսին վմւնց պիտի մահկ անիմ: գիտունանց խոսելու պիտի գառնամ, գիտունքը մասխա-րա պիտի գցին ինձ, գիտունքը պիտի վրես ծիծագին... (Աչ-քերը սրբելով՝ լաց ե լինում.)

ՊԵՂՈ.—(Փաթաթվելով.) ԿԵԿԵԼ ջան, ԿԵԿԵԼ:

ԿԵԿԵԼ.—Կեկելի, Զլուքին քար կազե, Պեպո ջան, ու անը Քուոր շպոտե... Ել յես վեւնց պիտի ավլիմ աշխըքումը:

ՊԵՂՈ.—Մե սիրուդիդը, Կեկել, Ե.. Փուղի ան չե. Վուզ-գիոր կուլի, կու ճարինք... Թէ Արութինը չի տա, գիփ մետի կու ծախծնիմ, կեհամ ախկառթին կոնիմ, զլուխս զրավ կու դնիմ ու քիզ ետեց չիմ թողնի.

ԿԵԿԵԼ.—Զե, չե, Պեպո ջան. յես իմացա, վուր ետ վուզը եսոր եվետ ե հարկավուր ու մե որումը միզ մվ ինչ կու տա, մվ ինչ կու սիվցնե: Գլուխտ առանց են ել միզ համա զրավ իս դրի ու գրավի: Վուչ եր ելի են փուղի անումը, ես բեղնամու-թինն ել չեր գա զուխրս... (Լաց ե լինում, վուլիսից լսվում ե Կակուլու ծայնը՝ Պեպո):) Գեղինը պատսե ու ինձ գեղերը տա-նե: (Աչքերը սրբելով՝ դուրս ե վազում ծախ դոնից:)

ՊԵՂՈ.—(Ճնկանը խփելով.) Վայ ըու Պեպոյին (Վշտացած նստում ե տախտի վրա:)

ՏԵՍԻԼ Ե

ՊԵՂՈ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ:—(գլխարկը ծածկած, ներս զալով դիմացի զըռ-նից, մեկ ձեռքին թաշկինակում կապած պաշարեղեն, իսկ

մյուս ծեռքին կես թունգանոց.) Մե զբնի իմ բերի, Պեղո,
մե զբնի, վուր ե, դավի չունիմ:

ՊԵՂՈ. — (դասնացած) Թեփ կոնինք, Ելի:

ԿԱԿՈՒԼԻԻ. — Վա, ինչ ե պատահի:

ՊԵՂՈ. — Վուչինչ:

ԿԱԿՈՒԼԻԻ. — Վա, չիմ տեսնմում. եփած ել կու ճանչնամ
քիզ:

ՊԵՂՈ. — Ե՛հ, մախլսու, կու խոսինք, Ելի, իժում:

ԿԱԿՈՒԼԻԻ. — Հը՛, Ելի տեսիլ իս նրանցը՝ Հիուր կացի, թե
ախաղեր իսու:

ՊԵՂՈ. — Թաղնում ին, վուր հիուր կենամ:

ԿԱԿՈՒԼԻԻ. — Արի, մեմե ստաքան զցինք ջեր ճարա, թե
անդիկորը չին կորչի ու կու տեսնիսո... Վաղ ու վաղ ինձ մոդ ել
խիստ չուստ-չուստ եյին գալի, ամա (խփում ե կես-թունգա-
նոցին) գիզը գթա... Հանց պուղիրը տիսնում իմ թե չե՛ շա-
բաշշա... (Վրա յե՛ բաշում կես-թունգանոցը, հետո յերգում ե
բայցաթի:)

«Աղիզմ, նաչար, աղլամա,

Գյուն գըր, գեչար, աղլամա,

Բու ղափի թարս բաղլիան»

ՊԵՂՈ. — (գլուխը շարժելով, կիսածայն ու թիվ:) «Բիբ
գյուն աչար, աղլամա»:

ԿԱԿՈՒԼԻԻ. — (շարունակելով յերգը. վերջացնում ե բայց-
թին:)

«Բիբ գյուն աչար, աղլամա»: *)

Արա, (կես-թունգանոցը առաջարկելով Պեղոյին) տիս
թե թրի պես չկարե:

ՊԵՂՈ. — Ե՛հ:

ԿԱԿՈՒԼԻԻ. — Զիսկում. տեսնում իմ խիստ մինձիրն ին եկի,
եւ չը՛, վժւաց ին... (Թաշկինակը յեվ զինու ամանը դնում ե
սեղանի վրա յեվ ծեռքերով պողեր ներկայացնում) ես ես՝ զա-
գա պնդիրը... հը՛... ջեր արթուրմեքը սարքիլ ին թե չե: Ա-
խար, կու ճանչնամ ինչ պտուղ ել իս, ե:

*) Թօւրքիական եւ — Սիրելիս անձար, մի լար,

Որ ե, կանցնի, մի լար.

Այս գուռը թարս կողպողը

Մեկ որ բաց կանե, մի լար:

ՊԵՂՈ.—Հանաքի վուխտը չե, կակուլի, թե աստուծ կուսիրիս. բողադներուս դուս ե կտրվում: (Վեր ե կենում տեղից:)

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Վահ, ի՞նչ խաբար ե:

ՊԵՂՈ.—Ել ի՞նչ խաբար պիտի ըլի, բեղնամ ի՞նք ըլում. քվիրս թողնում ի՞ն:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Փեսմն:

ՊԵՂՈ.—Բաս ուրիշ մի կուլի:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Ե՛յ:

ՊԵՂՈ.—Աստուծ զիգենա:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Վայ, յ'ես նրա... Արի գնանք ծեծինք, Պեպոյ մե ալի՛դուլի ծեփիմ ես սհաթիս, վուր սապոկի կրնգի վրա յ'եռք ջեր վրա ու վրա պտուա գա... Արա, յ'ես քիզ ասում եյի, Պեպո, ե, վուր կուպեծը միր բան չե:

ՊԵՂՈ.—Բանը բանեմեն անց ե կացի, կակուլի, ել ետուրը ի՞նչ վայրկան Բանն են ե, վուր թե ի՞նչ խոստացիլ ի՞նք, ես սհաթիս չովինք, ես զիշիր ուրիշի վրա յե նշնվում:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Դե, քութահ արեք ու պլծեք, ելի... (Քամարը հետ ե անում.) Թե իմքին պակսի, ես ել վրեն ալելցաւ, մե հիսդ թուման կուտան... (Զախ ծեռ քով քամարը բարձրացնում ե:) Զարթնի ես, Պեպո ջան, (ազու բուռնցը ցույց տալով) ու մեկ ել՝ ես, ել ուրիշ վուչինչ չկա իմ մեջն, ախազեր,

ՊԵՂՈ.—Ետընցութենով բան չի դառնա, կակուլի ջան. գուն լավ զիգիս, վուր հարուր թուման վիուզ ի՞նք խոստացի, ու են անիծած Արութինը հսոր եքուցն ե գցում:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Ո՞հ, նա ապրանք, յ'ես քիզ ասում իմ, ի՞նչըու նրա փուրի վրա ել մե դհոլ չածինք, վուչինչ չի դուս գա:

ՊԵՂՈ.—Ե՞ն, կակուլի, զուն ել տենց զիգիս ամեն բան մենակ մուշտե կովով ե շինած:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Բաս ի՞նչի՞ չե տալի, թե դուրթ պարտ ե: (Քամարը կապում ե:)

ՊԵՂՈ.—Վժւաց թե դուրթ պարտ ե, բաս սհւա իմ խոսում քի մոդ, ամա են անիծած բարաթը վուր չե զթնըվում, ի՞նչ անիմ:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Ի՞նչ բարաթ, ետ չիմ իմացի:

ՊԵՂՈ.—Վա, բաս չիմ ասի քիզ:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Զե:

ՊԵՂՈ.—Վուր բարաթ ունելինք նրանն ու են բարաթը կորավ:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—ՉԵ, Պեպո, չԵ. են կի իմացիլ իմ, վուր են
բայդուշը փուղ և պարտեցի քու հորը, ամա բարաթը առջե
իմանալս ե... իժում ետ վթւնց կորավ, տո:

ՊԵՊՈ.—Աստուծ վուշ գիդե միր գլուխը:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Թե ախալիք իս:

ՊԵՊՈ.—Ասիմ, չասիմ, կակուլի ջան, ել ինչ կու ոտկըվի:
ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Թե լոթի իս, տո:

ՊԵՊՈ.—Ա՛յ, զունց եր, ախալեր... իմ հերը փուղ և ունե-
նում, տալիս ե նրան շահով.—լավ շահվեցանք.—բարաթն առ-
նում ե ու պահում ե... Քանի սաղ եր իմ հերը, թեգուղ քսան
ջեր իժ աեսի են անիծած բարաթը. հենց մեռնելու մե շաբաթ
առաջ ել ձեռին ուներ խիճճը... Մահի եղեն դութին բաց արինք
ել չկա, չկա, չկա ու չկա:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Եեե.. այ, թուրմե ինչ բան ե ելի... Տն, Պե-
պո, ինքն Արութինը չի՞ գողցի են բարաթը:

ՊԵՊՈ.—Ե՛հ, ի՞նչ իս սարսաղ սարսաղ դուս տալի, տո, միը
դութումը նա ի՞նչ դավի, ուներ:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Բաս հի կու գողներ, Պեպո:

ՊԵՊՈ.—Վուր գիդենամ, խո միզ համա ել լավ կուլի:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Կաւլի քու հերը հիդը տարավ, տո:

ՊԵՊՈ.—Մինք ել ետենց ինք ասում, կուլի շուր հաքցնե-
իս հիդը գնաց:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Մտիկ, ե... Արա են կինքումը թամաշա արա,
Պեպո, թե ինչ կոնին աղա Արութինին. Զուրս-չուրս սատանին
վուր բարաթն առչիդը կու ձքին, վայ, վայ, վայ, դեղի ծծիր,
դուն բարեխոս... Նետայի մե թամաշա տնիլ տան, Պեպո ջան
թեգուղ հենց ետու խաթիր կեհամ դժուխքը: (Ծիծաղում են:)
Տն, հանաքը դենք, ելի լավ պտուտեցեք, կուլի գինչի:

ՊԵՊՈ.—Տակն ու վրա ինք արիտունն ուտիզը, ինչս ասում:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Իժում են գոմշի գլուխն ել գիդե, վուր բա-
րաթը կորիլ ե:

ՊԵՊՈ.—Գիդե, վուր չե տալի ե:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Տն, խո գիդե վուր պարտ ե:

ՊԵՊՈ.—Բաս չի գիդէ:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Դե, տա, ե:

ՊԵՊՈ.—Անկճիտ բամբակը հանե, տո, մարթն ասում ե
թե, միսո չե, կոսե, դավթըներումս չիժ գըթնում, կոսե, բարա-
թը բի, ասում ե, ու փուղը տար, կոսե:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Աստուծ դիգենա, Պեպո, դարթնի գնքսիլը ու-
րիշ ճար չկա: Դուն ինձ թնդ. են Որթաճալիմեն վուր հիդ ե գա-

գի, ձեռնիրը հւենց գարսած, (ձեռքերը հետեւին և դարսում յեվ մի քանի բայլ անցնում Արութինի նման) հետախիկ շինիմ, հետամիկ շինիմ, զուր սեփիրի բայաթի կանչիլ տամ յես նրան:

ՊԵՂՈ. — Երանի քիզ, Կակուլի, զուր քուր չունիս մարթու տալու:

ԿԱԿՈՒԼԻ. — Ետու համա ել գարդ չեյի անի. ձիղ պես կուտածներու եղնեն չելի ննզնի. Վիրչի կինտուլին կու վոճախմ նրանց հիմ: Միզ զուր ստիղծիլ և աստուծ, թուչունքի հանզն և ստիղծիլ՝ որ դադինք, որ ուտինք, ել մեռնելին անդերձի գլուխ ով ունե, տու:

ՊԵՂՈ. — Լավ ե, լավ, խիլքիս մի զոռ տա, հերթք ե, գնան են մուրծեքը մորթում, նստինք մեմե թիքա չուլապիլ ըլինք, իժում տեսնինք՝ աստուծ ինչ և տալի:

ԿԱԿՈՒԼԻ. — Հա, եդ իմ խիլքի բան ե. մե սուփրեն վարդի յե, եստունք հիդ գարսինք: (Պերցնում և կապոցը:)

ՊԵՂՈ. — Ես սահաթիս... (Մութաքաները մի կողմին և դնում յեվ թարերից վայր և բերում հին ծեվի կապույտ նախշուն սփոռց, փայտե ղեղին զդալներ յեվ մի քանի ափսեն) Այ, բբ: (Սփոռոցը բաց և անում տախտի վրա յեվ իրեղենները վրան դարսում:)

ԿԱԿՈՒԼԻ. — (ըօքում և տախտի վրա, թեվով գլխարկը նետ և քաշում ճակատից յեվ կապոցը բաց անում. հետո թաշկինակից հետ դարսելով սփոռցի վրա մի կտոր դոշ, կանանչի, լոշ յեվ մոթալ: (Դոշը յեվ մոթալը կաղամբի թարմ տերեվներում:) Մաթիկ ես ալարալուխին ե, ես ել կանանչի, ես ել լոշ, ես ել մոթալ: (Դատարկի թաշկինակը վերցնում ե:)

ՊԵՂՈ. — (մոթալը զննելով յեվ տխուր.) Լավ ե երեվում:

ԿԱԿՈՒԼԻ. — Իժում ես կանանչուն բնչո ասում... (Վեր առնելով կանանչին յեվ թափ տալով:) Մաթիկ ե, կոսիս կանանչ մախմուր ըլի:

ՊԵՂՈ. — (միշտ տխուր:) Ղոշաղ իս, Կակուլի. մե ստաքնիր ել բնրիմ:

ԿԱԿՈՒԼԻ. — (տեղից վեր թռչելով:) Վա, միխկ չե. ես համեչի գինին ստաքնով կու խմին. հոքուտ ինչ իս ասում... (Գլխարկն ուղղելով զնում ե կիս-թունգանոցը վերցնում:) Տհ, են քիշանը բի, զուր խմելիս երեսարքը մեջն երեա քրիստոնի պես ե: (Կիս-թունգանոցը տանում զնում և սփոռցի վրա:)

ՊԵՂՈ.—(Նույն միջոցին գնալով:) Գիդիմ, գիդիմ... (թարերից վերցնում ե յեկ բերում մեկ հատ բըեղան, մի քանի զինու բաժակ յեկ արծաթազարդ փայտե կուլա.) Հը՛, ևս ել քու բիղանը, ևս ել վրեն ավել թե գուզիս: (Բոլորը դարսում ե սփռոցի վրա յեկ կարգի բերում:)

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(վերցնելով կուլան:) Ա՛հ, քու հոքուն մեռնիմ, Պեպո ջան..., ի՞նչ լոթին իս ելի, առ... Ա՛յ ՝Պայիդի բան... (Բարձրացնելով դատարկ կուլան բերանից փոքր ինչ հեռու, իբր թե խմում ե...) Կը՛ է կըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ կըլ... Զան... Հոքիս չիմ խնաճի հու քու բլրութի ճկճկուցին... Է՛հ... (Համբուրում ե կուլան.) Չարդ տանիմ յ'ես...

ՊԵՂՈ.—Ա՛խ, կակուլի ջան, պիտի չարդ չունենամ, վուշ լավ բլին:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Տն, մարթ ևս հանգի հոքեվուրթի ունենա, ել դարզը ի՞նչ վուանիրս ե: (Կուլան վայրե դնում սփռոցի վրա:)

ՊԵՂՈ.—Լավ ե, լավ... Դե՛, գնա, ել մի ուշացնի. եստունք յ'ես կարքի կու բերիմ:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Մո ձնւդն եփիմ, մե ձնւդն եփիմ, Պեպո ջան, (գնալով) քեփդ բաց բլին: (Մտնում են դիմացի դռնից՝ Շուշանը դաթիբայով յեկ Գիքոն գլխարկով ու ծեռնափայտով:)

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Բարնվ, դեղի ջան. (Պեպոն անշարժ յեկ հետաքրքրությամբ նայում ե Շուշանին:)

ՇՈՒՇԱՆ.—(Կակուլուն:) Ա՛պրիս, վուրթի:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Ո՛, աղա Գիքո, բարով յ'ես ու գուն: (Առաջ գալով յեկ Պեպոյին՝ ցածր:) Սրա վրա լավ ՝դո՞նադ չգթմք, առ:

ՊԵՂՈ.—Մուլափ... (Շուշանին:) Ի՞նչ իմացաք: (Կակուլին Գիքոյի հետեւից նրա նման իբր թե քթախոտ ե քաշում, բայց իսկույն դադարում ե յեկ ուշադրությամբ լսում խոսողներին:)

ՇՈՒՇԱՆ.—Ել ինչ իմացա, գեղինը պատռե ու ինձ դեկերտանե, թե եսոր չճարեցինք, Պեպո ջան, ևս գիշիր դիփ մետի մողլա լի ըլում... Ա՛յ յ'երգնքին առնիս մագիերն, Ա՛րութին:

շամթիբան վեր առնելով:) Նա խո եսոր չի տա ու, ուրիշ տիզ
մվ ինչ կու ավտա միզ: Ելի հոքուն վրա հասա են կապկտրած
Նաթելին, թե չե են և վիրչի խոսկն եր տանում նուր ախչկա
ափրոչչմեն են միը սիվերես փեսի մոդ: Սատաննեն անե նրա
դիվանը, հրա:

ԳԵՂՈ.—Տն, փեսիմեն ինչ իս ուզում, ինչ խոստացիլ ինք
պիտի տմնք թե չե: Նա ել մարթ ե, գլխին դղակ ունե ծած-
կած, միզմեն ել վմ: րդի խափվի. աշխարքն ալան թալան խո
չե... Են՝ զաղա ասի, վուր մուլափ, դեղի, ջեր փուղը դուս գա,
իժում եյինք նշնի, ամա ձիը ոխտեմեն մվ զու քա... Ի՞նչ հա-
ջաթ ու, ուր կու կորչի ու, Արութինը միը միխին ինչ կոնե
ու, հմշա խոմ չի ուտի ու, դե, գնա առ, տեսնիմ վմւնց իս
առնում:

ԳԻՔՈ.—(Նատելով սեղանի մոտ յել յերկար հոգվոց հա-
նելով:) Ա՛խ, իմ գողալ բարաթ... յարաք վմւնց կորար: (Խփում
ե ծնկանը:)

ԳԵՂՈ.—Ձենդ, Գիքո, թե չե, մասարս գիզենա, ինչ ջիզըն
ունիմ, գիփ քիզ վրա կու հանիմ ես սահաթիս: Դուն վուր չե-
յեր. խանովի ես բանումը, ես խայտառակութինն ել չեր գա միը
գլուխը, ջնանդամը փուղի գլուխը, նրա մողոնողին ել ինչ ա-
սիմ:

ԳԻՔՈ.—Ա՛խ, Պեղո, վուրթի, չիս գիզի թե սիրառ ինչ
հանգն ե փոթոթի գալի... Ի՞նչ անիմ, ի՞նչ ասիմ... Լավ կոնիս՝
սպանիս ինձ, պրծնիմ, գնամ դնջանամ:

ԳԵՂՈ.—Սրա ետ խոսկ ե, վուր դուն իս ասուս, Գիքո...
Տեսնում իո՞ սաղ ոճոոքը գլխիս քանդվում ե, ել ի՞նչ իս ես
Հզրած վուխտը, ցաղիս վրա նուր ցավ ավելցնում... Մե իմ
դարդն ել իմացի, հեր ոխնած, ե...

ԳԻՔՈ.—(խոր հոգվոց հանելով յել ցածր:) Ա՛խ, ախ,
ախ... (Զեռ բով աչքերը սրբում ե)

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Մուլափ, մե բան ասիմ չ'ես, Պեղո. ոմքին
վկա չկա, վուր վրահսուռ ըլի ետ պարտկեն:

ԳԵՂՈ.—Միթմմ գուն ել խելքիտ զոռ տվիր, ետով վուր
բան եր գառի, խո ես խաթաբալեն ել չեր ըլի:

ԳԻՔՈ.—Ա՛յ, վկա չիմ, բաս ինչ զահրումտը իմ... ամա
վուր չե ըլում:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Վահ, ի՞նչի:

ԳԵՂՈ.—(Կակուլուն:) Ես բանումը վկամկա չե ըլի, կո-
սի, չիս իմանում:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(առանձին, գլուխը շարժողով:) ԶԵ, յես նրան
պիտի հարիմ:

ՇՈՒՇԱՆ.—Ախար, են որը են սիվսրտովն ի՞նչ ջուղար ե-
րիտ կտրական:

ՊԵՂՈ.—Միթամ ջեր չիս իմացի... Ասալ՝ յես միտս չու-
նիմ, կոսե, դավթը ներումս չի երեվում, կոսե, թե բարաթ իմ
տվի ձիզ, բերեք ու փնտղը տարեք, կոսե:

ՇՈՒՇԱՆ.—Բաս միթամ հաշա յե ուզում ուտի՛: Ետ վմւնց
կոնե, Պետան. արա քիմեն չիմ արմնում: Ենենց հարուստ
մարթը լմիդի պիտի անի եղ հանգի բան: Նրա համա հարուր
թումանն ի՞նչ մե գրոշ, վուր ուզենա բախշելով ել կու բախշեր
ՊԵՂՈ.—Վմւնց չե, գեմ ե բերում:

ՇՈՒՇԱՆ.—ԱՌ, կու տեսնիս թե չե... (Լացի ծայնով:) Կե-
համ, առչիվը կու չոքիմ, լաց կուլիմ, իր վորթկերանց արիվ
սաղաղա զուղիմ, որթում կուտիմ, վուր թե միր մեչը բարաթը
լուս նսգնի, թիքա-թիքա անե միզ, բաթլնամա կու տամ,
տասը վկի ձեռք կու քաշիլ տամ. մե որ հոքի ունե տալու, իր
հոքիմեն ձեռը վմւնց կու վիկանե:

ՊԵՂՈ.—Մնւլափ, մհւլափ, դեղի, դմւն մուլափ, յես կեհամ,
յես. ես սհաթիս հիդ գու քամ, ինչըու դուք նստեցէք:

ՇՈՒՇԱՆ.—Զեր մե թիքա հաց կի. մե սհաթ առաչ ըլի,
հիդ ըլի, դիփ մեկ ե:

ՊԵՂՈ.—ԶԵ, ինչըու չտեսնիմ, բողազումս հաց չի դեվեր
գնա. զուրիրս վմւրթենս ե:

ՇՈՒՇԱՆ.—Երեղ զանգուկը դրի:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Յես ել զմմ, Պետո:

ՊԵՂՈ.—ԶԵ, գուն գնա բանդ տիս. ես սահաթին գալիս իմ:
(Դուրս ե գնում աջ դոնից:)

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Դուն գիշիս... (Խփելով իր կրծքին:) ԱՌ,
Արութին, յես թե քուոխտեմեն չեկա ու կու տեսնիս... (Դուրս ե
գնում դիմացի դոնից:)

ՏԵՍԻԼ Թ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ.—(Նստած սեղանի մոտ, քթախոտ քաշելով:) Ե՛ն,
աստած, որհնվի քու դաղաստանը:

ՇՈՒՇԱՆ.—(Նստում ե տախտի վրա յեկ ծայնը յերկա-

բացնելով:) «Ա՛խ, աստուծ, վախ, աստուծ, վուրին կու տամս սեւ
լով փետ, վուրին չիս առ ցախ, աստուծ: »

ԳԻՒԹՈ.—Հա, հա, Շուշան:

ՇՈՒՇԱՆ.—Ե՞ն, որհնվի նրա դազգահը. վուրին են՝ զագագա
գովլաթ և տալի, վուր իր գովլաթը չի կանացի ճարսի, ու վուրին
մեն որվան թիքին խլում եւ ու են ել գովլը թավուրին և տալի...
Փառք իրան, իր կամքն եւ հալրաթ մար ճակտին ես եր գրած:

ԳԻՒԹՈ.—(մոտենալով սփոռցին.) Ելի աստուծ ողորմած եւ,
Շուշան... (Վերցնելով դոշը յեվ գլուխը շարժելով:) Ի՞նչ պիա-
մաթ իմքին եւ: (Դոշը կրկին իր տեղն եւ դնում:)

ՇՈՒՇԱՆ.—(առանձին.) Քու աճկն ել... (Գիրքոյին.) Ել
ինչ ողորմած եւ, ջուրն եկիլ եւ ու միզ տարիլ եւ: Են անաստուծը
վուր ելի մե քան մոզոնեւ ու փուղը չտա եսոր, յարաք ի՞նչ կու-
լի միր չարեն, ճկերք կու ննդնի խիղճ ախչիկս: Թափաթ որն
որվան վրա հալվում եւ, ել ի՞նչը կու ապրեցնե նրան: (Լացով:)
Խիշդ իմ կեկել. նորչի արիվդ պիտի փշանա, ելի՛, թագի մա-
գիեր սիվ գերեզմանը պիտի մտնիս... (Լաց եւ լինում:)

ԳԻՒԹՈ.—(Լացի ծայնով:) Ո՞ն, ան, ան... (Դուրս եւ գնում
ծախ դռնից աչքերը սրբելով, իսկ աջ դռնից մտնում եւ Պեպոն
զարդի հագուստով, զլխարկը ծածկած, արխալուզի մի քանի
կոճակը բաց, քամարը կապած յեվ նրա վրա զոտիկը կապե-
լով:)

ՏԵՍԻԼ Ժ

ՇՈՒՇԱՆ, ՊԵՊՈ

ՇՈՒՇԱՆ.—Տն, ախար, ջեր մե թիքա հաց կուտելիր:

ՊԵՊՈ.—Հաց չե, զահը ըստ ուտիմ... ի՞նչ կոնիմ հաց,
գանա հանցի արժանի ի՞ն... (Գոտիկը կապելով:) Հացը վուր
ստիղծած եւ, գանա ի՞նձ համա լեւ ստիղծած, հացը վուր յ'ես
ուտիմ, աղա Արութինը ի՞նչ ուտե: Նա ել հաց ուտե, յ'ես ել
հաց ուտիմ... (Դառը ծիծաղով:) Հըմ, հըմ, հըմ...

ՇՈՒՇԱՆ.—Սիզիլ եր իմ որը, ահըմ: (Աչքերը սրբելով
դուրս եւ գնում ծախ դռնից:)

ՊԵՂՈ. մենակ, արխալուխի կոճակները մեր գցելով:

Գհամ, Պեղո, գեղին լզե, խալսի վուտներուն պաշ արա, նրանց վուտի ցիխը լիե... Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարթահիսարումն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն... Յեփոր դուզին, վուտի տակը կու զցին քիզ, վրետ կու ման գան, գեղնի հիդ կու հավարին... Ի՞նչ հաջաթ, ջիանձվելի վրա ինչ չով իս ավել... Դուն խո մարթ չիս, մարթկերանց համա կերակուր և ստեղծի քիզ աստուձ... Գիշիր չարչըրվի, ցերեկ չարչըրվի, ցերպնքի տակը լուսացրու, անձրչի ու քամու հիդ կոիվ տու, ձմեռը ցրտեմեն կոնկոռնա, ամառը արեգակի շուքումն երվի ու խորվի... գնա ենենց մե թիքա հաց ճարե ու են թիքա հացով դեղիտ ու քվիրդ պահե... Ես ի՞նչ, ի՞նչ մարթութին... Եսենց շունն ել ե ճարում մե թիքա, վուր տունը պահում ե... Միթամ դուն ել շուն իս... քանի աշխարքիս երեսին ման իս գալի. դուն ել շան պես կերակրվի... Ես ի՞նչ մարթութին ե... (Դադար): Մարթ եյիր ուզում դառնա, կեհեյիր մարթիք կու թալնեյիր, զուզութին կոնկիր, ինձ նման խղճերուն կու զբնեյիր. քասնուհինդ հազար տիդ արեն արտըսունք կու թափիլ տեյիր, են արտըսունքնիրը փուղ կու շինեյիր ու են փուզով ոսկե տնիր... Մեշը փառավուր ման գու քեյիր... դրոշկա, կալասկա, ձիանիր կու սարքեյիր, քսանուհինդ ինձպիսին գլխիդ՝ զարավաշ կու կանգնեցնեյիր... Այ, են չախը կոսեյի քիզ՝ մարթ իս, Պեղո, ի՞նչ մարթուն պիտի... ինչ քեփիդ գուզեր, են սահաթին կու ճարեյիր... Են չախը դիփունքը քիզ գլուխ կու տեյին, կու մեծընելին, պատիվ կու տեյին ու մեկս մեկու գլուխ կու կոռրեյին, վուր քու աճէլ նրանց վրա քաղցր ըլի: (Դուրս ե զնում դիմացի դոնից:)

ՎԵՐԶ ԱՐԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾԻ

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

Հարուստ դահիճ Ալութինի տանը: Աջ, ձախ և դիմացի դռներ ամենաշեղ զրապրիներով զրադարած: Վերջի դուռը բացվում ե դեպի նախառնայակը, վորի լուսամուտներից յերեսում ե սարտեղը: Դահիճի հատակը ամբողջապիս ծածկած ե գորգով, իսկ առաստաղից կախած ե վոսկեզոծ ջան հանդած մոմերով: Աջ կողմը բնկողմարան (քոչեթ). ձախ կողմը՝ մեծ հայելի

և բազմոց, վորի կողքին ամենաթանկագին սփռոցով ծածկած սեղան և նրա վրա հանդած լապտեր: Մնացած տեղերում, ուր հարկն ե, աթոռներ, բազկաթոռներ, փոքրիկ սեղաններ, վազաներ, կինկեաններ ու կանդելաբըներ դարձյալ հանգած մոմերով, արժագենիք, կիտրոնի և ուրիշ ծառեր, ծաղիկներ, ալբումներ և պատկերներ: Դիմացը, դռան աջ կողմը՝ փակած դաշնակի իր բուրակ աթոռով, խակ ձախ կողմը՝ վառարան և նրա վրա վրած գեղեցիկ ժամացույց, վորի սլաքները ցույց են տալիս ժամը ճիշտ յերկուսից քառորդ պահաւ ժամացույցը բանում ե: Ակզեռում բեմը փոքր ժամանակ դատարկ է: Ճերեկ ե:

ՏԵՍԻԼԱ.

ԳԻԳՈԼԻ, հետո ՍԱՄՍՈՆ

ԳԻԳՈԼԻ:—(յերեղում ե դիմացի դռան շեմքում մեկ մշակի հետ, վորի ծեռքին մեկ մեծ յեվ բավականին ծանր զամբյուղ զանազան իրեղններով: Զամբյուղում կա' շամպայն, կասիս, սարդին, զուրպիե, թիթեղի արկղիկով խավյար, Շվեյցարիայի պանիր, վարունգ, առանձին-առանձին թղթերի մեջ կարմիր ու սպիտակ ընտիր կեռաս, մի ուրիշ թղթում կարկանդակ:) Լավ, թող, (Վերցնելով զլիսարկը, զամբյուղն առնում ե մշակի ծեռքից. մշակը զնում ե, խակ ինքը դժվարությամբ ննրա և բերում զամբյուղը, վայր զնում յեվ հոգնած ընկնում դիմացի դռան մոտ դրած աթոռի վրա:) Ուֆ... (Փոքր ժամանակից հետո զլիսարկով սրբում ե ճակատը յեվ ցածը ծայնով կանչում:) Սամսոն, Սամսոն, (մոտենալով աջ դռանը, նորից կանչում ե:) Սամսոն: (Սամսոնը դուրս ե զալիս նույն դրնից արխալուխի կրծքի կոճակները բաց, ծեռքին շամպայնի զավաթ՝ սպիտակ յերկար սրբիչով մ սրբելիս:) Արա, գեթաղվա, Սամսոն ջան, գնա չուստ, ախչիկ-պարնին բնաց արա:

ՍԱՄՍՈՆ:—Եկամբ. ինչի՞ ուշացար. կրակ ե վեր ածում ախչիկ-պարունը:

ԳԻԳՈԼԻ:—Վա, յես ի՞նչ անիմ. հեստի բան ասավ, վուրասղիսարքը ման եկա, չճարեցի:

ՍԱՄՍՈՆ:—Վա:

ԳԻԳՈԼԻ:—Ումը հարցըի, վրես ծիծաղեցան. կմկլի տոլ ել, ասում ե, կլուբնիկ կուլի, կոսե:

ՍԱՄՍՈՆ: Հալբաթ կուլի, վուր ասավ... (Տնտղելով զամբյուղը:) Մնացածը դիմ բերի՞ր:

Գիդոլիի. — Դիմ, դիմ, ամա են մունդոեկ կլուբնիկը չճարեցի: Եքուբութին կի մե տիղ խոստացան, կուլի ճարինք, կոսի:

ՍՍՄՄՈՆ. — Հոքուն կու վրա հասնի. ՚ղոնաղլուղութինը եսոր ե, եքուց խո չե:

Գիդոլիի. — Բաս ի՞նչ անիմ, Սամսոն ջան: Զի ըլի՞, վուր առանց են յոլա գնա բանը՝ Հեստի բալիք իմ բերի, վուր ամեն մեկը կոսիս գոմշի աճկն ըլի:

ՍՍՄՄՈՆ. — Թե ինձ կու հարցնիս, Գիդոլի, առանց ետ բալին ել փուրը լավ կու կշատանա, ամա ախչիկ-պարնի խասիաթը գիդիմ, վուրգիոր ըլի, պիտի ճարիս. Կալոնիումը, նեմենցներու բաղերումը, ենդի հարցրու:

Գիդոլիի. — Հոքիս դուս եկավ, ի՞նչս ասում... Դուն գնա իմաց արա... (Նստում ե նույն տեղը, իսկ Սամսոնը զնում ե դեպի ծախս դուռը:) Խիստ դաթրեցա: (Նայելով այն դռան կողմը, հանկարծ տեղից վեր ե թռչում:)

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԵՓԵՄԻԱ

ԵՓԵՄԻԱ. — (դուրս զալով նույն (ծախս) դոնից, ամենաշշքեղ հագուստով յեվ ակնեղեններով զարդարված:) Ո՛հ, չարա ելավ. եսենց ուշանալն ել ի՞նչ ե: Հորես ՚ղոնաղնիրը մոդ կուլին. ի՞նքը պիտի վրա բերիմ, ելի աշխրթի բան կա:

Գիդոլիի. — Են՝ դադա ման իմ եկի, ախչիկ-պարուն, աստուծ դիգենա, ել ծնդներումս ջան չկա:

ԵՓԵՄԻԱ. — Զանդ դուս գա, ման արի. բաս յ' իս ման գմամ: Սրա, հիդ դարսե, տեսնիմ ի՞նչ իս առի: (Նստում ե:)

Գիդոլիի. — (զամբյուրը բերում դնում ե եփեմիայի մոտ, առջեվը չոքում ե մեկ ծնկան վրա յեվ մեկ-մեկ ցույց տալիս նրա միջի իրեղենները:) Ա՛յ, ախչիկ-պարուն, ես շանփանսկիքը տասն ու ութ աբասեն պակաս չտվին բոթիկեն. ի՞նքիք բոթիլն ե, թե ավելանա, մեկը պիտի հիդ վիկալնին, ենենց իմ բարիշած. ես են կարմիր լիկորը, ֆրանցուզիմեն առա, չուրս ու տաս շահի առավ անիծածը. ես սարդինկեքը, պերվի սորա, թամամ կես գուտին ե, վունցորս ասիր. խելի վուխտ հերիք ե, ես Դոնու զուրգիել. ես կարորկումը ժիտկա, մե ջուխտ մինձերես մեն բերի՝ պատը կնիր լավը չկեր. խիստ թաղեն ե, նուր բաց

արին, որթում հավատ արալ, վուր եստուվրա լավը չի ըլի,
կոսե, ես գրանիցի պանիրը, դիղին քարվա ըլի գիղենսա, մտիկ,
ե, ես նեմենցու բալին, երկու ռանդն ե, այ. ամեն մեկը մե
գրվանքա զու քա. (հանելով թղթերից մի քանի հատ կեռաս)՝
ձեռս կու կտրիմ թե եստու վրա լավը կու ճարվի. ես խիար,
ինչ շուշեքն ե, ամս, ախչիկ-պարուն. ես պիրոժնի, կանդիտը՝
շինածեմեն վեր չի գա. բուլկիքն ել հորես կու բերին:

ԵֆեՄիԱ.—(տեղից վեր թուշելով:) Վաւնց թե վեր չի գա,
եստի շանց տու. բաս վնւրդի առար:

ԳիգՈլի. — (վերցնելով կարկանդակը յեվ իսկույն վոտքի
կանգնելով:) Միչի փողոցումը:

ԵֆեՄիԱ.—(իր թշին ծեռքը դնելով:) Աբա ետ արար-
մունք ե, Կիգոլի. յես քիզ չասի թե ֆրանցուզի մոդ առ:

ԳիգՈլի. — Դիմի մեկ ե, ախչիկ-պարուն, աստուծ գիղենսա-
գրվանքումը մե աբասի անմիզ ավելն ուր եյի տվի. Տիս ինչ
լավն ե:

ԵֆեՄիԱ.—(զննելով կարկանդակը:) Աբա, վիս եկադրե-
բա, նրանց հատն ու կտուրն ե. եսենց բերգասլութինն ել ինչ ե:
Տար, տար, ես սահաթիս հիգ տու: Ինչ ասում իմ քիզ, լսէ.
դուն քու գլխեմեն բանիր մի մոգոնի: Ուրիշ... (Մտածելով:)՝
Ուրիշ ինչ ասի, միտս չե գալի:

ԳիգՈլի. — (կակազելով:) Կլուբ... նի... կա:

ԵֆեՄիԱ.—Հա, դուքթ. վնւրդի յի:

ԳիգՈլի. — Զարեցի, ախչիկ-պարուն:

ԵֆեՄիԱ.—(թուշը վեր բերելով յեվ սաստիկ նեղացած:)՝
Վոյ, քոռանամ յես:

ԳիգՈլի. — Վուր չկա, ինչ անիմ:

ԵֆեՄիԱ.—(բարկանալով:) Գժվիլ իս, թե ինչս ասում:
Երեք իմ աճկով տեսա ու իմ բերնով կերա Դանդումանինց
տանը: Ի՞նչ կոսե խալիր. նրանց տանն ըլի ու իմ տանը չե:՝
Գնա, գնա, ես սահաթիս բաղերապ ննզի, զրոշկա բռնե ու վուր-
դիոր ըլի հենց ես սահաթիս ելեւս ճարե, թե չե ել հոքով ու
մարմնով ինձմեն չիս պըծնի... ի՞նչ իս կանգնի, չիս իմանմամ,
քիզ իմ ասում:

ԳիգՈլի. — Գնում իմ, գնում իմ, ախչիկ-պարուն: (Կար-
կանդակը դնում ե զամբյուղը յեվ կամենում ե գնալ:)

ԵֆեՄիԱ.—Գժվիլ իս, թե ինչ աստուծ ե խոռվի. ետ պի-
րոժնին ել տար, ե:

Գիրութիւն.—(կարկանդակը վերցնելով:) Տանում իմ, տանում, ախչիկ-պարուն... (Փնթփնթալով:) Յ'ես ել չիմ իմանում, ինչ իմ անում: (Շտապով դուրս ե զնում դիմացի դռնից:)

ՏԵՍԻԼ Գ.

ԵՓԵՄԻԱ, ՍՍՄՍՈՆ

ՍՍՄՍՈՆ.—Իստակ շշկեցրիր, ախչիկ-պարուն:

ԵՓԵՄԻԱ.—(հոնքերը կիտած այս ամբողջ տեսիլում:)

Քիզ ով և հարցնում, երնեկ գիդենամ. գուն տար եստունք կարքի բի ու չալիշ արի ինձ չամանչեցնիս եսոր, Սամսոն, թե չե, ել ինձմեն չիս պրծնի:

ՍՍՄՍՈՆ.—Դիմի լավ կուլի, ախչիկ-պարուն:

ԵՓԵՄԻԱ.—Ինչ ասիլ իմ, լավ միտդ պահե. դիմի լազաթով ըլի, ամեն բանը իր վուխտը մոդ գա. մե խոսկով՝ մազը մազմեն չանց կացնիս:

ՍՍՄՍՈՆ.—Դիմի, դիմի, ախչիկ-պարուն:

ԵՓԵՄԻԱ.—Ու գուն ել ենենց հաքի, վուր դիմունանց աճկը վրեն մնա. սոսանի ատլաս արխալուխը, սիպտա չերքեղ-կեն, մաջեքը կարքով հիդ կու ծալիս, երծըթե քամարը...

ՍՍՄՍՈՆ.—(Խոսքը կտրելով.) Խանջալն ել կապիմ, ախչիկ-պարուն...

ԵՓԵՄԻԱ.—(շարունակելով:) Բաս, քա, ենդուր խո չըախշեցի վուր զանդկումդ պահիս. խանջալն ել կապե ու (ծախծեռքը ազ ուսից կրծքի վրա տանելով մինչեվ ծախս կողքը) սապիրիս ծամլեն ել շինե: Մե խոսկով՝ դիմունի մոդ լազաթի երևա, վուր դիմունքն ասին, վուր մարթ իս ու մարթու տանն իս՝ դուլուդ անում:

ՍՍՄՍՈՆ.—Վուր որը լազաթով չիմ ելի, ախչիկ-պարուն:

ԵՓԵՄԻԱ.—Քու զլիսի պատուիլիլը գիդենա. մեկ ել հիմի իս լազաթով. արա ետ լինչ կաքե ե, լեվքելելո ման իս գալի: Քանի չեր իմ քիզ ասի՛ վուր ետենց ինձ մոդ մի տուն գա, ոմքին տեսնե լինչ կոսե: Զեյիր կանա դոշիտ կոճկնիրը կապի՛: Լաքիեն պիտի լաքիս ըլի: Աձկիրդ բաց արա, ելի՛. տեսնում իս խալիս լաքիեքը վունց ին ժաժ գալի, դուն ել ենենց ժաժ արի, ելի՛, նրանցմեն պակաս մարթու վուրթու մոդ լիս, թե ինչ ե:

ՍՍՄՍՈՆ.—Զեռիս բան ունիմ, ախչիկ-պարուն, խո տեսնում իս:

ԵՓԵՄԻԱ.—Տուտուցառութեան մի խոսի. յ'ես քիզ ինչ առում իմ, գուն լիճը լսե: Մե խոսկով, խոտակ, կարքի, քաղաքավարի տուն ու գուս կոնիս. (առանձին, կիսաձայն) թող տեսնին ու ձիկին... (Սամսոնին:) Մեկել լաքիերու արով չթողնիս, փարվընի պես ման գու քաս սուփրի բոլորը. մե աիդ իմքին մաշուր արիր թե չե, են սահաթին գըստե... Բլուդնիրն ել առչի դամն ինձ մոդ կու բերի տաս:

ՍԱՄՍՈՆ.—Ի՞նչ կոնիս՝ զոնաղնիքն, ախչիկ-պարուն:

ԵՓԵՄԻԱ.—Ելի... Մողեն դժւն լավ գիղիս թե յ'ես. թնդանունին ու սորվին. (Մտածելով.) Ելի ի՞նչ ելի ուղում ասի... (Մտաբերում ե:) Հա... (Մի քանի քայլ գնալով:) Դուն տարեառունք տեղափուրե ու տիս՝ մտեր չգցիս ինչ ասի, հըմ... (Ցուցամատով սպառնում ե նրան յել շտապով դուրս ե գնում ձախ դռնից:)

ՏԵՍԻԼ Դ

ՍԱՄՍՈՆ.—մենակ:

Ես հանգի ել ախչիկ-պարուն, դաղղըղանի իմ եկի, ելի... ես կհճակդ կապե, ես եսենց հաքի, ես ենենց ման արի. չիմ գիղիս, թե ի՞նչ և ուղում ինձմեն.... Փեհ, գաղի յե դրուստ, ելմ... Տո, քիզ ի՞նչ, յ'ես խո իմ բանը շինում իմ: (Լոռւթյուն:) Ո՞հ, հա, հա, շատ ախչիկ-պարնիր իմ տեսի, շատ նրանց բույսումիշնիր իմ լսի, ամա սա չափեմեն անց կացավ: Մե տեր հարցնող ըլի, թե ով ե, ում վուրթի յե, իր հորանց տանն, ասում ին, շապիք չուներ հաքնելու... ու հիմի՝ փառասիրութենեմին տրաքվում ե: (Չեռքը ծեռքին ե խփում:)

ՏԵՍԻԼ Ե

ԱՐՈՒԹԻՆ, ՍԱՄՍՈՆ

ԱՐՈՒԹԻՆ.—(Ներս մտնելով դիմացի դռնից, գլխարկը ծածկած:) Ի՞նչ խարար եր, ի՞նչ ձեն եկավ:

ՍԱՄՍՈՆ.—Վունչիչ, աղա:

ԱՐՈՒԹԻՆ.—Վանց թե վունչիչ, իմ անգնովս իմացա, ով եր եստի:

ՍԱՄՄՈՒՆ.—Ոչով, աղա, ախչիկ-պարուննն եր:

ԱՐՈՒԹԻՆ.—Ախչիկ-պարունը... ի՞նչ եր ասում:

ՍԱՄՄՈՒՆ.—Ա՛յ, աղա, Գիգոլին եստունք երի ևս սահաթիս, ելի ինչի համա ել դրգից նրան ախչիկ-պարունն ու ինձ հրամառմ եր, վուր եստունք տիզավուրիմ:

ԱՐՈՒԹԻՆ.—Հմ... Դե, տիզավուրե, ելի՛ ել ի՞նչ իս շինում: Ինչի՞ք ե եսի:

ՍԱՄՄՈՒՆ.—Խնիչկ ե, մրգեղեն ե, զակուսկեք ե:

ԱՐՈՒԹԻՆ. (զամբյուղը զննելով:) Ո՛հ, ոհ, ոհ, ոհ, կոսիս շահ-զաղի վուրթիք ունենանք մեծրած, Դե, տար... (Սամ-սոնը կամենում ե վերցնել զամբյուղը:) Ի՞նչ իմ ասում. քանի պրիրոր իս պատրաստում:

ՍԱՄՄՈՒՆ.—Ախչիկ-պարունը հրամաից, վուր դրուստ քսան ու չուրս պրիրոր ըլի դարսած, կոսե:

ԱՐՈՒԹԻՆ.—Ախչկաս մոդ խո չզրգից քիզ:

ՍԱՄՄՈՒՆ.—Զե, աղա, վունչիչ չե ասի:

ԱՐՈՒԹԻՆ.—Բաս երկու պրիրոր ել ավելցնե ու ես սահաթիս գնա ախչկաս ել ու փեսիս ել խնդրե, վուր շնուրհ բերին, ու իմ մազիեր կոսիս՝ թե չին գա, խիստ բեղամաղ կուլիմ, ասա... Դե, գնա չուստ, բանդ տիս, մի ուշանա:

ՍԱՄՄՈՒՆ.—(վերցնելով զամբյուղը:) Ե՛ս սահաթիս, աղա: (Դուրս ե գնում աջ դռնից՝ մեջքը ծռած զամբյուղի ծանրությունից:)

ՏԵՍԻԼ Զ

ԱՐՈՒԹԻՆ. մենակ, զլսարկը վեր առնելով յեվ դնելով սեղանի վրա:

Սհաթի յերիքին ել ճաշ կուլի՛, Եհ, մախլաս: (Հայելումը ուղղվում ե.) Զե, ջեր ելի լավն իմ... ի՞նչս ե պակաս, բոյիս շիմշատ ե հենց գիգենաս, երեսիս ուանգը, կոսիս, կարմիր վարթը ըլի, մազիրս ել սիվ սաթ, ինչ անիմ թե ներկած ե. ով ինչ գիգե՛ ինչ խարար ե, (Նստելով ընկողմարանի վրա:) Զեհել կնքա պիս մարթու ջեհելացնող վուշչիչ չի ըլի աշխեքումս, մարթու տարին ել, քեփն ել գիփ կնզամեն ե: Ողորմած հոքի իմ առչի կնիկն ել լավ աթմորթի լեր, ամա բանի լազաթը չեր գիգի: Ինչի՞ նման եյի են չախը. հիմի մարթի իմ երեսում, ինչ մարթուն պիտի: Շատ ջեհել ֆրանտ տղա երնեկ կուլի տաւ

ինձ... (Շապկի թեվլոցները տնտղելով) Փամ, սիպտա ձհւն ե, վմւրդի յեր եստունք... (Հոգվոց հանելով:) Ամա ես մե բանը կի լավ չե ըլում, վուր ես՝ զադա փուղիր և մխսիլ տալի ինձ... յես՝ վուր մե զրոշի համա հոքիս տալիս իմ... Փառք քիզ, աստուծ, փառք... ես ել հալրաթ քու դիրք ե... Քեզի արա, քեզի արա, Փեփել, ու դուշմնի աճկը հանե:

ՏԵՍԻԼ Ե

ՆԱ, ԵՓԵՄԻԱ.

ԵՓԵՄԻԱ.—(մտնելով ծախս դռնից,) Արա ես հրենք ե: ԱՐՈՒԹԻՆ. — ի՞նչ ե:

ԵՓԵՄԻԱ.—Միթամ չի՞ս գիդի... Ուզում իս մե բաշ թուշնամ, խայտառակ րլիմ խալխումը:

ԱՐՈՒԹԻՆ. — ի՞նչ ե, վա:

ԵՓԵՄԻԱ.—(շարունակելով:) Դիմումնքը վրհս ծիծաղին, մե մատը մի՞զր դառնամ աշխրքումը:

ԱՐՈՒԹԻՆ. — Տն, ախար, ի՞նչ ե, մե ասա, ե:

ԵՓԵՄԻԱ. — (սուտ լաց լինելով:) Ե՞ս ե քու որթում հաշատը, վուր ինձ սիրում իսու (Աչքերը սրբում ե:)

ԱՐՈՒԹԻՆ. — (ծայնը քաղցրացնելով յեվ վերկենալով տեղից:) Ախար, սատանա խո չիմ, մե խսի, ե:

ԵՓԵՄԻԱ. — Ել ի՞նչ խօսիմ, մե բանը մե ջեր կոսին, հազար ջեր խոմ չի՞ն ասի:

ԱՐՈՒԹԻՆ. — ՏԵ՛ր ողորմած աստուծ:

ԵՓԵՄԻԱ. — Ախար, փեսիտ ու ախչկատ վուր կանչում իս եստի, աբա ըլելու բան ե:

ԱՐՈՒԹԻՆ. — Ե՛, լավ ե քու հնրն ողորմի, Փեփել ախար, քինթն երեսեմն վեր գու քմ:

ԵՓԵՄԻԱ. — Յ՛ես ի՞նչ միզ ունիմ:

ԱՐՈՒԹԻՆ. — Ե՛հ, հակառակ իս:

ԵՓԵՄԻԱ. — Յ՛ես իմ հակառակի... ի՞նչ ասիս երեսիս ասում ե քու ախչիկը, վրես քինթը վեր ե քաշում, մասխարա յե զցում, ու հմկառակը յ'ես իմ... Մե խօսկին տասը ջուղար ե տալի, ի՞նչ շառիր ասիս վրես ե մոգոնում, խուզի հիդ հավարիլ ե ինձ, ու հմկառակը յ'ես իմ... իմ մամին, ասում ե, ել խիւք չունե, կոսի:

ԱՐՈՒԻԹԻՆ. — Վա:

ԵՓԵՄԻԱ. — (շարունակելով:) Միթամ գիղել իմ քիզ, խիլ-քետ արիլ իմ, բուրթու պես վուրթինն ուղում իմ, հնթենն իմ զցում քիզ... վուղչ կայինքառ ուղում իմ զավթի յես, ու համ-կառակը յես իմ... ել կանամ յես նրանց երեսը տեսնի՛. աթ-մորթին կու համժիրու եստունք:

ԱՐՈՒԻԹԻՆ. — Ելի դուն պիտի համփիրիս, հեր ոխնած, ես սահաթիս ծնող իս հիշվում նրանցը:

ԵՓԵՄԻԱ. — Յ'ես իմ ծնող հիշվում... նրանց համա յես ծնող կի չիմ, դուշման իմ, գել իմ, շուն իմ, կատու իմ... (Լաց լինելով:) Սիցիլ եր իմ որը ու ես տուն վուսս տուն չեյի գրի, ի՞նչ կոնիմ ես փառքը, ես պատիվը, ես շնորիը, ես ակ-նեղեննիրը. թնդ ելի իմ տանը ննդած եյի ելի՝ քաղցած, ծարավ, հացի հասրաթ ու ես որը չեյի տեսի յես... (Ընկնելով բազմո-ցի վրա լաց ել լինում:)

ԱՐՈՒԻԹԻՆ. — Լավ ե, լավ, Փեփել ջան. (Լացի ծայնով) սիրոս մի պատըոտի..., յես ել լավ գիղիմ ինչ պառունիր ին. ամա ա-սում եյի, միթամ խալիսի խոսելու չդառնանք:

ԵՓԵՄԻԱ. — Խալին ինչ գուղե ասե. նրա խոսելու հիդ վուր մարթ ննդնի, ուր կեհա... Խալին են ել ե ասում, վուր հաշտ-քար իս միթամ, շատ ոմքնու իս զբնի միթամ. արա ես մվ-տալու յե... (Վեր ե կենում:)

ԱՐՈՒԻԹԻՆ. — Վրես շառիր ին մոգոնում...

ԵՓԵՄԻԱ. — (շարունակելով:) Վուր միթամ պառավիս դուն...

ԱՐՈՒԻԹԻՆ. — (նեղանում ե յել հազում:) Հու...

ԵՓԵՄԻԱ. — (շարունակելով:) Միթամ մազիրդ ներկում իս...

ԱՐՈՒԻԹԻՆ. — (կրկին հազում ե.) Հու, հու...

ԵՓԵՄԻԱ. — (շարունակելով) Միթամ ինձ խափում իս: Ո՞վ կու ավտա. թնդ խալին ինչ գուղե ասե:

ԱՐՈՒԻԹԻՆ. — (հազից խեղդիկելով:) Խալիը տուտուց ե, Փե-փել դուն չեմ գիղի վուր ջեհել իմ... Վուր ջեհելը կուլի ինձ վրա՝ դոչադ:

ԵՓԵՄԻԱ. — Արա, յես վուր յեկին հասկացնիմ:

ԱՐՈՒԻԹԻՆ. — Տն, դուն են սարսաղներուն ասա, վուր պա-ռավ դոչադը լավ ե, կանց ջեհել գամբեն: (Իր մազերը բռնե-լով յել գլուխը մոտ տանելով:) Արա, ես ներկած ե:

ԵՓԵՄԻԱ. — (Արութինի գլուխը բռնելով յեվ ժամալով.)
Դուշանը շատ բան կոսե, Արտուշկա չան: (Համբուրելով
զլուխը:) Մահուշակի հուտ և գալի:

ԱՐՈՒԹԻՆ. — (փաթաթվելով.) Ա՛յ, կուդիան, քու մե պաշը
մե թաքավութութին աժե: (Փայխայելով:) Դուրթ վուր խիլքե-
մես հանու մ իս. ի՞նչ ասիս վուր քու խոսկը չկատարիմ,

ԵՓԵՄԻԱ. — Բաս չի՞նք կանչում, ելի:

ԱՐՈՒԹԻՆ. — Ո՞ւմը,

ԵՓԵՄԻԱ. — Փեսիս ու ախչկատ:

ԱՐՈՒԹԻՆ. — Ե՞հ...

ԵՓԵՄԻԱ. (սուտ լաց լինելով.) Ա՛փսուս իմ գլուխ:

ԱՐՈՒԹԻՆ. — (քաղցր:) Լավ ե, լավ, քու քեփն ըլի:

ԵՓԵՄԻԱ. — (փաթաթվելով.) Իմ սիրուն, իմ խնիոր, իմ
ջեյրան, իմ ակռավ...

ԱՐՈՒԹԻՆ. — Ակռավ... վահ, ետ լավ եր:

ԵՓԵՄԻԱ. — (ծիծաղելով:) Վույ, քունամ յ' իս. ուզում ե-
յի ասի, իմ աղունակ:

ԱՐՈՒԹԻՆ. — Հա, աղունակը լավ ե:

ԵՓԵՄԻԱ. — (փաթաթվելով:) Բաս ի՞նչ իս, վուր աղունակ
չիս:

ԱՐՈՒԹԻՆ. — Յ' երիշու ել կուլի նման աղունակինը... Աղու-
նակն ել դուն իս, Փեփել, (փաթաթվելով) վարթն ել ու մա-
նուշակն եր:

ԵՓԵՄԻԱ. — Յ' ես վարթ իմ ու դուն ել բլբուլ, Ա՛րտուշկա
ջան:

ԱՐՈՒԹԻՆ. — Հմ, գթար. դուն վարթ իս ու յ' իս ել բլբուլ.
Խիստ իմ սազ գալի: (Եփեմիայի թշին մատով խիում ե յեվ
թիվ:) «Կոկոր վարդո, ար դամագդո, վար մոնա շենի»,

ԵՓԵՄԻԱ. — (նույնպես թիվ:) «Պիլզեդ գաքվո խալի,
շավ շավի թվալի, տուրփաթ մշվենի շեն»:

ԱՐՈՒԹԻՆ. — Վահ, հեր ոխնած, ասում իս, ասա, վուր ջա-
նումս նստի, ե:

ԵՓԵՄԻԱ. — Ե՞հ, բա դրոս ե, երնել գեղենամ, աշխաքի բան
ունիմ:

ԱՐՈՒԹԻՆ. — Գեթաղվա, Փեփել ջան:

ԵՓԵՄԻԱ. — Ո՞ւհ, քիմեն խոմ չիմ պլոծնի ու, հըմ: (Յեր-
գում ե Արութինին շողոքողթելով:)

«Կոկորս վարդո, ար դամագղոց, վար մոնա շենի, պիրզեղ գաքվս
խալի, շավ շավի թվալի, նախվա մսուրս շենի» *) (Ցիվ այլն:)

ԱՐՈՒԹԻՄՆ.—Ո՞հ, քու հոքուն մեռնիմ, Փեփել ջան... (Գրը-
կում համբուրում եւ:) Սաղ աշխաբըը շուռ կու տաս դուն...

ԵՓԵՄԻԱՆ.—Գիդիս ի՞նչ ասիմ, Արտուշկա ջան... (Զեռքը
դնելով Արութինի ուսի վրա:) Միր հալիլեքն եւ պետկը չե, մո-
դեն անց ե կացի, մի տիղ տեսիլ իմ, ջուխտը քառսուն ու
հինգ թուման ին ասում... (Արութին, առանձին դեմքը ծա-
մածում եւ:) Ուզում եյի բեհը տա, ամա առանց քի հարցնելու
գաբեղվա չարի:

ԱՐՈՒԹԻՄՆ.—(Եփեմիայի թշին ծեռը տալով:) Շատ ոյին-
բաղն իս:

ԵՓԵՄԻԱՆ.—Գեթաղ՝ վա, Արտուշկա ջան:

ԱՐՈՒԹԻՄՆ.—(մտածելով յեվ բարձր:) Քառսուն ու հինգ
թուման...

ԵՓԵՄԻԱՆ.—Են շենքի իմքինը բաս պակաս կուլի՛, քա:

ԱՐՈՒԹԻՄՆ.—Ենդու վրա հիմի քիչ ցածըն ըլի, ի՞նչ հաջաթ:

ԵՓԵՄԻԱՆ.—Արա, վիս եկաղերեա. Ենդու վրա ցածըն խոմ
միրին ե... ամա վուր պետկը չե... Խաչը գիդենա. ամանչում
իմ, վուր երեսս մեչը տեսնում իմ:

ԱՐՈՒԹԻՄՆ.—Տն, հոքիս հանեցիր խոմ... գիփ տակն ու
վրա արիր ես՝ զանցորեն. Ախար՝ ես զալեն պետկը չե... ես մե-
րիլը պետկը չե... ես զանավեսկեքն եւենց չե... ես գդակդ վո-
խե... ես գիմիկտոնի մագիեր պլատնո հաքի...

ԵՓԵՄԻԱՆ.—(վաթաթվելով:) Թե ինձ կու սերիս, ԱՌ-
տուշկա ջան:

ԱՐՈՒԹԻՄՆ.—Բիզ վուր չիմ սիրի, բաս ումն իմ սիրում...
(Փոքը լոռությունից հետո:) Ամա դուն եւ դուրթ խիստ իս սի-
րում ինձ, Փեփել:

ԵՓԵՄԻԱՆ.—Զարթնի քիզ ով ունիմ աշխաքումը. իմ հո-
քին ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենթանութինը դուն
իս,

ԱՐՈՒԹԻՄՆ.—Ո՞չով աճկումք չե գալի՛:

ԵՓԵՄԻԱՆ.—Արա, միշիկ չե, Արտուշկա ջան, ի՞նչս ասում.

*) Վրացիրեն ե.—

Կոկոն իմ վարդիկ, մի թողնիր ինձ, քո սարուկն եմ յես:

Յերեսը ունիս խալ, սեսի աշեր, տեսիդ կարոտ եմ յես:

ախչիկը քի պես մարթ ունենա ու նրա աճկումն ելի մմքին
գու քա աշխբքումը:

ԱՐՈՒԹԻՒՆ.—ԲԵՐԻԼ տու, բերիլ տու հալիլքը, (համբու-
րելով) գենայլալէ սուլշի:

ԵՓԵՄԻԱ.—(փաթաթվելով.) Արա, ով կանա ասի, վուր
գուն գոփող ու գծող իս: (Արութինի փողպատն ու շապիկը
ուղղում ե:)

ԱՐՈՒԹԻՒՆ.—Խիստ իս ֆրանտացնում, ամա քու կարմիր
բանտի պես չի ըլի, Փեփել:

ԵՓԵՄԻԱ.—(շարունակելով:) Մնւափ: (Ավարտելով գոր-
ծը, փոքր ինչ հեռանում ե Արութինից յել այնպես նայում
իրան:) Արա, վաւը ֆրանտը կուլի քի պես:

ՏԵՍԻԼ

ՆՐԱՆՔ, ԳԻԳՈԼԻ

ԳԻԳՈԼԻ. (Ներս մտնելով դիմացի դռնից՝ գլխարկը կռնա-
տակին, մեկ ծեռքին փոքրիկ զամբյուղով յելակ, կանաչ տե-
րեվներով ծածկած, մյուս ծեռքին թղթով կարկանդակ:) Ա՛յ,
ճարեցի, ախչիկ-պարուն, ամա ելի կակիի տոլ չե կլուբնիկեն:
Թեգուղ սպանե, ել եստու վրա մինձ չի ըլի, կոսե:

ԵՓԵՄԻԱ.—(տնտղելով յելակը:) Ա՛յ, հենց ես եյի ասում:

ԳԻԳՈԼԻ. — (ուրախ) Հենց են ե զբոշկեն ուզում եյի բռնի,
տեսնիմ մե կինտո վուրգիոր ճարիլ եր: Ախար, առուտեհան ել
ոչով չթողի, դիմուն-ոնցն ասի:

ԵՓԵՄԻԱ.—(չարանակով:) Ա՛յ, Գիգոլի, քու բեղասու-
թինը խոմ ինձ իստակ սպանում ե... արա, վաւը որն իմ էնս
կինտոիմեն իմքին առի, վուր հիմի ես ել իս մոզոնի. չեյիր
կանա դուն ինքդ զնա բաղը:

ԳԻԳՈԼԻ. — (շիտթված:) Ախչիկ... պարուն...

ԱՐՈՒԹԻՒՆ.— (Եփեմիային:) Վա, հեր ոխնած, ելի բաղի
կուլի, ախար կինտոն ինքը խո չե շինում:

ԵՓԵՄԻԱ. — Արա, վիս եկադրերա. նրանց կիխտուտ ձեռ-
նիրը (զզվանքով) թը՛, թը՛, թը՛... Վայ, վուր՝ զոնաղ-
նիրը պիտի գան հորես, թե չե ես սհաթիս ակոչկեն կ'ոծեյի
գիտ մետի... (Դիմելով Գիգոլուն:) Ուրիշ, ետ ի՞նչ ե:

ԳԻԳՈԼԻՒ. — Ես ել պիրոժնիքն ե, փոխեցի:

ԵՓԵՄԻԱ. — Հա, (զննելով կարկանդակը, կանչում ե:) Սամառն, Սամառն:

ԱՐՈՒԹԻՒՆ. — (Գիգոլու ծեռքում յելակը տնտղելով:) Գնառու գնա, Փեփել, խիստ թաղեն ե. կոսիս ձեռով չե քաղած: (Մեկ հատ յելակ բերանն ե զցում յեվ ծամելով:) Լավն ե. իմ մամա կիրակուսն ել առանց ես յոլա չեր գնում:

ԳԻԳՈԼԻՒ. — Ել խո բան չունիք, ախշիկ-պարուն: (Աջ դռնից մտնում ե Սամսոնը արխալուխի կրծքի կոճակները դարձյալ բաց, ինչպես առաջ.)

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ԱԿՋԲՈՒՄ ՆԱՅԵՎ ՍԱՄՍՈՆ

ԵՓԵՄԻԱ. — (Գիգոլուն:) Բայ բան չունիմ... Մաւափ եատի: (Սամսոնին) Ես կլուբնիկը տար սարդափն ու ես պիրոժնին ել գաղերումը լավ բարաթ շինե: (Սամսոնը վերցնում ե:) Ե՛լի գոշիտ կոճկնիրը բաց տուն եկալ ինձ մոր: Աստուծ գիղենա, վիրչի գամն իմ ասում, թե մեկ ել տեսիլ իմ քեզ ետենց, ել մե սահաթ չիմ պահի քեզ:

ԳԻԳՈԼԻՒ. — (առանձին, գլուխը շարժելով:) Ո՛հ, ո՞հ, ո՞հ, կըակի կտուր ե:

ՍԱՄՍՈՆ. — Բանումն եյի, ախշիկ-պարուն:

ԵՓԵՄԻԱ. — (բարկանալով:) Զնողաբ ել ե տալի: (Արութինին:) Աբա, պահելու յԵ:

ԳԻԳՈԼԻՒ. — (առանձին, թափ ե տալիս ոծիքը:)

ԱՐՈՒԹԻՒՆ. — (Սամսոնին սպառնալով:) Հըա, մաւզալիթ կաց... Դե, գնա բանիտ, ել ի՞նչ իս եստի կանգնի: (Սամսոնը գլուխը շարժելով դուրս ե զնում աջ դռնից, զամբյուղն ու կարկանդակը ծեռքին: Հետո Եփեմիային, ցածր:) Ախար, ձեսին բան ունե խրդճը, տեսնում իս քրտնքումը ծլծլում ե. բաս եմարթերի:

ԵՓԵՄԻԱ. — (շարունակելով:) Զե, խիստ ե խարաբ ըլում, ախար, ե: Եսոր դոշը բաց տուն եկավ, եքուց առանց արխալուխ կու տուն գա: Բջի համարցակութինը վիս եկազրերա: Մեմե ախշիկ-պարուն ել կա, իրանց բջի հիդ մասլահաթնիը ին անում. խո գիգիս՝ յես ես հանգի բանիր չիմ սիրի: Լաքիեն պիտի լաքիա ըլի:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Լավ ե, լավ, ես մեկը բախչե՞ւ. յ'ես կու խրա-
տիմ իրան. (Առանձին:) Բախտավոր մարթ իմ, յ'ես ու իմ հո-
քին... (Գնալով ծեռքերը հետեւը դարսած յեվ համրիչը ծեռ-
քին. կես ճանապարհից կիսածայն յերգում ե:)

«Պիզեղ գաքվս խալի, շավ շավի թվալի, նախվա մսուրս
շենի»:

(Դուրս ե գնում ծախս դռնից.)

ՏԵՍԻԼ Ժ

ԵՓԵՄԻԱ, ԳԻԳՈԼԻ

ԵՓԵՄԻԱ.—ԶԵ, մե հենց ապրիս, Գիգոլի. հասկացընւ են
լպստածին, վուր քաղաքավարի կենա. իմանում ի՞ս, ինչ իմ
ասում:

ԳԻԳՈԼԻ. —Իմանում իմ, իմանում, ախչիկ-պարուն, (գլու-
խը հետ զցելով:) բաս չիմ իմանում: Աւրիշ ի՞նչ եյիր հրամա-
ում:

ԵՓԵՄԻԱ.—ԱՇ, Գիգոլի, ես սհաթիս գնա, թաղլիթինց
մաղաղինումը հալիլեք իմ տեսի, ջուխտը քառոսւն ու հինգ
թուման ին ասում, հենց ես սհաթիս եվետ վաղեցնիլ տու.
թեգուզ չնւրս մշակ բռնե, եգերա ինչըու զոնաղներու գալը
վրա հասցնինք:

ԳԻԳՈԼԻ. —ԵՌ սհաթիս, ախչիկ-պարուն. ամա աղեն ա-
սիլ ի՞:

ԵՓԵՄԻԱ.—(բարկացած:) Հիմի դուն, աղեն յ'ես իմ, հրա-
մաում իմ, ելի՛: (Դրսից աղմուկ ե լավում:)

ԳԻԳՈԼԻ. —ԵՌ սհաթիս, ես սհաթիս, ախչիկ-պարուն: (Գի-
մացի դուան մոտ դրսից լավում ե Սամսոնի ծայնը՝ կացի,
գնամ ասիմ, ի՞... Պեպոյի ծայնը՝ կացի-մացի չիմ գիղի, թող
թե չե, ես սհաթիս...)

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՐԱՆՔ, ՊԵՊՈ

ՊԵՊՈ. — (Ներս մտնելով դիմացի դռնից, գլխարկը ծած-
կած յեվ զարդի հագուստով.) Փէք... (Գլուխ ե տալիս:)

ԵՓԵՄԻԱ. —Ի՞նչ իս ուզում, ով իս:

ՊԵՂՈ. — Ո՞վ իմ.՝ ղոնաղ իմ, վա,

ԵՓԵՄԻԱ. — Դժւն՝ միր՝ ղոնաղ:

ՊԵՂՈ. — Հենց յես:

ԵՓԵՄԻԱ. — (ծիկա տալով:) Ա՛ա... Ոտկեցէք, ոտկեցէք,
և քըստոնա: (Դուրս ե վազում ծախ դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԲ

ՊԵՂՈ, ԳԻԳՈԼԻ

ՊԵՂՈ. — (առաջ գալով, առանձին:) Ա՛յ, քնթեմեն գուս գա
են հացը ինչ մարթ ձիր հացն ուտե, հըա:

ԳԻԳՈԼԻ. — Ի՞նչ իս ուզում, ախպեր, ի՞նչ բան ունիս:

ՊԵՂՈ. — Հալբաթ բան ունիմ, վուր եկիլ իմ, ելի՛, վա:

ԳԻԳՈԼԻ. — Զի ըլմ, վուր մինք ել իմանանք:

ՊԵՂՈ. — Ի՞նչ կու ափելնա քիզ. գուն գնա աղա Արութի-
նին իմաց արա. վուր յես եստի իմ:

ԳԻԳՈԼԻ. — Ախար, գուն սվ իս:

ՊԵՂՈ. — Յ'ես... (Նստելով ընկողմարանի վրա) յես իմ:

ԳԻԳՈԼԻ. — Վա:

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ. — (Ներս վազելով ծախ դռնից:) Ի՞նչ խարար
ե, ի՞նչ խարար: (Տեսնելով Պեպոյին, մնում ե սառած:)

ՊԵՂՈ. — (վեր կենալով տեղից, գլխարկը վեր ե առնում
յեվ գլուխ տալիս.) Բարի աշողում, աղա Արութին:

ԱՐՈՒԹԻՆ. — (Գիգոլուն, ցածր.) Դուն գնա բանդ տիս:

ԳԻԳՈԼԻ. — (առանձին:) Ղաւրթ, հալիկքը: (Դուրս ե վա-
զում դիմացի դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԳ

ՊԵՂՈ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ. — Հը, սւը իս եկի, ախպեր:

ՊԵՂՈ. — Ա՛յ, համեցէք նստի: (Ինքը մոտ քաշելով մի
աթոռ նստում ե:)

ԱՐՈՒԹԻՒՆ.—(նստելով ընկողմարանի վրա, առանձինու) Իմ տանը սա յե մոհքաթ անում ինձ: (Պեպոյին) Ախար, ես չախն մուր իս եկի:

ՊԵՊՈ.—Կուշտը քաղցածին ի՞նչ ե հարցնում... Բողազս մի դուս կտրի, աղա Արութին. թե ես սհաթիս չիս տա, վարցէ կոնիս, վուր ինձ սպանիս եստի եվետ:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Թե իմքին պարտ իմ, ախաղեր, բան գեմարթ-լերի: Ո՞ւմ փուղն իմ կերի, վուր քու փուղն ուտիմ... Ինչոք բարաթ ելիր ասում... Գթար, բերիլ իս:

ՊԵՊՈ.—(առանձին, կրծքին խփելով.) Ըմ... (Բարձր) Բարաթը չկա, խո գիդիս, դուն քու դավթը ըսերումը գիմը թե չե:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Իմ դավթը ըսերումը շատ պտուեցի, հան աստծու, ամա մե ասու ել չգթա ձիզ համա:

ՊԵՊՈ.—Բաս ի՞նչ անինք հիմի:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, յես ինձ համա: (Գրպանից հանում ե սաթի համրիչը յեվ զցում:)

ՊԵՊՈ.—Վունց թե՝ դուն քիզ համա, յես ինձ համա. Բաս քու մտկումը պարտ չիս ի՞նձ:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Ախաղեր, ի՞նչ պիտի պարտենամ. բարաթ դուն չունիս, դավթը ուն յես գունչիչ չունիմ գրած, ի՞նչ պիտի պար-տենամ՝ քիզ:

ՊԵՊՈ.—Բաս քու սրտի դավթը ուն ել վմւնչիչ չկա գրած:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Սրտի դավթարը վմւրն եւ:

ՊԵՊՈ.—Բաս քու խճպտանքը վմւնչիչ չե ասում քիզ, ե-լի. խո գիդիս, վուր պարտ իս:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Վուր գիդենամ խո կու տամ, ելի՛. ել մուր իմ խոսեցնում:

ՊԵՊՈ.—Բաս Գիքոն մուր ե ասում... նրա հալալութինը դիփունքը գիդին.

ԱՐՈՒԹԻՒՆ.—«Մելամ», ասում ե, «թալիսի կուգի մոի՛ղ-վանա մոծամեթ»: *)

ՊԵՊՈ.—Աղա Արութին, վերիվը խո աստուծ կա ու քու սիրտն ել ե կարթում, իմ սիրտն ել, մրի աստծեմեն ձեռը միկալնի:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ շառիր իս մողոնում գլխիս, ախաղեր. ոմքին լսե, հենց կու գիդենա դուրթ իս ասում:

*) Վացերեան ե... Աղվեսն իր պոշը բերեց վկա:

ՊԵՂՈ. — Դուն զիդիս վուր դուրթ իմ ասում: Քու վուրթ-կերանց արիվ սաղաղա խղճա միզ: Ետ փուղը յես ինձ համաչիմ ուղում...

ԱՐՈՒԹԻՆ. — (խոսքը կտրելով:) Տէր ողորմած աստուծ:

ՊԵՂՈ. — (շարունակելով:) Մռւլափ, մռւլափ, ինչըու վիրչն անգաճ դի. Ետ փուղով իմ քուրը նշնած ե, խոստացիլ ինք, պիտինք տա, ու թե ես սհաթիս չտվինք, քվիրս թաղնում ին, ուրիշ ախչիկ ին ուղում ես գիշիր: Ախար, մե աստծու արադ դադաստանը միտք բի, ե... խո քիզ ել կու խոսեցնին ենդի, ինձ ել. ի՞նչ ջուղար կուտաս, վուր չիս տալի:

ԱՐՈՒԹԻՆ. — Փիե... (մտածմունքի մեջ ե ընկնում:) Աւաղ դադաստանը զիդենա վուր դրուստ միտս չե ետ պարտկը:

ՊԵՂՈ. — Ծ'ես ասում իմ դրուստն, ելի՛. ինձ չիս ավտում:

ԱՐՈՒԹԻՆ. — Վա, ետ վաւնց կուլի, Պեպան. ամեն մարթ վուր զա ու ետենց խոսի, տասը միլիոն ել վուր ունենամ, մե որումը կու հատնի: Զե, ախպեր, միր պոռւտի հետաքը ետենց չե:

ՊԵՂՈ. — (վեր կենալով տեղից յեվ գլխարկը ծածկելով:) Բաս չիս տալի, եզի:

ԱՐՈՒԹԻՆ. — Պարտկով կի վունչիչ տալացու չիս, ախպեր, ամա քուր իս մարթու տալի՛, ջնւիստ աճկիս: (Ծոցից հանում ե պորտմոնենու:) Բահա, (թղթաղրամ տալով:) վարցկ բան ե, բռնե, ախպեր:

ՊԵՂՈ. — (գլխարկը վեր առնելով, գլուխ ե տալիս:) Այ, աստուծ վուրթիքդ զորացնե: (Առնում ե փողը:)

ԱՐՈՒԹԻՆ. — Ե՛տ հինգ թուման... համբռե, (Պեպոն գունատվում ե) դրուստ հինգ թուման ե... Հինգ թուման ել, դուք նովս անց կացի, ենդի կու տան, ես սհաթիս ոմքին կու դրգիմ: Գնա, ախպեր, աստուծ բարի վայելում տա:

ՊԵՂՈ. — (վիզին նայելով յեվ շփոթված:) Հինգ թուման ու հինգ թուման... (Լուսիթյուն. հետո գլխարկը ծածկելով:) Մնացածը... Ախար, իմ քվիր համա հարուր թուման ինք խոստացի:

ԱՐՈՒԹԻՆ. — Յ՛ես ի՞նչ անիմ, վուր խոստացիլ իք. բենեսար նամաղուլ իք արի, վուր խոստացիլ իք. ում փուղն եյիք խոստանում, վուր խոստացիլ իք: Մարթ իր լների գորա կու ձքե վրատը թե չե: Դուք ել վուր հարուր հարուր թումնիր իք խոստանում, ել ուրիշն ի՞նչ անե: Ես ի՞նչ խարաբ ելավ աշխարհըն, ախպեր, ել ոչովու համա չափս ու ձիվ չկա:

ՊԵՂՈ.—Միր բանը մինք գիդինք, պարուն, ձիր բանը դուք խոստացիլ ինք, միր փուղն ինք խոստացի, քիզ ի՞նչ դավի:

ԱՐՈՒԹԻՆ.—Խոստացիլ իս ու տար իրան տու, ելի. ել ի՞նչ իս ուզում:

ՊԵՂՈ.—Ի՞ս տու, վուր տամ, ե. ախար ես վուր տալիս իս, մասխարա իս զցում, թե ի՞նչ խարար ե:

ԱՐՈՒԹԻՆ.—ԱՌի ու սրապեսներուն վարցկ արա: Տն, ինչով չիս իմանում, վուր վունչիչ պարտ չիմ յ'ես ձիզ ու ետ ել ի՞նչոր տալիս իմ, հոքուս համա բախշում իմ:

ՊԵՂՈ.—Բախշում ի՞ս... Գանա յ'ես միխատ իմ, եկիլ իմ ողորմութին իմ ուզում քիմեն. յ'ես իմ հախն իմ ուզում, իմ հախը. ի՞նչ կ'ոնիմ յ'ես քու բախշիչը:

ԱՐՈՒԹԻՆ.—Զիս ուզի ու հստի տու, ինձ պետկը գու քա: Ախկատ ու հմպարտ, վուր կոսին, ես ե, այ: Բի, ելի, բի. ի՞նչ իս թամաշա անում:

ՊԵՂՈ.—Բաս թամամ չիս տալի, ելի:

ԱՐՈՒԹԻՆ.—Տն, գժվիլ ի՞ս, թե ի՞նչ խարար ե. ի՞նչ իս ուզում ինձմեն: Զոռով պարտկ կուլի աշխրքումը՝ շլենքս իս զցում:

ՊԵՂՈ.—(առաջ գնալով.) Արա նըթում կի թե պարտ չիս, նըթում կի, ելի. մարթ կուլիս որթում կ'ուտիս:

ԱՐՈՒԹԻՆ.—ԱՌթում, հավատ, աստուծ: (Պեպոն զարհուրանք ե արտահայտում.) Յերգինք, իմ վնարթկերանց արիվը գիդենա, վուր վունչիչ պարտ չիմ...

ՊԵՂՈ.—(զայրացած.) ԱՌ, աստուծ ու յերգինք խոռվ կենա գլխիտ: (Խփելով փողը Արութինի յերեսին:) Հը, բռնէ, աճկդ դի, կնգատ համա իմքին կունենաս առնելու:

ԱՐՈՒԹԻՆ.—(աղաղակելով յեվ տեղից վեր թռչելով.) Ոտ- նեցք, ղարառւը սպանեցին, մորթեցին... Ո՞վ կաք ետի... (Ներս են թափվում՝ ծախ դռնից եփեմիան, աջ դռնից Սամ- սոնը, հագնված յեվ զարդարված, ինչպես պատվիրել եր Ե- փեմիան յերրորդ տեսիլում, իսկ դիմացի դռնից յերկու ծա- ռա ֆրակով յեվ սպիտակ ծեռնոցներով. Տեսարան:)

ՆՐԱՆՔ, ԵՓԵՄԻԱ, ՍԱՄՍՈՆ, ՅԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱ.

ՊԵՊՈ.—(ծախս ծեռքով ցույց տալով ծառաների վրա.) Ե՞ս
ե քու մարթութինն ելի... (Յերկար լոռություն) Ա՛յ, հառամ
ըլի քիզ քու հալստութինը.

ԱՐՈՒԹԻՒՆ.—(սաստիկ շփոթված, ծառաներին.) Տհ, ոտ-
կեցէք, ե. Ի՞նչ իք թամաշա անում. տեսնում իք՝ ուզում ե
սպանի ինձ: (Սամսոնը յել ծառաները մոտենում են Պեպո-
յին.)

ՊԵՊՈ.—(ծառաներին մղելով.) Մուլափ, դենը... (Արու-
թինին.) Ես ոսկե պատիրը, վուր սարքիլ իս, ում փուղով...
Հազար ինձ պեսներուն թալնիլ իս, գմնա. քար ու կիբը միը
արնով իս շաղըղի, գմնա. դիփունանց աճկիրը արլանդվա իս
արի ու հիմի ծանդը ու բարակ քիզ համա նատած քեփ իս
անում, ելի:

ԵՓԵՄԻԱ.—Դնւս արեք, դնւս արեք:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Դնւս, դնւս, ասում իմ: (Ծառաներին.) Դնւս
արեք. չիք իմաննում: (Ծառաները հարծակվում են Պեպոյի
վրա:

ՊԵՊՈ.—Դնւս... (Ծառաներին նորից մղելով.) Դենը, դե-
նը, (Ծառաները փոքը ինչ հեռանալով, կանգնում են դիմա-
ցի դրան առաջ: Արութինին.) Փուղիրս հաշա իս ուտում, ու
դնւս ել իս անում. ելի... (Լուռություն.) Դնւս կեհամ, դնւս կե-
համ. շարես ի՞նչ ե, զոռը քունն ե, տերը դուն իս եստի... Ամա-
լավ զիզացի, պարուն Արութին, ես արարմունքը քիզ չի մնա...
վերիվն աստուծ կա, քնթեմետ կու հանե քու անորենութինը...
(Ծառաներին հրելով.) Դենը, դենը... (Դուրս ե գնում դիմա-
ցի դոնից.)

ԱՐՈՒԹԻՒՆ.—(Պեպոյի հետեվից, ծառաներին.) Գնացէք,
գնացէք հիզը, վունչիչ շտանե, վունչիչ չփախցնե: (Ծառաները
դուրս են վազում Պեպոյի հետեվից.)

ՏԵՍԻԼ ԺԶ

ԱՐՈՒԹԻՒՆ, ԵՓԵՄԻԱ

ԱՐՈՒԹԻՒՆ.—Ե՛սենց ել լպստած: (Կռանում ե յել փողերը
հավաքում:)

ԵֆեՄիԱ. — Գի՞ք ե են մարթը, թե ես ի՞նչ խաբար ե...
ելախու ել ենենց վախեցրուց:

ԱՐՈՒԹԻՆ. — (փողերը ծոցը դնելով:) ԱՌԻ ու սրապեսնեռ
բուն վարցկ արա հիմի:

ԵՓԵՄԻԱ. — Ես ի՞նչ բան ե, ախար, չիս ասի:

ԱՐՈՒԹԻՆ. — Աստուձ վճէչ զիդե նրա գլուխը. քուր իմ
մարթու տալի, կոսե. յ'ես ի՞նչ անիմ վուր մարթու յե տալի:

ԵՓԵՄԻԱ. — Բաս են ի՞նչ եր ասում, թե փուղիրս հաշա իս
ուսում, կոսե:

ԱՐՈՒԹԻՆ. — Արա, քիմեն չիմ արմընում, Եփեմիա. փնտը
հաշա ուստիմ ու են ել նրա պես մարթունը՝, չիս ճանչնում
ի՞նձ:

ԵՓԵՄԻԱ. — Ետ փուղիրը վուր ծնւցդ դրիր, նրանը չեր
բան:

ԱՐՈՒԹԻՆ. — Նրա հնրն ողորմի. վուխչ իմ կայինքն ել
նրանը կուլի, բաս... Եկավ, թե խիզ մարթ իմ, կոսե. քվիրս
համա բաժինք չունիմ, կոսե, քու վուրթկերանց արիվ սադաղա
ոտկե միզ, կոսե. յ'ես ել ախմախախմախ հանեցի ու բախցեցի:
(Նեղանալով:) Ծնորակալութենի մագիերն ե՞ր, վիկալավ ու
ճակտիս խփից. քիչ ե, կոսե:

ԵՓԵՄԻԱ. — (թուշը վեր բերելով:) Վայ, քոռանամ յ'ես,
զ՞նւրթ իս ասում, Արութին ջան:

ԱՐՈՒԹԻՆ. — Բաս սնաւ իմ ասում:

ԵՓԵՄԻԱ. — (չարացած:) Քու հախն ե, խիստ լավ ել և աւ
ըի... Ետ են գիդենա, վուր ժամեմեն զուս գալիս հարուր ախկատ
ել վուր ըլի գոանը, դիփունանց ձեռին՝ (գործողությամբ ցույց
տալով) «բոնե, բռնե, բռնե»... Իժում ետենց կու թողնիս ետ
անպատվութինը»:

ԱՐՈՒԹԻՆ. — Ի՞նչ պիտի անիմ:

ԵՓԵՄԻԱ. — Աշխըքի լափը գլուխստ ածավ...

ԱՐՈՒԹԻՆ. — Ի՞նչ անիմ:

ԵՓԵՄԻԱ. — Վայ, քոռանամ յ'ես. ել բան չմնաց, վուր
քիզ չասավ, ու են՝ զաղա բեաբոռութինը դուն կուտիս ի՞նչ կոս
սին խալիս:

ԱՐՈՒԹԻՆ. — Խալիս ի՞նչ գիդե, գլուխը քարը տա. թնդ,
խիզ մարթ ե:

ԵՓԵՄԻԱ. — Վայ, թե խալիս ի՞նչ գիդե. են՝ զաղա բջե-
րանց մոդ չե՞ր, վուր վրետ բզավեցավ ու ճղավեցավ: (Չափա-

զանցելով Պեղոյի խոսքերը:) Աշխարք ու յերգիր իս թալնի, կոսե, քսան ու հինգ հաղար խղճի տուն իս քանդի, կոսե, և արարմունքնիրը քիզ չի մնա, կոսե, ու եստունք պիտի մարսիս դրւն: Բջերանց ըերնումը իմքին կու կանգնի. չիս գիշի, վուր եքուց ինչկլի ևս վախտը վնւխչ քաղաքը կու իմանա: Մարթ ըլիմ, գլխիս զգակ ունենամ ու զարու անիմ, վուր ևս հանգի պաժարնին իմ տանը ինձ անպատիվ անե, ասե վուր նրա փուղիրը հաջա իմ ուտում. թավաթ ինչ ասիս ասում ինքիզ վրա ու հիմի պահասը թամամ ըլմ... (Նայում ե դիմացի դռան կողմը:)

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԳԻԳՈՂԻ

ԳԻԳՈՂԻ.—(գլխարկը ծեռին, շտապով ներս մտնելով դիմացի դռնից:) Հալիլեքը բերի, ախչիկ-պարուն:

ԵՓԵՄԻԱ.—(հանկարծ փոխվելով յեվ ուրախ:) Հալիլեքը... (Շտապով գնում ե. կես ճանապարհից Արութինին, հալիշտակված:) Մե արի, մե արի, Արտուշկա ջան, տիս թե ինչ հալիլեք ե, ինչ անտիկա, նեժնի հալիլեք... (Կանչելով:) Սամսոն, Սամսոն... (Շտապով դուրս ե գնում դիմացի դռնից: Գիգոլին յեվ Սամսոնը՝ վոր դուրս ե վազում աջ դռնից, հետեւ վում են նրան:)

ՏԵՍԻԼ ԺԷ

ԱՐՈՒԹԻՆ.—մենակ, յերկար լոռությունից հետո:

Տն, զնւրթ, ինչ ոյին եկավ գլխիս են լոթի պաժարնին... Ել մինձ ու պստիկ չկա աշխարքումը... Են հանգի ախչատ դադո՞ն վրես ենենց բղավի: (Ման զալով:) Են հանգի խնչկիր ասե... (Հայելումը ուղղվում ե:) Բնշացավ, բնշացավ աշխարքի բանը... (Հեռանում ե հայելիից:) Պարտ իս, կոսե... Գժվիլ ե... ինչ պարտկ, ինչ գլավ, ինչ փստան... Ո՞վ ասավ, վուր պարտ իմ... ով գիղե, վուր պարտ իմ... Թե պարտ իմ, ինչի ինչկլի եսոր հիդ չիմ տվի... Յա նրան վուր տամ, մեկելնիրուն ի՞նչ ասիմ... նրանք ի՞նչ գեթ ին արի... Զե: (Նստում ե:) Վունչիչ պարտ

չիմ... սուտ շառիր ին մոգոնում... թե պարտ իմ, ինչի՞ բարախ չունե... Վարդի յե... ով ունե... ինչ բարախ... Բարախ չկա... զնացիլ ե... ջնջիլ ե... թե չե ել ինչ որութին ե... Ամա են լոթի պաժարնին պիտի ամեն տիղ բղավի, վուր փուղ իմ պարտ ու հիդ չիմ տալի՛... (Վեր ե թուզում տեղից:) Զե, չե, Եփեմիեն դրուստ և ասում... Պիտի յես բղավիմ, յես պիտի հարայի տամ, աշխարք ու յերգիր զարթեցնիմ, վուր ինձ՝ ինձ պես առա մարթուն եսենց անպատիլ արին, եսենց շառիր ին գցում վրես... Մուլափի, յես քիզ կու շանց տամ, լոթի պաժարնի: (Դուրս ե գնում ծախ դռնից:)

ՎԵՐՁ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾԻ

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

Առաջին արարվածի սենյակը, միենույն ձեղով կահավորած և դամբը
թոկի վրա փռած: Առավուն ե:

ՏԵՍԻԼ Ա.

ԿԵԿԵԼ.—մենակ, տախտի վրա նստած, լուռ կարում ե,
ապա մութաքի վրա դրած կարի բոխչից վերցնելով՝ կտոր,
շարունակում ե կարը յեվ հետն ել յերգում:

«Սիրելիդ, ինձ ատել ես,
Ատել ես, նախատել ես,
Զիգարըս կտրատել ես,
Աբնաշաղաղ ես արել»:
(Աչքերը սրբում ե:)
«Ինձ տեսնելիս տնւր բարով,
Խնճուրդդ ասա գրով»:
(Լացի ձայնով:)
«Ինձ խո մոքթել չես սրով՝
Անսուր մատաղ ես ալել»:
(Կարը թողնելով լաց ե լինում:)
Ալի, աստուծ, յես ել կոսիմ թե աթմորթի իմ... Ինչի՞

ստեղծեցիր ինձ, ինչացու իմ աշխաքումը. անմիղ գեղնի երեսին
տիղ իմ բռնում... Են ուփրո լավ չի ըլի՞, վուր գեղնի տակն
ըլիմ ու գերեղմանս վուտի տակը կնիչըտում ըլի՞ն... Ինչի՞ չիս
սպանում ինձ, աստում... Դուն խո լավ գիդիս, վուր մահն ուփ-
րո հիշտ ե ինձ համա, կանց շունչ քաշիլը... (Լուլթյուն:.) Զու-
րը ննդնիմ, թոկով խիխտվիմ, գանակ ցցիմ սրտումս. Բնչ ջու-
ղար տամ քիզ... (Լաց ե լինում:.) Ա՛ստում, աստում, յա կեծակ
վեր գցե գլխիս, յա կարմնջի վրա անց կենալիս կարմունջը
փուլ ածա վուտիս տակը, յա գեղնին ման գալիս, գեղինը պատ-
ռե ու ինձ դեվեր տար... (Լաց ե լինում:.)

ՏԵՍԻԼ Բ

ՆԱ, ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ.—(Ներս մտնելով ծախ դոնից:) Ելի լաց իս ը-
լում, կեկել:

ԿԵԿԵԼ.—(աչքերը սրբելով:) Զարթնի լացը՝ Բնչ ե մնացի
ինձ, գեղի... Ես արտսունքն ել վուր չըլի տվի աստում, սիրտս
ինչնի հոգցնիմ: (Կարը գցում ե տախտի վրա:)

ՇՈՒՇԱՆ.—Ախար, ետ՝ զադա արտըսունք կուլի, վուրթի.
Խո քամկեցար իստակ:

ԿԵԿԵԼ.—Բաս Բնչ անիմ. Պոշիս հենց գիդիմ աղաքար ե
պառկած... Ես արտըսունքն ե ինձ ոտկում մե քիչ, թե չե դար-
դու խիխտվում իմ:

ՇՈՒՇԱՆ.—Դարդ ցավի գա ու աստծու պատժի են սիվ
սրտովը: Աժե, վուր ետ՝ զադա դարդ իս անում նրա համա:

ԿԵԿԵԼ.—Աշխաքումը բեղնամ ելա, գլուխս գուս կտրվեցավ,
ել տոլի ու սծորի երեսին չիմ կանացի մտիկ տա. Ես ապրիլ ե:

ՇՈՒՇԱՆ.—(Նստելով կեկելի մոտ աթոռի վրա:.) Մի
դարդ անի, կեկել ջան, մի դարդ անի. աստում ողորմած ե, կու-
լի նրա վրա լավ մարթու յե ռաստ բերում քիզ:

ԿԵԿԵԼ.—Մարթու աճկն ել կարիմ. Նրանք խճպտանք ու-
նին, նրանք հնքի ունին... Ինձ պաշ արավ ու իմ պաշը տարավ
ուրիշն երիտ... (Գլխին խփելով:) Կեղինը պատռե ու ինձ գե-
վեր տանի: Ել յես յերգնքի յերես վանց պիտի տեսնիմ:

ՇՈՒՇԱՆ.—Աբա, դուն վուր ետունք իս անում, կեկել, յես
Բնչ անիմ... (Լաց լինելով:) Միխկը չի՞մ. բաս յես վանց դիմ-

նամ՝ իմ սիվ ու մութ որին մե կուռը, քիզ մեկելին... Ետ հանգի որինակնիր շատ ե ելի, վուրբթի. մենակ միզ համա խամ չե ստեղծած աշխարքը: Քանի միզպեսնիրը կան. քանի միզ վրա վատթարն ասա, հացի հասրաթ ածած ին, մե թիքա հացին երնեկ ին տալի, գոնե դուռը ախտութին ին անում ու են թիքա հացը՝ թե հազրենը մեկը տալիս ե, մնացածնիրը կինծումը խփելով գուս ին անում...Միզ խո աստուծ մե թիքա տվիլ ե. փառք իրան, ինչ անիս, հալբաթ միը ճակտին ես եր գրած: Ելի փառք տանք իրան, աղանչանք անինք, վուր եստու վրա վատթար որին չուստ բերե սիզ. իմ Պեղոյին ջան տա, վուր ինչ թիքա միզ տալիս ենրա ձեռով, են թիքեմեն ել չդրգե միզ:

Կեկել.—Երնեկ աստուծ ինձ մահ տա, ուրիշ վունչիչ չհմ ուղում:

ՇՈՒՇԱՆ.—(մոտենալով յեվ գրկելով կեկելին:) Մի տսի, մի ասի, կեկել ջան. (նստելով կողքին) միխկ ե աստծու մոդ, գենացվալու գեղեն:

Կեկել.—(Շուշանի գրկում:) Ախ, գեղի ջան... (Լուռ լաց ելինում: Տեսարան.)

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ.—(Ներս մտնելով դիմացի դռնից գլխարկով յեվ ծեռնափայտով:) Վա, սինած հոքիք, դարթնի ետ, բան ու գուրձ չունիք...

ՇՈՒՇԱՆ.—(թողնելով կեկելին, կանգնում ե:) Ուրիշ ինչ բան ու գուրձ պիտի ունենանք. թե գուզիս՝ դուն ծափ տու, մինք խաղանք:

Կեկել.—(վերցնելով կարը:) Վայ իմ որին... (Աչքերը սրբելով՝ շտապով դուրս ե գնում աջ դռնից: Կարի կիսաբաց բոխչան մնում ե մութաքի վրա:)

ՏԵՍԻԼ Գ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ.—Ե՛, լավ ե, ձիր հորն ողորմի. աթմորթին ել մե քիչ համփիրութին պիտի ունենա: Ախար, մե զլուխ դիփ լաց

Եք ըլում, խան մեկն ու խան մեկելը. ետեսց վունց կուլի:
ՇՈՒԾԱՆ. — (նստելով տախտի վրա:) Ի՞նչ անիս, ի՞նչ միը
գլխին բան եկավ, աստուծ միը դուշընին ել չտա:

Գիրի. — Աստծու բանը դուն չիս գիզի, Շուշան, ուրիշ
հանգն ե սարքի աշխարքը. ուրախութենի հիդ դարդ ե տալի
մարթու ու դարդի եղնեն ուրախութին... (Առաջ քաշելով ա-
թողը, նստում ե տախտից փոքր ինչ հեռու յել քթախտ
քաշում:) Հըմ, ե... (Յերկու ձեռքի ցուցամատները միմյանց
կպցնելով:) Եսենց ե, այ. քուր ու ախպեր: Վունցոր քուր ու
ախպեր մեկսմեկեն չին բաժնվի, ենենց ել ուրախութինն ու
տևրութինը:

ՇՈՒԾԱՆ. — (առանձին:) Քու մձկն ել:

Գիրի. — Եատ լավ ե շինի, ե... Ասում ե մարթուն՝ ես
քիզ ուրախութին, գնա, քեփ արա, ասում ե. իժում են քեփումը
մեկ ել տեսնիս մե զարդ ե լուս ցցում միզ համա, վուր ինչ
ե՝ հըը... իրան յմտեն ցցինք... Գոհանամ քիզ, աստուծ:

ՇՈՒԾԱՆ. — Երնեկ գիզենամ՝ բա դրոս քարոզի վուխտ ե.

Գիրի. — Մուլափի, Շուշան, մուլափի. ախար, դուն չիս գի-
զի թե խոսկո վնարդի յե գալի, ե: Ինձի ինձ երգում իմ, խոր-
վում իմ, ամա ել ինչ կանամ ոտկի. Մեկ փիքր իմ անում,
վուր կուլի դժուխիլ գնամ. ամա մեկ ել ասում իմ, վուր հալ-
բաթ ես աստծու բան եր: Հիմի գուզիք ինձ սպանեցեք, գու-
զիք աստծուն փառք տվեք, վուր հոքիս ըերնումս ե ու խոսում
իմ:

ՇՈՒԾԱՆ. — Վախտ իս գթի դուն ել, Գիրին, առանց են ել
դարդու տրաքփում իմ:

Գիրի. — Յ'ես ել ետ իմ ասում, Շուշան, ե: Տիս հիմի, եղ
դարդի հիդ ինչ ուրախութին ե գալի: (Շուշանը զարմացած
նայում եր) Արմնում իս, զանա, Շուշան: Վուրն են չախը թա-
մաշա արա, յեփոր գիփ կոսիմ: (Գրպանից հանում ե վոստի
մի կապտագույն բաց ծրար, վորի վրա յերեվում են կար-
միր զմուե կնիքներ, յել ազ ձեռքով բարձրացնելով:) Այ:

ՇՈՒԾԱՆ. — Ետ ինչ ե:

Գիրի. — Ի՞նչ ե... Ե՞ն ե, Ե՞ն, Շուշան:

ՇՈՒԾԱՆ. — Վուր չիմ իմանում:

Գիրի. — Այ կու իմանաս. համփիբութինը բաժնելիս աս-
տուծ քիչ փայլն կնիկարմատին երիտ: Հիմի ինչ համփերու-
թին տվիլ ե քիզ աստուծ, դիփ մետի մադ արա ու ծանդը ու
բարակ ինձ անգաճ դի, վուր լիզուս չխառնվի:

ՇՈՒԾԱՆ. — (առանձին:) Յարաբ ես հանզի ել մարթ կուլի:

Գիքն.—(շարունակելով:) Դիդիս ի՞նչ ե, Շուշան... Ողորմած հոքի քու մարթը...

ՇՈՒՇԱՆ.—(յերկար ու ձիգ կոկորդային ծայնարկությամբ հառաջելով.) Ը՞հը...

Գիքն.—(զրպանից թաշկինակը հանում ե յեվ աչքերը որբում: Լացի ծայնով:) Աստուծ, ողորմի, աստուծ հոքին լուսավորե. լավ մարթ եր, անումով մարթ եր խիզճը, Քանի ջեր և ձիով Գանջա գնացի ու եկի ողորմած հոքին:

ՇՈՒՇԱՆ.—(հոգվոց հանելով:) Ա՛խ, ախ, ախ...

Գիքն.—Ե՞հ, փառչ աշխար, Շուշան:

ՇՈՒՇԱՆ.—Իժնեմ:

Գիքն.—Հա... (Դադար:) Մահեմեն մե քանի որ առաջ, յես խոմ դիվ կշտին եիի, գիդիս, ոթախի դռնիրը կոխպիլ երիտ. մնացինք յես ու ողորմած հոքին... (Աչքերը սրբում ե:)

ՇՈՒՇԱՆ.—(տխուրի:) Միտու ե:

Գիքն.—(ձեռքով իր բերանը ծածկելով:) Մուլափ... Զիրեմեն բալնքնիրը հանից ու են ձիր սիվ պստի՝ զութին ուզից, յես ել մոդ տարա. սա բաց արավ, ես թուխտը հանից ու ինձ երիտ. Անգերձ արավ, վուր ինչըու վիրչի ժամանակը վանց քիզ իմաց անիմ, վանց Պեպոյին: Պեպոս, ասում ե, ջեհել ե, կոսե, վայ թե փչացնե, կոսե, ու իմ Շուշանը կնիկարմատ ե, կոսե, վայ թե Պեպոյի ճանգը զցե, կոսե: Խնչըու վուխտը չգա, կոսե, վունց մեկին մի ասի, թե դուն ունիս, կոսե: (Ծրարից հանում ե մի ծալած սպիտակ հին թուխտ յեվ մատնացույց անելով, լացի ծայնով ու բարձր:) Իմ կեկելի բաժինքը եսառումն ե, կոսե:

ՇՈՒՇԱՆ.—(վեր թուչելով.) Ետ ի՞նչ թուխտ ե գանա:

Գիքն.—Ի՞նչ թուխտ... Ա՛րութինի բարաթը:

ՇՈՒՇԱՆ.—(մոտ վազելով:) Ի՞նչս ասում, Գիքո... (Խլելով թուղթը ձեռքից:) Ուզում իս հոքիս հանի: (Բաց ե անում թուղթը յեվ ճանաչում Արութինի պարտամուրհակը:) Ես ե... ոտկեցեք... սիրտս գնաց... (Գնում ե, իր տեղը վայր ընկնում: Զարմացած նայում են միմյանց. յերկար լրություն:) Կինազամ մեռա... Իժում, անաստուծ, ինչըու հիմի ժւը եյիր պահում. Կեկելիս սպանեցիր ու հիմի...

Գիքն.—Յ'ես միզ չունիմ, Շուշան, գիդե աստուծ, վուր միզ չունիմ:

ՇՈՒՇԱՆ.—(շտապով:) Ա՛յ աստուծ անե քու դիվանն ու դադաստանը: Ետենց կատարեցիր անգերձը:

Գիրքն.—Ախար, մե անգաճ դի, ե...

ՇՈՒՇԱՆ.—(խոսքը կտրելով) Անգաճ ցավի գաս ու
աստծու պատժի. ես որենք ե, վուր գուն արե՛ր:

Գիրքն.—Ախար, Շուշան...

ՇՈՒՇԱՆ.—(անզաղար Գիրքոյի խոսքը կտրում ե մինչեվ
նրա վեր կենալը) Ախար քիզ ու... (առանձին:) չոռ ու ցավ:
(Գիրքոյին:) Լորի:

Գիրքն.—Փեր...

ՇՈՒՇԱՆ.—Ախար, ինչի՞ պահեցիր, ինչի՞ ինչը եսոր: Քու
աստծուն ի՞նչ իս ասում, քու հոքուն ի՞նչ ջուղար կու տաս:

Գիրքն.—Տն, մե անգաճ դի, ե...

ՇՈՒՇԱՆ.—Աբա, ասա, ելի:

Գիրքն.—Ա՛յ, Շուշան...

ՇՈՒՇԱՆ.—(շարունակելով) Ասա, ասա:

Գիրքն.—Ո՛ովկ...

ՇՈՒՇԱՆ.—Տեսնիմ ի՞նչ իս ասում:

Գիրքն.—Ախար...

ՇՈՒՇԱՆ.—Մե տուտուց բան պիտի ասիս, ելի:

Գիրքն.—Տն, խոսքս բերնեմես մի խլի, ե...

ՇՈՒՇԱՆ.—Աստծու զաղարի գաս, հը:

Գիրքն.—(վեր կենալով յեվ գլխարկը թափ տալով) Ել
վունչիչ չիմ գիզի... (Գնալով) Կնիկարմատի պես ել անդնջում:
ՇՈՒՇԱՆ.—(բարձր:) Մուլափ, մուլափ... (Կանցում ե:)

Գիրքու:

Գիրքն.—(հետ դառնալով) Ախար, մինած հոքի, մե քիչ
համփիրութին ունեցի, ասում իմ, ե: Յես խիստ ուրախ իմ,
վուր եսենց ելավ բանը. ամա աստծու գարսողութենին վունց
հակառակի մարթ... (Նստում ե միեվնույն տեղը յեվ քթա-
խոս բաշում:) Հը՝մ...

ՇՈՒՇԱՆ.—(առանձին:) Կրիմ քու զլուխն, ըահա:

Գիրքն.—(քիթը սրբում ե:) Զիս գիզի, թե ի՞նչ ոյին ե-
կավ գլուխս:

ՇՈՒՇԱՆ.—Ել մի ծրծռեցնի, թե քու աստծու կու սիրիս:
(Մուրհակը զցում ե տախտի վրա:)

Գիրքն.—Զէ, այ, ես սհաթիս, քիչ ե մնացի... Ետ բարաթը
վուր տալիս եր սղորմած հոքին, շատ ասի, թե իմ բանը չե-
ետ հանդի ծանդը բիռն, ասի, վրես մի շալկի, ասի, ել դնջութին
չիմ կանա ունենա, ասի. ամա չարավ... Հալալ մարթ իս, Գիրքո,

կ սե, (լացի ծայնով) զարթնի քիզ ճար չունիմ, կոսե... Ե՛ս,
շարես ինչ եր, դուն ինձ ասա. զիկալա բարաթն ու մե է՛երիք-
չուրս որվան եղնեն հոքին երիտ խիզնք... աստուծ հոքին լու-
սավուրեն (աչքերը սրբելով յեվ լաց լինելով:) Բարեխոս ըլի
իր կեկելի համա:

ԾՈՒՇԱՆ.—(աչքերը սրբելով, յերկար հոգվոց ե հանում.)
Է՛հ, հը՛, հը՛, հը՛...

Գիբու.—Ե՛հ, մախաս. զիփ մահի վուրթիք ինք... Վժւրդի
ելի՛:

ԾՈՒՇԱՆ.—Վուր բարաթն երիտ ջրատարը:

Գիբու.—Հա, երիտ... Առա, տարա տուն, պահեցի... Մե-
մե մարթ կա խաղինա և պահում. յարաբ նրա քունը վհւնց և
տանում գիշերով... Պահեցի... Հին սիկելնիր ունեցի երեկի-
Պարնի գախտվան... Յ'ս խո զարթնի մե քոխին ուրիշ վունչիչ
չունիմ. ամա ենենց պահում եյի են սիկելնիրը, մարթու խան-
դիսան կարթացնիլ եյի տալի, գուր եր գալի խոսկիրը... Դուն
չիս տեսի, Շուշան... Զեր աստծու անումն ե գլխին գրած, ի-
ժում քրիստուսինը, իժում հոգի սուրփը գալիս ե, աղա ջան,
իժում ավետարանիչնիրը, սրբիրը, գիշի մեմեկ, մեմեկ. Ե՞նդա-
դա որհնանք, Ե՞նդադա բանիր... Ե՛հ, գնաց զիփ մետի... Հայի՛փ,
հայիփ միր ժամանակ...

ԾՈՒՇԱՆ.—Ետ խիստ հիռու գնացիր, Գիքու:

Գիբու.—Հիռու կի չե, խիստ մողկացա... Ախար հենց են
սիկելներումը պահեցի ետ բարաթն, Ե՛ Կապեցի, զրի զանդկիս
քունչը, բալնիքն ել ջիրեմես չեյի հիռուցնում: Ամիս չեր անց
կենա, վրւը մե երկու ջեր զանդուկս չեյի բաց արի ու կապուցկս
չեյի տնդղի: Ամանաթի պես գժար վունչիչ չկա աշխարթումը:
Աստուծ, աստուծ, եյի անում, վուր կեկելի բախտը մե վախտի
բաց ըլի, ու բաց ել արավ խոմ աստուծ... Մե որ ել՝ բաց ա-
նիմ զանդուկս, տեսնիմ սաղ կապուցկը չկա: Հայ գես, հայ
դեն՝ չկա, չկա, չկա... Զարթնի ես՝ մե քանի հատ ել հնուց,
շատ հնուց, մի, սի-փուղ ունելի, են սի-փուղն ել հիզը զում, ու
կլան ե ելմ. մեկել բանիրը կի զանդկումը իր տիզը անշարժ,
սաղ-սալամաթ զարսած ե... Ախար, թե գուղ եկավ, կանց հին
գրոշնիրն եր տանում, թաղա փուղն եր տարի. երկու թուման
ավել գիփ թաղա՝ Նիկալայի զբդղղան մանեթնիր ունեյի.
Թե սատանա մտավ զանդուկս, են վհւնց տուն գնաց ու գուս
եկավ, վուր մե տիզ ծակ չեթող զանդկումը... Թե չե՛ զանդուկը
կոխպած, բալնիքը ջիրումս, վհւնց հանգավ ենդունք .. Ի՞նչ իմ

հալն եր, Շուշան, են աստուծ գիդե, մե որ հոքի ունիմ տալու... Գարի ասիս, յ'ես իմ զցիլ տվի, Եփեմերդի ասիս, յ'ես իմ բացանիլ տվի, չոգած՝ եղեղեցու բոլորքն ասիս, յ'ես իմ աղոթկ արի... Իշտահս կապկեցավ, քունս կուրվեցավ, ջում-ջումի դառաս... Եստի խո՛քանի ձիզ տեսնում եյի, քանի ձիր լացն ու սուքը իմանում եյի, սիրտս կրակ եր ննդնում... (Աչքերը սրբում ե:)

ՇՈՒՇԱՆ.—Ախար, են՝ զադա վուր հարց ու փուրց եյինք անում, մե որ վունց չկուրքեցար, նխնած հոքի... Փարազի ասինք՝ անդերձը կապում եր քիզ են զլիսեն, իժում ել ե մե խոսկ մայիսց կոսեյիր, ե:

Դիրքութիւնը.—Ե՛, Շուշան... Քանի ջեր ուղեցիլ իմ բաց անի ևս բանը, ամա իմ ահու վունչիչ չելի կանացի ասի, լիզուս չեր զորում, ի՞նչ անիս... Ա՛յ, եստու առաջ ել, ես մողիկ ժուգն եր, քիչ եր մնում դիփ մետի թամամ հիդ ասեյի, դրուստ հենց լիզիս ծերին պլուտ եկավ. ամա փիս վուխտի ռաստ եկա՝ Պեղոն խիստ ջզրած եր, ել ջուրաթ չարի, բերնես չկանացի դուս թողնի... Վախեցա, չե թե ինձ համա, Շուշան, ձիզ համա, գիդե աստուծ. մե գրթուս չնսդնի եստի, ասի, իմքին չար բան չառաջանա, ասի... (Սաստիկ հուզված:) Վիկալա ելի ու սրտիս խուզուկը, ախ ու վախով, հարի պես հիդ կուլ տվի... (Դարձյալ աչքերը սրբում ե. Շուշանը, առանձին, անհամբերություն ե ցույց տալիս:) Ամա չասիս, Շուշան, թե ձիր միխկը կու տանեյի. իմ աղանչաքը դիփ են եր, վուր ինչըու ես պարտկը չպըճնիմ, աստուծ հոքիս չհանե... Պարձանքսով չիմ ասում, Շուշան, աստուծ գիդենա, քոխիս գրավ գրի ձիզ համա ու փուղիրը ես երկու որումը պիտի տան. ամա ի՞նչ փայիդա վուր իր վուխտը չվրա հասավ... Հալլաթ եսենց պիտեր... Փառք քիզ, աստուծ, փառք, մեռնիմ քու ամենակարող զորութենին:

ՇՈՒՇԱՆ.—Իժում վունց գթար, ախար, ես բարաթը:
Գիրքու. —Վունց գթա... Յ'ես խո չգթա, Շուշան. իրան-իրան եկավ... Հիմի ասա թե զունց:

ՇՈՒՇԱՆ.—(առանձին:) Վիհ... հալից ու մաշից:

Գիրքու. —(շարունակելով:) ես իմ սատանի սրուց քիվիր տղեն...

ՇՈՒՇԱՆ.—Հիմի վուր Ռուսեթ ե:

Գիրքու. —Հա, հենց են աղա-զադես: Մե որ, քանի ջեր եստի յեր, շատ աղանչաք արավ, վուր ետ սիկելնիրն, ասում ե, ինձ տու, կոսե, իմ ուշումին պետկը գու քա, կոսե, չունքի

հին բանիր ե, կոսե: Քիզ դրուստն ասիմ, չտվի. ասի չպատռտե, դեն չածե, ասի: Ախար, թե թաղա ուսում ին ստանում, հին բանիրը ինչի՞ն ե պետկ: Անց կացավ, գնաց... Գնալու վուխտը...

ՇՈՒԾԱՆ.—Նրա գնալը մե յ'երիք ամիս կուլի, դմնա:

Գիրք.՝ Հա, ետենց ե: Մա, մի ասի, բալնիք ջիբեմես կու հանե, յ'ես ով գիգե՛ ինչ երազումն ելի են չախը, աղավարի զանդուկս բաց կոնե, կապուցկն ու հին փուղիրը կու ծպղպե, զանդուկը հիգ կու կոփապե, բալնիքը ջիբս կու դնե ու՝ հայդե... Արի ու հիմի գուն ինձ լորի ասա, տեսնիմ թե ինձ վրա՝ զոչաղի ձեռնեմեն ինչ կու դուս գեր... Ախար, մարթու խոսկը կու իմանան ջեր, Շուշան, իժում՝ զնամիշ կոնին, թե՝ զնամիշ անելու յե. թե չե լորին ինչ անե, վուր ինձ լորի իս ասում, Շուշան:

ՇՈՒԾԱՆ.—Իժում:

Գիրք.՝ Իժում ել են, վուր ետ բարաթը փոշտով զրգիլ ե հիմի ու մե կարաբաղին ել մասխարութիննիր ե զրի վրես... Քու սիդելնիրը, կոսե, Փունդստուն զրգեցի, կոսե, ու սի-փուզերու համա, ասում ե, թե գուղիս՝ մե մենդալ կու զրգին քիզ համա, կոսե, ու ես բարաթն ել, ասում ե, հիգ քիզ փեշքաշ ասում ե... Գիրն ել հորեսա եստումն ե, թե գուղիս... Այ... (Դանդաղ վեր կենալով զնում ե զեպի Շուշանը:)

ՇՈՒԾԱՆ.—(Նույն միջոցին:) Գեղինը պատռվի ու նրա ստանին զեվեր տանե, ըհըա:

Գիրք.՝ (առաջարկելով ծրարը Շուշանին:) Տիս, թե սուտ իմ ասում: Մե զավի-զառարա ել ես փակեթի դուս բերին եր եսոր. ջանս գնաց շատ դես ու դեն ննգնելեն:

ՇՈՒԾԱՆ.—Տար, տար, ինձ հարկավուր չե, ելի քի պետկը գու քա. առանց ետ ել ավտում իմ քիզ:

Գիրք.՝ Արա, Շուշան, յ'ես ինչ միզ ունիմ:

ՇՈՒԾԱՆ.—Կեկելս կի մեռնում ե ու ինչ անիմ թե միդ չունիս:

Գիրք.՝ Աստուծ ողորմած ե, Շուշան, աստուծ ողորմած ե:

ՇՈՒԾԱՆ.—Աստուծ միր աճկը հանից ու պրծավ, ել ինչ ողորմած ե:

Գիրք.՝ Մի ասի, Շուշան, մի ասի. նրա գարսողութինը ոչով չի կանա իմանա... Հալբաթ նրա կամքն եսենց եր:

ՇՈՒԾԱՆ.—Փառք իրան, ինչ անինք:

Գիրք.՝ (Նստելով նույն աթոռի վրա.) Լավ մարթ վուր ելիլ եր, խո փուղի համա չեր թողնի կեկելին: (Ծրարը պահում ե:)

ՇՈՒՇԱՆ. — Յես ել միթամ ետ իմ ասում դիմ, ամա ել
ի՞նչ փայիդա. Նամուսներուս կտրվեցավ, սիրաթներուս գնաց,
աշխարքի համա ՚ղենո ու մասխարա ինք դառի: Ել ով գուզե իմ
կեկելին... Խիղճ իմ կեկել... (լաց լինելով:) նորչի արիվը
փչանում ե...

ԳԻՔՈ. — Ե՛, հերիք արա, քու հորն ողորմի, Շուշան:

ՇՈՒՇԱՆ. — (լալով:) Ա՛խ, կեկել ջան, կեկել...

ԳԻՔՈ. — (աչքերը սրբելով յեվ լացի ծայնով:) Ո՛հ, ոհ,
ոհ, ոհ...

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ. — (ներս մտնելով դիմացի դռնից:) Ե՛ստի մտիկ.
քու պտուտկեմեն ջանս գնաց, դուն կի եստի ծանդը ու բարակ
նստած իս:

ԳԻՔՈ. — Հը՛, ի՞նչ խաբար ե:

ԿԱԿՈՒԼԻ. — (Գիքոյի կուռը բռնելով:) Վիկաց, վիկաց
չնւստ արա:

ՇՈՒՇԱՆ. — Ի՞նչ ե պատահի:

ԿԱԿՈՒԼԻ. — (թողնելով Գիքոյին:) Աստուծ վուչ գիդե խիղճ
մարթու գրուխը:

ՇՈՒՇԱՆ. — (վախեցած:) Ի՞նչ ե:

ԿԱԿՈՒԼԻ. — Պեղոյին տարան ես որ առուտենան:

ՇՈՒՇԱՆ. — Ո՞ւր տարան, ի՞նչ իս ասում:

ԿԱԿՈՒԼԻ. — Ա՛յ, են դժուխուի մաշխալեն ինչոր գանգատ ե
առւն տարի:

ՇՈՒՇԱՆ. — Ո՞վ, ի՞նչ գանգատ:

ԿԱԿՈՒԼԻ. — Ա՛յ են շեյթան Արութինը, ձիզ վուր փուղ
պարտ ե. (կրծքին խմբելով:) Թե մե ճանզս կու ննդնի...

ՇՈՒՇԱՆ. — Վույ, քոռանամ ու կուրանամ յես. իժում ի՞նչ
կոնին Պեղոյիս:

ԿԱԿՈՒԼԻ. — Ո՞վ գիդե, գեղի, ինչոր չանին միզ, արմընե-
լուն են ե: (Գիքոյին:) Դէ, մի ուշացնի, Գիքո, ե, առուտվան
դեսն ե քիզ իմ պտուտում. ավտաս չվրա հասնինք ել:

ՇՈՒՇԱՆ. — Փուղը նա յի պարտ ու ելի նա յի գանգատ ա-
նում: Ա՛յ, հախմիան տերն անե քու դադաստանը, Արութին:
(Գիքոյին:) Վիկաց, ելի, ա մարթ, չիս իմանում (Մուրհակը

վերցնելով յեվ տալով Գիքոյին:) Տար, տար ևս բարաթը
սիզգը նրա երեսը: (Գիքոն առնում ե մուրհակը յեվ դնում
գրպանը:)

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Ի՞նչ բարաթ:

ՇՈՒՇԱՆ.—Են սիզգերես ու սիզսրտով Արութինի բարաթը:
ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(ուրախ:) Դժւըթ... Գթաղթ... (վեր թռչելով:)

Վա, յես ձիք հոքանւն մեռնիմ... Ա՛յ հրաշկ... Իժում ետ վճռնց
ելավ, վաւնց գթնը վեցեցավ:

ՇՈՒՇԱՆ.—Այ, ճամփին կոսի:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Սա գթաղթ, սա...

ՇՈՒՇԱՆ.—Հա, հա...

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(վաթաթվելով Գիքոյին:) Զարդ տանիմ յես,
Գիքո ջան, արա լոթին դուն իս հիմի, այ. հոքումս կու
նստեցնիմ քիզ հորեսի դենը, իմ հերն իս դուն հիմի...

ԳիքՌ.—Իմ տարսը դառնաս, վուրթի:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(շտարով յեվ ցածր:) Սազ ըլիս, Գիքո ջան...
(Բարձր:) Դե, վիկաց, ել մի ուշացնի... Հըմ, Արութին, (կրծքին
խփելով:) տեսնինք հիմի՝ ի՞նչ իս ասում, ի՞նչ իս ելի մոգու
նում... (Գիքոյի թեվից բռնելով:) Արա, Գիքո ջան, հըմ...

ՇՈՒՇԱՆ.—Ա'լս, ասուուձ, ասուուձ:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(Շուշանին:) Դարդ մի անի, դեղի ջան, աս-
ուուձ ողորմած ե:

ՇՈՒՇԱՆ.—Գնացեք, շտապեցեք, վունչիչ չանին Պեպոյիս:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(վեր քաշելով Գիքոյին:) Վա, հեր ոխնած,
միշիած իս ետի:

ԳիքՌ.—(վեր կենալով:) Ա'յ, գնանք, գնանք... (Պատրաստ-
վում ե քթախոտ քաշելու:) Տեսնիմ թե վաւնց և հաշա ուսում
հիմի:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(ծեռքից խլելով քթախոտի տուփը:) Տա, ա-
րի ճամփին քաշե, ելի, վա: (Թեվից բռնած շտարով տանում ե:)
ԳիքՌ.—(գնալով:) Ուհ, ուհ, ուհ ...

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(վաթաթվելով:) Ել զահը ուղթի չիմ ասի.
Քի մատաղ, Գիքո ջան: (Դուրս են գնում դիմացի դռնից:)

ՇՈՒՇԱՆ, հետո կեկել:

ՇՈՒՇԱՆ.—(մենակ, կանգնած:) Յարաբ ի՞նչ իս ուզում միզմէն, աստուծ. ի՞նչ գեթ ունիմ քի մոդ: Զեր աճկս հանեցիր, մարթուս խլեցիր, իժում ախչկաս բախտը քար ու քանդ արիր, հիմի ել ի՞նչ իս պատրաստում իմ սիզ ու մութ որի համա: Խղճա, աստուծ, խղճա. վունչիչ չիմ ուզում քիմեն՝ վնւնց փառք, վնւնց գովլաթ, վնւնց պատիվ, ողոնդ ես դառն որվան վրա ուփրո դառն որ չշանց տաս միզ: Դնւն փրկե ու ազատե իմ Պեպոյին: (Նահալու տակից շտապով հանում ե զաթիբան յեվ բաց անելով, գնում ե ու կանչում:) Կեկել... (Կեկելը կարը ծեռքին վշտաբեկ դուրս ե գալիս աջ դռնից:) Մ' արի, հենց ապրիս, եսթի դռնիրը կոխակ. համբուրելու իմ գնում եստի դեմուգեմը, չուստ դու քամ:

ԿԵԿԵԼ.—Ե՛ս սահաթիս, դեղի ջան: (Շուշանը շտապով դուրս ե գնում ծախ դռնից:)

ՏԵՍԻԼ, է

կեկել, մենակ:

Խիզ դեղա... (Շտապով առաջ գալով դեպի տախտը:) Ել վունց խեչն ե միզ ոտկում, վունց աստուծ... (Հավաքում, վերցնում ե կարի բոխչան:) Տանջիլ ու տանջիլ, են գլխեն ես գլուխը ես ե գրած միը ճակտին... (Կարը յեվ բոխչան ծեռին դուրս ե գնում ճախ դռնից:)

ՏԵՍԻԼ, լ

ՊԵՊՈ, մենակ: Ներս ե մտնում դիմացի դռնից գլխարկով ու զարդի հագուստով:

Ե՛սնց ել աշխարք... (Վերցնում ե գլխարկը, աջ ծեռքի ցուցամատով ճակատի բրտինքը սրբում յեվ գլխարկը կրկին ծածկում:) Մարթ գլխեմեն ինչու վուտը դուրթ ըև ու նևի ի՞նքը սուտ դուս գմ... Պատժելու մագիկը ի՞նքը պատժվի... Գնա, գնա հիմի, Պեպո, նսակ բերթումն ու լավ բարաթ փեքը

արա աշխարքի բանիրը... Դուն հալալութենի եղնեն ման արի,
տեսնիմ՝ ի՞նչ ե տալի քիզ քու հալալութինը... Մտիկ իս անում
սաղ քաղաքը գիլաներով լքցվիլ ե. ով ե ասում քիզ, վուր
ոխչըի յ'երիշով ման գաս... Չիս գիդի, վուր ընթրթդ կու գդին...
Քիզ ով եր ասում ձենդ բացըացնիս. ում վրա իս ձենդ բացըաց-
նում, ի՞նչով... ի՞նչ կա ձեռիտ... Փաւղ ունիս ջիբումը՝ դ, խիլք
ունիս գլխումը՝ դ, զալամ ունիս ձեռումը՝ դ. ի՞նչ ունիս, ի՞նչ,
տա նղորմելի, վուր գանի պես բոնչում իս... Չիս գիդի, վուր
գանի վիրչը ՝զասարխանեն ե... Ե՞ն ե քու բինեն, Պեպո, Են...
Գնա պակի, վուր բողազդ գուս կտրին... Մի գախենա, մե գան-
կի մագինը տասր զանակ կու լուս ննդնի քիզ համա: (Նստում
ե սեղանի մոտ աթոռի վրա յեվ ընկղմվելով մտածմունքի
մեջ, գլուխը շարժում:)

ՏԵՍԻԼ Ո

ՆԱ, ԿԵԿԵԼ:

ԿԵԿԵԼ.—(ներս զալով ծախ դոնից:) Եկմը, Պեպո:

ՊԵՊՈ.—Եկա ու գնում իմ. մեքանի վուխտ մնաս բարով:
ԿԵԿԵԼ.—Ո՞ւր իս գնում, ի՞նչս ասում:

ՊԵՊՈ.—(հեղնորեն յեվ ժայիտն յերեսին:) Տաք տիզ, մա-
յինց մինք իհոտ չունինք ու...

ԿԵԿԵԼ.—Չիմ իմանում՝ ի՞նչս ասում:

ՊԵՊՈ.—(վեր կենալով:) Բիրթն ին տանում ինձ, ԿԵԿԵԼ:
ԿԵԿԵԼ.—(վախեցած:) Ի՞նչի:

ՊԵՊՈ.—(սենյակի մեջ տեղը մնացած աթոռը դնելով իր
տեղը:) Ենենց, խաթրիչուն:

ԿԵԿԵԼ.—Վա, Պեպո ջան, ի՞նչ իս ասում:

ՊԵՊՈ.—Հանաք չիմ անում, ԿԵԿԵԼ. մի վախենա, վունցոր
ըլի լուս կենաք: Ո՞ւր ե գեղեն, տանը չե:

ԿԵԿԵԼ.—Ես սահաթիս գու քա. համբուրելու դնաց եստի
մողիկ:

ՊԵՊՈ.—Խիդ գեղա...

ԿԵԿԵԼ.—Ախար, մե զրուստ խոսի, Պեպո, ե. բիրթումն ի՞նչ
բան ունիս:

ՊԵՊՈ.—Վունչիչ... (Դառը ժայիտով:) Շատ դամբ գցելեն
կուռդ գաթրեցավ, կոսե. գնա հիմի մե քիչ դնջացի, կոսե:

ԿԵԿԵԼ. — Ա՛լս, ՊԵԱԼՈ ջան, ջիգարս մի՛ պատռակի, թավաթ
երած իմ ու խորված:

ՊԵՊՈ. — Հինգ հազար ել երվիս ու խորվիս, ովք ե հարցնում:
Վճռած բան ե, պիտի գնամ բիրթը:

ԿԵԿԵԼ. — Ի՞նչի՞ ում խաթիր, ի՞նչ իս արի:

ՊԵՊՈ. — (դառնորին:) Դնւղութին:

ԿԵԿԵԼ. — Դուն՝ գուղութին: Զե, չե, Պեպո, ասա՞ ի՞նչ բան
ե, իսո հոքիս գուս հկավ:

ՊԵՊՈ. — Թո՞ղ գուս գա, իմն ել հիգը, ումն ի՞նչ կու պակ-
սի. շատ հարկավուր ե խալիսին քու հոքին, յա իմը:

ԿԵԿԵԼ. — (աչքերը սրբելով ու լացի ծայնով:) Ա՛լս, Պեպո
ջան, խո սպանեցիր ի՞նձ:

ՊԵՊՈ. — Սպանողը սպանից, յ'ես ի՞նչ անիմ:

ԿԵԿԵԼ. — Ո՞վ, ախար:

ՊԵՊՈ. — Ո՞վ... Ա՛ղա Արութինը... (Դառը ծիծաղում ե:) Հը,
հը, հը...

ԿԵԿԵԼ. — Ի՞նչի՞:

ՊԵՊՈ. — Աստուծ գուչ գիղե նրա գլուխը... իմ տանն ինձ
անպատիվ արագ, կոսե. փուղ բախշեցի ու երեսիս խփից, կոսե...
Պստի բան չգիղենաս, կեկել, մինձ մարթու զեհին դիրչիլը: Ինձ
պես խիղճ ողորմելին համարցակվի են հանգի աղա մարթու
ճակտին իմքին խփե... Հանաք բան ե... (Դառը ծիծաղելով:)
Հը, հը, հը... (Չեռքերը բարձրացնելով:) Ա՛ստուծ, աստուծ...

ԿԵԿԵԼ. — (մոտենալով յեվ փաթաթգելով Պեպոյին:) Ետ
խո իմ խաթիր, իմ խաթիր, Պեպո ջան. սիվցիլ եր իմ որն ու
ինձ պես բայի՛ղուշ քուր չեյիր ունեցի: Ի՞նչ եյիր ուղում
ինձմեն, քիզ ովք եր ասում, վոքը ենենց մինձ մարթուն
քեղամաղ անիս: Մայինց եսենց եր ու եսենց իմ բանը, ել ցա-
վիս վրա ցավ ուր եյիր ավելցնում: Ի՞նչ անինք հիմի... Դեղեն
գուր իմանա, ի՞նչ կոնե, դամբլա կու ննդինի խոմ: (Կաց ե լի-
նում:)

ՊԵՊՈ. — Դեղեն շատ ցավի յե դիմցի, եստուրն ել կու դիմնաւ:

ԿԵԿԵԼ. — (լալով:) Ա՛լս, աստուծ, ի՞նչի՞ բաննոքի չիս ա-
նում ինձ եստի եվետ: (Գնում ե ընկնում տախտի վրա ու
լաց լինում:)

ՊԵՊՈ. — (մոտենալով կեկելին:) Հերիք ե, թե քու աստուծ
կու սիրիս: Խո տեսար, վուր լացն ել վունչիչ չոտկից... (Պեպո
յերկինք աղաղակելով:) Ե՞ս ե քու դադաստանն, ելի՛, աստուծ...

Արութինը թալնե, Արութինը զբնե, Արութինը հաշա ուտե ու
մինք տանջվենք... նա խրխնջա ու մինք ախ քաշենք... նա քեփ
անե ու զող անե ու մինք դառը-դառը լաց ըլինք... (Դուրս ե
գնում աջ դռնից:)

ԿԵԿԵԼ.- (լաց լինելով:) Պեպո ջան, Պեպո ջան... (Դուրս
ե գնում Պեպոյի հետեվից:)

ՏԵՍԻԼԸ

ԱՐՈՒԹԻՆ, ԳԻՔՌ, յերկուսն ել գլխարկով:

ԳԻՔՌ.- (ներս գալով դիմացի դռնից:) ԱՌ, թե սուտ իմ
սսում:

ԱՐՈՒԹԻՆ.- (հետեվելով:) Արա, աբան:

ԳԻՔՌ.- (առաջ գալով:) Մանափ, համեցեք նստի, մե
տեղն ել գա:

ԱՐՈՒԹԻՆ.- Դիփ մեկ ե, Գիքո, մե տեսնիմ թե ետ ի՞նչ
թուխա ե:

ԳԻՔՌ.- ԱՌ, ինչ թուխա ե, աղա Արութին: (Զեռքը զըր-
պանն ե տանում յեվ հանում քթախոտի տուփը:) ԶԵ, ես չեր-
ամա դիփ մեկ ե... (Քաշում ե:) Հըմ... ԱՌ, (պահում ե քթա-
խոտի տուփը յեվ մուրհակը հանում) դուն մե քիչ հիռու կանդ-
նի, աղա Արութին: (Ինքը հեռանում ե դեպի տախոր:)

ԱՐՈՒԹԻՆ.- Վա, վախենում իս, վուր չխլիմ, աշխարքն
ալան թալան խո չ:

ԳԻՔՌ.- ԶԵ, չե, աղա Արութին, ետ վժւնց կոնիս, զմնա
գուն ետ հանգի մարթ իս. ամա ես թուխտը խիստ փաթերակա-
վուր իմքին ե: Ասում իմ ձեռդ չդիբչի: (Բաց անելով մուրհակը:)
ԱՌ, տիս: (Հեռվից ցույց տալով:) Ես ե:

ԱՐՈՒԹԻՆ.- (գլուխը մոտեցնելով մուրհակին:) Արա,
աբան:

ԳԻՔՌ.- (մատնացույց անելով:) Վա, այ «չեմի վակիա, *)
Արութին Զիմզիմովի: (Զարմանիք: Տեսարան:)

ԱՐՈՒԹԻՆ.- (շփոթվելով յեվ կակազելով:) Ետ... ետ...
(Ճեռքը մեկնելով) իմ... իմ ձեռքն ե:

ԳԻՔՌ.- (մոտեցնելով մուրհակը:) Բաս իմն ե:

ԱՐՈՒԹԻՆ.- (նաևաչելով մուրհակը, առանձին:) Ես ի՞նչ

*) Վացերեն ե—իմ պարտքն ե:

յ'երգնուց պատիժ եր... (Ձեռքերն առաջ տանելով:) Մե լավ տեսնիմ...

Գիրը.—(մուրհակը հեռացնելով.) Մուլափ, աղա ջան, Ե: Ախար, են՝ դադա վուր ասում եյի թե յ'ես վկա իմ, վուր պարտիս, սուստ եյի ասում. ամա վուր քու ոխտեմեն չեկա, յ'ես ի՞նչ անիմ: (Աղաղակելով:) Դոհանամ քու դադաստանին, աստուծ: Արքիթին.—(կամենալով մուրհակը խլել:) Մե տեսնիմ, ասում իմ...

Գիրը.—(գրպանը դնելով մուրհակը:) Ե՛, աղա Արութին, ձեռը զիկալ, քու հորն ողորմի: Ասում իմ վուր փաթերակի թուլստ ե, Ե: Ես սահաթիս գու քա Պեղոն, կակուլին մե նմուտումը կու դթնե նրան: Դուն եստի մնւլափ առւ, մե գնամ Շուշանին իմաց անիմ: (Ճանապարհից հետ նայելով Արութինին, դուրս ե գնում ծախ դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԱՐՔԻԹԻՆ, մենակ. յերկար ժամանակ սառած կանգնած ե, հետո ուշը գալով:

Ե՛ս հանգի ել ոյլին... Շատ բան ե եկի գլուխս, ամա ես թահարը չե ելի... Վմւր ՚ղանց լուս ննգավ ես անիծած բարաթը... վմւնց լուս ննգավ... երազ Ե... Զե, վմւր՝ ղանցի երազ ե... Թե երազ ե, (շուրջը նայելով) եստի ի՞նչ իմ շինում... Ես... Պեղոյի տունը ու յ'ես... (Շոշափում ե իրան:) Արութին Զիմզիմովս եստի... Զե, գրուստ աստծու պատիժ ե... Զելավ, ելի... Ե՞ն՝ դադանիրը մարսեցի ու կուժը ևս մեկի վրա յե կոտրվում, ելի. Ես եր վիրչն, ելի... Խալխը վուր իմանա, ի՞նչ կոսին... Ել ով կու ավտա ինձ... Աղահութինը աճկիրս կապից, ել սիլ ու սպիտակի չջողեցիր... Հենց ես սահաթիս ել սն՝ դադա խալխումն ասի... վուր յ'ես վունչիչ պարտ չիմ, ասի... Զիմի գնա, սիվցավ երեսդ... Ա՛մութ քիզ, Արութին, ամութ քիզ. Ես վմւնց բերեիր բանդ, վմւնց... (Յերկար լուսություն:) Զե, ուրիշ չարա չկա, վո՞նցոր ըլի պիտի եստի եվետ աղատիմ բարաթս... Թեզուզ տաս թուման ել գլուխ գնամ... թեզուզ քսան, թեզուզ յարսուն, թեզուզ մեկն երկու... Իմ հախն ե, թեղ ջանս դուս գա: (Ընկնում ե ազ կողմի աթոռի վրա:)

ՆԱ, ՊԵՊՈ

ՊԵՊՈ. — (ներս ե զալիս աջ դռնից, առաջին արարվածի հասարակ հագուստով յեվ գլխարկը ծածկած։ Տեսնելով Արութինին, ապշում ե։) Վա, դուն եստի։

ԱՐՈՒԹԻՆ. — (գլխարկը վերցնելով, դնում ե սեղանի վրա։) Հա, հենց յես, ի՞նչ իս արմնում։

ՊԵՊՈ. — Դանա դուն ինքդ չիս արմըննում, վուր եստի իս, յես վժւնց չարմընամ... Մե ասա, ի՞նչ քամին ե ըերի քիզ եսթենը, յա ի՞նչ բարի հրիշտակ ե մտի սրտումդ, յա ի՞նչ չարսատանա բոթի քիզ գեսը։

ԱՐՈՒԹԻՆ. — Ղոնազի մոհքաթ չիս գիրացի, ՊԵՊՈ։

ՊԵՊՈ. — Դուն՝ իմ ՚ղոնազ. երեսդ խեչը հանեւ, Քիզ վրամինձ դուշման չունիմ յես աշխարքումը, ու դուն իմ ՚ղոնազ։ ԱՐՈՒԹԻՆ. — Նստի, հալա հենց ապրիս։

ՊԵՊՈ. — Դուն նստած իս, ելի՛. յես հսկնց ել լավ իմ։ Մե ասա՞ ի՞նչ իս ուղում... Թե ձուզն առներու իս ՚նկի, յաղլիշ իս, (դառը ժայիտով յեվ հեղնորեն) ՚ղաղաղա լի։

ԱՐՈՒԹԻՆ. — Պեպան... արի, ախակեր, բարիշինք։

ՊԵՊՈ. — (ծաղրելով) Ոմքին խո չե աղոթի քիզ, աղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ. — Աղոթիլ ին թե չին աղոթի, յես քիզ ասում իմ, արի բարիշինք։

ՊԵՊՈ. — Իմ բարիշիլ ինչի՞տ ե հարկավուր, աղա Արութին. դուն մինձ մարթ, յես մե խիղճ ողորմելի, դուն հարուստ, յես ախշատ... (Հեղնորեն) Վախսենում իս, վուր իմ մազիեր քիզ չղրգին բիրթը, թե ճոնիքդ ուղում ե ինձմեն։

ԱՐՈՒԹԻՆ. — Տն, յես ուղում իմ քիզ լավութին անի։

ՊԵՊՈ. — Ի՞նչ ձեռնեմետ եկավ, խո արիք, փուղ եկիր պարտ հաշա կերար, եկա տունդ՝ խնդրելու, տանետ դուս արիք, վիրչը բիրթն ել իս զրգիլ տալի, ուրիշ ի՞նչ լավութին պիտի դուս գա ձեռնեմետ, աղա Արութին։ Եկիլ իս վուր մասխարա զցիս ի՞նձ։ Հերիք ե, հերիք, պարուն... Գնա, գնա, աստձուն փառք տու, վուր իմ տանն իս ու իմ ոճըքի տակն իս գթնըպում, թե չե ես երգած սրտիս վրա ել սաղ չեյիր պրծնի իմ ձեռնեմեն... Միտու ե... խո միտու ե՝ ինչ հանգի դուս արիք ինձ քու ատանեմեն... են արարմունքը քիզ կու սաղ գեր, քիզ, աղա Արութին։

Յ'ես քիզ խնդրում իմ, համեցէք գնա, ջափառ քաշե, վիկաց, հո-
րես կու տանին ինձ, ել վուխտ չկա, ուղում իմ մորս ու քվիրս
բարովիմ:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Տհ, ետ ըանը իմ ձեռին չե. ել չզբգիլ տամ
քիզ քիրթը, ուրիշ ինչ իս ուղում: (Պեպոն զարմացած նայում
ե. իսկ դրսից լսվում ե կակուլու ծայնը՝ «Եկալ»:)

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ, ԿԱԿՈՒԼԻ

ԳԻՔՈ.—(դիմացի դռանը, կակուլուն) Կորիլ ին, կորիլ-
ոչով չկան, կակուլիլի.—(ներս գալով, Գիքոյին:) Տհ, այ Պեպոն, ինչ
իս ասում:

ԱՐՈՒԹԻՒՆ.—(տեսնելով կակուլուն առանձին:) Ե՞լի ես
պաժարնին:

ԳԻՔՈ.—(ներս գալով:) Ես վժւնց եկար, Պեպոն, վուր
չտեսա: (Արութինին:) Ա՞չ, աղա Արութին, հիմի կու տմամ:
(Մատնացույց անելով Պեպոյին): Թե կոսե, Ե՞տ գուն, ես սա:

ՊԵՊՈ.—Ես ինչ խաբար ե, չիմ իմանում:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—Վա, աղա Արութինի մոգ դուն իս խոսում ու
մեր իս հարցում: (Գիքոն անցնում ե բեմի ծախ կողմը:)

ՊԵՊՈ.—Արա ասածը խո ուփրո չիմ իմանում: (Հեգնորեն:)
Եկիլ ե՞ բարիշնք, կոսե:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(ծաղրելով) Հա՞... (Հեգնորեն գլուխ տալով
Արութինին:) Բաս մե լավ շնորակալութին անինք:

ԱՐՈՒԹԻՒՆ.—(առանձին, շփոթված:) Մարիկ ես լրֆին:

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(Պեպոյին:) Տհ, թե ասում եյիր, թե լով մարդ
չե, կոսե, աղա Արութինը:

ԱՐՈՒԹԻՒՆ.—(առանձին:) Անսկա՞մ:

ՊԵՊՈ.—(ժպտալով) Ի՞նչ գիդիմ, խճպտանքը զարթիլ ե:
(Գիքոն շարժում ե գլուխը:)

ԿԱԿՈՒԼԻԼԻ.—(Պեպոյին:) Խժում զհւնց ե բարիշում, կեսը
տալիս ե: (Մոտենալով Արութինին:) Յե՞ս քու մարթ ասողին...
(Բունցքը բարձրացնելով:) Դե, հոքետ ալահ տու ու սերթուկդ
հանե,

ՊԵՊՈ.—Կակուլի, կակուլի:

ԳԻՔՈ.—(Պեպոյին:) Տհ, ըան-հոքի չանե:

ԿԱԿՈՒԼԻՒ. — (Արութինին, ձախ ծեռքով բռնելով նրա ոձիքից) Ե՞ս, քու... (Ազու բռունցքը ցույց տալով.) Դե, գնահամի՝ գնանգատ արա...

ԱՐՈՒԹԻՆ. — Տն, դժվիլ ի՞ս, ե՞լ:

ՊԵՊՈ. — (հեռացնելով կակուլուն Արութինից) Մաւլափ, կակուլի, ետ մարթութին չե:

ԱՐՈՒԹԻՆ. — (Շորերը ուղղելով.) Արի ու ձիզ պեսներուն լավութին արա:

ԿԱԿՈՒԼԻՒ. — (Պեպոյի ձախ կողմը կանգնած, Արութինին.) Լավութին... (Պեպոյին.) Ի՞նչ պտուղ ե... Դիփ հոքու եղնեն ե մասն գալի, այ. գանա չիմ գիգի... (Նայելով Արութինին, զլուխը շարժում ե. հետո կրկին դառնալով Պեպոյին.) Աբա բարաթը չեր լուս ննդնի, տեսնիմ թե վնանց եր լավութին անում: ՊԵՊՈ. — Ի՞նչ բարաթ:

ԿԱԿՈՒԼԻՒ. — (Նույն դրությամբ) Վա, բաս ջեր չիս գիգի՞. այ, ես աղա պարնի բարաթը: (Գնալով դեպի Գիքոն) Տն, բի, ե: (Պեպոյին.) Ես սահաթիս ճամփին վուր իմացավ, ուանգ ու ուռնգը գնաց խզճինը... Ուզում եյի ենդի եվետ զրա ժամը դուս բերի, ամա վուխտը չեր. քու կուռն եյի շտապում... (Գիքոյին.) Դե, չնւստ արա, Գիքո ջան, ե:

ԳԻՔՈ. — (զրպանից հանելով մուրհակը) Մաւլափ, մաւլափ, տիրուշը տամ: (Մուրհակը մոտեցնում ե Պեպոյին.)

ԿԱԿՈՒԼԻՒ. — (մուրհակը խելով Գիքոյի ծեռքից յեվ տալով Պեպոյին.) Վնանց ե, վնանց, լոթին:

ՊԵՊՈ. — (զննելով մուրհակը, հետզինուե զարմանում ե: Տեսարան) Ես երազ ե...

ԿԱԿՈՒԼԻՒ. — Երազ ու կես ե:

ԳԻՔՈ. — Ղուրթ վուր երազ, Պեպո ջան: Չիս գիգի թե...

ԱՐՈՒԹԻՆ. — (առանձին) Ե՞ս՝ դադա ել խալուառակութին:

ԿԱԿՈՒԼԻՒ. — (մատնացույց անելով Գիքոյին.) Սրան թե խոսեցրիր, Պեպո, ոխտը գիվի հեքիաթի վրա երդար ե ետ բարթի առակը:

ՊԵՊՈ. — Ախար ես վնար՝ դանց լուս ննդավ:

ԳԻՔՈ. — (նստելով տախտի վրա յեվ պատրաստվելով պատմելու) Ա՛յ, Պեպան ջան, վունց եր...

ԿԱԿՈՒԼԻՒ. — (Գիքոյի բերանը ծեռքով ծածկում ե:) Սաւ, սու, գուն, սնւս, Գիքո ջան... (Պեպոյին.) Ետ վունցոր լուս ննդավ, իժում կոսինք. ամա դուն ետ անսատձուն թամաշա արա: (Արութինը սարսալիելի դրության մեջ ե:)

ՊԵՂՈ. — (թեթեվ նայում ե Արութինին յեվ իսկույն դարձնելով հայացքը մուրհակի վրա, վերցնում ե զլխարկը յեվ դեպի յերկինք աղաղակում.) Գոհաննամ քի, տեր. դիփու-նի գաղաստանի վրա քու գաղաստանն ե ելի դուքթ... (Գլխարկը ծածկելով, Գիքոյին.) Սիրտս իմանում եր ախար, ե...

ԳԻՔՈ. — Գիգե աստուծ, վուր յ'ս միո չունիմ, Պեպո ջան... (Կակուլին ծեռքով իր բերանը ծածկելով, հորդորում ե Գի-քոյին լոել:)

ՊԵՂՈ. — Իմ բարի հրիշտաքն իս դուն ես սահաթիս, Գիքո ջան, ինչս ասում: (Լուռ յեվ անշարժ նայում ե Արութինին յերկար ժամանակ:)

ԳԻՔՈ. — (Նույն միջոցին, ցածը ձայնով:) Բարի հրիշ-տաքն ըլի քու քոմազը, վուրթի: (Հերկար լուսթյուն: Պատ-կեր.)

ՊԵՂՈ. — (ծանր մոտենում ե Արութինին յեվ մուրհակը ցույց տալիս:) Ես կու ճանչնաս, աղա Արութին... (Յերկար յեվ լուռ նայելով յերեսին, գլուխը շարժում ե:) Հիմի իմ իմա-նում քու եստի գալը... Լայիդ արիր, հա... թե կոսե վունչիչ պարտ չիմ, թե վուր որթում հավատ արիր, թե վուր վուրթիե-րանցով որթում կերար... Ե՞տ ե քու որթումն, ելի՛. Ետենց իս ամեն որ որթում ուտում, ելի՛. Էտով իս աշխարքին խափում, ելի՛. Ե՞տ որթումներով իս մոդ արի ետպաղա փուղն, ելի՛... Այ, խոռվ կենա քիզ քու որթումնիր... Ամեն մե քու որթումը որթունք կարվի ջանումտ ու ջանդ ծակծկվի, վուր հոքիս եկերա յերգնքի լուս տեսնե... (Ավելի մոտենալով:) Զե, չիս ամանչում... Խճպտանքը խո գարդակ քամի յե քիզ համա. (մուրհակը նորից ցույց տալով) Ես ինչ ե, ինչ եստուրն ինչ կոսիս: Եստումեն ցույց տալով) Ես ինչ ե, ինչ եստուրն ինչ կոսիս: Եստումեն ել չիս ամանչում, ես քու կոտրած ձեռով չիս գրի... Սաս չե, ելի՛, ասա. քիզ համա հո հաշա ուտիլը հիշտ ե... Այ գեղինը մտնիս քու ետ պատվական շուրեքով: (Արութինը ասատիկ շվարվում ե:)

ԿԱԿՈՒԼԻ. — (վոր գտնվում ե բեմի ծախ կողմը, գլխարկը վեր առնելով բացականչում ե:) Հա-ջան, հա-ջան, աղա Արու-թին... (Գլխարկը նորից ծածկելով յեվ ծայնը փոխելով:) Թո-քա, թե յ'ս ուզենամ քու տիղն ըլիմ:

ԳԻՔՈ. — (վեր կենալով:) Ես Շուշանն ինչ ելավ: (Գլուխը շարժելով դուրս ե գնում ծախ դոնից:)

ՆՐԱՆՔ, առանց գիրքներ

ԱՐՈՒԹԻՆ. — (ուշքի գալով, Պեպոյին) Տն, ինչ իս սարսադարապ դուս տալի, վուր միտս եր ելի, խն կու տեյիշ ելի...

ԿԱԿՈՒԼԻ. — (ձեռքերը բարձրացնելով.) Հըմ... (Ձեռքերը վայր թողնելով, խփում ե միմյաց յեվ հետո բթամատները քամարին հագցնում.)

ՊԵՊՈ. — (Արութինին) Միտդ չեր... ԽԵՂՃ ողորմելի. յարաք վժնեց իս մե թիքա հաց ճարում ուտելու... Ումն իս խափում, ումը... Ես սահաթիս դատամերի մոդ հաշա կերար, վուր քու որումն ել ինձ վուչինչ չիս պարտեցի, վուր սուտ շառիլ իմ մոգոնում յ'ես քիզ վրա, ես սահաթիս ձեռք քաշեցիր եսուութիւրը ու հիմի միտդ չեր... ու հիմի բարիշենք... Ես՝ զադա վուխտ չարչըրեցիր, ես՝ զադա գլուխտ անիծիլ տվիր ու հիմի լավ մարթացար մերաշ... Վախենում իս, հա. վախենում իս վուր աշխարքը չիմանա քու՝ զալթաբանգութինը, հա. վախենում իս, վուր դատամերի մոդ երեսդ չսիվնա, հա... Քու մտկումը, թնդ միզ մոդ սրվնա մենակ, ինչ հաջաթ, մինք անմիզ ոմքնիր ինք, ով ինչ կու իմանա. ողոնդ խալսը չիմանա, ողոնդ քու ննզըրտիքը չիմանան... (Զայնը փոխելով.) Գնա, գնա, ասում իմ: (Կակուլին ազատելով ձեռքերը, սպառնալի կերպով շարժում ե գլուխը յեվ բուռնցքը կրծքին խփում.)

ԱՐՈՒԹԻՆ. — Խո պրծար, ախալքը, ինչ ասելու ունելիր, խո ասիր, սիրտդ խո հիմ եկավ: Հիմի մե ինձ լսե. յ'ես քիզ ասում իմ փուղիրտ առ, բարաթս իս տու ու քու բիրթը մոշլա անիմ ես սահաթիս:

ՊԵՊՈ. — Կեհամ բիրթը, կեհամ, յ'ես քու ողորմութինը չիմ ուղի ու (մուրհակը ցույց տալով) ես փուղիրը առանց քու ասելու ել կու առնիմ:

ԱՐՈՒԹԻՆ. — Դժութին մի անի, Պեպան: (Ձեռքը ծոցը տանելով.) Առ ես փուղիրտ, ասում իմ: (Պեպօն գլուխը շարժում ե.) Առ մե իմքին ել ավելացնիմ. հըմ, ինչ՝ զադա... մե ինդ թուման ավելցնիմ... տան... քսան...

ՊԵՊՈ. — (վոր արհամարհանքով նայաւմ եր Արութինին, դիմում ե Կակուլուն.) Մտիկ իս անում, կակուլի, մտիկ իս

անում սրան. ինչըու հիմի գլուխկն ել չեր տալի ու հիմի առվելցնում ել ե... Եսենց ին, այ, դի՛ք հսենց ին. քանի ոչով չի գիդի, հախն ել ին կտրում ու յեփող գախենում ին բանն աշքարանա, Եսենց ին ժաժ գալի, այ, Եսենց, վուր անումներուն չկոտրվի միթամ:

ԿԱԿՈՒԼԻ. — (Պեպոյին, ցածր.) Տն, առ, աճկը հանե, ու դրա ջիգը (բուռնցքը ցույց տալով) յես գիդիմ. Ետ՝ զալը ՝ դուլարինը:

ՊԵՊՈ. — (շարունակելով Արութինին.) Յես քու բախշելը չիմ ուղում, աղա Արութին, տար աճկտ դի. ամա աճկտ կու հանիմ ու գլուխկը, վուրդիոր ինձ ես սահաթիս ստեցիր, Ենդի կու առնիմ, Ենդի. Թող դիփունքը ճանչնենան ինչ մարթել իս, թող դիփունքն իմանան քու արարմունքը: Եստու համա բիրթը կի չե, թեգուղ հնուրումը կու սստիմ, հնուրումը:

ԿԱԿՈՒԼԻ. — (Պեպոյին.) Ը, յես քու խիլքին ինչ ասիմ:

ԱՐՈՒԹԻՆ. — Բոնե, իսուն թուման ավելցնիմ.

ԿԱԿՈՒԼԻ. — (մտտենալով Արութինին.) Բի, յես բարիշեցնիմ:

ՊԵՊՈ. — (Կակուլուն հետ մղելով.) Թու բանը չե, կակուլի:

ԿԱԿՈՒԼԻ. — (հետ գնալով.) Այ, սարսադ: (Կրկին անցնում ե բեմի ծախ կողմը.)

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՈ

ՇՈՒՇԱՆ. — (զաթիբայով դիմացի դռան շեմքում, Գիքոյին, վոր հետեւվում ե նրան.) Վայ, քոռանամ յես, զուրթ իս ասում, Գիքո... (Առաջ զալով յեվ զաթիբան վերցնելով.) Վարդի յե, վարդի, միր հոքենանը... Սա յե... (Ղաթիբան կցում ե տախտի մոտ դրած աթոռի վրա. իսկ Գիքոն գնում, գանգնում տախտի մոտ.)

ՊԵՊՈ. — Սա, սա, դեղի. այ միր բախտավուրողը:

ՇՈՒՇԱՆ. — (Արութինին, շտապով.) Այ, դեղինը պատովի ու քիզ գեվեր տանե: Ի՞նչ իս ուղում միզմեն, ի՞նչ... Փուղեներուս հաշա կերար, ախչկաս բողազը դուս կտրեցիր ու հիմի Պեպոյիս ել բիթին իս զրգիլ տալի՛. Զիգը իս մտի միզ հիզ նւզում. իս վիր ջնջի միզ...

ԱՐՈՒԹԻՆ. — (առանձին.) Կարկուտ և անիծածը:

ՇՈՒՇԱՆ.—(շարունակելով.) Ա՛յ, վեր ջնջվի քու անումը՝
քանդվի ու բրիշակ ըլի տուն ու տիղդ. քու անամութ կնգա
սրտումը ննդնի են կրակը, ինչ կրակ միր սիրտը զցեցիր:
ԿԱԿՈՒԼԻ. — (առանձին յեվ կիսածայն.) Ամեն,

ՊԵՊՈ. — Դեղի, գեղի... (Կեկելը ներս մտնելով աջ դռնից,
դամբի մոտ, անկյունումը, լուռ լաց ելինում.)

ՏԵՍԻԼ ՓԶ

ՆՐԱՆՔ, ԿԵԿԵԼ

ԱՐՈՒԹԻՒՆ.—(Շուշանին.) Խ՛լքի արի, խ՛լքի, ինչի՞ր իս
ասում, դեղի:

ՇՈՒՇԱՆ — (շարունակում եւ, դառնալով մյուսներին.) Ո՞ւր
եւ, սիկցրիք երեսը. մւր և են սրի ու մութ բարաթը: (Արու-
թինին.) Հիմի ել կոսիս, վուր վունչիչ պարտ չիս միզ:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Պարտ իմ, պարտ իմ ու տալիս իմ, ուրիշ
ինչ իք ուզում:

ՇՈՒՇԱՆ.—Բաս բիրթն ել մւր իս զրդիլ տալի:

ԱՐՈՒԹԻՒՆ.—Բիրթն ել չպացիլ տամ, փառղն ել տամ, մե
իմքին ել ավելցնիմ. ամա վուր չե բարիշում, յես ի՞նչ անիմ:
(Շուշանը զարմացած նայում եւ.)

ՊԵՊՈ.—(Արութինին.) Հիմի բարիշնք, հիմի... (Մոտե-
նալով կեկելին.) Իժում սրան ի՞նչ իս ասում... (Զախ ծեռքով
բռնում եւ կեկելի աջ ծեռքը յեվ առաջ բերում) սրա ձոդ
վժնց իս բարիշում: Սաղսաղ գերեզմանը գըիր, որն ու ումբը
խավրեցրիր, կինքը հառամ արիր. վժնց իս բարիշում սրա
հիդ, վժնց... Վժնց իս հիդ տալի սրան, ինչոր խլեցիր սրամեն,
վժնց: Թու վուխչ հարստութինն ել չի կանա լավցնի են յա-
րեն, ինչ յարա բաց արիր գուն սրա սրտումը... Գնա, գնա, ել
մինք բարիշելու վունչիչ չունինք: Գնա, քանի սաղ իս աշխրգումը,
սրա արտըսունքնիբը միտդ բի, վուր եղերա ել մեկելներուն
չանիս, ինչ սրան արիր:

ԿԵԿԵԼ.—(աշխատելով ազատել ծեռքը) Թհղ, Պեպո ջան,
թհղ... (Պեպոն թողնում են նրա ծեռքը:) Ի՞րան սիկցրու իր բա-
րաթը: (Անցնում եւ Պեպոյի աջ կողմը.)

ԳԻՐՅՈ.—(Պեպոյին.) Տն, հաղիք բարիշնս:

ԿԱԿԱՌԻԼԻ.—(Շուշանին) Ասա, դեղի, վուր բարիշի, հագիք
ավել և տալի:

ՇՈՒՇԱՆ.—իր աճկը գնե ավելին, թաք Պեպոյիս ձեռը չտա:
ԿԵԿԵԼ.—Բարիշի, Պեպո ջան, բարիշի:

ԱՐՈՒԹԻՆ.—Արի կոտրվի, Պեպան, բարիշինք:

ՊԵՊՈ.—Արի բարիշինք, արի... Արի գնանք, վուրդիոր-
ինձ ես սահաթիս ստեցիր, արի մեկ ենդի ես բարաթը շանց
տամ, մե երևա վուր սուտը յես չիմ, թեզուզ գլխեմեն ել մե
իմքին քիզ փեշքաշ... Արի, ելի, արի:

ՇՈՒՇԱՆ—(Արութինին) Գնա, գնա, վունցոր միր երեսը
սիլցըի իս, թող հիմի քու երեսը սիլնա:

ՊԵՊՈ.—Արի, ելի:

ԱՐՈՒԹԻՆ.—Ետ վուր ուզենամ, խո ես՝ զադա ել աղանչաք
չիմ անի:

ՊԵՊՈ.—Ըստ, գնալ ավագակ:

ԿԱԿԱՌԻԼԻ.—(առանձին, կիսածայն յեվ կրծքին խփելով.)
Վհւյ մե... (Դիմացի դուռը դրսից բաղխում են: Էռություն:
Մոտենալով դռանը յեվ փոքր ինչ բաց անելով, վորպես թե
մեկի հետ խոսում եւ,) Հա, եստի յեւ (Առաջ վազելով, Պեպո-
յին:) Տն, գժվիլ իս, քնութահ արա. պրիստագն եւ:

ԿԵԿԵԼ, ՊԵՊՈ, ՇՈՒՇԱՆ.—(միասին:) Պրիստավը:

ԳԻՔՈ.—Պրիստավը: (Պատկեր)

ԱՐՈՒԹԻՆ.—Իս տու բարաթս, Պեպան, թե չե բիրթն ին-
տանում:

ՊԵՊՈ.—Հաջաթ չե, կեհամ բիրթը, կունստիմ. եսդի խո
չիմ մեռնի... Մե որ կու աղատովիմ ախար, ելի՛ վագեն հիռու
չե... Շատին իս խափի եսենց, շատի գլխին իս ոյին եկի եսենց,
շատի բողազն իս դուս կտրի եսենց, ու յես Պեպոն չիմ ըլի
թե գիփունանց ջիզը չիմ հանի... Սաղ աշխրքումը երեսդ մուր
կու շինիմ... Մնան բարով, դեղի... Մի լաց ըլի, կեկել, աստուձ
ողորմած ե, խղճի ճակտին եսենց ե գրած: (Կակուլին կամաց-
կամաց գնում կանգնում ե դամբի մոտ յեվ հետզհետե սպառ-
նալի դիրք ընդունում:)

ԱՐՈՒԹԻՆ.—(սաստիկ շիփոթված յեվ առանձին:) Ի՞նչ ա-
նիմ հիմի:

ԿԵԿԵԼ.—(փաթաթվելով Պեպոյին) Մի գնա, Պեպո ջան,
մի գնա:

ՇՈՒՇԱՆ. — (Պեպոյին մյուս կողմից.) Ի՞նչ իս անում, Պեպո, իրան սիվցու ետ սիվ ու մութ բարաթը:

ՊԵՊՈ. — Իրան տամ, վուր սրա մասխարեն դառնամ... վուր խալսի աճկումը սուտը յ'ես երևամ, զուրթը սա... բիրթի առու գլուխս ծախճմ... ԶԵ, դեղի, ես բարաթը աստուծ թուր ե դեկեր դրդի ինձ համա... եստով պիտի կտրիմ յ'ես սրա գլուխը... Քանի քի պեսնիրն ին երվում սրա ձեռնեմեն, քանի (մատնացույց անելով նեկելին) սրա պեսնիրն ին լաց ըլում, քանի ինձ պեսնիրն ին տանջվում... Մեկն ել ե չիմաց անե աշխըրքին սրա արարմունքը, մեկն ել ե հարայի չկանենա տա, վուր ես մարթը, վուրին դիփունքը գլուխ ին տալի, դիփունքը հարգում ին ու պատվում ին, դիփունքը մինձացնում, փառափուրում, ու յ'երգինք բարցրացնում... Սա են մարթն ե, վուրի համա վունչիչ բան սուրփ չկա աշխըրքումը... Հիմի լնց ըլեք, ինչ դադա գուղիք... Խղճի լացը հալբաթ ենդուր ե ստիղծի աստուծ, վուր հարուստի արարմունքը լվացվի: (Դուռը կրկին բաղխում են:.) Մնաք բարով... (Դուրս ե զնում դիմացի դռնից:)

ՏԵՍԻԼ ՓԵ

ՆՐԱՆՔ, առանց ՊԵՊՈՅԻ

ՇՈՒՇԱՆ. — (Լաց լինելով Պեպոյի հետեվից:) ՊԵպո, ՊԵպո...

ԿԵԿԵԼ. — (Նույնպես յեվ նույն միջոցին:) ՊԵպո ջան, ՊԵպո ջան... (Նետվելով դեպի տախտը, բերանքսիվայր ընկնում ե մութաքի վրա յեվ բարձրածայն հեկեկալով լաց լինում մինչեվ վերջը:)

ԱՐՈՒԹԵՆ. — (Անդանի մոտ կանգնած, յերկու ծեռքով գլխին խփելով յեվ առանձին:.) Ես ի՞նչ բան եկավ գլխիս: (Մնում ե անշարժ:)

ՇՈՒՇԱՆ. — (Արութինին, ծառանալով իր ամբողջ բարձրությամբ:) Յ'երգնային թարափուրն անե քու դադաստանը... (Դուրս ե վազում Պեպոյի հետեվից:)

ՏԵՍԻԼ ՓԸ

ՆՐԱՆՔ, առանց ՇՈՒՇԱՆԻ

ԳԻՔՈ. — (Արութինին:) Ե՞ս եյիր ուզում, ելլ, հեք ոխանձ: (Մոտենալով նեկելին:) Մի լաց ըլի, կեկել ջան, մի լաց

ըլի, աստուճ ողորմած եւ (Գլուխը քարշ գցած դեպի կեկելը,
նույնպես մնում եւ անշարժ։)

ԿՈԿՈՒՆԻՒԹԻՒՆ. — (մոտենալով Արութինին, ծախս ծեռքը կանթ
արած, իսկ աջը վայր թողած։) Հիմի, աղա Արութին, մնացինք
յես ու գուն... (Մնում են անշարժ։ Պատկեր։ Վարագույրն
ի ջնում եւ կամաց-կամաց։)

Վ Ե Ր Զ

ՔԱՆԴԱԾ ՈՉԱԽ

1872—73

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՔ ԱՐԱՐՎԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳՈՒԼԱՅԲԻՆՑ ՈՍԵՓԸ.— վաճառական:

Ս ԼԱՄԵ.— նրա կինը:

ՆԱՏՈ.— նրանց ազջեկը:

ԽԱԽՈ— հՍԵՓԻ հորաքույրը:

ԳԵՎՈ. ՈՍԵՓԻ բարեկամ, վաճառական:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐՄԱՐՈՎ. աստիճանավոր յերիտասարդ:

ԼԵՊՐՈՒՆՑ ՄԱԹՈՒՄԵՒԻ ՎՈՒՐԹԻ ՓՈՒՐԹԻ ՓՈՒՐԹԻ ՎՀԸ. — վաճառական:

ՔԱԼԻ. — նրա կինը:

ԳԻԺ ՄՈԶԻ. Լեպրոլոց մոտիկ ազդական:

ՄԻԽՈ— Փարսիզը զուքնի պսար աշկերտ:

ԴԱՐՉՈ. — Փարսիզի զուքնի մնած աշկերտ.

ՄԱՐՄԱ. — լուսոբազ ալրի կին:

ՆԻՆՈ. — հյուր:

ՓՈՓՈ. — յերդեցող հյուր:

Լոտո ու վեշեր, լոտո խաղացող բազմաթիվ կանայք, որինորդներ, սուզեբներ, պիտիստավ, նրա գըտըրը, պարտատերեր, վկաներ և ծառաներ:

Առաջին յեզ յերերդ առարվածներ կատարված են ՈՍԵՓԻ տանը, իսկ յերերդը՝ Փարավի տանը:

Անցիր պատահում է Թիմիլիզում, 1871-ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈՍԵՓ, 45 տարեկան բարձրահասակ տղամարդ գեղեցիկ, գրավիչ գեմքով, Յերեսը ածելած, գլխի մազերը փոքր ինչ սղիտակախառն, իսկ հոնքնը և բեխերը սկզբան բոլորովով սկզբան և անդրավարափքը մահու-

զից, փողպատը և արխալուխը մետաքսից. մեջքին արխալուխի վրայից արձաթե նեղ քամար, կարայի վրայից մետաքսյա կապույտ գոտի. Ընդհանրապես հագնված ե թե՛ հասարակի, բայց մեծ ճաշակով Գործ ե ածում բուխարու ու ուղրթե գդակ՝ ծայրը փոքր ինչ ներս ծալած և մետաքսյա կապույտ ծաղկախառն թաշկինակի; Շարժվածքը և խոսակցության ձևերը՝ ամենասազնիվ:

ՍԱԼՈՄԵ, 35 տարեկան փառանեղ կին ու մաղերով. Առաջին արարվածում յերկու ձեռք յելքրոպական մողայի հսկուսա, մինր—սկզբում, ամենուրյա, իսկ մյուսը՝ Մարմարովին ընդունելիս, բնտիր. Յերկորդ արարվածում՝ բուն վրաց շքեղ հագուստ դոշ ու գոտկով, գլխի սպիտակ վաֆթանով և քառթիբայով, փոր զարդարած և փոսկե կոճակներով և մարդարան լայն բաֆթայով. ձեռնոցներ և գունափոր փորթիկ հովանոց. Յերրորդ արարվածում՝ զարձյալ վրաց ամենաշքեղ սի ուրիշ հագուստ նույնպես դոշ ու գոտկով, բայց ասանց քաթթեթայի Գլուխը, նույնիսկ առաջին արարվածից, միշտ զ սրդարված և վրացնակ՝ զանազան չիթիւններով և վրակեկար ճակտի-աղլուսներով. Գործ ե ածում թանգարին ակնեղեններ և գոսկե ժամացույց գոսկե շղթայով; Շարժվածքը գոռող, խոսակցության ձևերը փօռու: Առասարակ մեծ կարծիք ունի իր վրա:

ՆՈՒՏՈ, 18 տարեկան, շատ գեղեցիկ, բայց թեթևութիվ որիորդ: Յերեք ձեռք յելքրոպական մողայի շքեղ հագուստ. Մինը՝ առաջին արարվածի սկզբում, գլխարկով, քողով, ձեռնոցներով, գերարկույով և փոքրիկ հովանոցով. յուսը նույն արարվածի վերջում, ինչպես հիշված ե իր տեղոր իսկ յերրորդը՝ վերջին արարվածում, սպիտակ հովհարով: Գուխը բաց, միշտ յելքրոպական ձեռվ զարդար: Խոսակցությունը արագ և կրակոտ, շարժվածքը կենակի:

ԽՈՒՈ, 65 տարեկան այրի կին: Վրաց հաղուստ, գլուխը վրացնակ ճամկեցած հասարակ չիթիւնով և մուգ զալամքառե ճակտի-աղլուսով, առանց քորոցի: Մուգ-կապույտ գոր ու թափշիք ժապավենով բալորած և մեծ փիրուզի քորոցնվ աժքացրած: Մետաքսյա ու գերիա, քրիմաներ սե շալ և նույն շալից գոտի: Վոտնամանը հին ձեի սե ծուղեք և ասիան կրնկանի սե քոշեր: Մկըբում սպիտակ զաթիբա և մետաքսյա սե կապտախառն գլխի վաֆթաթան: Խոսակցությունը և շարժվածքը ծանր, Ամենապատկանելի անձն:

ԳԵՎՈ, 45 տարեկան, հաճելի դեմքով և սպիտակախառն սե մաղերով: Յերեսը ածելած, բեխերը միջակ: Տեղական հասեստ հագուստ՝ սե մահաւզե կտրա և անդրագարտիք, մուգ-կապույտ մետաքսյա արխալուխ, մուգ-մանիշակագոյն մետաքսյա գոտի և բուխարու սե մորթե գդակ: Խոսակցությունը և շարժվածքը ծունք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ, 30 տարեկան, գեղեցիկ կազմվածքով, հաճելի գեմքով, սե մաղերով և կարճ մորուրով, բայց կզակը ածելած: Հարուստը բարորովն յելքրոպական, միշտ ձեռնոցներով. Կիսարկը՝ սիլունդր: Յերրորդ արարվածում՝ մուղեկանաշ մահուզե պաշտոնական ֆրակ (վրցմունզիք) սե թափիչի ուժիքով և վոսկեզոծ կոճակներով: Գործ ե ածում պենսնի: Շարժվածքը և խոսակցության ձևերը անհաղող (Փատ):

ՓԱՐՍԻՂ, 55 տարեկան, միջին հասակով և տգեղ դեմքով հաստափոր մարդ: Մազերը սե, հոնքերը հաստ, բեխերը կարճ, յերեսը ածելած: Յելքրոպա-

կան հասարակ, անձաշակ հագուստ՝ սև մահուղեց լայն սերիթուկ, յերկար ժիշտա և փոքր ինչ լայն անդրավարտիք. փող զատր սև մետաքսյա թաշկինակից: Երծք, ն արծաթե ժամացույց սև ժապավենով. Գլխարկը՝ փոքրիկ սև փուրաժկա: Շարժվածքը և խոսակցության ձևերը ամենահասարակ:

ԳԱԼԻ, 40 տարեկան, սպիտակ. բայց տգեղ գեմբով և շեկ մազերով կարծահասակ, նիհար կին: Հաղուսաը բոլորային վրացնակ՝ չիքիւայով, ճակտիաղութով և գոշ ու գոտկով, Զարդարված ե զ անազան թանդադին ակնեղեններով: Ըսդհանրապես հագնված ե հասարակ և անձաշակ, Շարժվածքը և լսաւակցության ձևերը գուեհիկ:

ԳՐԺ-ՄՈԶԻ, 30 տարեկան, սև մազերով գեղեցիկ յերիտասարդ: Բելերը փոքրիկ, յերեսը ածելած, աջ թշին սև նիշ. Տեղական համեստ, բայց մաշակով հագուստ՝ սև մահուղեց կուրծքը բաց կարտ, նույն մահուղեց լայն անդրավարտիք սպիտակ չթե արխալուխ. մեջքին արխալուխի վրայից արծաթե նեղ քամար. կրծք, ն ժամացույցի հասարակ կարճ շղթա և գլխան սև փոքրիկ փուրածկա: Դործ և ածում մետաքսյա դեղին ծաղկախառն թաշկինակ, վոր սպրզբում դցած ունի պարանոցին, ծայրերը կրծքի կողմանց քամարի տակ տմրացըցած, Շարժվածքը կենդանի, խոսակցությունը կրակուա:

ՄԻԽԱ, 16 տարեկան, կարմիր յերեսանի. սև մազերով պատանի: Սև ոերթուկ, զեղին չթե արխալուխ, կաշին սև նեղ քամար, շատ նեղ ու կարճ կաւնավոր անդրավարտիք և փոքրիկ սև փուրաժկա:

ԴԱՐՁՈ, 25 տարեկան, սև մազերով, փոքրիկ բեխերով և սորամանկ գեմբով յերլասարդ: Տեղական հագուստ՝ մահուղեց կուրծքը բաց սև կարտ: Մետաքսյա արյունագույն արխալուխ, կուրծքը վոսկեթել ժապավենով բոլորուծ մոխրագույն մահուղեց անդրավարտիք: արծաթե նեղ քամար արխալուխի վրայից, կրծք, ն ժամացույցի վոսկե շղթա և ձեռքին փոքրիկ սև փուրաժկա:

ՄԱՐԹԱ, 50 տարեկան, կարմիր և լիքը յերեսով, սև մազերով, հասափոր ու բարձրահասակ այրի կրն: Բոլորովին վրաց հագուստ՝ մետաքսյա մուգմեխակարուն դերլա և սև, բայց ծաղկախառն: լայն ժապավենից զոյ ու գուտիկ:

ՓՈՓՈ, 30 տարեկան, գեղեցիկ, կրակուա կին, վրաց շքեղ հագուստով: Յերդում և հիմունի:

ՆԻՆՈ, 35 տարեկան, նիհար կին, վրաց նույնպես շքեղ հագուստով: ԲԱԶՄԱԹԻՎ կանաչը (մոսափորապես քսան հոգի), զանազան հասակի, բոլորն եւ վրաց շքեղ հաղուստներով:

ՈՒՒՐԴԻՆԵՐ, յելքոպական հագուստներով, յերկու-յերեք հոգի:

ՍՈՒԴԵՐՆԻ ՊՐԻՍՏԱՎ, յելքոպական հագուստով և պաշտոնական շըշթայուի:

ԳՐԱԳԻՐ, յելքոպական հագուստով:

ՊԱՐՏԱՏԵՐԵՐ ՅԵՎ ՎԻԱՆԵՐ (մոսափորապես հինգ հոգի). աեղական և յելքոպական հագուստներով:

ՇԱՌԱՆԵՐ, մինը փրակով և սպիտակ ձեռնոցներով, մյուսը չերքեղի ընտիր հագուստով:

Ուենքի տանը բավականին հարուստ սենյակ թանգազին կահկարասիքով։ Սպասառաջից կախած և ջան հանգած մոմերով։ հատակը ծածկած և դորգով։ Աջ ու ձափ գոները Խորքում, աջ* կողմո՞ւ լայն դուռը, փեղկերը բացված, և դուն հետեւ նախասենյակ, իսկ ձախ կողմը լուսամուտ, վորի միջով յերեսում և պարաեզ։ Դոներն ու լուսամուտը զարդարած են դեղեւիկ դրապրիներով Սենյակի աջ կողմո՞ւ բազմոց մեծ և փոքրիկ սեղաններով, վորոնք ծածկած են թավիշե գունավոր սփռոցներով, ձախ կողմո՞ւ գորգով, քեչայով և մութաքաներով զարդարած տախտ։ Ուր հարկն եւ աթոռներ, բաղկաթոռներ, հանդած զապտերներ և հանդած մոմերով աշունակներ ու կանդելաբրներ։ Ցերեկ եւ

ՏԵՍԻԼ Ա.

ՍԱԼՈՄԵ, ԽԱԽՈ

ՍԱԼՈՄԵ.—(ըեմի խորքում, նախասենյակի դռանը.) Համեցեք, համեցեք... Այ, տերը բարի տա քիզ, բատոնո ջան, ջափա քաշեցիր։

ԽԱԽՈ.՝—(զաթիբայով, զալիս ե նախասենյակի աջ կողմից.) Բարի լուս ձիզ, (Առաջ զալով յեվ զաթիբան վեր առնելով.) Ի՞նչ իս հայ-հարա ապսպըի։ (Զաթիբայի մեկ ծայրը տալիս ե Սալոմեյին.)

ՍԱԼՈՄԵ.—(զաթիբան ծգելով.) Ի՞ն, բատոնո ջան, հետիկ իմ, հնստիկ իմ, վուր դանակ խփին սրտումս, մե պուտարուն չի կաթի։ (Խոսելով ծալում են զաթիբան։)

ԽԱԽՈ.՝—Ի՞նչ ե, չե ըլմւմ։

ՍԱԼՈՄԵ.—Աբա վներ՝ լանց կուլի, բատոնո ջան. Նրանք ութ հարուր թումնի վրա՝ զայիմ կանգնած ին, ու Ոսեփին են՝ զագա չե տալի. խոռ կու ճանչնաս ինչ մկրատն եւ.

ԽԱԽՈ.՝—Նա ել ուցնավոր ե, քա։

ՍԱԼՈՄԵ.—Ախար, աստուձ կու վիկալնե՞, բատոնո ջան, վուր մե երկու հարուր թումնի խաթիր ես հանգի բանը մոշլաքի, են հանգի տղին ձեռնեներեմես գնա, են չնի ու փառքի տերը։

ԽԱԽՈ.՝—Ետենց իբ ասածութինն ել ի՞նչ ե, քա։

ՍԱԼՈՄԵ.—Աբա, բատոնո ջան, հենց ետու համա ջափա

*.) Աջ, ձախ, պետք ե ընդունել միշտ հանգիստականների զերքից նայելով։

ուիլ քիզ, վուր մե Ոսեփի հիդ խոսիս, եղերա բան հասկացնիք տաս, հենց քու Սիսոն պըծնի ամեն ցավեմեն:

ԽԱԽՈՒ.—Կու խոսիմ, կու խոսիմ, բաս խոմ ետենց չինք թողնի, վուրթի: (Ծալած դաթիքան դնում եւ տախտի քեչայի տակ յեվ վոտները կախ զցած վրան նստում:) Վիճ, գենացվա, ես քուչի բարիրը խո վուտնիրս կոտրտից:

ՍԱԼՈՄԵ.—(Նստելով աթողի վրա:) Ա՞յ, տերը բարի տաքիզ, բատոնո. կամարկատարն ըլի քու վուրթկերանց համա բարեխոս, վունցոր հիմի դուն բարի իս խոսում իմ նատոյի համա:

ԽԱԽՈՒ.—Նատոն կի իմը վուրթի չե, թե ի՞նչ ե, վենացվալի նրա պետած ջանին. ուր ե, տանը չե:

ՍԱԼՈՄԵ.—Վունց չե, շուր ե հաքնում.... Արա դուն գիշիս, բատոնո ջան, վունցոր կու խոսիս. եղերա գլուխ բերիս ես բանը: Եսոր եվետ կտրական ջուղար ին ուզում. առուտեան վաղ-վաղ եստի յեր են տղի քուրը, հորես ելի զու քա:

ԽԱԽՈՒ.—Ե՞ս սահաթիս, ես սահաթիս, վուրթի, դուն դըն-ջացի. ուր ե Ոսեփիր, վուրթենն ե:

ՍԱԼՈՄԵ.—Բան ունե, հորես դուս դու քա. կանգնիլ ե թե քախկըսու պիտի տամ, կոսե:

ԽԱԽՈՒ.—Հա, ի՞նչ ե, վուրթի, լավ քախկըցին ուփրո լավ չե, վուր ջիբումը փուղիրը շըխչըխկում ըլլի:

ՍԱԼՈՄԵ.—Արա ետ խնսկ ե, վուր դուն իս ասում, բատոնո ջան. վուր քախկըցին դու քա Մարմարինց Ալեքսանդրի հիդ. քախկըցերու հատն ու կտուրն ե. նրա մարիփաթն աժեմինակ տասը քախկըցի: Են որն ելի եստի յեր վիզիտով, խիլքիս ծերը դնաց, քու արիվը, նրա արարունքի վրա. ինքն ել խոմ ջահիլ, սիրուն, ուսում առած, լավ տիզ, լավ տոնլուզ ու որն որվան վրա խիստ առաջ կեհա, կոսե, կուլի վիրչը գուրերնատոր ել դառնա, կոսե:

ԽԱԽՈՒ.—Դիփ լավ, Սալոմէ ջան, ամա վուր բանը գլուխ չգա, չարեն ի՞նչ ե, վուրն ել պիտի տղամարթուն լսիք, իր որումը քաղցած չին մնա, անկարիք կու անց կացնին իրանց որը: Ի՞նչ ե, բան իք շինի ձիգ համա՝ չինովնիկ, չինովնիկ:

ՍԱԼՈՄԵ.—Լավ իս ասում, բատոնո ջան, ամա նատոն քախկըցի չե ուզում, գլուխը մահու յե տալի... Ո՞ւր ե՞ն երնեկ չի ըլի ուզե, վուր գլխամեռ չի ուրախանա. ամա քանդիքի հիմիկվան ժամանակը, ետ դուս եկավ գրանց ուսումեմեն, ել հորն ու մորը չին լսում:

ԽԱԽՈ — Հեյլի գիրքի աշխարք, հայ թե փոխվեցար. Քուըն
ու քարափը ելի ենդունք եւ ու մարթիքը ուրիշ դառան... ի՞նչ
իմացա, Սալոմե, Լեպրոինք ել չալիշ ին գալի, կոսե. ղուկը ե:

ՍՍԼՈՄԵ. — Բաս, բատոնո ջան, չարեշար մոցիքլիը ե, վուը
բանում ե նրանց տանեմեն... Աբա աստուձ կու վիկալնե՞, վուը
ճն հանգի տղեն նրանց փեսա դառնա ու իմ ախչիկը մնա, կու-
պեծի կնիկ շինիմ:

ԽԱԽՈ. — Նրանք ել վուը մարթ դառան... Լեպրոինց Փա-
սոն... Փառք քիզ, աստուձ, փառք, ես ել հալրաթ ժամանակի
հիդ ե գալի: Երեք չեր մեկել որը բազասիանումը աշկիրտ եր,
հենց զիդիմ աճկիս առչիկը կանգնած ե. կանանչ կամլուտե կա-
բեն հագին, նիդ սոսանի գոդիկը, ախալուխի արմընդնիքը դուս
թափած, լափչըքնիը չուրս տիզ կարկանած, շալակը շալկին կու
բարցեյին վրեն խղճինը: Քանի ջեր ե թոփերով չթիր դիվիր
բերի միր տուն գաղը ձեռին ու գրոշներով շագիրդանա տարի
միզման... Վալյեն, հիմի մարթ ե դասի. զլխումը փամփելով
տասը ջեր հիդ ու հիդ կու զբգեցինք: Ամա սուտ կու խոսեր, սուտ
կու խոսեր, Սալոմե, վուը տերը թափե ու աստուձ ազատե: Ի՞նչ
անիս՝ հալալութինը քազած սպանում ե մարթու:

ՍՍԼՈՄԵ. — Հենց ետ Փասոն ե, բատոնո, վուը հիմի վա-
սիլ Մաթվեիչ ին ասում դիմունքը:

ԽԱԽՈ. — Նրա մամա Մաթուսին ել վուը Մաթվեիչ ին շի-
նի, ով դիմնա նրանցը: Փինաչի Մաթուսը, քանի ջեր ե իմ
քոշիրը կարկանի. դուքանը նորաշնի թաղումն ուներ: Տեր աս-
տուձ, դիվի տակն ու վրան ելավ աշխարքը...

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ՆԱՏՈ

ՆԱՏՈ. — (Մտնելով ծախ դռնից, դրսի հազուստով:) Մա-
մաշա... Մամիդա ջան, եսուի իս: (Փաթաթվում ե յեվ համբու-
րում կուրծքը:)

ԽԱԽՈ. — Մեռնի մամիդեն պետած ջանիս: (Համբուրում ե:)
Ի՞նչ թլթլալի իս, քո՞ծ, թնիսլո ձու իս: Ես մուր իս հազրվում,
քա. իմ գալը դուք չեկալ:

ՆԱՏՈ. — Ետ ինչ իս ասում, մամիդա ջան, ես սահաթիս
դու քամ, փողոցն իմ գնում. մե երկու իմքին պիտի առնիմ:
(Դառնում ե դեպի Սալոմեն:) Մամաշա ջան... (Խոսում են ցածր
ծայնով:)

ԽԱԽՈ. — (առանձին) Արա սուտ խո չե ասում սրա մամենք
(Բարձր) Յ'ես գնամ մե երեխանցը տեսնիս: (Ուզում ե վեց
կենալ, Մե արի, աղլաջիջր, ձեռու իս տու, ծնգնիրս չե գալի:
(Նատօն աշխատում ե վերկացնել:)

ՍԱԼՈՄԵ. — (ոգնելով:) Յ'ես ել ոտկիմ, բատոնո ջան:

ԽԱԽՈ. — (վեր կենալով:) Ապրիք, վուրթիք, իմ տարսը
դառնաք: (Նատօյին:) Մեռնիմ քու պետած ջանին, սև քու
թագին ու փսակին արժանի անե ինձ աստուձ:

ՍԱԼՈՄԵ. — Աստուձ լսե քիզ, բատոնո ջան:

ԽԱԽՈ. — Կուլի, կուլի, վուրթի: (Գնալիս, դեպի հանդիսա-
կանները,) Ի՞ն, աստուձ, աստուձ, պառվեցա: (Դուքս ե գնում
ծախ դռնից:)

ՏԵՍԻԼ Գ

ՍԱԼՈՄԵ, ՆԱՏՈ

ՆԱՏՈ. — Մի ուշացնի, ե, մամաշա:

ՍԱԼՈՄԵ. — Ետ՝ զագամին մետի վուր չըլի, ԲՇՆՀ ե, քա.

ՆԱՏՈ. — Գեթաղվա, մամաշա ջան, հարկավուր ե:

ՍԱԼՈՄԵ. — (ծեռքը զրպանը դնելով:) Քիմեն խո չիմ
պրծնի աւ... (Հանում ե քսակը յեվ փող վորոնելով:) Բահա...

ՆԱՏՈ. — (ծեռքը տանելով դեպի քսակը:) Ա՛յ, մամաշա:

ՍԱԼՈՄԵ. — Մուլափ, քա: (Հանելով փողը յեվ տալով նա-
տոյին:) Բոնե, քու մամիմեն չիմ պրծնի:

ՆԱՏՈ. — Վուր հարկավուր ե, վա, յ'ես ԲՇՆՀ անիմ:

ՍԱԼՈՄԵ. — Հարկավուր ե, հարկավուր, ել վիրչ կի չկա ու...
(Նատօյի գլխարկն ուղղելով:) Ես ԲՇՆՀ հանգն իս ծածկի. ծաղկ-
ներուն ել մտիկ, մեկը վուրթենն ե, մեկելը վուրթենը: (Ուղ-
ղում ե:)

ՆԱՏՈ. — Դիմ մեկ ե, մամաշա:

ՍԱԼՈՄԵ. — Ուցնավուր իս, քա: (Քողն ուղղելով:) Վոալն
եսենց. ջանս գնաց քու դրստելեմեն:

ՆԱՏՈ. — Խիստ իս սիրունացնում, մամաշա:

ՍԱԼՈՄԵ. — Սիրունացնիմ, չսիրունացնիմ, վիրչը կուպծի-
կնիկ պիտի դառնաս:

ՆԱՏՈ. — Դիմի, դիմիս, բաս ԲՇՆՀ իմ արի:

ՍԱԼՈՄԵ. — Քու մամեն դիմ քիզ քիզ ե հարցնում, գանա չիմ
գիտի:

ՆԱՏՈ.—Բաս մւմը կու հարցնե:

ՍՍԼՈՄԵ.—Դուն ետենց ասա ու, նա մկրատի պես կանգնած ե, վուր քախը կցու պիտի տամ, կոսե:

ՆԱՏՈ.—Վեւնց չե:

ՍՍԼՈՄԵ.—Աստուծ զիղենա:

ՆԱՏՈ.—Դժւրթ իս ասում, մամաշա:

ՍՍԼՈՄԵ.—Բու արիվը եսոր ել ետ եյինք խոսում:

ՆԱՏՈ.—Իժում վճռած բան ե:

ՍՍԼՈՄԵ.—Ուրիշ ճար վուր չկա. ինչ անիմ յ'ես, են՝ դադուղ չկա:

ՆԱՏՈ.—Ետ ե, կուպեծի կնիկ շինեցեք ինձ, վուր դիփունքը վրես ծիծաղին, (լացի ծայնով) վուր գիփունքը մասխարա պցին ինձ. ել ետու համա եսենց ինչիք եյիք մինձացնում ինձ: Նրա համա սորվեցա սոսեվարը՝, ֆրանցուցեվարը՝, ֆորտոպիանը՝. ինչ կոնե նա ֆորտոպիան, նրան բուխի քիլեք ե հարկավուր ինչ կոնե նա ֆրանցուցեվարը, վհևնց պիտի խոսի հիդս, թեզուզ հենց սոսեվարը՝ մուտա պաշուր, տվոյա վիդալ:

ՍՍԼՈՄԵ.—Ի՞ն, լավ ե զուն ել, թավլափիան:

ՆԱՏՈ.—(լաց լինելով) Զի ըլի, մամաշա, չե, չիմ կանա, յ'ես քախկրցի չիմ կանա ուզի, չիմ ուզի, զուրը կու ննդնիմ ու չիմ ուզի. զլուխս կու սպանիմ ու չիմ ուզի: (Լաց ե լինում յեվ փողը վերադարձնում Սալոմեյին.) Բռնե, ել ինչ հարկավուր ե ինձ, ել ուր գնամ, ինչիք համա գնամ, ում համա գնամ... (Հովանոցն ու վերարկուն վայր ե ածում, նստում ե բազմոցի վրա յեվ հեկեկալով լալիս ե.)

ՍՍԼՈՄԵ.—Միս, աստուծ, աստուծ, ես ինչ պատիժ ե վուր մե կրակին դիմնամ յ'ես: (Նատոյին.) Սնւ, լավ ե, բեհայա:

ՆԱՏՈ.—Եսորութին ետիք մինձացնում ինձ, ձիր ամագն ու աշխատանքն եստու համա յեր: (Լաց ե լինում:) Նմ պիտի ինձ բուլվարի վրա ման ածի, նմ պիտի ինձ կրուժոկը տանի, նրա հիդ պիտի գնամ տեմար: (Լաց ե լինում.) Հը՛, հը՛, հը՛...

ՍՍԼՈՄԵ.—Լավ ե, լավ, սիրոտ անմիղ մի զուռ բեր:

ՆԱՏՈ.—(հանկարծ վեր ե թուզում տեղիցը ու փաթաթվում ե Սալոմեյին.) Գեթա՛ղվա, մամաշա, գենացվալե, մամաշա ջան, աղատե ինձ:

ՍՍԼՈՄԵ.—Մամաշի գլուխը մեռիլ եր ու ես որը չեր ննդի. հըա:

ՆԱՏՈ.—Գենացվալե, մամաշա, ազատե, թե չե ճլերք կու ննդնիմ, աստուծ գիրենա: (Աչքերը սրբում եւ:)

ՍԱԼՈՄԵ.—(լացի ծայնով) ճլերք ննդնի հիմիկվան ժամանակը, հը: (Նույնպես աչքերը սրբում եւ:)

ՆԱՏՈ.—Գուղիս քու որումը մարթու մի տա ինձ, մամաշա ջան. գուղիս տանը քոծութին կոսիմ դիփու ու ես բանը մռշւա արա, գեթաղվա, մամաշա ջան:

ՍԱԼՈՄԵ.—Մոշլա արած ե, մոշլա արած, վուրթի:

ՆԱՏՈ.—Գենացվալե, մամաշա ջան:

ՍԱԼՈՄԵ.—Ասում իմ ելի, քա:

ՆԱՏՈ.—Ղեւրթ, մամաշա ջան:

ՍԱԼՈՄԵ.—Քու արդիվն իմ ասում:

ՆԱՏՈ.—(համբուրելով Սալոմեյին:) Ա՛խ, մամաշա ջան:

ՍԱԼՈՄԵ.—Պրծա քիմքն. լացի գուղա իս գրուստ, կինազամ ինձ ել լացըցըիր:

ՆԱՏՈ.—(ծիծաղում եւ:) Հը....

ՍԱԼՈՄԵ.—Հիմի ծիծաղի:

ՆԱՏՈ.—(յերկար ծիծաղում եւ:) Հա, հա, հա... վախեցա, վա:

ՍԱԼՈՄԵ.—Շատ քարափշուտեն իս: (Փողը նատոյի ծեռքը դնելով.) Բոնե, ել մի ուշանա: (Նատոյի մազերը ուղղելով:) Միշլա-մոշլեն մեշը գրիր:

ՆԱՏՈ.—(ազատվելով մոր ծեռքից:) Լավ ե, լավ, մամաշա: (Վերցնում ե վերարկուն յեվ հովանոցր)

ՍԱԼՈՄԵ.—Աձկիրդ լավ սրփե, ամութ ե:

ՆԱՏՈ.—Սրփած ե, սրփած. իմ աճկերու մոդ ով ինչ բան ունե: (Ուղում ե գնալ:)

ՍԱԼՈՄԵ.—Զնւստ արի, չուշանաս:

ՆԱՏՈ.—Ես սահաթիս, մամաշա ջան: (Դուրս ե գնում նախասենյակի աջ կողմից:)

ՏԵՍԻԼ Դ

ՍԱԼՈՄԵ, մենակ

ԶԵ, ուրիշ ճար չկա. վաւնցոր ըլի պիտի գլուխ բերիմ ես բանը, թեզուզ գլուխս գրավ դնիմ... Ո՞վ քաղցր աստուծածին, դուն բարեխոս ըլիս իմ նատոյի համա:

ՍԱԼՈՄԵ, ՈՍԵՓ

ՈՍԵՓ.—(մտնելով աջ դռնից, առանց գոտկի:) Ես Նա-
տոն մուր գնաց:

ՍԱԼՈՄԵ.—Եստի, դեմուղեմը, մաղաղիեն. ինչոր նոտ և
ուզում,

ՈՍԵՓ.—Հետ գիդի ժամանակ, արի ու սրա պես ախչէկը
հիմի միը քախկըցուն կնդութին արա: (Նստում ե բազմոցի
վրա:)

ՍԱԼՈՄԵ.—(մոտենալով:) Յ'ես ել ետ իմ ասում, Ոսեփ
ջան, (ծեռքը ուսին դնելով) ախար միխկը չե:

ՈՍԵՓ.—Յ'ես ուփրո միխկ իմ, ով և ինձ ինչ տալի:

ՍԱԼՈՄԵ.—Բաս քախկըցու կնիկ շինինք, ելի:

ՈՍԵՓ.—Ի՞նչ ե, քախկըցին փիս մարթ ե, հա. յ'ես փիս
մարթ իմ, հա, վուր գլուխս ձիր գերի իմ շինի:

ՍԱԼՈՄԵ.—(փաթաթվելով Ոսեփին:) Այս ետ վճռնց իս
ասում, Ոսեփ ջան, ամա ախար Նատոն միխկ ե. ուր ե, երնեկ
չեր ըլի ինձպես եր մինձպի:

ՈՍԵՓ.—(ժպտալով:) Մե խերով պտուղ ել ենչախը կու-
մեր:

ՍԱԼՈՄԵ.—(հեռացնելով ծեռքը:) Ետ լավ եր, քա, ինչ
ուզում իս, ինձ իս ասում. խեղճ իմ գլուխ: Ասա, ասա, ինչ
քեփդ տա, են ասա. մե ես Նատոյի բանը պըծի ու իժում
ինչ գուղիս ասա:

ՈՍԵՓ.—Տն, թե պըծա, ուրիշ ինչ իս ուզում:

ՍԱԼՈՄԵ.—Ախար, վուր ինչ ուզում ին, թամամ չիս տալի:

ՈՍԵՓ.—Վարդ՝ զանց տամ, վուր են՝ զադա չունիմ:

ՍԱԼՈՄԵ.—(կրկին փաթաթվելով նրան:) Գեթաղիտ, Ո-
սեփ ջան:

ՈՍԵՓ.—Զիմ կանա, չե:

ՍԱԼՈՄԵ.—(ավելի աղաշելով:) Գենացվալե, Ոսեփ ջան:

ՈՍԵՓ.—Ա՛ կնիկ, դուն հա ու չե չիս իմանում, թե ինչ ե:
Յ'ես քեզ մե խոսկով ասում իմ, վուր մեճկս չե գալի, չե. մարթ
իր լիների գորա կու ձքե վուտը թե չե. ունիմ ու չիմ տալի,
ին մինում իմ, են ել իմ վարթու համա:

ՍԱԼՈՄԵ.—Ունիլ չունիլն ով և հարցնում: Են հանգի աղա

ըլի նշնելու ու զլուխս գրավ չիմ դնի: Ուրիշները խիստ շմառ ունին վուր տալիս ին. բայ նրանք գժվիլ ին:

ՈՍԵՓ.—Տո, եղերա գողնովի փուղ ունին, տալիս ին, քիզ ի՞նչ դավիր. Անկճիտ բամբակը հանե. ասում իմ՝ չունիմ, չե՛, չե՛, ու չե՛: Եսոր եքուց մե բանի իմ մնում, թե գլուխ չեղավ՝ հոգով մարմնով բաթմիշ ելա, գուն կի եստի հոքեհանի պես կանգնիլ իս գլխիս ու ել ինձ չիս հարցնում:

ՍՍԼՈՄԵ.—Ի՞նչ իս չարանում, քա, մարթ չկանենա քի մոդ բերան բաց անի: (Անբավական նստում եւ տախտի վրա:)

ՈՍԵՓ.—Զարանում իմ. տո, գուք հրիշտակ կու գժվեցնիք, չե՛ թե աթմորթու:

ՍՍԼՈՄԵ.—(կշտամբելով:) Լավ ե, խաչը դիղենա. յ'ես սրտացավութենով բան ըլիմ ասում միը ախչկա համա, դուն կի ետենց վրես չարանաս... Հեր իս, միթամ յ'ես չկամ, չիս փիքը անի քու ախչկա համա:

ՈՍԵՓ.—Փիքը չե, տո, անաստուծ, վուր յերիք-չուրս տղերանց անում տվի, հազիր աղանչաքով ուղում եյին. ջենել, չնուքով, աշխատող ու իմ բար մարթիք: Ամա ձիք ոխտեմեն ով գու քա. առանց այլի-վայլի չինովնիկ պիտի ըլի, կոսե: Քու սիրաը քու ախչկա համա կի չե ցավում, փառասիրութենի համա ե ցագում:

ՍՍԼՈՄԵ.—Արա ինչ խոսիմ քի մոդ, նրանք միը լայիդ ին. ով ին նրանք, ում վուրթիք ին:

ՈՍԵՓ.—(տեղից վեր կենալով:) Տո, դուն ով իս, դուն... գուն ում վուրթին իս, գուն ում կնիկն իս. երեկլե-Խանի չամոմավլորեն իս, թե՛ Պարնի հարսը:

ՍՍԼՈՄԵ.—(նմանավես կանգնելով:) Ի՞նչ ե ասում, քա. դուն մինձ մարթու վուրթի իս ինձ վրա:

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԽԱԽՈ

ԽԱԽՈ.—(մտնում ե ձախ դռնից:) Ես ինչ խարբներումն իք, քմ:

ՈՍԵՓ.—Ո՞հ, մամիդա, գուն իս:

ԽԱԽՈ.—Հանց յ'ես իմ, գլխովս ու վուտովս. վնանց իս, վհւրթի:

ՈՍԵՓ.—Փառք աստծու. դուն վնանց իս, մամիդա:

ԽԱԽՈ. — Ի՞ն, վաչանչալեր, վուրթի, ելի: Ամա ես ի՞նչ ըաւներումն իք, ձիք ձենը քուչեն ե գնում:

ՍԱԼՈՒՄԵ. — Վունչիչ. չի՞ս գիդի մարթու կնդա ըանը, ըաւտոնո՞ւ:

ԽԱԽՈ. — Են՝ զադա տարի քիզ ումբը, վուրթի՝ «Յու դաքմրիս չխուրի բեգվուն կացս գա՝ զրա եղոնա»*), կոսե: Ամա ձիզ ել ի՞նչ ելավ, վուրթիք, ես՝ զադա տարի ե մարթ ու կնիկ իք, ու կմեկու խասիաթը շիմացմք:

ՈՍԵՓ. Նստի, նստի, մամիդա... (Խախոն, քոշերը թողնելով ներքեվ, Սալոմեյի ոգնությամբ բարձրանում ե տախտի վրա.) Դուռ են ասա, մե լուծ յեզումը մեկը վուր գեսը քաշեու մեկելը գենը, սելն տռաչ կեհա:

ԽԱԽՈ. — (Ճալապատիկ նստելով.) Ենենց կու վազի, վունցոր վուր յ' ես հիմի... ի՞նչը կու ժաժ տա ինձ հիմի ես՝ զանցեն:

ՈՍԵՓ. — Զե՞ վուրե մեկմեկու պիտի ոտկին. թե չե մեկնինչ գուզադ ըլի, մեկը թե հիգը չեկավ, իր եղնեն մնալով համ իր գուշիքը կու խիխաե, համ՝ զոշաղինը:

ՍԱԼՈՒՄԵ. — Ղոչազը գուն իս ու գամբլեն յ' ես իմելի:

ՈՍԵՓ. — Մուլափ մե, քու հորն ողորմի:

ԽԱԽՈ. — (Սալոմեյին.) Ի՞ի, անդազա յե ասում միթամ, վուրթի, քու դամբլութինն ովկ կանա ասի:

ՈՍԵՓ. — (Նստելով.) Ախար հազար-հազար թումնանոց տիշղիրն ե ձքում, դռն ինձ ասա՞ միք բան ե՞:

ՍԱԼՈՒՄԵ. — Ութ հարուրը հազար ե:

ՈՍԵՓ. — Երկուսը մե զահրումար ե ինձ համա, բաս ի՞նչ ե՞:

ՍԱԼՈՒՄԵ. — Ինչոր վուր ե, ինձ համա խո չիմ ուզում. Ելիքու ախչկա համա իմ ասում. (Խոռված նստում ե բազմոցի վրա.)

ՈՍԵՓ. — Տո, ախչկա համա վուր ասում իս, չե՞ վուր չափս ու ձիվ կա: Ախար երկուսն ել ուրիշ ին մինձանում. իշտում նրանցն ի՞նչ իս տալի:

ԽԱԽՈ. — Ոսեփ, վուրթի՛, ինչի՞ իս սատանի ձիու վրա նստի:

ՈՍԵՓ. — Սատանի ձիու վրա յ' ես կի չիմ նստի, գուք ի՞ք նստի. քշում իք ու ել ինձ հիդ շիք մտիկ անում:

*) Վրացերեն. — Ամուսինների գեճը հիմարը ապահարզան եք կարծում:

ԽԱԽՈՒ.—Նուր իս սկուպոացի, Ոսեփի, թումներով վուր
շաբաշնիրը կու բախշելիք սազանգը երուն, ենչախն եյիր՝ ղայ-
բաթ արի:

ՈՍԵՓ.—Են վուխաը գնաց, մամիդա, ուղարուրիսակեն.
Ենչախն կանեյի, հիմի ել չիմ կանացի. առուտուրը կանգնեցավ,
բանս լավ չե գնում, մամիդա:

ԽԱԽՈՒ.—Բու դուշմնի բանը գնա փիս, վուրթի, քու բանը
փիս վունց կեհա:

ՈՍԵՓ.—(առանձին) ԱՌԻ ու հիմի սրանց առչիվը դակ-
թըրնիրդ բաց արա: (Բարձր:) Գիրիս ի՞նչ ե, մամիդա, յ'ես
կտրական խոսիլը կու սիրիմ. են աղին հմվնում իք, մեղում
իք, իմ ախչկան դուր ե գալի, յ'ես ել մե են հանգի վունչիչ
չունիմ փուտը դնելու: Գնացեք, թե բանը գլուխ դու քա, մե
վից հարուր թուման կու տամ, շինեցեք, թղղ ջանս գուս դա-
ամա, մամիդա, լավ գիդացի՝ վիրչի խոսկն ե,՝ ղանարես վուր
քաշ անին, ել մե գրոշ չիմ ավելցնի:

ԽԱԽՈՒ.—Բա դագեմարթա քիզ, Ուեփ. վիցը վուր տալիս
իս, մե խուն ու հարուր թումնի համա խո չիս մոշլա անի
բանը:

ՈՍԵՓ.—Գիրիս ի՞նչ ե, մամիդա, յ'երգնուց վուր ձեն դա
վիրչի խոսկս եր. մե գրոշն ի՞նչ ե, մե գրոշը, թեզուղ կաշիս
պլոկիք, ել չիմ կանա: (Վեր ե կինում:)

ԽԱԽՈՒ.—Մի չարանա, վուրթի ջան, կուլի վից հարուրով
գլուխ ե գալի, տհսնինք ջեր:

ՈՍԵՓ.—Հա, ետ ե, ետ:

ՍՍԼՈՄԵ.—Վից հարուր թումնի մոդ ել հարուրն ու երկու
հարուրն ի՞նչ հիշելու յե, վուր անմիդ սիրադ շուռ իս բերում:

ՈՍԵՓ.—(նեղանալով:) Կնգգերանց ձեռնեմեն աստուծ
աշատե: Ախար ասած ե, վուր մե կնիկարժատ երկու տղամար-
թու կու ախտե, յ'ես կի մենակ երկուսիտ ճանգն իմ ննգի:
Վմւր՝ զանց վուրդի լուս ննգավ են անիծածը: Ե՛ս դուս եկալ
ելի. նրա վիզիտներումեն... Մե տեր հարցնող ըլի, թե նա ով,
մինք ով (Սալոմեյին) ախտեր չե քունն ու բիծու տղա: ի՞նչ
բան ունե, ի՞նչ, վուր վիզիտնիր ե ման գալի եստի: Ջեր ավ-
տաս յ'երիք ջեր ե ելի... Ել նրա հնաւը չըւի եստի:

ԽԱԽՈՒ.—Հանգստացիմ, վուրթի, ի՞նչ իս չարանում:

ՈՍԵՓ.—Ե՛ս, մամիդա, գուն ել չիս քա, չիս քա ու հենց
եսոր վուրդի եկար:

ԽԱԽՈ.—Թե իմ գալու վրա խիստ իս նիղանում, վուրթից
ձիք սարդը փումը լավ սառը ջուր կա:

ՈՍԵՓ. Տն, ախար մարթ իմ, զլխիս գդակ ունիմ, ասում
իմ վուր չիմ կանա, չիք ավտոմեմ:

ԽԱԽՈ.—Ավտում ինք, ավտում, վուրթի. ամա միր ասիլն
են ե, վուր ախակա բաժինքը ուրիշ բան ե. չիս գիղի՞ վուր ու-
րիշ բան ե: Տուն առնիլ խո չե, վուր մարթ իր ջիրին մարիչ
անե, ես բանումը, վուրթի, մարթ ել վոնց ջիրիս պիտի հարց-
նի, վունց զանդկին, Քարքանջելա Յազորին խո կու ճանչնե-
լիք. վիրչի անիրը ախչկա բաժընքի համա ծախից ու իժում ախկատ
զադո ապրեցավ. վուր մեռավ, թազմելա չուներ, ասաում գիղենա,
խո դուն ել լավ զիղիս: Դուն նրա վրա փիս մարթ ի՞ս, զուն նրա
վրա խիզճ ի՞ս, վուր մե երկու հարուր թումնի համա խոսում ի՞ս:

ՈՍԵՓ — Ախ, ասաում, ես ի՞նչ պատիժ ե թե ախչիկ մին-
ձացու, վրեն են՝ զադա փառդ մսին, հևսում տու ու վիրչը մե
ջվալ ել փառդ բարցե շնչին, վուր եզերա ոմքին ձեռը բռնե
ու ենենց տանե... Փու, միր նամուսին:

ԽԱԽՈ.—Ի՞նչ անիս, վուրթի, միր հնուց ծես ու աղաթ ե,
պիտի կատարինք. վայ միր տիրուչ միլսիլ:

ՍԱԼՈՍԵ.—Աշխարքի ծեսն ու աղաթը զուն խո չիս կանա
քանդի:

ՈՍԵՓ.—Զիր ծեսին ել ասաում խոռվ կենա, ձիր աղաթին
ել: Տն, թե ետենց՝ զայիմ կանգնած իք ծես ու աղաթի վրա,
ամեն բանումն ել ետենց՝ զայիմ ըլիք, ամեն բանումն ել ծես
ու աղաթ միտը բերիք: Ծես ու աղաթ Բ, վուր ծուղի ու քոշի
մազիեր բատինկա իք հաքնում ու տղամարթու կրնգնիրն ել
տակը կպցնում: Ծես ու աղաթ Բ, վուր ախչիկը իրավուրիմեն
ել կու քաշվեր ու հիմի յաղ տղի հիգ կուռը կոանը գցած բոլ-
թա յե տալի: Վաւրն ե, վաւրը միր ծեսը՝ ապրիլը, ուտիլը,
տհունը, տիզը, հաքնուտը, բալիրը, գեշերնիրը. վարդի լեր ես-
տունք. եստունքն ել կոսիս թո հիս ծես ու աղաթ ե: Անում
ինք եստունք, մնդնի ինք ժաժ գալիք. տո, թնդ ասեն բանն ել
մոզնի ըլի, ե. ել տասը ձիոք գողնընքն ի՞նչ ե, ել ծալըն ու թոն-
դիրն ի՞նչ ե, քեչնու ու մափրաշն ի՞նչ ե, ծինզինի մոդ ամսնե-
րով կենալն ի՞նչ ե, հարսնըքումը հարուր հոքի մեձրիլն ի՞նչ
ե, քելեխն ու չուրս քսան կնիկարմատի սուք ու շիվանն
ի՞նչ ե, վուր բակդուշի պես զոռում իս. ի՞ն, ե, ի՞նչ եստունք...
(Ցույց տալով տախտը.) Թե են ինք, (տանելով ծեռ բերը.

տոախտից դեպի բազմոցը յեվ ընդհակառակը) ես ի՞նչ ե, ու թե ես ի՞նք, են ի՞նչ ե. երկուսին սետի գիմնալ կուլի՛... (Դադար.) Միր ապրելու ու կինքի որինակը միր կնզգերանց հաքուստն ե, վուր վուտեմեն ինչըու բողազը Փռանգստնու լեռ (ձեռքը ճակատին խփելով) գլուխը կի ելի են և մնացի՛ (Հոռովդյուն.)

ԱՍԼՈՄԵ.—(վեր կենալով տեղից.) Լավ ե, լավ, մի շարանա, զիցը խո տալիս իս, խո մսիլ իս. ի՞նչ կու պակսի, մնացածն ել յես կու տամ:

ՈՍԵՓ.—Վհր՝ զանց կու տաս վուր կու տաս, քու հոր քաժընքեմեն, գանա չիմ ոիդի:

ԱՍԼՈՄԵ.—Բաժինք չիմ ունեցի, ի՞նչ իս ետու համա քիքս գալի. ամա ի՞նչ ունիմ ու չունիմ կու ծախծիմ, գրավ կու դնիմ, քաթիրիս բափթեն մոշլա կոնիմ, ոսկե կոճկնիրը կու հալիլ տամ, գոյիս փորմիալեն կու մոշլա անիլ տամ, ակնիրը յաքա կու ծախիլ տամ, տասերկու շադա մարքրիտը յաքա, թե ճակտիս քորցնիրը պետկ եկավ, են ել չիմ խնահի, թող պիփ մետի նատոյի չարը տանե, նրա չարի փուխ ըլի, գլուխս ել նրա չարի փուխ կոնիմ ու են տղին ձեռնես չիմ թողնի՛ (Շտապով դուրս ե զնում ձախ դոնից:)

ՏԵՍԻԼԻ

ՈՍԵՓ, ԽԱԽՈ

ՈՍԵՓ.—Ես թամաշեն տեսանք, մամիդա. աբա նրենք ե, քիզ իմ հարցնում:

ԽԱԽՈ.—Ի՞ն, աբա ի՞նչ այնումը գցելու յե, վուրթի:

ՈՍԵՓ.—Սարի եծ ե անիծածը աբա հախը չե՞ զնամ քինթ ու պոռանգը ջարթիմ:

ԽԱԽՈ.—Հիմի ետունք ասա, ես՝ զադա տարի յե մե ծկիւ պարտ չիս Խփի, հիմի նուր չար, նուր բարի՛. Սազ ել կու քա քու ասլութենին:

ՈՍԵՓ.—Ե՛, մամիդա, զահես գնացիլ ե, ասում իմ, աստեղ գիղենա. են յես իմ, վուր համփիլում իմ, թե չե ուրիշը վուր ելիլ եր իմ տիզ, հարուր ջեր կու բաժնվեր ինչըու հիմի՛ (Նստում ե). Ախար նւմ վրա ի՞նչ տեսնում ե, նւմ տանն ի՞նչ տեսնում ե, թե են սահաթին չառավ ու չարքից, իրն իրան ե հասնում, մայմունի ջինս ե անիծածը՛: Ե՞սենց ել բան կուլի՛:

ԽԱԽՈ. — Դիմունանց կնդդիրքն ետենց ին, վուրթի, դուն
մւր իս ետու հասա նիղանուռ:

ՈՍԵՓ. — Ե՞նչ, բան իք շինի ձիզ համա՝ գիմունքը, գի-
փունքը: Տն, զիմունքը գլուխը քարն ին տալի, յ' ես ել քարը
տամ. յ' ես ասում իմ՝ ինչ ինձ կու սազ գա, ենինց ժաժ գա:

ԽԱԽՈ. — Ի՞ն, Ռսեփ, վուրթի, ինչի՞ր իս ասում, նետայի
զիդենամ: Ես սահաթիս վուր եստի գալիս եցի, մե փեշաքըի
կնիկ իմ տեսի, փրփրալի գնում եր, վուր թափադի կնիկը
վիս եկադրերա: Յասամանի գլասեն հաքին, սիվ շաբաքա պլա-
տոկը վրեն, (շրթունքները սեղմելով) կոխտա փերչտկնիրը
զլած, ատլասե զոնտիկը ձեռին, գնում եր, գնում եր, վուր խիլ-
քիս ծերը հիդը գնաց: Յ' երեք արշին ել կուդին՝ շլեփ ին ասում,
ինչ զահրումար ին ասում, թրեռում եր եղնեն: Սրտիս ծերը մխկացաց,
քու արիվը, վուր են արմաղան դերիեն գեղնին ենենց թավիլ-
թավիլ եր գալի ու ինչ ասիս հիդը տանում եր՝ չալա, փալաս,
խուզ. գնում եր ու հիդը տրոտրոն սրփում եր. երնեկ զիդենամ
ել յիսի փողբաթչիկին փուղ ուր ին տալի: Քու արիվը, վուրթի,
խելի ժամանակ կանգնեցա ու ել աճկս չկանացի հիացրիւ
եցի. ասի՝ փառք քիզ, աստուծ, ես ինչ բարգութին իս զրգի միր
գլխին, վուր ել մինձ ու պստիկ չե ջոգվում: Արա, վուրթի,
փեշաքըի կնիկը վուր եսենց ե դուս գալի, մեկեներու վըա
ել մարթ ինչ առեւ:

ՈՍԵՓ. — Տո, յ' ես ել ետ իմ ասում ախար, ե՛, իմ ասածն
ել ետի յե գալի, ե՛, ի՞նչ ե՛ չինովնիկ ե լուս ննգնի, կոսե, ու
ուրիշնիրը ախշիկ ին տալի, կոսե, գլուխը սղոցում ե, վուր զի-
փունանց առաջկը կտրիւ:

ԽԱԽՈ. — Դուն ել ուղնավուր իս, քա. են՝ զագա փուղ իս
մախի վրեն, որինավուր ուսում իս ավի, մողնի մինձացրիւ իս,
պորտուպիանի ածիւ իս սորցեցրի, ախար մե փիքը արա, ե...

ՈՍԵՓ. Ա՛յ, վուչ եր ելի են ուսումը, հըմ. ի՞նչ կոնիմ են ու-
սումը, թե ինձ պիստի նիղացնի: Ես ի՞նչ ուսում ե, վմւր՝ զանցի ու-
սում ե. միզ ես հանգի ուսում կու սազ գեր... Ա՛խ, ախ, իմ գրա-
նիցա: (Խիում ե ծնկանը:) Ա՛յ ուսում, այ լուսավուրութին. ամեն
մարթ իր չափս ու ձիվը գիդե, իր կարողութենի գորա ժաժ գա-
լի. վունցոր աշխատում ե, ենենց ել մխսում ե... Վմւրդի յե,
վմւրդի են ուսումն ու լուսավորութինը՝ հանգիստ ապրիւ ե-
ցինը միզ համա... (Զայնը փոխելով:) Ելի հինը լավ եր, յ' ես
ու իմ հօքին, ես կարք ու սարքի վըա: Մամա-պապեուլ վուն-
ցոր ապրիւ ինք, ենենց միը չլումը պիտի մնացիւ եյինք, վուր

մարթ մե թիքա համով հաց եր կերի Հիմի և ինչ ե, և ինչ
բանիր ե, և ապրելուն թամաշա իս անում. ել վնւրդի յե են հա-
մով հացը, դիմ յաղու ու գարիշխանա ինք ուսում... Յ'ես ով
զալեն ու գաստինեն ով, պովարն ու լաքիեն ով, Լոնդոնի չու-
գունի պլիտեն ով, պաղիեղդն ու լամպեքն ով: Ես գաղին ա-
խար կտավ պիտի վուր գիմնա թե չե:

ԽԱԽՈՒ.—Չեյիր ուզում, չեյիր սարքի, ով ինչ անե:

ՈՍԵՓ. — Յ'ես իմ սարքի, յ'ես. այ, սարքողի վիզը կոտրե
աստում: Յ'ես կի չիմ սարքի, իրան-իրան սարքվեցավ, Վճանց
ելավ, յ'ես ինքս ել չիմ գիդի. ամա հին ապրիլս ու հիմիկվան
ապրիլս վուր մեկս մեկու վրա չափում իմ, վնւրդի յեր քան
տարի առաջ եստունք. կոսիս մինիստար ըլիմ: (Տեղից վեր ե
կենում.) Դիփունքս եսենց, դիփունքը, դիմ մե բարաթ ինք.
ում գուռը բաց անխս, ում տուն գնաս, դիփունանց տանը ելի
ես դանդ ու դվալը. ախար եստունցը գիմնալ զմւզե թե չե: Հա-
զար թումնի գելուրի տերը անում ե եստունք, իրան հալալ,
ախպեր. տո, հարուր թումնի տերն ել վուր չե ծոզգում նրա-
մեն, ել խալին ինչ սորվի միզմեն, ինչ որինակ ինք նրանց
համա: Հայիվ չեր վաղուցվան ժամանակը, մե դարբըսումը մե-
տի ապրում ելինք, յ'երիք-չուրս ախպեր ողլուշաղով մետի ե-
լինք կենթւմ: Նրանց ճրաքն ու մումն ել բարաքա ուներ,
գործի ու փետն ել բարաքա ուներ, աստծու ածկն ել վրեն եր.
հիմի կի մե ախպեր վուր հինդ թուման ե միսում, մեկելը նրա
ջղրու ուզում ե տասը փչացնի, վուր ինչ ե նրամեն վեր չգա...
Ել վնւրդի կա ախպեր. ինչ ախպեր, ինչ քուր, ինչ հեր, ինչ
մեր. ջնջլով ել վուր ուզենա մարթ, չի կանա դիփունանցը մե-
տի մե շարաթ մող արած պահի. ևս աստծու բարգութին չե,
բաս ինչ ե:

ԽԱԽՈՒ.—Ի՞նչ Ոսեփ ջան, հին դարդիրս մի աշխա անի: Զար-
փայի տախտը դրած կուլեր ու երգեն ու մեկ խալին վրեն
դցած կուլեր: Կու մթնաներ, լոնդի մաշխալեն մեչտիզը կու վա-
ռելինք ու փարզնի պես երեխերքը բոլորքը պտուտ գու քեյինք:
միր լամպեն ել են եր, միր ճաղն ել: Իժում տախտի վրա մե ծե-
րեմեն ինչըու մեկելը մավի դաշած սուփրեն գաշլա կոնելինք
ու աշխարքի լավութինը վրեն կու դարսեյինք: Կու նստեյինք
բոլորքը ժվժվալի՝ պապեն, մամեն, բիձեն, գեղեն, ձալոնքը,
ախպրտիքս, քվիրտիքս. մեղվինեն գինին կու գչգչեցներ ու
հազարփեշեն մե ծերեմեն մեկելն եր անց կենում: Քսան հոքի

ավել կուլեյինք են դրդյալ գարբըսումը. հիմի կի հինգ հոքի վուր
մե ոթախումը մոդ ին ըլում, շունչը կարվում ե մարթունը:
(Զեռքը բարձրացնելով.) Պոլոզակի ծակ ունեյինք, վուր քսա-
նուհինգ ակոշկեք աժեր. կու լուսաներ, յերգնքի լուսն են-
դանց եր գելիք գալի, ու կու մթնաներ՝ աստղերու պալուցն
ել ենդղանց: Խժում դիմունանց տիզիքը մետի կու գցեյին, քու
արիվն, ու ծուլի-ծուլի կու խաղելինք. թե լուսնիակ ել կու-
լեր, խո դիմունանց մետի լուս կու տեր... Պղինձն ու շամ-
փուրը տանը, չամչեն ու քափկիքը կշտին, մնացածը աղուխ-
աղուխ տուն ելին բերում տղամարթիքը մեկմեկու վրա լավը
դիմ, քու արիվը, եփողն ել մինք եյինք ու շինողն ել. հիմի
կի լավ թիքեքը պովարն ու լաքիեքն ին ուտում. կրիմ նրանց
դածումպլա արած գլուխը, հըմ... Միր տունը գաղարն ու կար-
տոփիլը քանդից, վուրթի:

ՈՍԵՓ.—Ի՞նչս ասում, ինչ, մամիդա, տաս տարի չի քա-
շի, ասառու գիդենա, վուղչ քաղաքը կուտր կու ննդնի. թան-
գութինն ու մողեքը մե կուռը, միր հիմարութինն ու աղաթ-
նիքը մեկելը: Եսենց ապրիլ կուլի ախար: մե ցավ ե, եկիլ ե
միր գլխին, ելի: Ասառու գիդենա, մամիդա, ամսենը մե թու-
ման մենակ սուխարու ու զդոբնի բուլկու իմ տալի երեխանց
համա:

ԽԱԽՈ. — Դուն ել պակսեցրնե, վուրթի, ինչ ե...

ՈՍԵՓ.—Ի՞նչ հիշտ-հիշտ ասում իս՝ պակսեցրնե, արի պակ-
սեցրնե, տեսնիմ վմւնց իս պակսեցնում: Տո, են որը յարմուն-
կումը յերիք աբասի տվի, երեխի համա բատինկեք առա. Ես-
դանց ենդի շպրտից, այ. երկուս ու տաս շաանուց պիտի ըլի, կոսե.
են վից տարեկան (ձեռքով ցույց ե տալիս յերեխայի հասակը)
երեխեն, այ. լացու տրաքեցավ կինաղամ: Զեցի գնացի, չեյի առի.
ետ ենչախը կուլեր, վուր դիմունքս մե երես եյինք կապի:
Պակսեցու *), կոսե. ով կանա պակսեցնի: Քսան տարի յե կինքի
հիդ կոիվ իմ տալի ու վունցոր մե լավ լիդնուրթ Քուռմը ննդած
շատ լիդ տալեմեն կոնիքը դաթրիլ ըլի ու դուս գալու ճամփա
ել չըլի գթնում, ննդիլ իմ գոչզոչանեքն ու, եսոր ե թե եքուց-
գլուխս յա քարի վրա կու փշրվի, յա բըջի վրա... Տո, պակսեց-
նիլ չե, վուր ասում իմ թե իմ բանը չե, ամա հւմը կու հաս-

*) Պակսեցրնե—պակսեցնե յերկուսն ել ուղիղ են Թիֆլիզի բարսում:
Սյակիս ասում են մինչացրնե-մինձացն, ավելցրնե—ավելցն, և այլն:

կացնիս. արի պակսեցըու: (Նախասենյակի աջ կողմից մտնում
ե Նատոն՝ ծեռքին չորս որինակ նոտայի տեսրակներով:)

ՏԵՍԻԼ Է

ՆՐԱՆՔ, ՆԱՏՈ

ՈՍԵՓ.—(շարունակելով:) ԱՇ, պակսեցու:

ԽԱԽՈ.—Ետ ինչ չուստ եկար, վուրթի:

ՆԱՏՈ.—Եստի մողիկ ելի, մամիդա ջան: (Հովանոցն ու
վերաբկուն դնում ե աթոռի վրա:)

ԽԱԽՈ.—Մեռնի մամիդեն պետլած ջանիտ ետ ինչի՞ւ ե,
վուրթի:

ՆԱՏՈ.—Թազա նոտիր առա ինձ համա:

ՈՍԵՓ.—(առաջ զալով:) Պակսեցու... (Առնելով մի տետ-
րակ Նատոյից:) Ի՞նչ ավիր եստուրը:

ՆԱՏՈ.—(շվարված:) Չուըս արասի:

ՈՍԵՓ.—(առնելով յերկրորդ տետրակը:) Եստուրը,

ՆԱՏՈ.—(նայելով տետրակի յերեսին:) Եստուրը վից ա-
բասի:

ՈՍԵՓ.—(առնելով յերրորդ տետրակը:) Ե՞ս:

ՆԱՏՈ.—(վրդովված:) Ետ ել մանեթ ու կես:

ՈՍԵՓ.—(առնելով վերջին տետրակը:) Ե՞ս ել մանեթ ու
կես, ելի:

ՆԱՏՈ.—(դողալով:) Զե... պապաշա, ետ երկուս ու տառ
շայի:

ՈՍԵՓ.—(տաքանալով:) Պակսեցու, արի պակսեցու, մե
տեր հարցնող ըլի թե ինչ իմ բան ե: Զուրսը մետի վուր չեյիր
առի, մեկը հերիք չեր, երկուսը հերիք չեր:

ՆԱՏՈ.—(վախեցած:) Վուր հարկավուր ե, պապաշա:

ՈՍԵՓ.—(ավելի ու ավելի տաքանալով:) Արա, ասում իս,
մամիդա. Ի՞նչը ոխտա գու քա, ի՞նչ երանի մե գրուստ ածիլ
մայինց գիդենա. մե երկու իմքին կու թխթիկեցնե, պորտու-
պիան ածիլ գիդիմ, կոսե. Ածիլը յ'ես չիմ գիդի, ամա ածողնիր
տեսիլ իմ. այ, նրանցը սաղ գուքա եստունք, թե չե ի՞նչ իմ
բան ե. սրա մողա գցողին ել ինչ ասիմ: (Բարկացած դեն ե
ածում տետրակները:) Յ'ես ձեռըս կու կտրիմ, թե սա գրուստ
ածիլ կու գիդենա: (Նատոն մնում ե ապշած:)

ԽԱԽՈ. — Ե՞ի, լավ ե գուն ել.

ԱՍԵՓ. — (շարունակելով.) Կիսատ, դիմ կիսատ, ածիլն ել կիսատ, սորզիլն ել կիսատ, ուսումն ել կիսատ, խոսիլն ել կիսատ: Ի՞նչ գիղե, ի՞նչ. կանա մե որինավոր իմքին կարէ, կանա իր գերին ձևի. մերաշ Փռանգստնու ախչկերանց հիդ չգա: Հինգ ջնը Լեպցիխ իմ ելի. վիրչի ախչկաթ ախչիկը սրա վրա շատ բան գիղե. ձեռի պտղունց իմ տեսի նրանցը, վուր բերանս բաց մնացիլ ե: Կանա դրուստ հայերեն խոսի, վուր իր հավտի լիդուն ե, կանա դրուստ մե երես բան գիր գրէ, կանա տասը խոսկ փրանցուցեվար վրա ու վրա ասի, վուր են՝ զադա փուղ ե նստի: Ինչացու յե, ինչացու սա, քիզ իմ հարցնում. մերաշ եքուց տանդիկնութին շանե սա... Ի՞նչ տանդիկին... Հայի տղա, յ'ես ու իմ հոքին, վուր սրա մարթ պիտի դառնա. սա պիտի նրա հիդ լուծ քաշէ, եքուց ելոր պիտի մեր դառնա ու սա երեսերք մինձացնե. այ խոռվ կենա ինձ սրա մինձացածը: Սրան հազիր հազրարաշի մոդ արած փուղ պիտի ըլի, վուր տիկնի պես զուքիս ու զուքած ման ածիս, բալիր ու վեշիրնիր տանիս. ինչացու յե սա, ինչացու... (Նատոն լաց ե լինում.)

ԽԱԽՈ. — Ո՞սեփ, Ոսեփ, վուրթի:

ԱՍԵՓ. — (շարունակելով.) Կանամ եստունցը ախտի, կանամ սրանց ոխտեմեն գտ: Պակսեցու, կոսե. (Բոնելով Նատոյի տյունիկի ծայրերը) ես ի՞նչ ե, ես տասերկու ետաժ բանն ի՞նչ ե, մեձկը տաքցնում ե. ես վճռնց պակսեցնիմ. պատութիմ, եստով քութահ կուլի բանը. դիմունքը կու պատութին, ով ե հիդս պատուտում տեսնիմ: (Նատոն շարունակում ե լալ.)

ԽԱԽՈ. — Իմ զալուն եյիր մնում, թե ի՞նչ ե. թե կոսե գիփունքն ի՞նչ գուղե անին. ել ինչին իս մնում, խիզճ ախչկա սիրտը շուռ բերիր անմիզ, անգեթ: (Լուռ տեսարան.)

ԱՍԵՓ. — (ձեռքը տանելով դեպի ճակատը յեվ ուշքի գալով.) Ա՛խ, աստուծ, տստուծ, ես ի՞նչ իմ անում. իիլքս խառնվեցավ, (Մոտենալով Նատոյին:) Դուն չե, դուն չե, նատո ջան, (գրկում ե) քիզ չիմ ասում, քիզ չե, գուն միզ չունիս, մինք ինք միզավուրը, յ'ես իմ միզավուրը, յ'ես՝ վուր աշխրքին մտիկ տալով, ի՞նչ աշխրքին սազ գու քեր, են ձամփի վրա կանգնեցը քիզ: Մի լաց ըլի, մի. անմիզ չարացա, ջգրած եյի, աշխրքի ջիզը քիզ վրա հանեցի: (Հավաքում ե տետրակները յեվ տալիս ե Նատոյին:) Բոնե, վուրթի, (նորից զրկում ե)

գնա, ելի առ, ինչ քեփդ տա, են արա, ոչովիմեն մի զբավիր վունչիչ չե պակսի քիղ ինչըու եսոր, աստուծ տա են՝ զադա փուղ ըլի քիղ համա, վուր ինչըու վիրչն ելի վունչիչ չպակսի՛: (Համբուրում ե յեվ ուզում ե գնալ)

ԽԱԽՈՒ.—Բարեմց մե իմքին ել ավելցու, Ոսեփ, ու քնութահ արա:

ՈՍԵՓ.—Վուր գլխամեռ չի ուզի, ամա ինչ չիմ կանա, չիմ կանա: (Դուրս ե գնում աջ դռնից:)

ՏԵՍԻԼ Թ.

ՆԱՏՈ, ԽԱԽՈՒ, ԽԵՄՈ ՍԱԼՈՄԵ

ՆԱՏՈ.—(տետրակները վայր ե ածում տախտի վրա յեվ հեկեկալով ընկնում Խախոյի գիրկը:) Ա՛խ, մամիդա ջան:

ԽԱԽՈՒ.—Մեռնի մամիդեն քիղ համա... Սու, լավ. քու հերն ե, ինչ անինք... Հերիք արա, հերիք, վուրթի:

ՍԱԼՈՄԵ.—(ուրախ-ուրախ դուրս գալով ծախ դռնից:) Բատոնո ջան, բատոնո, պրծա, քնութահ արի բանը: (Հանկարծ կանգ ե առնում:) Ես ինչ խաբար ե, ինչի՞ յե լաց ըլում: (Նատոն աչքերը սրբելով գնում ե դեպի բազմոցը:)

ԽԱԽՈՒ.—Վունչիչ, խո կուճանչնաս սրա մամին, խոսեցավ, ելի, ու լացըցըց:

ՍԱԼՈՄԵ.—Թե մամեն լացըցըուց, դեղեն կու ուրախացնե. քիղ նշնեցի, Նատո ջան: (Նատոն զարմացած նայում ե:) Գնա ու գնա, ինչ սիրտ ուզում եր, աստուծ ել կատարից... Ալեքսանդր Պետրովիչ Մարմարովին ի՞նչ կոսիս:

ՆԱՏՈ.—Դժւրթ, մամաշա ջան:

ԽԱԽՈՒ.—(միեվնույն ժամանակ:) Դժւրթ իս ասում, քա՛:

ՍԱԼՈՄԵ.—(Նատոյին:) Քու արեվը, քա՛:

ՆԱՏՈ.—(ընկնելով Սալոմեյի գիրկը:) Ա՛խ, մամաշա ջան:

ՍԱԼՈՄԵ.—(փաթաթվելով յեվ համբուրելով:) Զլիվ մե պրծա քու դարդեմեն. ուրախութենի ըլի, վուրթի: Գնա, չուստ շնորիդ հաքի, ես սահաթիս դու քա են տղեն:

ՆԱՏՈ.—Ես սահաթիս:

ՍԱԼՈՄԵ.—Հենց ես սահաթիս. դուն գիղիս վունցոր կու սիրունանաս:

ՆԱՏՈ.—(չափից դուրս ուրախ յեվ շուտ-շուտ:) Ախտա-

բարեժը, մավի բանտը, սիվ բարիստնի լենտի վրա պստի խաչն ու մավի լենտով կոտորուր. (Դրկում ե Խախոյին.) Մամիդա ջան...

ԽԱԽՈ.—(փաթաթվելով յեվ համբուրելով.) Բարի սահաթի քլի, չարդ տանե մամիդեն.

ՆԱԽՈ.—(նորից գրկելով մորը յեվ համբուրելով նրան.) Դուշկա մամաշա... դարագայա մամաշա ջան... (Դուրս ե վազում ծախ դռնից, տանելով հետը հովանոցը, վերարկուն յեվ տետրակները.)

ՏԵՍԻԼ Ժ

ՍԱԼՈՄԵ, ԽԱԽՈ

ԽԱԽՈ.—(աղ ծեռքը տանելով դեպի բերանը.) Ես Երազ ե թե ինչ խարար ե, չիմ գիդի:

ՍԱԼՈՄԵ.—Երազը վհւրն ե, բատոնո ջան, նրա քուր Խամփերին ես սահաթիս գուս գնաց ես՝ դանց ու հինգ նմուտ չի քաշի են տղեն գու քա. եստի եվետ ին կենում:

ԽԱԽՈ.—Ախար թե ետենց հիշտ բան եր, են կոիվ ու ղալաղալն ել ինչ եր, քան:

ՍԱԼՈՄԵ.—(կիսածայն.) Ի՞նչս ասում, բատոնո ջան, քարգուրձ անելու իմ. ոխտը հարուր թումնով կտրական արի ու մեքսան թուման ել իրան Խամփերուն խոստացա:

ԽԱԽՈ.—Վ՛ույ, քուանամ յես, առանց Ոսեփիթն:

ՍԱԼՈՄԵ.—(կիսածայն.) Դանակով խո չի մորթի ու, ինչ գուզե ասե, ինչ անիմ. Վիկաց, վիկաց, բատոնո ջան, գնանք են ոթախը: (Վեր ե կացնում.) Ոսեփը չիմանա: (Ուրախուրախ դուրս ե վազում ծախ դռնից.)

ԽԱԽՈ.—(քոշերը հազնելով.) Տեր աստուծ, ես ինչ ին զառի հիմիկվան կնգդիրքը: (Դուրս ե գնում նույն դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԱ

ՈՍԵՓ, մենակ. Գոտին կապելով՝ զլիարկը ծեռքին դուրս ե զալիս աղ դռնից. սկզբում խորը մտածմունքի մեջ ընկղմված՝ ծեռքերով զանազան շարժվածքներ ե անում:

Տու, տու... Վ՛ուր՝ դանց տամ, վուր ինչ տալիս իմ, են ել զժարս զալիս ե... Ամա թե կի առանց են չե ըլում, ինչ իմ

յես ել եսենց քար կտրվի, չեմ վուր իմ վուրթկերանց համա հոքիս ել չիմ ինայի... Զե, չե, թային տղեն են՝ զազա քեփում չե գալի, թե չե վունցոր վիցն իմ ասում, մե երկուսն ել ենենց կանամ ճարի... Հա, ետ ե, ետ. տղեն են չե, ինչոր սիրս ուղում ե... Լավը վուր ըլի, ես առուատուրը չիր սարքի գլխիս: Նրա լավութինը, նրա մարթութինը հիմի կու երեվա, հիմի... Տեսնինք, տեսնինք հալա թե ինչ ե ըլում: Խոսկս ինչը եսոր վունչըչումը չիմ կոտրի ջեր ու քանի ես բանումն ել հաստատ ըլիմ իմ խոսկին, խերն ենդումն ե, (Գնում ե զեպի նախասենյակը:)

ՏԵՍԻԼ ԺԲ

ԳԵՎՈՐ, ՈՍԵՓ

ՈՍԵՓ.—(հանդիպելով Գեվոյին՝ վոր մտնում ե նախասենյակի աջ կողմից:) Ո՞հ, Գեվո ջան, ի՞նչն ե բերի քիզ: (Մեկնելով ծեռքը:) Համեցեք, համեցեք:

ԳԵՎՈՐ.—Գիդիս, Ելի, ինչըու հարկավուր ըան չըլի, չեյի գա:

ՈՍԵՓ.—Ի՞նչ կա՝ զուլուղիս. համեցեք նստի:

ԳԵՎՈՐ.—(նստելով:) Ե՞հ,՝ զուլուղը վնարն ե, ի՞նչ իս ասում. մարթուս բանը երազ ե զրուստ, աստուձ գիդենս: Ախար են անիծած Սանթօռըովը...

ՈՍԵՓ.—(ընդհատելով խոսքը յեվ վախեցած:) Հըմ... ի՞նչ ե պատահի:

ԳԵՎՈՐ.—Աստուձ վնաշ գիդեն նրա գլուխն ու արիվը:

ՈՍԵՓ.—Ի՞նչ խաբար ե:

ԳԵՎՈՐ.—Ել ի՞նչ խաբար պիտի ըլի, Ոսեփ ջան. սուփրեն վիր ե քաղում:

ՈՍԵՓ.—(շփոթված յեվ ծայնը ցածրացնելով:) Ետ ի՞նչս ասում, Գեվո ջան, խո հոքով մարմնով բաթմիշ ելա:

ԳԵՎՈՐ.—Բաթմիշ ըլի նրա գլուխն ու աբիվը: Արի՛ մարթու ավատա. Նրա ասլրիլը մարթ տեսնե, կոսիս գրաֆ ըլի:

ՈՍԵՓ.—(ցածր ծայնով:) Ետ խո սպանեցիր ինձ, Գեվո ջան:

ԳԵՎՈՐ.—Յերգնային թաքավուրը պիտի նրան վազ եր սպանի, վուր ես բանը չեր արի: Սատանեն զիդե նրա գլուխը:

ոմքին տուն եր զնում նրա մաղաղինը՝ որինավուր, կարքով,
սարքով, խոսկի տեր, վաղա ճանշնող. արի ու իմացի թե տակն
ինչ կա:

ՈՍԵՓ. — (Նույնալես.) Տու, ախար յես հենց նրա ումիկով
եյի, Գելո ջան, ինչիք իս տում. հաղար թուման ավելի փուղ
պարուե իմը, են պիտի առել եյի, վուր տերեւ տեր եյի արի,
եւ եքուց դրա վաղեն եր ու ելոր իմ վաղեն, ախար. եւ ինչ
ջուղար տամ հիմի, ինչ մասիմ վուր Սանթուրովը չերիտ ու
յես ել չիմ տալի՛, յես ել Սանթուրովի պես կուտր ննզնիմ:
Վայ, գեղինը վուր մտնիմ, են լավ չե ինձ համա:

ԳԵՎՈ. — Այ, գեղինը մտնի նա, վուր աշխարք չեր եկի,
Մեւերկու հարուր ձեռաց ունիմ, Ոսեփ, թե գուղիս եզուց եվիտ:

ՈՍԵՓ. — Լավ, լավ, չնորհակալ կուլիմ. ամա իժում ինչ ե
ասում են սիդ երեսը. չիս տեսի, չիս խոսի:

ԳԵՎՈ. — Բաս չիմ տեսի, հենց ես սահաթիս նրամեն չիմ
դալի՛:

ՈՍԵՓ. — Թե ինչ, կոսե. իմքին տալիս եւ.

ԳԵՎՈ. — Թե նրա խոսկին ավատա մարթ, ելի թե իմքին
տալիս ե, քիզ ե տալի մենակ միթամ. ուրիշնիքն ինչ գուղե
անին, ասում ե: Դե, չուստ արա, Ոսեփ ջան, քանի բանը չե
աշքարացի, եգերա իմքին ոտկիս:

ՈՍԵՓ. — Ա'րի, արի, Գեվո ջան, թե չե աշխարքի՝ ղենու ու
մասխարա պիտի դառնամ:

ԳԵՎՈ. — Փու նրա նամուսին: (Դուրս են գնում նախա-
սենյակի ազ կողմից:)

ՏԵՍԻԼ ԺԳ

ՍԱԼՈՄԵ, մենակ: Դուրս ե գալիս ծախ դռնից:

Վայ, քոռանամ յես, պստի ճամփով ե գալի: (Դուրս ե
նայում լուսամուտից,) Դիվիր եկալ բալկոնը: (Առաջ գալով:) Սիրոս
ինչ գնդգնգում ե—...Սնգսկածի վուրդի նիղացալ
դերին: (Գնում ե դեպի նախասենյակը: Ալեքսանդրը յերե-
վալով լուսամուտից, ներս ե մտնում նախասենյակի ծախ
կողմից:)

ՏԵՍԻԼ ԺԳ

ՍԱԼՈՄԵ, ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՍԱԼՈՄԵ. — (նախասենյակի դռներում:) Համեցեք, հա-
մեցէք, գեթաղլա: (Զեռն ե տալիս:) Քու վուտը բարի ըլի,
վուրթի, միզ համա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (անտրաշա շինելով:) Ա՛խ, Սալոմե Ավետիսովնա, (համբուրում ե ծեռքը) յ'ես բախտավուր իմ, վուր արժանացա ձիր վուրթի հիշվիմ հորեսի դենք:

ՍԱԼՈՄԵ. — (ճակատը համբուրելով:) Աստուծ ենենց բախտավուրե, վունցոր քու մոր սիրտը գուզեն չամեցնք, համեցեք նստեցեք, գեթա՝ զվա, հորես նատոս ել դուս գուրքա: (Նատում են:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Ի՞նչպես իք, Սալոմե Ավետովնա, նատալիա Ոսիփովնեն վհւնց ե. են գիշիրվան զեսը ել չինք ուստ եկի:

ՍԱԼՈՄԵ. — Լավ, լավ, փառք աստձու. յ'ես շատ հավնեցա են գիշիրվան կանցերտը, Տերը բարի տա, լավ բան մողա եկավ, նշնելու ախչկերանց համա լավ բազար բաց ելավ. արա են կանցերտը վուր չեր ելի, վմւրդի կուր բարեկմանեյինք առչի գամը, յա վմւրդի կուր տեսնեյիք ու կուր հավնեյիք իմ նատոյին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Նատալիա Ոսիփովնեն են հանգի ախչիկ ե, Սալոմե Ավետովնա, վուր առանց կոնցերտի ել դիփունանց հավնելու ու սիրելու յե, ու յ'ես իմ աստղեմեն պիտի ըլիմ շնորհակալ վուր նրա սիրտը ինձ ննդավ:

ՍԱԼՈՄԵ. — Բաս ետենց հավնում իս, փեսա ջան, իմ Նատոյին:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Ո՞՛ո՞ւ. յ'ես նրան սիրում իմ, սիրում, Սալոմե Ավետովնա:

ՍԱԼՈՄԵ. — Վուր ետենց սիրում եյիր, վուրթի, ել ինչ եյիր միզ չարչրում. հարուր թումնի խաթիր կինաղամ բանը մոշլա յեր ըլում, Քուր քուր ևամփերին որթում-հավատ արավ, վուր թե մինք չինք տա են՝ զագա, եսոր եկետ միթամ ևեպրցինց Փարսիդի ախչկա վրա պիտի նշնվիլ եյիր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (կոտրատվելով:) Յ'ես զարմանում իմ ձիզմեն, Սալոմե Ավետովնա, վուր ավատում իք եղ հանգի բաներուն, արա յ'ես ևեպրցինց ախչկան գուզեյին: Նատալիա Ոսիփովնին թողած, նրա բարի սիրտը, նրա սիվ աճկիրը թողած, մարդ փուղի յեղնեն ննդնի, ամութ չե: Յ'ես ձիս ձշմարիտն ասիմ, Սալոմե Ավետովնա, յ'ես շատ նիդացա, վուր իմ քուրը ձիզ մոդ առուտուր ե սարքի. Փի, մովե ժանր... ամա ել ինչ փույթ, առտուծ վիրչեներուս բարի անե:

ՍԱԼՈՄԵ. — Անփոշիվնելի ըլի, վուրթի, անփոշիվնելի քիզ համա ել, միզ համա ել: (Վեր կենալով:) Ես սահաթիս, փեսա ջան, զենացվալի... Ես նատոս ինչ ելավ: (Ալեքսանդրը յեկը

վեր եւ կենում:) Համեցնք նստեցիք, գեթաղվա, աբա զուք
մուր իք ջափա քաշում, ևս սահաթիս գալիս իմ: (Դուրս ե
զնում ծախս դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԵ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, մենակ:

Վիրչը հասա իմ մուրազիս. սիրուն կնիկ ու փուղ, երկուսը
մետի ձեռիս ե... Փուղը, փուղը՝ խոսկը փուղն ե, առանց փուղ
մարթը մե գրոշ չաժե... Ի՞նչ գուզիս չարչրվի, ինչ գուզիս
տանջվի, թե փուղ չունիս՝ ոչով մարթահեսար չե գցում... Ամա
մե բան լավ չարի վուր շտապեցա... մե քիչ ել՝ ղայիմ եյի
կանգնի, ութ հարուր թուման կու տեյին. հարուր թումանս
կորավ... ի՞նչ անիս, չեր ըլում... Հաջաթ չե, վունցոր կուլի, կու
գուս գամ... (Ազ ու ծախս նայելով:) Զաղ տիղ դեվեր ննգա.
լավ հարուսանիր ին երեվում, ողոնդ գլուխս սիրիլ տամ: Մե
ծուրբելի տոլ շնուք վնանց չունիմ. կպմ՝ ծծեցի... Գնացեք,
տրաքվեցնք. սաղ կանցելարիեն տակն ու վրա կուլի եքուց:
(Ուրիշի ծայնով:) Գիդիք ինչ ե Մարմարովին ոխտը հարուր
թուման ին տվի՝ ու ենենց սիրուն ախչիկ, ենենց սիրուն ախ-
չիկ. (մատներու ծայրը համբուրելով) պէտմ: (Դարձյալ ու-
րիշի ծայնով:) Վաս: (Իր ծայնով:) Տո տը: Շարման, Սաշա,
շարման... (Զննելով իրան:) Շիկ, ջենտլմեն, պրոստո ջենտլմեն:
Լավ առաջ գնացիր. եքուց ելոր մտիկ թե ուր կենաս, դուն
ողոնդ փուղի՝ ղադրը գիդացի: Առանց փուղ դիփ սուտ ե,
դիփ դարդակ խոսկիր ե... ես փուղի շահը, են տոնլուղը,
մե երկու հարուր թուման ել ես՝ ղանց են՝ ղանց՝ ես տարենը
լ' երիք-չուրս հարուր թուման փուղ ե անում: Տարենը վուր հա-
րուր թուման հիդ գցիմ, ես ոխտը-ութը տարումը հազար թու-
ման փուղ կոնե, տասնուհինգ տարումը՝ երկու են՝ ղադա, իժում
ելի են՝ ղադա, իժում ելի են՝ ղադա. վոտ տերե ի մոսեռ Մարմա-
րով. քեփ արա ու դիփունանց աճկը հանե:

ՏԵՍԻԼ Ժ. Զ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՍԱԼՈՄԵ, ՆԱՏՈ

ՍԱԼՈՄԵ.—(Նատոյի ծեռքը բռնած՝ մտնում ե ծախս
դռնից:) Այ, վուրթի, քու մարթը. այ, փեսա ջան, քու կնիկը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Ա՛հ, Նատալիա Ոսիփովնա, վուխչ գիշեր՝
երազումս քիզ եյի տեսնում: (Համբուրում ե ձեռքը:)

ՍՍԼՈՄԵ. — Թշին, թշին, վուրթի, ու բելգեն ել տնւ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Իմ վուխչ կյանքս քիզ փեշքաշ, Նատալիա
Ոսիփովնա (Ձեռքի մատանին տալով Նատոյին:) Համեցեք,
հորեսի գենը դուն իմն իս, Նատալիա Ոսիփովնա, ու յես
քունը: (Համբուրում ե:)

ՍՍԼՈՄԵ. — Բախտավուր ըլվք, վուրթի, մետի ծիրանաք:
(Համբուրում ե Ալեքսանդրին, հետո Նատոյին:) Ծնա-
հավուր ըլի, վուրթի: Համեցեք նստեցեք, փեսա ջան: (Ցույց ե
տալիս բազմոցը, վորի վրա Ալեքսանդրը յեվ Նատոն նստում
են:) Հորես սրա հերն ել տուն դու քա: (Հափշտակված այս
յեվ այն կողմն ե ընկնում:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (Նայելով Նատոյին:) Նատաշա ջան, ինչի
վունչիչ չիս ասում... մե քու քախցը ձենն ինձ իմաց արա:

ՆԱՏՈ. — Լիզուս կապկեցավ, մասիս Մարմարով:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Մոսե՞ն:

ՆԱՏՈ. — Ալեքսանդր, Սաշա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (Նատոյի ձեռքը բռնելով:) Սաշա, Նատա-
շա, ինչ սազ ինք գալի: (Համբուրում ե ձեռքը: Գախ դռնից
մտնում ե իշախոն:)

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԽԱԽՈ

ՍՍԼՈՄԵ. — Մե արի, բատոնո ջան, ե:

ԽԱԽՈ. — Եսենց ել բան կուլի: (Սալոմեյին:) Քա, մե մռւ-
լափ չեյիք տա՞ են մարթն ել տուն եր եկի:

ՍՍԼՈՄԵ. — Ի՞նչ հաջաթ, հորես դու քա, ջեր մե դուն լավ
բարաթի ոխնե հալա:

ԽԱԽՈ. — Աստուճ ոխնե, իմ միզափուր բերնով խնդրում իմ
կամարկատարն ըլի ձիր քոմագը: (Ալեքսանդրը յեվ Նատոն
վեր են կենում:) Աստուճ անփոշիվնելի անե, ծլիք, ծախկիք,
մե բարցի ծիրանաք: (Ոսեփը մտնելով Նախասենյակի աջ
կողմից, մնում ե ապշած:)

ԽԱԽՈ. — (շարունակելով:) Առջնիկը տղա տա աստուծ. մեկ-
մեկու սիրիք ու պատիք, թաքալուրի աճկը քաղցր լլի քե-
զրա, վուրթի... (Տեսնելով Ռուբիխն:) Ա՛յ, մնացածն ել իր հերն
ոխնե:

ՍԱԼՈՄԵ. — Ա՛յ, Ռուբի ջան, շնահավուրի քու ախչկա բախ-
տավուրութինը:

ՆԱԽՈ. — Պապաշա... (Մոտենալով Ռուբիխն, ձեռքը համ-
հուրում ե: Ռուբիը մնում ե անշարժ:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (առնելով Ռուբիի ձեռքը:) Հորեսի դենը,
իմ հեր, յես ել ձիր վուրթկերանց հետաքումն իմ: (Շփոթված
մետ դառնալով դեպի նատոն:) Ես ի՞նչ բան ե:

ՍԱԼՈՄԵ. — Ետ ի՞նչ քաղաքավարութին ե, Ռուբի:

ԽԱԽՈ. — Ի՞նչ ելավ քիզ, Ռուբի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (Սալոմեյին:) Յես վունչիչ չիմ հասկա-
նում: (Ռուբիխն:) Նիդացած իք երեզում, իմ հեր:

ՈՍԵՓ. — (ուշքի զալով:) Յ'ես... Զե... հա, գլուխս պտուտ
եկալ մերաշ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (աթոռ մոտ տանելով:) Համեցէք, իմ
հեր:

ՈՍԵՓ. — (Ալեքսանդրին:) Մի նեղանա... անց կացավ:

ՍԱԼՈՄԵ. — Ախար վեսին Բտենց կու հանդիբին ու են ել
ևսթավուր փեսին. մե իմքին ասա, ե:

ՈՍԵՓ. — Ել ի՞նչ ասիմ.... նշնիլ իք, աստուծ վերչը բարե-
անե: (Ալեքսանդրին:) Համեցէք նստեցեք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Իմ հեր, աբա յ'եփը կու հրամայիք նշվան-
տեքը. եքնեց թե ելոր:

ՈՍԵՓ. — Քու քեփն ե. վունցոր գուզիս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Մե քսան մարթով գու քամ. իմ նաչալնի-
կին ել պիտի ասիմ, չի ըլի:

ՈՍԵՓ. — Վունցոր կու հրամայիս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (Սալոմեյին) Կուլի բեղամաղ ե ինձմեն
թե իմքին գեթ ունիմ, ասեք, խնդրում իմ:

ՍԱԼՈՄԵ. — Զե, ի՞նչս ասում, վուրթի, վունց կուլի: (Շա-
րունակում են ցածր ձայնով խոսել բեմի աջ կողմում:)

ՈՍԵՓ.—(բեմի ծախս կողմում, Խախոյին.) Տն, անաստուձնիր, մե քիչ չելիք կանա մուլափ տամ:

ԽԱԽՈՒ.—Ի՞նչ ե պատահի:

ՈՍԵՓ.—Աստուձ վուչ գիդե իմ գլուխն ու արիվը. Սանթուրովը կուտրացավ:

ԽԱԽՈՒ.—Վույ, քոռանամ յ'ես:

ՍԱԼՈՄԵ.—(բարձր Ալեքսանդրին.) Համեցեք, փեսա ջան, գնանք գաստինեն:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(թեզն առաջարկելով Նատոյին.) Եստի մեքան կա, Նատաշա: (Դուրս են գնում ծախս դռնից. Սալոմեն հետեվում ե նրանց:)

ՈՍԵՓ.—Ա՛խ, աստուձ, աստուձ, յարաբ ի՞նչ իս գրի ճակտիս:

ՍԱԼՈՄԵ.—(ճանապարհից հետ դառնալով, Ռսեփին.) Գուզիս ինձ սպանե, Ուսեփ, ոխտը հարուր իմ խոստացի: (Ճնալով Խախոյին.) Համեցեք, բատօնո ջան, դեսը: Ա՛րի, Ուսեփ: (Դուրս ե գնում ծախս դռնից:)

ՑԵՍԻԼ Ժ.Թ.

ՈՍԵՓ, ԽԱԽՈ

ՈՍԵՓ.—(սաստիկ նեղացած:) Ես ի՞նչ իմացա... զուրթ ասավ... քիզ իմ հարցնում, չիս իմանում, ի՞նչ իս պապանձվի: (Լացի ծայնով:) Դուրթ ե ելի, դուրթ. տեսնում իմ վուր զուրթ ե... Ո՞հ, աստուձ, ի՞նչի կեծակ չիս վեր զցում ես անիծած տուն ու տիղիս վրա, վուր գիփունիս մետի գեղինը գեվեր տանիս... Աշխաքի փուղ կորավ իմն ես սահաթիս. տուն ելի գալի վուր գիփ մետի մոշլա անիմ բանը, ու զուք ես ի՞նչ բերիք գլուխս, ի՞նչ:

ԽԱԽՈՒ.—Իմ միղն ե, իմ միղը, վուրթի. մի չարանա, գենացվալե, հարուր թուման իմ թաղմելեն կու տամ:

ՈՍԵՓ.—Թու թաղմելեն... Փառք քիզ, աստուձ, փառք. Հաստա են տիղը, վուր ախկտի պես ողորմութենի արժանի ել զառա... Թու փուղիրը քիզ համա պահե, ինձ հարկավուր չե... ինձ միսկտ իսկի ել մի բերի, յ'ես հարուստ իմ, խիստ հարուստ իմ. ի՞նչ անիմ թե Սանթուրովը կուտրացավ, ինձ ի՞նչ հաջաթ, ով կանա ինձ ժամ տած տա՝ զար ու զամինի պես կանգնած իմ, տանս

անհատնելի փուղե ծղարը յե դուս գալի: (Մազերը քաշելով:)
Ա՛խ, աստուծ, աստուծ... (Բարկացած ման ե զալիս:) Գնա,
գնա, փեսին հանդիրի, չուստ արա, ամութ ե, մարթը չինովնիկ
ե, (դառը ծիծաղով) հա, հա, հա... (Դուրս ե գնում աջ դռնից:)

ԽԱԽՈ.—Տեր աստուծ, դուն թափե ու աղատե: (Դուրս ե
գնում ծախ դռնից: Վարագույրն իջնում ե:)

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

Փարսիդի տանը փարթամ սենյակ՝ անճաշակ կերպով կահավորված. հա-
տակը ծածկած ե գորգով, առաստաղից կախած ե բյուրեղյա ջահ հանգած
մոմերով: Աջ, ձախ և դիմացը զաներ՝ թավիշե զբապրիներով զարդարած:
Զախ կողմը՝ բազմոց, վորի մոտ սեղան, հայելի և լուսամուտ. իսկ աջ կողմը՝
դունավոր սփոսով ծածկած մի այլ սեղան: Խորքում՝ ընկողմարան
(քուշեթ): Ուր հարկն ե, աթոռներ, բազկաթոռներ, հանգած լաստելներ
և հանդած մոմերով աշտանակներ ու կանդելարքներ: Ցերեկ ե,

ՏԵՍԻԼ Ա.

ՓԱՐՍԻԴ, նստած ե աջ կողմի սեղանի մոտ, վորի վրա դար-
սած են համարակալ յեվ բաց հաշվեմատյան, Միխո, կանգնած,
կտավի մի կտոր ձեռքին, զազով չափում ե:

ՄԻԽՈ.—Ես երկու, ես յերիք, ես չուրս, ես հինգ, ես վից-
ես ել... պակսեցավ, աղա:

ՓԱՐՍԻԴ.—(վեր կենալով տեղից յեվ Միխոյի գլխին
խփելով:) Ա՛յ, թե պակսեցավ. չափե նուր մեկանց: Հոգիտ կու
հանիմ թե մե վերշոկ պակսեցրիլ իս ոխտնեմին:

ՄԻԽՈ.—(սկսելով նորից չափել:) Ա՛խ:
ՓԱՐՍԻԴ.—Անգներեմետ կու հանիմ ետ ախը. դե, չուստ
արա. (կամաց զգակոթին տալով) հը:

ՄԻԽՈ.—Ա՛յ, աղա. (չափում ե) ես մեկ, ես երկու...
ՓԱՐՍԻԴ.—(աջ ձեռքը բռունցք արսոծ ըթամատով Մի-
խոյի գլխից իբրեւ մի բան արմատախիլ ե անում: [Գլխից
բռղկ հանել:] Զքե, առ անհծած, ե:

ՄԻԽՈ.—(սաստիկ ձգելով:) Ես յերիք, ես չուրս... (ձա-
կատից քրտինքը սրբում ե:)

ՓԱՐՄԱԿԻ. — Հըմ, իշխ բիռն ունիս շալկած:
ՄԻԽՈ. — Ես հինգ...
ՓԱՐՄԱԿԻ. — Զքե, ձքե:
ՄԻԽՈ. — Ես վից, ես ել... ելի յերիք վերշոկ պակսեցավ:
ՓԱՐՄԱԿԻ. — (Միխոյի ականջները բաշելով) Յերիք վեր-
շոկ պակսեցավ... եստի կու ավելնա:
ՄԻԽՈ. — (լալով) Վայ մե, վայ մե, վայ մե, վայ մե...
ՓԱՐՄԱԿԻ. — Իշխ գլուխ, է՞նփը պիտի դուն մարթ դառնաս:
ՄԻԽՈ. — Վայ, գեղի ջան, վայ, գեղի ջան...
ՓԱՐՄԱԿԻ. — (ավելի ոլորելով նրա ականջները) Պակաս ե:
ՄԻԽՈ. — (աղաղակելով) Աղա ջան, աղա, քու հոքուն
ժեռնիմ, աղա ջան...
ՓԱՐՄԱԿԻ. — Այ, թե պակաս ե:
ՄԻԽՈ. — Թամամ ե, թամամ, աղա ջան, մեկ ել թող, ա-
ղա ջան:
ՓԱՐՄԱԿԻ. — Դե, վիկալ, ամա մաւդայիթ կայ:
ՄԻԽՈ. — (առանձին) Յա սուրբ կարապիտ: (Բարձրա-
ծայն չափում ե.) Մեկ...
ՓԱՐՄԱԿԻ. — Սւախ կոկոր:
ՄԻԽՈ. — Երկու...
ՓԱՐՄԱԿԻ. — (բըթմնջում ե, հետո) Հայվան:
ՄԻԽՈ. — Յերիք...
ՓԱՐՄԱԿԻ. — Ամկիրդ բաց արա, ելի, անիծած:
ՄԻԽՈ. — Չուրս...
ՓԱՐՄԱԿԻ. — Տեսնում իս Դարչոն վանց և չափում:
ՄԻԽՈ. — Հինգ...
ՓԱՐՄԱԿԻ. — Դուն ել սորվի, ելի:
ՄԻԽՈ. — Հինգ...
ՓԱՐՄԱԿԻ. — Թե չե ետենց մնացիր, դուքանս քարուքանդ
կոնիս:

ՄԻԽՈ. — Հինգ, հինգ...

ՓԱՐՄԱԿԻ. — Ել մե որ չիմ պահի, աստուծ գիգենա...

ՄԻԽՈ. — Հինգ, հինգ, հինգ...

ՓԱՐՄԱԿԻ. — Դե, գազդ բանեցըրու...
ՄԻԽՈ. — Հինգ... (Առանձին) Յա սուրբ Գեվուրքի զորու-
թիս: (Բարձր:) Ես վից... վից... կու պատռվի, աղա, խիստ իմ
ձքում:

ՓԱՐՄԱԿԻ. — Բանըդ տիս:

ՄԻԽՈ. — (հանկարծ) Վայ, վայ, վայ, վայ, ինչոք ձեն հանից:

ՓԱՐՄԻԴ.—(անտղելով) ԶԵ, վունչիչ չկա. հոքիտ կու հանիմ թե պատոիլ իս:

ՄԻԽՈ.—Ես ել (անտղելով) ոխտնեմեն կես վերշոկ պահաս: (Դիմացի դռնից մտնում եր Գիծ Մողին յեզ հետեւը լուռ կանգնում:)

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԳԻԺ-ՄՈԶԻ

ՓԱՐՄԻԴ.—(Միխոյի գլխին խփելով:) Աբա դուն ինչ շնուք ունիս, վուր ես կես վերշոկն ել չդուս բերիր:

ՄԻԽՈ.—(գոռալով:) Վուր շկա, աղա, յես ինչ անիմ, վա:

ՓԱՐՄԻԴ.—(նրա մազերից ու ականջներից բաշելով:) Սնւտ ել վուր խոսում եւ:

ՄԻԽՈ.—(գոռալով:) Վայ մե, դեղի ջան, դեղի ջան... աստուծ չունիս, խո չիս կանա սպանի ինձ. աբա դուն չափե թե ոխտն եւ:

ՓԱՐՄԻԴ.—(չարանալով վերցնում եւ զազն ու կտավը:) Ոխտը չե. ոյ, թե ոխտը չե: (Չափում եւ:) Ես մեկ, երկու, յերիք, չուրս, հինգ, վից, ոխտը, ես ել քի մե չարեք ավելի փեշքաշ: Ես ինչ ե թե ոխտը չե. վուր մեռնիս պիտի սորվիս, շահգիրդանի համա ունիս աճկիրդ բաց: Դե, չուստ արա:

ՄԻԽՈ.—Ալս, աստուծ, ինչ անիմ: Ես մեկ, ես երկու... ՓԱՐՄԻԴ.—Կամաց, չպատուիս:

ՄԻԽՈ.—(լաց լինելով:) Ախար, յես վար ջուրը ննդնիմ. քաշում իմ պատովում եւ ու չիմ քաշում՝ չե դուս դալիս

ԳԻԺ-ՄՈԶԻ.—(առաջ զալով:) Եհեյ, կտո՞ գուլիաետ... Գիժ-Մոզի... (Ծիծաղում եւ:) Հա, հա, հա...

ՓԱՐՄԻԴ.—(առանձին.) Ես գիժ անիծածն ել վարդի յեր: ԳԻԺ-ՄՈԶԻ.—(խլելով Միխոյի ծեռքից զազն ու կտավը:) Յեյի, լաչաթրիան, իս տու եստի: Եսաի ոխտն ել կա, քսան ու ոխտն ել (Չափում ե շուտ-շուտ:) Մեկ, երկու, յերիք, չուրս, հինգ, վից, ոխտը, ութ, ինը, տասը, տասնումեկ, տասերկու, ես ելտաս: Երիք, ես ել տասչուրս. հը՛, ելի գուլիմ: Ես ել տասնուհինգ, ես ել տասնուվից. գուղիս ելի գուս բերիմ...

Սլեցնւ, ելի, տո, չիս իմանում: (Գաղը յեվ կտավը Միխոյի վրա ածելով:) Բոնե, մարթ գառի, Ելի. որա պես աղա մարթու մոդ աշկիրտ իս, եստու շնուք ել չունիս. մե կես վերշոկի գողնալ ել չսորվեցար ինչըու հիմի... Շար-

լութ... (Միխոն ուզում ե ազատվել կտավից, բայց ավելի յե
խանգարվում:)

ՓԱՐՍԻՂ.—(Գիծ-Մողուն,) Յես քիզ ասում իմ լպստած-
լպստած մի խոսի ինձ մոդ, թե չե:

Գիծ-ՄՈԶԻ.—Ետենց ե աշխարքն, այ. լավութենին լա-
գութին չկա: (Մատնացույց անելով Միխոյին:) Ուզում իմ մարթ
դառնա: (Միխոյին:) Գնա, գնա, վուրթի, գնա մարթ դառի. սհրդի,
ելի, քու աղիմեն. տեսնում իս ինչ՝ զագա փուղ ե մոդ արի:
(Փարսիղին:) Արա, կեսորի վուխտ ե, սհրդեն գցին, ասա, ե-
լի,՝ զոնաղ իմ եկիր ի՞նչ ունիս ճաշին. դժշի ծվենի թե կհնչու-
քեփ ե վուր կու շանց տաս, հհ, հհ, հհ, հհ... Շարլութ:

ՓԱՐՍԻՂ.—(առանձին,) Ես անիծածը խիստ ե հարփած:
(Միխոյին:) Գնա կորի ե՞՝ զանց, (Միխոն գնում ե կտավի
մեկ ծայրը ծեռքին, մյուսը հետեւվից գետնին քարշ տալով.)

Գիծ-ՄՈԶԻ.—(հետեւվելով վայր ընկած կտավի ծայրին:)
Եստի մտիկ, ե... (Փարսիղին:) Արի վրեն նստի, միթամ սանկա
յե քիզ համա, ել սանկի փուղ չիս տա. խիստ ձուն ե գալի,
քու արիվը: (Ինքը նստում ե կտավի ծայրին:) Արի, ելի...
Շարլութ... թաշե, տն:

ՓԱՐՍԻՂ.—Տեր ողորմած աստուծ: (Չարանալով Միխոյի
վրա:) Զելիր կանա կարքի մոդ անի: (Խփում ե Միխոյի գըլ-
խին յեվ քաշում ե կտավը.)

Գիծ-ՄՈԶԻ.—Տպրրնւ... (Թափի ե տալիս կտավը:)

ՓԱՐՍԻՂ.—(վոր փոքր եր մնում վայր ընկներ, բարկու-
թյունից խփում ե Միխոյին:) Ես դիփ քու միղն ե, անիծած:
(Միխոն դուրս ե վազում դիմացի դռնից:)

ՏԵՍԻԼ Գ.

ՓԱՐՍԻՂ, ԳԻԾ-ՄՈԶԻ

Գիծ-ՄՈԶԻ.—(շարունակելով:) Մհերափի, եստի հարկավուր-
ե: (Տեղից վեր ե թռչում:) Ես ամերիկեն ել մեր իս դրգում,
ոինսած հոքի. եսոր ե թե եքուց պիտի մեռնիս, եստու վրա-
լավ պատահաք միվ կուտա քիզ: (Կտավով չափում ե Փարսիղի
հասակը հետեւվից:) Ես մեկ, (չափում ե առջեւվից) ես ել մեկ-
ելի խելի մնում ե:

ՓԱՐՍԻՂ.—(ազատվելով:) Դժիթ իս, տն:

գիծ-ՄՈԶԻ.—(շարունակելով) Խիստ հանգումն ե, քու

արիվը:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՔԱԼԻ

ՔԱԼԻ.—(մտնելով ձախ դռնից:) ԱՇ, թաղա խարար, (Տեսնելով ԳԻԾ-ՄՈԶՈՒՆ, շվարվում ե.) ՎԱՐ, քոռանամ յ'ես, ետինչս անում, տու

ԳԻԾ-ՄՈԶԻ.—Վա, չիս տեսնում, պատանք իմ ձեռում. արի, զմուզիս քի համա ել. (պատրաստվում ե չափել յեվ նրա հասակը) քանի գուզիս գուս գու քա, են՝ դադա քարչվեցավ ես խիզճ ամերիկեն:

ՔԱԼԻ.—(հեռանալով:) ԴԵՆԸ, գԵՆԸ: Ե՛Մ սիվցար դեսը: ԳԻԾ-ՄՈԶԻ.—Վահ, բաս առանց ձիզ կու դիմնիլի՛: (Նորից մոտեցնում ե կտավը Քալինին) ԱՌԻ, ե, տիս քանի պատանք ե գուս գալի:

ՔԱԼԻ.—Ի՞նչ ասուուձ ե խոռվի գլխիտ, քա՞:

ՔԱՐՄԻԴ.—Ետ ի՞նչ իշավարի հանաք ե, տո՞:

ԳԻԾ-ՄՈԶԻ.—Բու քաղաքավարի ջանին մեռնիս. մե անզըձներուտ ել թամաշա արա, Որթաճալու եշն ել չունե ետետ՝ զադա անզձնիր... Պստի վուտնիրը... Էստի մտիկ, կոսիս երեւ լազաթիր կուբո ըլիր Ափսուս չե իշի վուտնիրը՝ սուփթա, լազաթիր քու մատներու վրա կի բարակ ե ու. ետ ի՞նչ ե, գաթվու վուտնիր ե:

ՔԱԼԻ.—Գժվիլ իս, տո՞ թե ի՞նչ խարբներումն իս ես:

ԳԻԾ-ՄՈԶԻ.—Գիծը դնէն իս, սարսադ, վուր ես թափուր մարթո պատիվը չիս իմանում:

ՔԱՐՄԻԴ.—(նստելով աջ կողմը յեվ առանձին:) Ի՞նչ փիս ե հարբած անիծածը:

ՔԱԼԻ.—Զենըտ, ասում իմ, ե:

ԳԻԾ-ՄՈԶԻ.—Խաչը գիգենա, հանաք չիմ անում, արա չի- բումտ ի՞նչ ունիս. հինգ մանեթ ունիս, ըի իրան տանք՝ տասը բումտ ի՞նչ ունիս. տասն ունիս՝ քսան կու շինե: Գողիկի քանի արշին կու շինե. տասն ունիս՝ քսան կու շինե: Գողիկի քանի արշին կու շինե: ԱՇ, հինգ. զմուզիս ձեռաց ոխտը գուս բերե ես սահաթիս: ԱՇ, ե, հինգ. զմուզիս ձեռաց ոխտը գուս բերե ես սահաթիս: ԱՇ, հինգ. զմուզիս ձեռաց ոխտը գուս բերե ես սահաթիս: ԱՇ, հինգ. զմուզիս ձեռաց ոխտը գուս բերե ես սահաթիս: ԱՇ, հինգ. զմուզիս ձեռաց ոխտը գուս բերե ես սահաթիս: ԱՇ, հինգ. զմուզիս ձեռաց ոխտը գուս բերե ես սահաթիս:

խելոք ասա, կու խելոքանամ, արի սրան ճքնավուր ասա, կա-
նա ճքնվի. արի քիզ սիրուն ասա, ոհ, հա, հա, ինչ իւր
(Յերգում ե:)

«Հոյի՛ գաբագրուլո մթվարե,
Բնելս վզի վար մոմեխմարե,
Մնաթոբլադ գանմիարե
Մեց գանմինաթլե արե:» *)

Դուն ել կոսիս՝ աթմորթու պատկիր ունիմ. տարեմուտ
գիշերը միը թամարոն, վուր ըասիլեք ե թխում, մատով երկու
տիղ քիշմիշ ե ցցում, աճկիր ե, կոսե, ու մեչտիղն ել կես նուշը
կպցնում ե, գառավ քինթ, կոսե, գրուստ են չբա: Ո՞հ, շենի կի
ճիրիմե. (փաթաթվում ե յեվ ուզում ե համբուրել) արեգագի
շուխը վրեմեա վեր ե գալիք:

ՔԱԼԻ. — Ի՞ն, խուղիմ քու գլուխը, շիրաչխանի հուտումը
մլում լու:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — Վահ, գանա չիմ գիգի՝ ամեն որ վարթ-մա-
նուշակի իս հուտ կալնում: (Շարժվածքով ցույց ե տալիս
Փարսիղի վրա:) Մե քինթ ու պոռւնդին ել թամաշա արա, ե:
(Ծիծաղում ե:) Հա, հա, հա...

ՓԱՐՄԻԴ. — (առանձին:) Ե'սենց ել լպստած:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — (նորից փաթաթվելով Քալինին:) Մե արի,
Ե: Ե'ստի մտիկ, զմերդի իս գողցի ետ ճակտի աղլուխը,

ՔԱԼԻ. — (հեռացնելով) Մե գենը, հենց ապրիս, թավաթ
սիրտա տրաքած ե ու պատռած:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — Տրաքի ու պատռի ամբախտ մարթու
զլուխն ու արիվը: (Ցույց ե տալիս Փարսիղի վրա, վոր այս
միջոցին հաշվեմատյանին եր նայում, յեվ հեզնորեն:) Բաս ե-
մարթերի խղճին, իր համա հալալ միամիտ, տերողորմեն առ-
չիվը, սաղմուս ե կարթում:

ՓԱՐՄԻԴ. — Գիժ-Մոզի, լիզվիտ աղ արա, ասում իմ:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — Վա, մերաշ անդմներուս վրա սուխ չկոտորիս:

*) Վացերեն ե. —

Ո՞վ փառահեղ լուսին,
Նստած եմ խավարում, ողնիը ինձ,
Զդիր քո փայլուն ուոյսդ ինձ վրա
Ենվ լուսավորիք բոլորի շուրջա:

ՔԱԼԻ. — (գնալով դեպի Փարսիղը, Գիծ-Մոզուն չանչ ե ա-
նում.) Քու հարփած գլուխն ել: (Փարսիղին) Ես իւացար:

ՓԱԼԻ. — Թռղնում ե մարթու: Ի՞նչ խաբար ե:

ՔԱԼԻ. — Ել ի՞նչ խաբար պիտի ըլի: Մարմարինց տղեն ի-
րիգուն նշնվիլ ե:

ՓԱԼԻ. — Վահ, դժւըթ:

ՔԱԼԻ. — Աստուծ գիղենա:

ՔԱԼԻ. — Ո՞ւմ ախչկա վրա:

ՔԱԼԻ. — Գուլաբինց Ոսեփինը:

ՓԱԼԻ. — Ղմւըթ իս ասում:

ՔԱԼԻ. — Բաս սնեւս իմ ասում: Հազար թուման ել փուղ
ին տվի: Են՝ զադա ասի՞՝ ազելցնե, ասի՞՝ գնաց, ելի, ձեռներեմես.
իժում ի՞նչ տղա յեր: Խիստ մինձ-մինձ ին պատուավում: ՞վ
երիտ նրանցն ես՝ զադա փուղը:

ՓԱԼԻ. — (վեր կենալով:) Վայ քու տղիս տղա, յես նրան
հազար թումանը կու շանց տամ... (Կանչում ե:.) Միխո, Միխո.
գնաց թե եստի յե: (Կրկին կանչում ե:.) Միխո: (Մտնում ե
Միխոն դիմացի դռնից:)

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ՄԻԽՈ

ՓԱԼԻ. — Ես սահաթիս դեվեր վազի Տափի թաղը. Գու-
լաբինց Ոսեփի գուքանը խո գի՞ղիս:

ՄԻԽՈ. — Են որը վուր փաւդ երի:

ՓԱԼԻ. — Հա, հենց նա: Գնա, վուրդիոր ըլի գթի ու ասա,
վուր մնացածը ես սահաթիս եվետ բերե: գե, չհւստ արա: Ի՞նչ իմ
ասում՝ (մատնանիշ անելով կտավը) ես պատանքն ել տար:

ԳԻԾ-ՄՈԶԻ. — (ծիծաղում ե:.) Հա, հա, հա..., մյ, աստուծ
լսե:

ՓԱԼԻ. — Յ' ես ել ի՞նչ իմ ասում, խիլքս խառնվեցավ:
(Միխուին, չարանալով:) Ի՞նչ իս բերանդ բաց արի, չիս իմա-
նում, վիկալ ես ամերիկի կտուրը: (Միխոն աշխատում ե հա-
վաքել:.) Աբահըմ, իժում գնա գուքանն ու Դարչոյին կոսիս,
վուր ես նմուտիս եվետ եստի բանվի: (Խփելով Միխոյի գլխին:.)
Տհ, ձեռնիրդ փափա յե ուսում: (Միխոն աչքերը սըրում ե:.)
Հահա... (Հավաքելով կտավը յեվ տալով Միխոյին, վորին

կըկին խփում եւ.) ԴԵ, չնւսու (Միխոն կտավը ծեռքին դուրս
ե գնում դիմացի դռնից.)

ՏԵՍԻԼ Զ

ՔԱԼԻ, ՓԱՐՄԻՂ, ԳԻԺ-ՄՈԶԻ

ՓԱՐՄԻՂ.—(շարունակելով.) Տեսնիմ վհւնց ե տալի հա-
զար թուման... վուր տալիս ե, ում փուղն ե տալի:

ՔԱԼԻ.—Թաղվարիան Սալոմե, փեսին ձեռնեներեմես խլից,
ելի:

ՓԱՐՄԻՂ.—Տիս թե ինչ որը հասցնիմ յես նրան:

ԳԻԺ-ՄՈԶԻ.—Հեսարի բան քովլացի, վուր չկանենաս, թե
չե վաղութիւնը քու փեշակն ե: Ոսեփն ինչ միզ ունե վուր ջիզրը
նրա վրա իս հանում: Թու ախչիկը վուր տուտոց ըլի ու յե-
րիք զազ բերան ունենա, Ոսեփն ինչ անե ետումը, ել Միխուի
անգճն երուն ըստ եմարթերի. պակասը թամամ կոնեյիր, ելի:

ՓԱՐՄԻՂ.—(չարանալով:) Փիե,

ԳԻԺ-ՄՈԶԻ.—Փիե քիզ ու աստձու կըակ. կուտեյիր դուն
ել, ելի՛. ինչի՞ չեյիր տալի, ում համա իս մոդ անում. եքուց
ելոր կու սատկիս, զիփ մունդոփկ կու մնա:

ՓԱՐՄԻՂ.—Զենդ թե չե:

ՔԱԼԻ.—(Գիժ-Մոզուն): Դուն ել ինչ իս մե կուռը տրա-
քեցնում, տն. միր գարգը միզ հերիք եւ:

ԳԻԺ-ՄՈԶԻ.—Դարդ ցավի գաք ու աստձու պատիժի. յես
ու իմ աստուծը, բախտավուր են տղեն, վուր Ոսեփին ե ոսստ
եկի ու ձիգմեն ազատվիլ ե. զլսով վուտով Ոսեփի զունգը չա-
ժիք:

ՓԱՐՄԻՂ.—(չարանալով:) Դնա զլիսեմես ուադ ըլի, թե չե
ես չարացած սրտիս ինչ ջիզր ունիմ քիզ վրա կու հանիմ:

ԳԻԺ-ՄՈԶԻ.—Վամա, (բունցքը բերանին մոտեցնելով)
պլուզ... ի՞նչ պիտի անիս, ճոնիրու գողում ե քիմեն. մերաշ իմ
դուքանն ել չմհրիլ տաս: Ի՞նչ մարթ իս գուն, ի՞նչ:

ՓԱՐՄԻՂ.—Ի՞նչոր վուր իմ, քի վբա խո լավ մարթ իմ:
ԳԻԺ-ՄՈԶԻ.—Ի՞նչով իս լավը:

ՓԱՐՄԻՂ.—Մեկ ես վուր յես խելոք իմ, գուն գիժ իս:

ԳԻԺ-ՄՈԶԻ.—(ձիգազում եւ) Հա, հա, հա... վուր խելոք
ըլիս, ետ չիս ասի: Ի՞նչով իմ գիժ, վուր քու արարմունքն երե-

ախտ ասում իմ: (Ծաղրելով:) Խելոք իմ, կոսեր ավտաս տելենքրափի մավթուլը դուն մողոնեցիր, այ:

ՓԱՐՍԻՂ. — Յ' ես փուղ ունիմ:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — Քու փուղը տար ու... (Միքանի խոսք եւ ասում ականջին:) Ես՝ զանց, են՝ զանց փախցրիլ իս, ինձմեն խլիլ իս, նրամեն գողցիլ իս, փուղ իս շինի ու ենդով դրոշկա ու կալասկա իս սալքի ու մեչն ուռած ու փքած սեյիր իս անում. Ֆու եւ քու փուղն, ելի... Քու մամա Մաթուսն ել առանց կասկա դուքանը չեր գնում, հա քու արիվը... Փուղ ունիմ, կոսե... Վուր զլխամեռ քի վրա հարուստ չե. աբա քու հալալ աշխատանքն ել հեսար անինք, իմն ել... տեսնինք, ով շատ ունե: (Գրպանից քսակը հանելով յեվ ազ ծեռքով վրան խփելով:) Ա՛յ, այ, այ, (ազ ծեռքով իբրեւլ ճակատի քրտինքը սրբելով) գիփ հսենց, այ... Բաս չե ու քի պիս եղեղեցու համա փուղ կու մոդ անելի ու ջիբս կոծեյի... ի՞ս տու իմ մե մանեթը... ի՞նչ տամ մե ձեռաց սուտ կուտր ննդնիս:

ՓԱՐՍԻՂ. — Միղայի աստձու:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — Ո՛հ, հա, հա, հա, ավտաս առչի գամը կուլի, այ, Վուր մեռնիս տոպը կներով գերեզմանդ կոծին. հա, քու գլխի արիվը գիգենա:

ՓԱՐՍԻՂ. — (չարանալով:) Տո, ձեռը չի՞ս վիկալնի ինձմեն:

ՔԱԼԻ. — (Նույնպես:) Զիս ամանչում:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — (Փարսիղին:) Վուր մեռնիս, ձեռը չիմ վիկալնի, քանի սաղ իս, քիզ համա որթունք եւ ստեղծի ինձ աստուծ. պիտի ջանտ ուտիմ ու յեփոր կու մեռնիս, են չախը թամաշա աբա՝ սիպտա-սիպտա որթունքնիրը կու փաթթվին վրետ լոթիքը, անգամեմետ տուն կեհան ու քնթեմետ ու բերնեմետ գուս գու գան... Ենե՛յ. կտո գուլիսահտ... շարլութ: Ա՛փսուս չե քու սիրուն աճկիրը, վուր մեչն որթունք նստի: Ա՛րի մե պաչ անիմ, գիթաղվա:

ՓԱՐՍԻՂ. — (մեկնելով ծեռքը:) Զեռիս պիտի պաչ անիս:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — Վահ, վարթապետ խոմ չիս... Ենանց պողտի անինք թե զուղիս: (Զեռքը Փարսիղի ուսին զցելով:) Եստի մտիկ, կոսիս դժուխիկի մաշխալա ըլի: (Հեռանում ե:) Դուրթ, հանաքը զենը, աղա Փարսիդ, ամա կու լաց ըլի խալիսը քու մեռնելիս... վուրգի խղճի արտսուք կա, գիփ են որը կու թափպի, այ... (Ծիծաղում ե:) Հա, հա, հա... Դե, մեռի, ելի. կուբոյի փուղը յես կու բախշիմ:

ՓԱՐՄԻԴ. — (սաստիկ չարանալով.) Տո, կորի ես՝ դանց,
թե չե...

ՔԱԼԻ. — Գում, թե չե ես սահաթիս բջերանցը կանչեցի, աս-
տուձ գիղենա:

ԳԻԺ-ՄՈԶԻ. — Բջերանցը... Ա՛յ, թե բջերանցը... (բռունցք-
ները շարժելով յեվ ծաղրածությամբ հարծակվելով ազ ու
ծախս:) ուհ, ուհ... ուհ... (Փարսիղն ու Քալին այս յեվ այն
կողմն են վազվում, իսկ ինքը կանգնում ե մեջտեղը յեվ
հանկարծ փրթկում ե,) Փըմհ, հմ, հմ, հմ... Ետ չի՞ք... Ես ել
դառավ են որվան գիշերը, վուր դուռը չբաց անիլ տվիք: Շատ
հարկավուր ե ձիր գլուխն ինձ. աշխարքին չարա ելավ, յես կի
չկանացի մե աղատվի ձիզմեն... Յ' եփ կուլի ձիր քելեխը բաժ-
նիլ ըլիմ. առանց են խո վարցկ չիք անում ու եղերա են որ-
վան ձիր շիլափիլավը աստուձ վարցկ համարե ձիր հոքու համա...
(Փարսիղին:) Ի՞նչ չիս արի դուն, ինչ ախպեր ասիս՝ դուն իս
զբնի, ննգիր ասիս՝ դուն իս խափի, պարտկ ասիս՝ դուն իս
հաշա կերի, զոռով պարտկ ասիս՝ դուն իս վիզը դրի ոմքնու
վրա, գուղութին ասիս՝ դուն իս արի, վուրթու բողազ ասիս՝
դուն իս դուս կտրի, հարենի դուքան ասիս՝ դուն իս կրակ տվի:
Ո՞ւր ե, ուր, պիտի գիղենան ով իս, վուր վուտեմետ քաշ անին
քիզ: Աշխարքը քոռացիլ ե ու քիզ համա հիշտ ու հանգիստ
գեղնի երեսին ման իս գալիք այ, խուղիմ քու գլուխը, լավ
մարթ դուն իս, հըմ: Փուրդ վուր հաստացրիլ իս ու ել ոչովու
այնումդ չիս գցում. գնամ ես սահաթիս թե աշխարք չզցիմ վուր
ինչի համա եյիր ոլըրում Միխոյի անգճնիրը, յես Գիժ-Մոզին
չիմ ըլի: Գնամ, գնամ, չիմ ուզի յես ձիր ճաշը. գնամ, ման
հալալ ու ջան աղատ ձիզմեն, Գնամ խիղճ Ոսեփին ասիմ վուր
իր գլխի չարեն տեսնե, թե չե վայ նրա միխկը ձիր ձեռին:
(Լեզզերեն պարելով:) Բրախմա պուտրա, պուտրա, պուտրա-
բիեն պուտեր, պուտեր, պուտեր... Շաբլութ:

(Դուրս ե գնում դիմացի դռնից:)

ՏԵՍԻԼԻ

ՓԱՐՄԻԴ, ՔԱԼԻ

ՓԱՐՄԻԴ. — Ա՛յ, գնալու ըլի ու գալու վուչ:

ՔԱԼԻ. — «Ծին ձ' դալի դա ուկան խմալի»*), հըմ...

*) Վրացերեն ե. — Առջևու ջուր, հետեւ սուր:

ՓԱՐՄԻԴ. — Պատուհաս ե անիծածը:

ՔԱԼԻ. — (լալով:) Պատիժ ե ստեղծի ինձ համա աստուծ,
Ելի:

ՓԱՐՄԻԴ. — Զհանդամը իր գլուխը, ինչ անում ե եստի,
թնդ անե, թաք իսալսումը բեաբրու չըլի անում:

ՔԱԼԻ. — Դիմ քու միզ ե, ինչ իս անմիդ երես շանց տալի.
Նրա լպստած գլուխն ել:

ՓԱՐՄԻԴ. — Եստի մտիկ, յես իմ նրան երես շանց տալի.
մե աստձու բարգութին ե գլխիս, ելի. ուրոր գնամ, շվաքի
պես պիտի հիդս ըլի:

ՔԱԼԻ. — Ալսար չիս կանա մե որ իստակ վուտը կտրի նրանն
ես՝ զմնց:

ՓԱՐՄԻԴ. — Վուր փողոցումն ել ճամփա չտա ինձ: Ո՞ւզում
իս մե մատը միզը շինե քախկումը:

ՔԱԼԻ. — Ել մի իսուի հիդը:

ՓԱՐՄԻԴ. — Վուր գլխամեռ ուզում ե նրա հիդ խոսիլը. խո-
սիս, չխոսիս, նրա համա դիմ մեկ ե:

ՔԱԼԻ. — Բաս ինչ պիտի անինք ալսար:

ՓԱՐՄԻԴ. — (առանձին:) Զահըումար ու աստձու կրակ. ձիր
ռաստ գալու սահաթն ել անիծվի:

ՔԱԼԻ. — Չիս իմանում:

ՓԱՐՄԻԴ. — (չարանալով:) Տ՛ա, ոռն ել ինչ իս ձիու ճանջի
պես կպի, իմ ջիգըն ել ե հերիք ինձ: (Զեռքը ծեռքին խփե-
լով:) Գնաց, ելի. անշնուք իս, անշնուք:

ՔԱԼԻ. — Յ' ես ինչ անիմ, վուր զուն փուղը խնահիս. աբա
մե հազար թուման կու տելիր, տիս կուլեր թե չե:

ՓԱՐՄԻԴ. — Նրա հորն ողորմի. հազարով իս նրա վրա լավը
կա:

ՔԱԼԻ. — Յ' ես գիդիմ ումն որ ասում իս. գե, բի, ելի, եսոր
եվետ շինինք:

ՓԱՐՄԻԴ. — (ծաղը անելով:) Բի, ելի. ինչ հիշտ-հիշտ ա-
սում իս. թթան ծառ ե վուր մե խփելով հազարը մետի վեր
թափի: Իմ մասեթնին ետենց եժան չգիդենաս. ամեն մեկի
համա քսան ջեր հոքիս ծախիլ իմ:

ՔԱԼԻ. — Մուլափ տա են թալլափիան Սալոմեն. հեստի շի-
նիմ, հեստի շինիմ, խաչը գիդենա, վուր աշխրքի լափը գլուխն
ածիմ. մե ռաստ գա: (Բարկացած դուրս ե գնում ծախս դռնից:)

ՏԵՍԻԼ Ը

ՓԱՐՄԱԿ, մենակ:

Վուրն ինձ թամաշա արա... Մաւլափ, Ոսեփ, հեստի որ
կանգնեցնիմ գլխիտ, վուր դիփ (աջ ձեռքի բթամատը ցույց
տալով) ես ես՝ զադա ըլիս լաց ըլում, Շատ վուխտ եր մահա-
նա եյի պտում ու աստուծ ուստ երի: Են հմապարտ-հմապարտ
վուր խոսում իս, տիս թե վուտիս տակը վունց իմ թափիլ-թա-
փիլ բերում քիզ: Ինձ փինաչի Մաթուսի վուրթի Փասո կոսին:
Մեմե ախմախ ել վուր ասում ե թե՝ փլանը յա փստանը վուն-
չիչ չուներ, կոսե, ու մերաշ մարթ վունց դառավ, կոսե, եսենց
դառավ, այս ես աշխարքը միղը կարաս ե. ով շերեփը ձեռին՝
մեկին գեսը կու բոթե, մեկելին դենը, ու շատ փալին ինքը կու
փախցնե,՝ դոչաղը նա չե, անումն ու պատիվն ել նրանն ե.
ամա ով հմապարտ Ոսեփի պես բոլորքը կու կանգնի ու հիրթին
կու մնա, դառավ իշի մարտիրուս: (Մտնում ե Դարչոն դիմացի
դոնից:)

ՏԵՍԻԼ Թ

ՓԱՐՄԱԿ, ԴԱՐՁՈ

ՓԱՐՄԱԿ.—Դարչո... Ես ի՞նչ չուստ եկար:
ԴԱՐՁՈ.—Եստի եվետ ուստ եկավ Միխոն, ասավ վուր
կանչում իս:

ՓԱՐՄԱԿ.—Հա, խիստ հարկավուր բան ունիմ: (Նստում
են) Ես ուր իս ելի:

ԴԱՐՁՈ.—Կոմբոստինց Յագորի մող. մե քիչ նիսիա կեր
նրա գրա, ես շաբթին ոխաց չեր իմ ելի:

ՓԱՐՄԱԿ.—Խիստ ջանջալն ե. իժում, երիտ:

ԴԱՐՁՈ.—Վա, ջանը չեր գուս գա: Ել գուքնեմեն չհիռացա.
ինչ մուշտարի եկավ, նրա մող երես ժեշտ շինեցի, աստուծ
գիդենա, դիփունի մող նուր մեկանց ուզեցի. չարեն կտրվեցավ,
ամութու վուրգիոր ելավ ճարից ու երիտ:

ՓԱՐՄԱԿ.—Ետենց, վուրթի, ետենց, ետենց ժաժ արի վուր
մարթ դառնաս: Ա՛յ, ի՞նձ թամաշա արա, վուրթի. մե որ կեր գլխումս
փամփելով Փասո եյին կանչում, իժում դառա Փարսիդ, իժում

աղա Փարսիղ, հիմի Վասիլ Մաթվեյիչ, Քու տուլ վուր եյի, ինչ
եյի յես. ամա հիմի մարթ իմ, ինչ մարթուն պիտի. իմ մամա
Մաթուսը վուր սաղ ըլի, նա ել կու փքվի: Եստունք ենդուր
իմ ասում, վուր դուն ել չալիշ գաս՝ Դարչի Կիրիլիչ դառնաս,
քու մամի պողոսկապանութինը դիմունանցը մտեն գցիլ տաս:
Վուրթին ես հանգի բան և աշխրքումը. հոր անումը կու շինե
ել, կու քանդե ել.

ԴԱՐՁՈՒ. — Դուն ել լավ իս տեսնում, Վասիլ Մաթվեյիչ,
վունցոր չալիշ իմ գալի: Աստուծ գիղենա, գուքանը վուր բաց
իմ անում ասուտեհան, ել Միխոյի գալուն չիմ մնում, ավելը
վիր իմ կալնում, յ'ես իմ ավիլում, ու մուշարու մոդ վուն-
ցոր ժաժ իմ գալի, խո գուն ել տեսնում իս:

ՓԱՐՍԻՂ. — Տեսնում իմ, տեսնում, վուրթի, ու ենդուր ել
սիրում իմ քիզ. ես տարին ել թամամի, եկող տարի ննզիր կու
շինիմ քիզ, աստձնվ փուղը իմը, ջանը քունը, վուրթի:

ԴԱՐՁՈՒ. — Աստուծ վուրթիքդ զրացնե, յ'ես ել քու ճրաքն
իմ. միթամ մե ծառ իմ, տնզիլիս, ումիկ ունիմ վուր լավ խեր
անիմ ու գուն ել վրես ուրախանաս: (Ազ ու ծախ նայելով յեկ
մտերմարար) Են փթած ապրանք ել սաղացրի, այ:

ՓԱՐՍԻՂ. — Ե՞հ:

ԴԱՐՁՈՒ. — Աստուծ գիղենա:

ՓԱՐՍԻՂ. — Ետ ում վրա:

ԴԱՐՁՈՒ. — Մե սղնաղեցի յեր: Երկու թոփ լավը խառնեցի
մեջն ու աճկիրն արլանդվա արի. դե, տանե հիմի ու վայ տեր
կանչե:

ՓԱՐՍԻՂ. — Իժմամ, նիսիա:

ԴԱՐՁՈՒ. — Վահ, գիշե իմ. վժւր որն իմ փթածը նիսիա ծա-
խի, վուր հիմի եյի ժաժ եկի ենենց: Մե իմքին սուտ պականց-
րի, խաթրիչուն միթամ, ու փուղը թամամ առա. գնա վուր-
գիոր իրն ասե, ենդի ել իմն ասե:

ՓԱՐՍԻՂ. — Ա՛յ, 'Պոչաղ Դարչո ջան. Էտենց, Էտենց, վուր-
թի. յ'ես քիզ ասում իմ վուր գուն մարթ կու դառնաս. թային,
թային մարթ կու դառնաս:

ԴԱՐՁՈՒ. — Ումիկ աստձու: Ուրիշ մե հրամայե, Վասիլ Մաթ-
վեյիչ, ե. դուքանը մենակ ե:

ՓԱՐՍԻՂ. — Լարթ, կինաղամ մտես եր ննզնում, Գուլա-
րինց Ոսեփը թե ձեռաց փուղ ուղե դուքնեմեն, ել մե գրոշ
չտաս:

ԴԱՐՁՈՒ. — Վահն, ի՞նչ եւ պատահի:

ՓԱՐՄԻԴ. — Խիստ ջրգըն ունիմ նրանք:

ԴԱՐՁՈՒ. — Ե՛ս ել պակաս ջրգը չունիմ. մեւ ասմ՝ ի՞նչ խարար եւ. հչովու վուր մարթահեսար չեւ գցում:

ՓԱՐՄԻԴ. — ԱՇ, յ՛ս նրան կու շանց տամ հիմի. նրա առողութը մեւ շալակ խուտի նման բան եւ, մեւ սպիչկեն հերիք եւ, հըմ. մեւ նմուտումը կու բլրա:

ԴԱՐՁՈՒ. — Տասն ել չիմ խնահի. մեւ ասմ՝ ձեռնեմես ի՞նչ պիտի դա, մնացածը յ՛ս գիդիմ...

ՓԱՐՄԻԴ. — ԱՇ, ես սահաթիս: Դուն ինձ ասա, Դարչո ջան, մեւ շափաթ բան ու գուրձեմետ վուր հիդ ըլիս ննդի ու շատ պտրտելով մերումը մեւ լավ խնձուրի ծառ ըլիս գթի, են լավ թուրաշագուր խնձուր, վուր զորդի պես կիտած ըլի, վուր դուն ել ասիս թե՝ համ, ես եյի ուզում, ու ինչըու գնաս տուն վուր քթուցը բերիս, տեսնիս վուր քու հալալ քթուցը մեւ անշնուք մարթ բան ըլի ուզի տանեմետ ու եկիլ ըլի քու գթած ծառը թափ ըլի տվի ու են քու գողալ խնձուրը տանում ըլի, են եւ քուքթուցով...

ԴԱՐՁՈՒ. — Վահ, վայ, վայ, վայ...

ՓԱՐՄԻԴ. — Որենք եւ:

ԴԱՐՁՈՒ. — Վաւր՝ զանցի որենք եւ:

ՓԱՐՄԻԴ. — Դուն ինձ ասա՝ ի՞նչ կոնիս:

ԴԱՐՁՈՒ. — Վահ, ենդի եվետ կինձումը կու խփիմ ու ձեռնեն կու խլիմ խնձուրն ել ու քթուցն ել:

ՓԱՐՄԻԴ. — Ու թե խնձուրը չկմնացիր:

ԴԱՐՁՈՒ. — Վահն, քթուցը ել մեւ նմուտ չիմ տուր տա. ենդի եվետ վեր կոծիմ. կու թնդնիմ վուր իմ ամագը մուքթ կորչի:

ՓԱՐՄԻԴ. — ԱՇ, զորանաս: Ասում իմ, եւ, վուր մարթ կու դառնաս: (Մոտենալով.) Թիմեն ի՞նչ թախկացնիմ, Դարչո ջան, տեսնում իս վուրթու պես սիրում իմ քիզ:

ԴԱՐՁՈՒ. — Գիդե աստուծ, վուր յ՛ս ել քիզ հոր պես պաշտում իմ:

ՓԱՐՄԻԴ. — Գիդիմ, գիդիմ... Տհ, ախար ախչկաս համա մեւ լավ փեսացու ելի գթի, մեւ շաբաթ ավելի խոսում եյինք ու ենց են եւ, բանը պրծած եր, ուզում եյինք եսոր-երուց վրա բերի. մի ասի գուն՝ ես քու Ռսեփը միր խոստացածի վրա մեւ իմքին ափելցնում ե ու իրիգուն ախչկան նշնում եւ:

ԴԱՐՁՈՒ. — Ո՛հ, հո, հո, հո... այ, անաստուծ մարթ:

ՓԱՐՄԻԴ.—Աբա, իժում են ել ում փուղով. իմը կուլի,
Ելի:

ԴԱՐՁՈ.—Ետ ե, Ետ, խնձուրն ել փախցրիլ ե, քու արիլն,
ու քթուցն ել քունն ե բանեցնում, Ելի:

ՓԱՐՄԻԴ.—Բաս, յես ել ետ իմ ասում, Դարչո ջան, Ետ
խնձուրը տարավ՝ նա փայտա, քթուցն ել հիդը չկորչի ասում իմ:

ԴԱՐՁՈ.—Վահ, վհւնց կանա:

ՓԱՐՄԻԴ.—Ով գիդե, նրա բանը ուրիշ հանգն ե երկում.
մեկ ել տեսար ախչկան փսակից ու սումբեն վիքաղից. իժում
գնա ու հիդը դավի արա, ել ինչ կու դուս գա:

ԴԱՐՁՈ.—Վահ, կեհամ ես սահաթիս եվեա գուղիմ:

ՓԱՐՄԻԴ.—Յես Միխոյին զրգեցի. ամա ումիկ չունիմ
վուր ես սահաթիս եվեա տա, ու քիզ ենդուր ապսպեցի, վուր
մե լավ ոմքին գթնիս, փուղիրս չկորչի:

ԴԱՐՁՈ.—Մե ազգոկատ գիդիմ, մե ազգոկատ, Վասիլ Մաթ-
վեյիչ, վուր յերիք սահաթումը դուքանը կու մհրիլ տամ:

ՓԱՐՄԻԴ.—Դոչաղ, Դոչաղ, Դարչո ջան. յես քիզ ասում
իմ վուր մարթ կու դառնաս:

ԴԱՐՁՈ.—Լավ ուստի աշկիրտը լավը կուլի, Ելի:

ՓԱՐՄԻԴ.—Դե, գնա, մի ուշացնի:

ԴԱՐՁՈ.—(գնալով.) Մե սահաթ չիմ քաշեցնիլ տա, քու
ազիզ արիվն իմ ասում:

ՓԱՐՄԻԴ.—(հետեւից.) Գնա, տեր ընդ քիզ. (Դարչոն
դուրս ե գնում դիմացի դոնից:

ՏԵՍԻԼ Փ

ՓԱՐՄԻԴ, մենակ:

Դե, գնա, Ոսեփ, ինչ ձեռնեմետ գա, հիմի են արա. Տասը
մում պիտի վասիմ քիզ համա, վուր հոքիտ ու մարմինդ գցե-
ցիր ձեռս ու իմ ճանգը ննդար. (Դուրս ե գնում ազ դոնից
հաշվեմատյանը հետը տանելով:)

ՏԵՍԻԼ ՓԱ

ՔԱԼԻ, հետո ՍԱԼՈՄԵ

ՔԱԼԻ.—(դուրս գալով ծախ դոնից.) Մտիկ, մտիկ ես թավ-
լոփիանին. (Բաց անելով լուսամուտը, դուրս ե նայում յեզ-

կանչում:) Եստի արի, քա, եստի, չիս իմանում. Սալոմե, Սալոմե, քա, Սալոմե... Հա, յես իմ, յես իմ կանչում. մե սահաթ եստի արի: (Հեռանում ել լուսամուտից), Գալիս ե... Մուլափ տու դուն, բենայա, չե ել ամանչում. թե աշխարքի լափը գլուխդ չածիմ ու կու տեսնիս,

ՍԱԼՈՄԵ.—(Նորաձեզ տարազով շրեղ հազնված յել ծեռքին հովանոց, մտնում ե դիմացի դոնից) Ի՞նչ եյիր կանչում. բարի լուս, վժւաց իք: (Ձեռք են տալիս միմյանց:)

ՔԱԼԻ. — Փառք աստծու, համեցէք, նստի: (Նստում են:) Ախչկատ նշնեցիր:

ՍԱԼՈՄԵ.—Հա, Քալի ջան, քու նինոյի բախտավորութենին ել աստուճ արժանի անե, իրիդուն նշնեցի: Հետի փեսա ձարեցի, հետափի, վուր կոսիս խոխոր ըլի. ուրախու ել վուտիս վրա շիմ կանացի կանգնի:

ՔԱԼԻ. — Երեսդ պարզ կենա.

ՍԱԼՈՄԵ.—(այլայլվելով,) Ի՞նչ խաբար ե, չիմ իմանում: ՔԱԼԻ. — Մե լավութին եյիք պարտ, արիք, ելի:

ՍԱԼՈՄԵ.—Ի՞նչ իմ արի:

ՔԱԼԻ. — Ել ի՞նչ պիտեյիր անի, փեսիս ձեռնեսես խլեցիր ու միթամ վունչիչ ելի:

ՍԱԼՈՄԵ.—Աբա, Քալի ջան, ետ խմակ ե, վուր դուն իս ասում:

ՔԱԼԻ. — Սհւ, սհւ, Սալոմե, վուր ի՞նչ անց ե կացի, դիփ մեմեկ գիդիմ:

ՍԱԼՈՄԵ.—Վուր, քոռանամ յես. ետ ինչի՞ր իս ասում, Քալի ջան:

ՔԱԼԻ. — ԶԵ, չեյիր գիդի վուր յես եյի տալի:

ՍԱԼՈՄԵ.—Աբա ետ ի՞նչ խոսկ ե. դուն ինձ բան ասիլ իս:

ՔԱԼԻ. — Յ'ես վուր չիմ ասի, ասողը խո առավ:

ՍԱԼՈՄԵ.—Ինձ ոչով վունչիչ չե ասի:

ՔԱԼԻ. — Սուտ ել վուր խոսում ե, ուցխո չե, քան:

ՍԱԼՈՄԵ.—Սուտը սատանին ե, ինչի՞ր իս շառիր գցում վրես:

ՔԱԼԻ. — Աբա դուն ու քու հոքին, գրհւստ ասա. չեյիր իմացի վուր յես եյի տալի նրան ախչիկ:

ՍԱԼՈՄԵ.—Ի՞նչ անիմ վուր իմացիլ եյի. իր որումը տղի համա տասը կու հիշի, մեկը գուղե:

ՔԱԼԻ. — Տիս, տիս վուր գիդացիլ իս, ել սուտ ժւր իս խոսում:

ՍԱԼՈՄԵ. — Ուցնավուր իս, քա. զերացիլ իմ. մարթ իս զրգի ինձ մոդ թէ ոմքնու բերնով ապսպրիլ իս, վուր յես փլանին ախչիկ իմ տալի դուն չտան: Ախար, յես ի՞նչ միդ ուն ետումը, վունցոր յես իմ գիդացի, ենենց ել դուն իս գիդացի... ինձ վուր քիքս իս գալի, ել դուն ժւր եցիր խոսում ու մարթիք մեջ դցում:

ՔԱԼԻ. — Առչի գամը յես խոսեցրի:

ՍԱԼՈՄԵ. — Առչի գամը մարթ տափումը շատ ծաղիկ ետեսնում, ամա կտրողը կտրում եւ ու տանում ե:

ՔԱԼԻ. — Վուր մուլափ տափիր, եգերս յիս եյի կտրում:

ՍԱԼՈՄԵ. — Իժում, ինչի չկտրեցիր, քա.

ՔԱԼԻ. — Տուր տվիր գանամ. միր խոստացածի վրա ել կունձի փուղը վուր ավելցրիր ու իրան տվիր, հենց գիդիս, չիմ գիդի:

ՍԱԼՈՄԵ. — Վուր քոռանամ յես, Քալի ջան, արա ետ վնւնց իս ասում, զուք ի՞նչ եցիք տալի գանա:

ՔԱԼԻ. — Ինչ եցինք տալի, միթամ չիս գիդի. ութ հարուր թուման:

ՍԱԼՈՄԵ. — Ա՛յ տերը բարի տա քիզ. մինք վուր ոխտը հարըսեն ավելի չինք տվիր, ես ավելցնիլ ե:

ՔԱԼԻ. — Դիմախ, դիմախ, դեմ եր բերում:

ՍԱԼՈՄԵ. — Վուր, իմ. Նատոն պրծնի ամեն չարեմեն, վուր զուրթ իմ ասում:

ՔԱԼԻ. — Ետ ե վուր ավտացի:

ՍԱԼՈՄԵ. — Ի՞նչ ե ասում, քա. իմ ախչկա անումը սուստ իմ որթում ուտում:

ՔԱԼԻ. — Բաս չե ու զուրթ իս ուտում, ութ հարուրն եթող ու ոխտը հարուրն ուղից:

ՍԱԼՈՄԵ. — Յ' ես ինչ անիմ ետումը, քա. հալբաթ քու ախչկան չհավնեցավ ու ենդուր չուզից:

ՔԱԼԻ. — Ի՞նչն ե պակաս, վուր չհավնեցավ. քու ախչիկը կուլի լավը, թավլափիան, չե ել ամանչում:

ՍԱԼՈՄԵ. — (վեր կենալով տեղից:) Թավլափիան ել իս ու չիս ել գիդի. մտու համա եցիր կանչում, քա: Քու ախչկա հատն ու կտուրը կուլի իմ նատոն. յ' ես ի՞նչ անիմ, վուր քու ախչիկը լեն բերան ունենա:

ՔԱԼԻՒ.—Լեն բերան ել ունիս ու չիս ել գիդի, բեհայա, քու լպստած ախչիկը կուլի լավ:

ՍԱԼՈՒՄԵ.—Ի՞նչ ե ասում՝ լպստած, նրա քաղաքավարի խոսկ ու ջուղարին ել կու սազ գա: Քու ախչիան ասիս, վուր գիփունքն ասում ին թե տուտուց ե, ու դրուստը թե գուզիս, հենց ետու համա չուզից:

ՔԱԼԻՒ.—Հա, քու գլխի պատռվիլը գիդենսա, խիղճ տղին ձանգիլ իք ու խափում իք, մերաշ չտաք ինչոր խոստացիլ իք:

ՍԱԼՈՒՄԵ.—Միր բանը մինք գիդինք, Վուտս կոտրվիլ եր ու չեյի եկի եստի: (Գնում ե մինչեվ դուռը:)

ՔԱԼԻՒ.—Ինչըու բողազը պարտկումը վուր խիստվում իք, մերաշ չհամբրիք:

ՍԱԼՈՒՄԵ.—(հետ դառնալով:) Պարտկումն ինք թե պարտկումը չե, ձիգ պես գողնովի փուղիր խո չունինք:

ՔԱԼԻՒ.—(վեր թռչելով տեղից:) Գուղ ել իս ու չիս ել գիդի, չեքիւն վրեա կու պատռաիմ, բեհայա, թավլափիան:

ՍԱԼՈՒՄԵ.—(մոտեցնելով իր չեքիւնն) Արա փորցե, Ելի, փորցե, տեսնիմ վնանց իս պատռում: Մինձի մինձ չե պատըռավում, քա, (զզվանքով) փինաչի Մաթուսի հարսը:

ՔԱԼԻՒ.—(յերկու ձեռքով չանչ անելով:) Ը՞հ, խողիմ քու բեղովլաթ գլուխը սա ել վուր ոմքնու մասիարա ըլի գցնեմ, բաղմնչու ախչիկը, կապ-կարած, աննամուս:

ՍԱԼՈՒՄԵ.—Կապ կտրածն ել դուն իս ու աննամուսն ել չաղար վուր ճիկըփիս, գիփունքը գիդին վուր աշխարը ու յերգիր իք թալնի ու ենդով առաջ եկի. քու դածումպլա աշրած գլուխն ել խուղիմ:

ՔԱԼԻՒ.—Մե մտիկ ես թավլափիանին... (Հարծակվում ե յեվ չեքիւնն պատռում,) Կապ կտրած...

ՍԱԼՈՒՄԵ.—Քա, քա, քա... (Բոնում ե Քալինի կավքը յեվ քաշքառում:)

ՔԱԼԻՒ.—Քա, քա, քա, քա...

ՍԱԼՈՒՄԵ.—Մե մազ չիմ թողնի գլխիտ... (Ապշած նայում ե ձեռքումը մնացած կավքին:)

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՐԱՆՔ, ՈՍԵՓ

ՈՍԵՓ.—(մտնում ե դիմացի դռնից:) Վահ:

ՔԱԼԻ.—(խլելով Սալոմեյից կավրը:) Վահ, քռուանամ

յես: (Ամոթահար դուրս ե վազում աջ դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԳ

ՍԱԼՈՄԵ, ՈՍԵՓ

ՍԱԼՈՄԵ.—(չիքիլեն ուղելով, առանձին:) Մայմուն...

ՈՍԵՓ.—Ես ի՞նչ խաբար ե,

ՍԱԼՈՄԵ.—Աստուծ վնչ գիղե իմ գլուխը քուչումը ինձ
համա միամիտ գնում եյի, հայհարա դիվիր կանչից ու չիքիլեն
գլխիս պատուտից փեսիս ձեռնեմես ինչի՞ խլեցիր, կոսե:

ՈՍԵՓ.—Շատ լավ ել ե արի, աճկա ել ե հանիր. ետ են գի-
ղենա վուր ինձմեն թաքցրիլ ու առանց ինձ վիցը ոխաը շի-
նեցիր:

ՍԱԼՈՄԵ.—Վուսս կոտրվիլ եր ու տուն չեյի եկի ես քար
ու քանդ տանը. միթամ երես պահեցի. քանդվի ու բրիշակ ըլի
սրանց տունն ել ու տիղն եր (Զիքիլի պատուածը գնդասեղով
կպցնում ե), Աճկը հանեցի, յ'ես ել կավին գլխեն վեր բերի.
գնա վուրդիոր իրն ասե, ենդի ել իմն ասե: Մերաշ վուր դուս
փախավ. ոչով չիմանա միթամ, վուր կավքընիրն ել ենենց
դալր ունե, վունցոր ամեն բան:

ՈՍԵՓ.—Ինչի՞ գեղինը չե պատռվում ու դեվիր չե տանում
ինձ ես սահաթիս, քիզ ել հիդը:

ՍԱԼՈՄԵ.—(լաց լինելով:) Յ'ես ի՞նչ միդ ունիմ, քա:

ՈՍԵՓ.—Թալսկըցու կնգան թամաշ արեք. ետ ի՞նչ ե քու
հալը: Գնա, գնա, վուր ել ոմքին չտեսնե քիզ եստի. քիմեն մե
բալումը չիմ ու երկուսումը. գնա, աստծուն աղանչաք արա,
վուր կեսորը կեսզիշիր շինե ու քուչեքը սութն ու խավարով
լքցնե, վուր ոչով չտեսնե թե գլխիտ պատռած չիքիլա ունիս:

ՍԱԼՈՄԵ.—(աչքերը սրբելով.) Վայ իմ միխկը քու ձե-
ռին: (Դուրս ե գնում դիմացի դռնից:)

Ոսեփ, մենակ

Ա՛խ, աստուծ, ես ի՞նչ հանդն իս ստիզծի աշխարքը. մեցավ վուր տալիս իս մարթու, մեկելն ել հիդն իս վրա բերում, վուր ինչրու մեկիմեն ազատվի մարթ, մեկելը դռանն ե կանգնած, վուր պակասը թամամ անե, իմ պարտկը հերիք չե՞ր, վուր կընդդերանց կոիմ ել վրեն ավելցրի՞ր:

ՏԵՍԻԼ ԺԵ

ՈՍԵՓ, ՓԱՐՄԻԴ

ՓԱՐՄԻԴ.—(մտնելով աջ դռնից, բարկացած:) Բաս յ'ես մարթ չիմ ըլի...»

ՈՍԵՓ.—Բարի լուս, պարուն:

ՓԱՐՄԻԴ.—Ել ինձ վունց քու բարիլուսն ե հարկավուր, վունց քու աստծու ռարին, Եկիլ իս կնդատ քնմագ անելու, Ելի արի, Ելի արի, դուն ել ի՞նձ ծեծե, պակասը թամամ արա, ետ ել իմ փուրի շահը կուլի:

ՈՍԵՓ.—Հանգստացի, պարուն, ինչի՞ր իս ասում:

ՓԱՐՄԻԴ.—Մաղիրը վուր գլխեն գլւտիլ ե, ես անպատճութինը կու բախշիմ յ'ես:

ՈՍԵՓ.—Ի՞նչ ե մնացի բախշելու, հեր ոխնած, վուր բախշիս, նա նրա չիքիլեն ե պատոի, նա ել նրա կավին ե վեր բերի:

ՓԱՐՄԻԴ.—Աբա չիքիլեն կավքներու մազերու հիտ գուքան:

ՈՍԵՓ.—Ե՛ս ձեռը վիկալ, քու հորն ողորմի, կընդդերանց կոիվը ի՞նչ քու լայիդ, յա իմ լայիդ բան ե:

ՓԱՐՄԻԴ.—Դուն ել ետենց ասա ու տիս թե լիկորի տառդին շիմ կոցնի յ'ես ձիդ:

ՈՍԵՓ.—Դնջացի, դնջացի, պարուն Փարսիդ:

ՓԱՐՄԻԴ.—Յ՛ես ձիդ դնջանալ կու շանց տամ:

ՈՍԵՓ.—Ախար, վուր քիզ չե սազ գալի ետ բանը՝:

ՓԱՐՄԻԴ.—Չիքիլեն պատոից, կոսե, չիքիլեն ինչ ե, մեառնովի իմքին ե, Ելի, շատ ըլի նրա գինը երկու մանեթ:

ՈՍԵՓ.—Ե՛ս, հեր ոխնած դուն ել վանց թե քու կնդակավքնիւն ե ելի մորուց, ի՞նչ իս ետու համա նիզանում, Երկու մահեթանուց չիքիլումը երկու գրոշանուց լենտ ե կտրվէ վիրչն, Ելի..., ենդի չե հն ինարը, կպցնե ու կապե, Ելի:

ՓԱՐՄԻԴ.—Չե, չե, յ'ես ես անպատճութինը չիմ բախշի:

ՈՍԵՓ.—(առանձին:) Ա՛խ, աստուծ:

ՓԱՐՄԻԴ. Մաւափ տվիք հալա:

ՈՍԵՓ.—Դե, ի՞նչ քեփիդ տա, Են արա, ախպեր... Յ՛ես եռտու համա խո չիմ եկի. Միխոյին դրդիլ եյիր:

ՓԱՐՄԻԴ.—Հա, բերիը փուզո, իս տու ես սահաթիս:

ՈՍԵՓ. — Ի՞նչ հանգն իս խոսում, պարուն. քու բիջ խո չիմ, վուր վրես բղավում իս. ում վրա իս բղավում: Բղավիլ չըլի, թե չե, հետի կու բղավիմ վուր լիզուտ փուրը ննզնի:

ՓԱՐՄԻԴ. — Վահ, փուղը դուն իս պարտ ու ելի դժւն իս հարբա գալի:

ՈՍԵՓ. — Փուղը վուր պարտ իմ, գլուխս խո քիզ վրա չիմ ծախի: Որինավուր հիդդ խոսում իմ, որինավուր ջնողաբ տու, հեր ոխնած:

ՓԱՐՄԻԴ. — Յ'ես վունչիչ չիմ գիդի. փուղս բերիլ իս թե չե, դուն են ասա:

ՈՍԵՓ. — Վահը որն իմ քու փուղը կերի, վուր հիմի ուտիմ:

ՓԱՐՄԻԴ. — Դե, բի՛, ելի՛:

ՈՍԵՓ. — Ախար, են որը...

ՓԱՐՄԻԴ. — Ախար-մախար չիմ գիդի:

ՈՍԵՓ. — Պարուն Փարսիդ, երաղ իս տեսի թե ինչ խարար ե:

ՓԱՐՄԻԴ. — Երաղ իմ տեսի թե չիմ տեսի, փուղս տնւ ես սահաթիս:

ՈՍԵՓ. — (աթոռ վերցնելով յել նստելով:) Յանդիշ իս, պարուն Փարսիդ, յանդիշ համեցեք նստի:

ՓԱՐՄԻԴ. — Փիե՛:

ՈՍԵՓ. — Դուն ինձ ասա՝ մարթ իս ու գլխիտ գդակ ունիս ծածկած թե չե:

ՓԱՐՄԻԴ. — Գդակ ունիմ թե չունիմ, փուղս տնւ ես սահաթիս, հենց ես սահաթիս:

ՈՍԵՓ. — Տո՛, գժվիլ իս թե ինչ խարար ե:

ՓԱՐՄԻԴ. — Հիմի գի՛տ ել ասա. իմ հախն ե, յես ու իմ աստուծը:

ՈՍԵՓ. — Ախար, են որը հինգ հարուր թումանը վուր տվի, դուն չասիր վուր մնացածը մե ամսվան եղնեն ըլի, կոսէ:

ՓԱՐՄԻԴ. — (նստելով:) Ի՞նչ անիմ վուր ասի, հիմի ինձ հարկավուր ե:

ՈՍԵՓ. — Հարկավուր եր, ախպեր, ենչախն եվետ կոսեցիր, ել տիղ ե տիղ չեյի անի. ես նմուտիս վուր ուզում իս, յես վժւրդի ստեղծիմ, աստուծ խո չիմ:

ՓԱՐՄԻԴ. — Վուրդիոր գուղիս, ինձ ես նմուտիս հարկավուր ե:

ՈՍԵՓ. — Տեր ողորմած աստուծ: Տո՛, ել մե ամիս վադա

մւը եյիր տալի ու երկու շահի շահը վրեն մւը եյիր գալի ևս
դլսեն, թե ետենց եր:

ՓԱՐՄԻԴ.—ի՞նչ վագա, արա թուխտ մւնիս, հանե:

ՈՍԵՓ.—Վայ, խոսկը թուխտ չեր, ել ի՞նչ թուխտ եր հար-
կավուբ:

ՓԱՐՄԻԴ.—Յ' ես վունչիչ խոսկ չիմ ավի:

ՈՍԵՓ.—Խոսկ չիս տվի՞. տն, ես սահաթիս չեր վուր ելի ասի՞ր:

ՓԱՐՄԻԴ.—(վեր կենալով:) Զե, չե, վունչիչ չիմ ասի:

ՈՍԵՓ.—(նույնապես:) Ո՞հ, տեր աստուծ, ես ի՞նչ տեսա ու
աս ի՞նչ իմացա: (Մոտենալով Փարսիղին:) Ե՞ս ե վաճառականի
խոսկը բաս, վուր գեղնի հիդ հավսրում իս: Մե խջալաթ քաշե,
ե: (Կոնիցը բռնելով առաջ ե տանում դեպի հայելին:) Մտիկ,
մտիկ, մե երեսարքիտ մտիկ ինչի՞ իս կանանչում ու մավա-
նում, թե չիս ասի:

ՓԱՐՄԻԴ.—Թաղ, թնդ ձեռա:

ՈՍԵՓ.—(Փարսիղի կուռը ամուր բռնած:) Խճպտանքդ
վուր խուրը թաղիլ իս ու հօքեմես ձեռը վիր իս կալնում, սե
մս հալիլեմեն ել ե մայինց ամանչի, ե: Ի՞նչի՞ ե պոռշնիրդ դիղ-
նում, ինչի՞:

ՓԱՐՄԻԴ.—Տն, թաղ ասում իմ, ե: (Թափի ե տալիս կուռը
յեվ ազատվում:) Կոսիս թե պարտկան տեր գուն ըլիս:

ՈՍԵՓ.—Դուն իս, դուն, պարտկան տերը. գեղինը մանիմ
են լավ ե, կանց թե քու հանգը պարտկան տեր ըլիմ. ել ի՞նչ
մարթ իս գուն հորեսի գենը իմ աճկումը. զիդացի վուր գուտի
ցիխը լավ ե քի վրա. փու նամուսին: Ել ի՞նչ կոնիս դուն
աճկիր, պառշնիր, թշիր, մե ժեշտ վիկալ երեսիտ կպցրն ու ե-
նենց ման արի հորեսի գենը:

ՓԱՐՄԻԴ.—Յ' ես քիզ ասում իմ փուզս բի՛ ես նմուտիս, թե
չե վեկսիլնիրտ ես սահաթիս տարա սուրբ... Են ախչկատ
վուր մարթու իս տալի ու են՝ զազա փուզը խոստացիլ իս, իմ
փուզերով գանա: Փուզիրը համբրիս տաս, ու ինձ գառ ու գմբ-
դակ թողնիս:

ՈՍԵՓ.—Մի վախենա, մի վախենա, պարուն. դուն ել վուր
աղանչաք անիս, ել քու փուզը չիմ պահի, աստուծ մի արացե:
Եքուց ինչը իս չախը դիմ մետի թամամ կու ստանաս ու ե-
քուցվան դենը ես երեսը սիմեա, թե քու երեսը տեսնե:

ՓԱՐՄԻԴ.—Զե, չե, հենց ես սահաթիս ելետ:

ՈՍԵՓ.—Արի, արի, թող հենց ես սահաթիս եվետ ըլի. ցավեմեն մարթ քանի չուստ ազատվի, լավն են եւ իս տու են չարչու բարաթը... Ամա մի տա, դուն ինձ չխա ալտա, չաժիս վուր ինձ ավտաս. դուն ինքդ վիկալ արի հիդս, գնանք ես սահաթիս եվետ փողոցումը խուրդա անինք ու քու փուղը թամամ վիկալը... Թող մե իմքին զարար ել անիմ, հաջաթ չե, են զաքարի դիմնալը հիշտ ե ինձ համա, կանց քի մոդ խոսիլը, ենդուր վուր ամեն մե քու խոսկը հազար զարարի վրա վաթար ե: (Լոռություն:)

ՓԱՐՄԻԴ. — Հըմ:

ՈՍԵՓ.—(առանձին, ցածր:) Զահրումար: (Փարսիդին:) Զարչու բարաթը վիկալ, ասում իմ, չիս իմանում:

ՓԱՐՄԻԴ. — Ի՞նչ չարչու բարաթ:

ՈՍԵՓ.—Ռոստոմի բարաթը:

ՓԱՐՄԻԴ. — Ռոստոմի բարաթը. են բարաթի մոդ դռւն ի՞նչ դավի ունիս:

ՈՍԵՓ.—Վժւնց թե՝ ի՞նչ դավի ունիմ. ետ ել խո խոսկ չե վուր հաշա իս ուտում. թուխտ ե, թուխտ ձեռիս:

ՓԱՐՄԻԴ. — Իմ ձեռին վուր թուխտ ըլի, քիզ ի՞նչ դավի, ախակեր. յես զիդիմ ու Ռոստոմը:

ՈՍԵՓ.—Դուն զիդիս ու Ռոստոմը... (Լոռություն:) Տա, զուն զարթնի հաշա ուտիլը, թուրմե զուր ու ավազակ իս ելի: Թուրմե զուրթ ին ելի ասում, ինչ վուր ասում ին քիզ համա: Թուրմե զուրթ ե ելի, վուր զուն մարթիք իս թալնի ու ենենց մոդ արի կայինքդ: Թուրմե զուրթ ե ելի, վուր դուն քսանուն հինգ ոջախ իս քար ու քանդ արի, նրանց մումը հանգըրի ու ենդով քու մումը վառի... Հիմի իմ իմանում, հիմի, վուր ի՞նչ ասում ին, զուրթ ին ելի ասում... Հիմի ամեն բանին կու ավտամ. կու ավտամ, վուր ես կռեսկեքը, ես զիվանը, ես ստոլը, ես հալիկն, քու սերթուկը, քու գդակը, քու շապիքը, ամեն մեկը մեմե մարթ ե քիմեն թալնած. տար իմ ոսկրտանքն ել վրեն ավելցըրու ու պակասը թամամ արա..., Խճպտանքդ վուր քար իս շինի ու վունչիչ չիս իմանում, լավ զիգենաս, մե որ կու զարթի ու ամեն մեկին՝ ինչ եստի գարսած ե, ինչ վրես հաքիտ ե, ամենին լիզու կու տա ու մեմեկ, մեմեկ միտդ կու քերի քու արար մունքը: Գնա ու ենչախը ջնակար տու քու ստիդծողին: Փու, քու մարթ ասողին ել ինչ ասիմ: (Դուրս ե գնում դիմացի դռնից:)

ՓԱՐՄԻԴ. — (մենակ, բարձրածայն ծիծաղելով:) Փհա, հա, հա, հա... Մուլափ, մուլափ, զաղն եղի գամն ե... Տիս թե ի՞նչ

բան իմ ըերում յ'ես ձիք գլուխը... (Շարունակելով ծիծաղը.)
Հա, հա, հա, հա, հա... (Գնում ե դեպի ազ կողմի դուռը
վարագույրն իսկույն իջնում եւ)

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

Ոսեփի տանը յեվրոպական ճաշակով զարդարած շքեղ հյուրասինյակ և
նրա հետեւ նույնակես շքեղ մեծ դահլիճ, վորը բաժանվում ե հյուրասինյակից
հոյակապ լայն կամարով։ Հյուրասինյակի հատակը ծածկած ե գորգով, իսկ
տասատաղից յերկու սենյակներումն ել կախած են վոսկեղծ ջաներ վառ մո-
մերով։ Հյուրասինյակի առաջին կարգում (պլանում), աջ կողմը՝ բազմոց, ծախ-
կալմը՝ ընկողմարան։ յերկրորդ կարգում, աջ կողմը՝ մեծ հայելի և ծաղիկներ։
Ճախ կողմը՝ վառարան, վորի վրա զարձյալ հայելի, ժամացույց և անոթների
մեջ ծաղկե փնջեր։ յերրորդ կարգում կողմանակի դռներու Այս սենյակի մեջ-
տեղը՝ սպիտակ սփոսով ծածկած յերկայն սեղան, վորի վրա զրած են մի-
քանի կանգելաբրներ վառ ու հանգած մոմերով և լուսոյի արկող իր պարագայ-
քով։ Կամարի աջ ու ձախ սնկուններում զարձյալ կանգելաբրներ հանչած
մոմերով։ Դահլիճի մեջտեղը նույնակես սպիտակ սփոսով ծածկած և կիսով
չափ վառ կանգելաբրներով լուսավորված մի ուրիշ յերկայն սեղան, վորի վրա-
դարսած են դեղեցիկ վազաներով զանազան քաղցրավեներ, շաքարեղեն, պար-
սիմատներ, պտուղներ, անոթներով ծաղկեներ, շիշերով ըմպելիքներ և այլն
ըստ սովորության։ Խորքում՝ գաշնակ իր բոլորակ աթոռով և լուսամուտ-
ներ, վորոնց միջից յերկում ե լապտերներով լուսավորած պարտեզը։ Եերկու
սենյակներումն եւ, ուր հարկն ե, աթոռներ, բազկաթոռներ, փոքրիկ սեղան-
ներ զանազան զարդարանքներով, վառ ու հանգած լապտերներ, ծառեր, ծա-
ղիկներ, պատկերներ և այլն։ Բոլոր դռները, լուսամուտները և կամարը զար-
դարսած են թանգառին զրապեհներով և վարագույրներով։

ՏԵՍԻԼԱ.

ՆԱՏՈ, մենակ, գեղեցկապես զարդարված։ Վարագույրը բաց-
վելիս, աջ կողմը կանգնած, մեծ հայելու առաջ ուղղվում ե
յեվ կիսածայն յերգում յեվրոպական մի յեղանակ։ հետո հա-
նում ե ծոցից մի փոքրիկ լուսանկար յեվ սկսում ե հետը
խոսել հայելու մեջ։

Ա՛խ, դժւշկա, դժւշկա! (Լուսանկարը սեղմում ե կրծքին
յեվ համբուրում։) Մոն շեր, արի տանցավատ անինք! (Լու-

սանկարի հետ սեղանի շուրջը պարե զալիս պոլկա:) Տրա, լա, լմ... տրա, լա, լմ... տրա, լա, լմ... տրա, լա, լմ... (Նստում ե ազ կողմը:) Ուհ, դաթրեցա: (Զննում ե լուսանկարը յեվ յուրաքանչյուր անգամ համբուրելով:) Սաշա, Սաշեչկա, Սաշենկա, Սաշնորկա, Սաշորեչկա... (Նորից զննելով:) Պստի հոքի իս դրուստ: Ի՞նչի՞ իս ետենց սիրուն, սիվ աճկիր, իմ աճկիրն ել սիվ ե, բարակ ունքիր, (իր հոնքերը շոշափելով) իմ ունքի նման ե, պստի կոկոր բիխիր, յ'ես վուր բիխիր չունիմ... Դժւն սիրուն իս թե յ'ես: Զե, յ'ես սիրուն իմ: — Զե, յ'ես իմ սիրուն: — Զե, դժւն իս սիրուն: — Զե, յ'ես իմ սիրուն... (Վեր թռչելով տեղից:) Արա, արա... (Վազում ե դեպի նույն հայելին, վորի մեջ իրան համեմատում ե լուսանկարի հետ: Ալեքսանդրը մտնում ե դահլիճի աջ կողմից, գլխարկը ծեռքին:)

ՏԵՍԻԼ Բ

ՆԱՏՈ, ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆԱՏՈ.—(Հնկատելով Ալեքսանդրին:) Զե, դժւն իս սիրուն, դժւն: (Յեռանդով համբուրում ե լուսանկարը: Ալեքսանդրը ծածուկ մոտենում ե Նատոյին յեվ նույն յեռանդով պինդ համբուրում ե: Նատո, վախեցած:) Ա՛խ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Վողջունելով:) Դժւն իս սիրուն, դժւն, Նատաշա, մա շեր Նատաշա:

ՆԱՏՈ.—Ա՛խ, մոն շեր Սաշա, ի՞նչ հանգի վախեցրիր ի՞նձ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(Գրկելով:) Ա՛րի, մեկ ել պաչ անիմ, կու անց կենա: (Համբուրում ե:) Դժւն ել պաչ արա, ե:

ՆԱՏՈ.—(համբուրելով:) Ա՛յ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ետենց, այ, յ'ես ուփրո լա չի ետ թխտի վրա: (Գլխարկը վայր դնելով յեվ նատոյի ծեռքը բռնելով:) Ես ի՞նչ խարար ե... լոտո: (Նստում են աջ կողմը բազմոցի վրա, այնպես վոր Ալեքսանդրը գտնվում է նատոյի ծախ կողմը:)

ՆԱՏՈ.—Մոդ ին ելի շնահավուրելու: Բախչեն լիքն ե՝ դժւնադրով:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ա՛ա... մադամ դեղիդա, մադամ մամիդա, մադամ ձալն... Դժւն ել կու սարքիս ես հանդի վեչերնիր, Նատաշամ:

ՆԱՏՈ.—(քմծիծաղ տալով:) Հը՛ հը՛... մինք եսենց վեչերնիր չինք սարքի, մոն շեր Սաշա... սե մնվե թռն, Մինք տանցավանի վեշերնիր կու սարքինք. երկու շաբթենը մե ջեր, ժուր Փիքս, հինգափթեքը կամ յերիքշափթեքը. վուրը լավ կուլի, յերիքշափթեն լավ ե, հըա, Սաշա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(առանձին, յերեսը ծամածում ե:) Վհւնցոր գուզիս, շեր Նատաշա. գուզիս ամեն շաբաթ:

ՆԱՏՈ.—Զե, երկու շաբթենը մե ջեր լավ ե, Ա՛յ, Սանիչկեն, հիմի վուր մաղամ Զարինսկայա յե, նա ել երկու շաբթենը մե ջեր ունե:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Լավ, լավ, Նատաշա:

ՆԱՏՈ.—Յերիքշափթեքն, այ Սաշա, ու հինգափթեքը Կրուժոկումը տանցավատ կոնինք: (Ալեքսանդրը, առանձին, նորից ծամածում ե յերեսը:) Ամեն հինգափթե, այ, Սաշա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Խիստ իս սիրում Կրուժոկը, Նատաշա:

ՆԱՏՈ.—(արագ-արագ յեվ ծեռքը Ալեքսանդրի ուսին:) Կրուժոկն ով չի սիրի, են հանգի տիղը կու լի վուր մարթ չսիրե: Են երգեն զալեքը, շեր Սաշա, են բուդուարը, են ոթախնիրը, են՝ զաղա ախչէիրքը, են մուզիկեն, են զուքսը, ախ... (Գրկում ե:) Տանցավատ կոնինք, կու դաթրինք, տուն կեհանք հալիլի ոթախը, ենդի կու նստինք կու դնջանանք, կու խոսինք, կու ծիծաղինք...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Իժում ելի տանցավատ կոնինք, ելի կու դնջանանք, ելի կու խոսինք, ելի կու ծիծաղինք:

ՆԱՏՈ.—Պրելեստ պրոստո: (Համբուրում ե:) Լավ կու հաքնիմ, լավ կու զուքվիմ, ա լա գերնիկեր մոդ, վուր գիվունքն ասում ըլին թե՝ մտիկ, մտիկ, մոսիր Մարմարովը ինչ կնիկ ունե: Մեկ ել, Սաշա ջան, ուրփաթնիրը աբոնիմենտ կունենանք տեսարումը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(առանձին, կրկին ծամածուելով յերեսը:) Հիմի եստունք:

ՆԱՏՈ.—(շարունակելով:) Վերիվն, այ, ձախ կուրը, ֆուացիեն մողիկ ե ենդի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Շափթենը վուր երկու աբոնիմենտ ունենանք, ուփրու լավ չե, Նատաշա:

ՆԱՏՈ.—Ետ մե քիչ թանգ չի նստի, Սաշա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ի՞նչ անիմ թե թանգ կու նստի, քիզ համայ յես փուղ կու խնահիմ. գլուխս զրավ կու դնիմ քիզ համա:

ՆԱՏՈ.—(գրկելով.) Դուն ինձ խիստ իս սիրում, շեր Սա-
շա: ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Խիստ, խիստ, շեր Նատաշա: Տեսա թե չե,
ին որն եվետ սիրեցի քիզ:
ՆԱՏՈ.—Չիմ ավտում, չիմ ավտում, Սաշա, կավալերնիը
դիմ ետենց ին խոսում:
ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Այս, Նատաշա, գանա չ'ես նրանց նմանն իմ.
Նրանց լիզուն ուրիշ ե, սիրու ուրիշ ամա իմ լիզուն...
(ծեռքը կրծքին խփելով) այ:
ՆԱՏՈ.—(հեգնությամբ.) Գիշեմ, գիշեմ... չ'ես վուր բա-
ժինք չելի ունեցի, խոմ չեյիր ուղի ինձ...
ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Նատաշա, Նատաշա, ինձ անպատիլ իս ա-
նում, մա շեր: Բաժինքն ի՞նչ ե, ֆի:
ՆԱՏՈ.—Բաս խիստ իս սիրում ինձ:
ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Խիստ, խիստ, Նատաշա. ինչումը գուղիս
փորցե ինձ:
ՆԱՏՈ.—Դիշեմ ի՞նչ ե, Սաշա. իմ պլանինոն պետկը չե...
ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(գլուխը քորելով յեվ առանձին:) Ե՛լի
թագա իմքին:
ՆԱՏՈ.—(շարունակելով.) Մե լավ ոռյալ առ ինձ համա,
եսոր մաղաղինումը տեսա, խուն թուման ին ասում:
ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ի՞սուն թուման, ետ լավը չի ըլի, Նա-
տաշա:
ՆԱՏՈ.—Դնուշինկա, Սաշա:
ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Մե քիչ մուլափ տու դուն, Նատաշա. իմը
մե բարեկամ զագրանիցեմեն կու բերե հետի ոոյալ, հետի ոո-
յալ, գուր հարուր թուման, հարուր ու խուն թուման կու աժենա:
ՆԱՏՈ.—(համբուրելով Ալեքսանդրին:) Այս, Սաշա, դռւ-
շինկա, պտաշչիկա, գարագի, իմ հոքի: (Վեր կենալով.) Ես
սահաթիս գալիս իմ, գնամ լոտոյի համա լոբի բերիմ, թե չե
մամաշն կու ջգրվի... (Կիսաճայն յերգելով:) Թրա լի, թրա
լի. թրա լի լա լա լա լա... (Դուրս ե գնում հյուրասենյակի
ծախ դռնից:)
ՏԵՍԱՆՐԱԿ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, մենակ. տեղիցը վեր թուշելով, ծիծաղում ե:

Համ, համ, համ... Վեչեր, բալիր, կրուժոկ, աբոնիմենտ, զուք-
սիր, համ, համ, համ... միւսոն ունիմ թե ինչ ե... Յ'ես կի չիմ ու-

զի, վհարդի յե. հենց գիղենաս հինգ հաղար թուման ըլի բերում: Ետ իժում, իժում, Նատաշա, մե տաս տարվան եղնեն, քսան տարվան եղնեն, կայասկա ել կու սարքիմ, ամա հիմի գլխեմետ հանե ետունք... Հիմի ամեն որ զուրթ վուր եսենց ուզեռ ուզեռ, ես մուր կեհա... Կոբիլ, 'Պալմա՝ Պալ արի ու ենչախը հիդ զցե տարենը հարուր թուման: Զե, չե, գժար պահելու իս, Նատաշա... Ինչի՞ եստունք վաղ փիքը չարի... Եհ, ինչ գուզե ասե. նա իրն ասե, յես իմը կոնիմ:

ՏԵՍԻԼ Դ

ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՆԱՏՈ

ՆԱՏՈ.—(մտնելով հյուրասենյակի ծախ դռնից, ծեռքին ափսեյով լորի, դառնում ե դեպի կուլիսը:) Ե՛ս սահաթիս, ես սահաթիս, ես նմուտիս գնում իմ: (Ափսեն դնելով սեղանի վրա:) Ես ել լոբին... Ա՛րի, Սաշա, գու քանս, գնանք բախչեն. մամաշեն դիվիր ե գալի, 'Պոնազնիրը մենակ ին ենդի: Ա՛րի տիս՝ ինչ սիրուն ստու ունինք սարքած ենդի չայու—ալա դերնիեր մոդ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Յ՛ես քու հորն իմ մնում, Նատաշա, հարկավոր բան ունիմ հիդը խոսելու:

ՆԱՏՈ.—Ի՞նչ կա, հիմիսկ եվետ հիդ կու դառնանք: Գնանք, չայ խմինք ենդի, ինչըու պապաշեն ել գու քա. Ի՞նչ կու շինիս եստի մենակ: (Թեվլից բռնելով:) Չնեստ, ե, գնում իմ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Լավ, գնանք:

ՆԱՏՈ.—Ա՛րի, արի, մե իմ նեմնի ձալոյի հիդ ճանչցնիմ քիզ: (Ծաղրանքով ներկայացնում ե իր քնքուշ քեռակնոջը: Ալեքսանդրը ծիծաղելով, գլուխը շարժում ե: Թեվակցած յեզ քու քուալով դուրս են գնում դահլիճի ծախ կողմից:)

ՏԵՍԻԼ Ե

ԽԱԽՈ, ՍԱԼՈՄԵ, մտնում են հյուրասենյակի ծախ դռնից:

ԽԱԽՈ.—Զե, քու արիվը, Սալոմե, լավ չե անում, պիտի խրատիս. Կնած ախչկա համարցակութինն ով ե իմացի:

ՍԱԼՈՄԵ.—Մոդեն ետենց ե, բատոնո ջան, ի՞նչ անիս: (Լոտոյի արկղը բանալով) թղթերը կարգի յե բերում:

ԽԱԽՈ. — (Նստելով ծախս կողմը, ընկողմարանի վրա, վոտ-ները կախս գցած:) ՀԵՐ գիրի ժամանակ, չարխի պես պտռւտ իս դալի... Յ' ես վուր նշնած եյի, Սալոմե, դունչս կոսեցիր կոխալով եր կոխած ու աճկերով վժւնց կանելի ոմքնու երե-սին մտիկ անի, կոսեյիր գեղնումը ցցած ե:

ՍԱԼՈՄԵ. — Յարաբ վժւնց եյիք դիմնում ենչախը, բա-տոնո, աթմորթին աճկեր ունենա ու չկանենա ոմքնու մտիկ անի, լիզու ունենա ու չկանենա խոսի. կուճիս կու տրաքի, աստուծ գիրենա: Լավն են ե, պրծանք են ժամանակեմեն, թե չե ճլերք կու նսդնեյի: (Գնում ե կարգի բերում դահլիճի սե-ղանը:)

ԽԱԽՈ. — ԶԵՐ ժամանակը կուլի լավը, արա ես ի՞նչ բան իք սարքի. տղամարթիքը շափթներով դադում ին ու դուք կի մե գիշերումը խժում իք: Են աժգահա*:) վուրփեվերին ել պի-տի խաղմ, չումպո փուրնվ. իսուն տարեկան ավել կուլի:

ՍԱԼՈՄԵ. — Առանց նրան լատո կուլի, քա:

ԽԱԽՈ. — ԿՐԻՄ նրա սատանի գլուխը. քու տարսը փու-կած ախչիկ ունե:

ՍԱԼՈՄԵ. — Ի՞ի, բատոնո, նա հալա ունե, խաղում ե, դուն քոռ Գիգոլու կնդան ասա, վուր նրա մարթը հաց չունե ուտե-լու ու ինքը կի միդ մոդ ե ձքվում. վժւնց կուլի նրա բանը:

ԽԱԽՈ. — Ի՞հ, Սալոմե, վուրթի, նրա բանը ի՞նձ հարցու: Քու արիվը, մե շափաթ չի ըլի երծթե բաղիեն բերիլ ե, մար-թումեն թաքուն, միը հարենի մոդ գրավ ե դրի հինդ մանե-թով, ամսենը պիտի երկու շայի ել շահ տա, ես թումանը մե արասի կոնե: Գնացիլ ե ու աճկը դուս ե եկի, են գիշերն եվետ գիտի մետի տանուլ ե տվի լոտոռումը, քու արիվը տեսնիմ թե յեփն ե թափում:

ՍԱԼՈՄԵ. — (հայելումը ուղղվելով:) Ի՞հ, ոչովու համա շափս ու ձիվ չկա, բատոնո չան

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ՈՍԵՓ

ՈՍԵՓ. — (մտնելով դահլիճի աջ կողմից, նեղացած:) ՀԵ՛... ես ի՞նչ իս սարքի, ելի:

*) Խոսքը Մարթայի սասին ե:

ՍԱԼՈՄԵ.—Բաս ի՞նչ ելի արի, հորեն աշխաքի՝ զոնաղնիբ ին մոդ ելի բախչումը:

ՈՍԵՓ.—Բեհեսաբ նամազուլ ին արի, զուր մոդ ին ելի. ով եր ասում նրանցը վուր մոդ ըլին. մե ինձ ել հարցնին, եւ:

ՍԱԼՈՄԵ.—Ունցնավուր իս, քա. ախչիկ ինք նշնի, չգտն, չշնահավուրին:

ՈՍԵՓ.—Շնահավուրին... Դիփ իմ ուրախութենի համա ին ուրախանում, գանա չիմ գիղի. նրանց ուրախութինն ին կուլի վուր մարթ բերախտանա, նստին, վըեն խոսին ու ծիծաղին:

ԽԱԽՈ.—Ի՞նչ խիստ իս ժանգոտի սիրտդ, Ոսեփ. ախար ետղադա նիղանալ ու չարանում կուլի, վուր ես երկու որ ե դուն իս նիղանում ու չարանում, վուրթի:

Ոսեփ.—Ա՛խ, մամիդա, նետայի մե ըլելու բան ըլի, դոշո դանկով կես անիմ ու սիրտս հանիմ քի շանց տամ, վուր ենչ չախն իմանաս թե ինչ իս ասում:

ԽԱԽՈ.—Մամիդի սիրտը կես ըլի, վուրթի, ու ետ չտեսնե:

ՈՍԵՓ.—Արա. ասում իս, ինչ անիմ ախար. լոտոյի վժեխտ ե վուր շոկրոկվիլ ին ու համեցեք ին ելի: Ավտաս քսան հոքի ավել ըլին: Շնահավուրիլ ելին ուզում, ամեն մարթ իր համա յեր եկի շնահավուր արի, թե չե գիփունանցը մետի հենց մե վուխտը վժերդի միտն եկանք: Կու զրգեյին ելի մեկս մեկու մոդ թե՝ արա, Սալոմեն ախչկան նշնիլ ե ու չի՞ք գալի, գնանք. վիրոց՝ ես մունդոել լոտոյի համա, ելի: Վուրին ել սա կու կանչեր թե՝ փլանինք եստի ին ու դուք ել համեցեք: (Սալոմեյին:)

Առաջե, ելի:

ՍԱԼՈՄԵ.—Ի՞նչ ե ասում. բաս քու բիճանցը չեցի իմաց արի:

ՈՍԵՓ.—Ե՞ր:

ՍԱԼՈՄԵ.—Ել ով. քու բիճանցն իմ իմաց արի, քու դեղիդի ախչկերանցն ու եստի քու ախպուր կնգա մոդ զրգեցի հիմի:

ՈՍԵՓ.—(չարանալով.) Ինչի՞ ինչի՞ նրանք ել մե ուրիշ եյին եկի:

ՍԱԼՈՄԵ.—Արա, դուն միր հեսաբն ինչ գիդիս, վուր խոսում իս անմեղ. թավաթ ինչ ասիս վըես ին ասում ու չեյի կանչի, վուր խոսվիլ եյին ու մե տարի հիդս խոսվ ելին կացի:

ՈՍԵՓ.—Ա՛խ, աստուծ, աստուծ, ետղադա ել քոսութին... (չարձակվելով դեպի լոտոյի սեղանը՝ սփուոցի ծայրը քաշում եւ:) Սիրտս ասում ե՝ ես սահաթիս փուլուփանդը մեչը դիւ

ՍԱԼՈՄԵ.—Ի՞ս, քու գլուխ չունիմ, քա: (Դժգոհ դուրս եղնում հյուրասենյակի ծախ դռնից):

ՏԵՍԻԼ է

ՈՍԵՓ, ԽԱԽՈ

ՈՍԵՓ.—Ա՛խ, աստուծ, կնիկարմտին գանա Յ՞նդուը իս սարդի աշխրքի երեսին, վուր տղամարթու արունը խմել:

ԽԱԽՈ.—Համփիրե, համփիրե, Ոսեփ ջան, վուրթի ջան, դուրթ իս ասում, դի՛ք զուրթ իս ասում, ամա վուրն ել պիտի յոլա տանիս, ի՞նչ անիս, եկիլ ին, տանեն խո չիս կանա դուս անի ու աշխրքի խոսելու չիս դուռնա ետու համա:

ՈՍԵՓ.—Աշխրքի խոսելուն վուրն ենչախը թամաշա արա դուն, վուր եքուց ելոր գու քան, դուանս պուբլիկացիա կոծին: **ԽԱԽՈ.**—Ի՞հին, լավ ե դուն եւ, քա:

ՈՍԵՓ.—(Նատելով լոտոյի սեղանի մոտ:) Լավեն վուրն ե, ի՞նչս ասում, հենց գիդիմ ոճոռքը գլխիս քանդվում ե:

ԽԱԽՈ.—Ի՞նչ ե պատահի, Ոսեփ:

ՈՍԵՓ.—Աստուծ վուչ գիդե իմ գլուխն ու արիվը, հորեն լեպրոյնց Փասոն, ասում ին, գանգատ ե տուն տարի ինձ վրա: **ԽԱԽՈ.**—Ի՞նչ գանգատ:

ՈՍԵՓ.—Փուղ իմ պարա ու հոքեհանի պես ուզում ե:

ԽԱԽՈ.—Վմւյ, քոռանամ յ'ես:

ՈՍԵՓ.—Են անաստուձը, զարթնի իմ բարաթը, ձեռին չարչու բարաթ ունե իմը գրավ ու հաշա ե ուտում:

ԽԱԽՈ.—Ցարաբ նրա պես ել անաստուձ մարթ կուլի:

ՈՍԵՓ.—Անաստուձ ասիր ու պրծմար: Ա՛յ, կու կանչին ու կու տեսնին, ամա ինձ ես սահաթիս փուղ ե հարկավուր, փնտղ, ու չիմ կանացի ճարի, ումեն ուզեցի՝ ել բարաթով ոչով չմավա գնաց, ու ապրանքս խո կիսագնով չիմ կանա ծախի: Հալբաթտան, ափալս իմացան ու դիփունքը գլխնիրը վիքաշեցին: Ե՛ս արավ ինձ Սալոմեն, Ելի, հն ոխտը հարուր թումանը վուր խոստացավ, տեսնի հիմի ով ե համըրում:

ԽԱԽՈ.—Ախար ետ ինչի՞ր իս ասում, Ոսեփ, ախչկատ բողոքը խո դնւս կու կարվի:

ՈՍԵՓ.—Իմ բողազն ուփրո վաղ ե դուս կտրվում: Ցեսնիմ թե եքուց աստուձ ի՞նչ ե տալի: մե տիղ ելի ումիկ ունիմ:

ԽԱԽՈ.—Ախար դուն են անաստձուն վհենց եյիր մալա
գնում. աջաբ քու խիլքին, Ոսեփ:

ՈՍԵՓ.—Ե՞ն, մամրդա... Կարիքն իր խիլքն ունե... Բաս...
յես վուր ասում եյի թե հիմիկվան ապրելուն մարթ չի կանա
դիմնա, ես եյի ասում, այ. Հալալ առուտրումը խեր չկա, հա-
ռամ առուտրի շնուք յես չունեյի, ու ելավ, ելի, տարես տարի
ավելցավ ու վուրդիոր բարկեցավ, ենդի կտրվեցավ:

ԽԱԽՈ.—ՎՌԵՅԻ, ՎՌԵՅԻ, ՎՌԵՅԻ, ՎՌԵՅԻ, ինչի՞ գեղինը չիմ
մտնում:

ՈՍԵՓ.—(վեր կենալով.) Միր առուտրումը դիփ հինգ-վից
մարթ չկա վուր իրանց փուղով ըլին առուտուր անում, են փուղն
ել հալալ ե թե հառամ, աստուծ գիդե, մնացածը դիփ նիսիա,
դիփ նիսիա. քու ապրանքը ծախեցի՝ սրա փուղը տվի, սրա
ապրանքը ծախեցի՝ նրա փուղը տվի. ետենց գնում ե չարխի
հանգն, ելի, ինչըի մեկը կու ռաստ գա ու գուլքի չխիրը կու
հանե՝ գնաց մե ծերեմեն մեկելը, դիփ մետի քար ու քանդը մեչը
դնվեցավ: Ախար մարթ համ զուքնի քրիհին դիմնա, համ պրի-
կաշիկներու ուտիլ խմելուն ու տոնլուդին դիմնա, համ փուղի
տիրուչ շահին դիմնա, համ կորած նիսիին դիմնա, համ փչացած
ու փախցրած ապրնքին դիմնա, համ ել իր տանը (լոտոյի
սեղանին ծեռքով խիում ե) ես դաղգին դիմնա ու սրա հիդ
ել մեկեներուն, (Նորից խիելով.) Դիփ կնդդիքը, դիփ կընդ-
դիքը... իմ կնիկը վուր առանց ինձ վից հարուրը ոխտը չեր շինի,
խո դիփ մետի մոշլա կուլեր ու ես բանը չեր գա գլուխս: Ո՞ւր ե,
մուր են ուտումն ու լուսավուրութինը, վուր միր կնդդիքը միզ
պետկը զան: Հայերի, հայերի, հայերի իմ գրանիցա: ԱՇ կնդդիքը...
ի՞նչ գուղե բանումն ըլի տղամարթը, իմ գարաջի մարթու կնիկը
հալալ հիդը ննդնիր ե. եփողի կնիկը եփող ե, գրողի կնիկը
գրող ե ու վաճառականի կնիկը վաճառական. մետի դադում ին,
մետի ուտում ին, գարդն ել կես ե, ուրախութինն ել. եստի կի
հազիր հազրարաշի*): Գաղած փուղ պիտի ըլի, վուր նստին ու
ես (կրկին խիելով սեղանին) մունդուեկ բանի վրա մաշին ի-
րանց կինքը: Երնեկ գիտենամ ի՞նչ ե գուս գալի ես՝ դանց (կա-
նացի ծայնով յեվ ծաղրելով.) Սեմդիսես սեմ, սեմդիսես դվա...
ԱՇ չոռ ու ցավ ու աստծու կրակ:

ԽԱԽՈ.—Դուն ժամանակն ասա, վուրթի, ժամանակը թե

*.) Թէֆլուի բարբառում ասվում ե և հադիր հաղըրաբաշի:

չե հորեն մարթիքը չին վուր գիշերն ինչկլի լուսը նստած կլու-
բերումը թուխտ ին խաղում:

ՈՍԵՓ. — Ո՞հ, հո, հո. հո. թե չե կնգդիրքը խո լայիդ չին
անում թուխտ խաղան, այ: Ետ մե թուխտն եր, ետ ել խլե-
ցին ձեռնեներեմես, փառք աստձու. մի փախենա, եղուց ելոր
բիլիարդ ել կու խաղան աստձու կարող զորութենով: Ի՞նչ իս
ասում, ի՞նչ. մարթիքը խաղում ի՞ն, հազընը մեկը, հազընը
մեկը. ամա կնգդիրքը՝ հաղարումը ինը հարուր ինըսուն ու ինը
‘զոմարբազ ին. աբա վուր տղամարթը գու քա հիմիկվան կընդ-
դերանց մոդ, ի՞նչս ասում: Ելի աղբաթը խեր ըլի տղամարթ-
կերանցը. տեսան վուր ապրիլը գժարացավ, շատ բանեմեն ձեռը
վիկալան: Ել վուրդի ե վաղուցվան ըիդիսպուրիքը, թայիսմե-
լեքը, զուռնով քեփիրն ու զողիրը. թարգը տվին, դիփ թար-
գը... ամա կնգդիրքը ի՞նչ կելին, կելին, ի՞նչոր չե ու (ծախ ծեռ-
քը բարձրացնում ե յեվ իբրեվ մեկ ծանը առարկա բռնած-
վայր ե թողնում) վիկալան ու մե բան ել վրեն ավելցրին: Ես
պիկնիկ ե, կոսե, ես վեչեր ե, կոսե, ես յերիք որով բաղումը
մեծարք ե, կոսե. մարթիքը մնացի ին տարեկուս արած ու երե-
խերքը մե ձեն վայ դեղի ին կանչում ‘զուլուզերու ձեռին:
Ո՞ւր ե, մւր, դադաստանը պիտի ինձ տան վուր ե... (Զարա-
ցած ման ե զալիս):

ԽԱԽՈ. — (դժվարությամբ վեր կենալով, առանձին:) Յ'ես
ու իմ հոքին դրուստ ե ասում, դիմ դրուստ ե ասում: (Դուրս
ե զնում հյուրասենյակի ծախ դոնից:)

ՏԵՍԻԼ Ը

ՈՍԵՓ, հետո ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՈՍԵՓ. — Ա՛խ, ախ, ախ... (արմունկը հենելով վառարանի
զեհին, գլուխը բռնում ե յեվ մնում անշարժ, տխուր գրու-
թյան մեջ: Ցերկար լուռթյուն:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (մտնում ե դահլիճի ծախ կողմից:) Ա՛խ,
իմ հեր, եկաք, (լուռթյուն: Մոտենում ե Ոսեփին:) Իմ հեր:

ՈՍԵՓ. — Ո՞հ, Ալեքսանդրե, (ծեռք տալով) համեցեք, նստի:
չեմի եկար. (Նստում են:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Զե, շատ վուխտ ե եստի իմ, բախչումն եյի:

ՈՍԵՓ. — Ուրիշ, թաղա ի՞նչ խաբար:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Թաղեն են և, իմ հեր, վուր են շափթին
ուղում իմ փսակվի:**

ՈՍԵՓ. — Ետենց չհւստ:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Հա, իմ նաշալնիկը գնալու յե Պետերբուրգ
ու խեչախպերս պիտի նա ըլի:**

ՈՍԵՓ. — Լավ, վուր հիդ դա, ենչախն ըլի, լնչ հաջախ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Զե, ետ խիստ կու ուշանա, իմ հեր:

ՈՍԵՓ. — Լավ, քու քեփն ե, վունցոր գուղիս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (կակազելով.) Ախար... իմ հեր...

**ՈՍԵՓ. — Հա, հա, իմանում իմ. փուղիը համբրիմ ես սա-
հաթիս:**

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Հա, իմ հեր, թե կարելի յե:

**ՈՍԵՓ. — Քիզ զրուստն ասիմ, Ալեքսանդրե, ձեռաց չունիմ,
պիտի մե քիչ մուլափ տաս, ու թե առանց փուղի իս ուղում
փսակվի՝ ետ դուն գիդիս, ախպեր:**

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Վա, ետ ընչիք իս ասում, իմ հեր:

**ՈՍԵՓ. — Լավն են և ասիմ քիզ, ախպեր, կանց խափիմ:
Դուն ինձ ասա՝ հիմիկվան որենքը վժւնց ե, յես վուր բարաթով
ոմքնու փուղ պարտենամ ու նա ինձ վրա գանդատ տուն տա-
նե, ջեր պիտի կանչին ինձ, խոսեցնին թե չե:**

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Բարաթը լնչ հանգի բարաթ ե:

ՈՍԵՓ. — Վեքսիլ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Հմատատած:

ՈՍԵՓ. — Հաստատած:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Ետու որենքն ենենց ե, վուր կարող ին
մերաշ տուն գա հստի, ու թե են սահաթին չհամբրեցիլ, տուն
ու տիզզ կու մհրին:**

ՈՍԵՓ. — Առանց ինձ կանչելու:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Հա, առանց կանչելու. Ետուրը կոսին՝ ա-
բեղպեչենին իսկա:**

**ՈՍԵՓ. — Իմ վեքսիլումը վուր նա ուրիշի բմբաթ ըլի ստա-
ցի ինձմեն գրավ:**

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Հա, ետ ուրիշ ե. թուխտ ունիս ետումը:

ՈՍԵՓ. — Զե, ամա որթումով կու հաստատիմ:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ. — Ետու որենքն ել ենենց ե վուր ջեր քու
վեքսիլի փուղը կու համբրիլ տան ու իժում, թե կանաս, հաս-
տատե վուր նա քունը ուրիշի բարաթ ունե ձեռին:**

ՈՍԵՓ. — (սաստիկ շփոթված:) Ղմւրթ իս ասում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — ՂՈՎԵՐԺ:

ՈՍԵՓ. — (ՃՆԿԱՆԸ ԽՎԻԵԼՈՎ յԵՎ ՄԵՂԻՑ ՎԵՐ ԹԱՅԵԼՈՎ)
Քաս, տունս քանդվեցավ: (ԼՈՊՈՅԵՐՈՒՆ: ԴԱԲԼԻՇԻ ծախ կուլի-
սից լսվում ե ՆԱՏՈՒՐԻ ծայնը՝ Սաշա, Սաշա, ովոր կանչում ե քիզ:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (ՄՈՏԵՆԱԼՈՎ ՌԱԵՒԻԽՆ:) Ետ ի՞նչ խաբար ե,
մե գրուտ ասա ի՞նձ:

ՈՍԵՓ. — ԿՈՍԻԾ, ԿՈՍԻԾ, հալա գնա, կանչում ին,

ԱԼԵՔՍԱՆԴՐ. — (ԳԼԽԱՐԿԵՐ ՎԵՐԳՆԵԼՈՎ յԵՎ ԱՊԱՆԾԻՆ:) Յ' ես
վուր տեսնում իմ, իմ տունն ել ե քանդվում: (ԴՈՒՐԱ Ե ԳՆՈՒՄ
ԴԱԲԼԻՇԻ ծախ կողմից, բայց իսկույն վերադառնալով անհե-
տանում ե դաբլինի աջ կողմից:)

ՏԵՍԻԼ Թ

ՈՍԵՓ, (մենակ:)

Ես ի՞նչ իմացա: Հիմի զուրթ վուր գան եստի, ես խո գե-
ղինը մտա յ' ես, ի՞նչի՞ հիմիսկ եվետ դեկեր չիմ բշկվում եստի:
Վուրդի ճարիմ ես սահաթիս են՝ դադա փուղը, եստուրը ժամա-
նակ ե հարկավուր ու նբանք կուլի եսոր եվետ գան, հենց ես
սահաթիս, խո գնացի, խաբար ելա, ել ով ինձ ի՞նչ կու տա: Մե-
րաշ կու փաթըթվին պարտկան տերիրը գլխիս, բողաղումս
հուփ կու տան, ել չին խոսեցնի, ել ձեն չին հանիլ տա... «Ի՞ս
տու, իս տու ես սահաթիս... (Մազերը քաշելով:) Ա՛լս, Սա-
լոմէ, Սալոմէ... (Դաբլինի աջ կողմից մտնում ե Գեվոն:)

ՏԵՍԻԼ Ժ

ՈՍԵՓ, ԳԵՎՈ

ՈՍԵՓ. — (ՉԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ:) Ա՛յ, սա ել այ...»

ԳԵՎՈ. — ԲԱՐԻԳՈՒՆ, ՌԱԵՒԻ:

ՈՍԵՓ. — (իրան մոռանալով:) Դուն ել եկար, դժւն ել
քու փուղն իս ուղում: Դե չնւստ արա, չնւստ, հնդիս հանե, քա-
նի բերնումս ե, մեկն երկու շինե պարտկա: Ասա, ասա,.. ասա վուր
երկու հարուր պարտ չիմ, ասա վուր չուրս հարուր իմ պարտ,
ասա, ելի, պարտկան տեր իս: Ասա, մի ինահի ինձ, պիտի քու
փուղը սադանա, ել ինչի՞ն իս մնում, պլակե կաշիս, հանե ջի-
գարըս սադանա, մաս-մաս արա ու ամեն մե կտուրը մեմի

գրնշով ծախե վուր փուղդ չկորչի... (Գեվոն աջքերը սրբում եւ) Լաց ըլի, լաց, կնրավ փուղիրդ... (Խփում եւ ճակատին:) Կռւտ-քացա, կռւտրացա...

ԳԵՎՈ.—(փաթաթվելով Ոսեփին:) Ուսեփ ջան, Ուսեփ:

ՈՍԵՓ.—Դժուն իս ասում ինձ՝ ջան, թե՞ վուր դուն եւ իմը պարտկան տեր իս:

ԳԵՎՈ.—Քու չարը տանե, Ոսեփ ջան, քու չարը:

ՈՍԵՓ.—(ուշքի յե զալիս յել լացի ծայնով:) Փչացա, Գեվո ջան, (գրկում եւ Գեվոյին) փչացա: (Լուռ տեսարան:)

ԳԵՎՈ.—Մըրտդ բռնե, հեր ոխնած, տղամարթ չիս:

ՈՍԵՓ.—Եւ ինչ տղամարթ, մե անմիդ շուրի կտուր իմ. դիմ մետի ձեռնես գնում ե... Գնաց, գնաց նամուսս. (լալով) իմ պատվական նամուսը թաղեցի: (Աչքերը սրբում եւ:)

ԳԵՎՈ.—Աստուձ ողորմած ե, Ոսեփ ջան:

ՈՍԵՓ.—Աստուձ եւ խռով կացավ գլխիս ու յերգինքն եւ: Ես արավ ինձ, Ելի, Ես, իմ ախչկա մարթու տալը: Նետայի մե քու փուղը թամամ մայինց կանենամ տա+ կու տամ, վունցոր կուլի կու տամ, մի վախենա:

ԳԵՎՈ.—Ի՞նչ ասում, Ոսեփ, նետայի ունենամ, վուր գըլ-խամեռ ես սահաթիս երես չի ըլի դիփունանցը. բաս եւ ինչի բարեկամ իմ:

ՈՍԵՓ.—Վուր ունենաս, Գեվո ջան, եւ բարեկամ չիս ըլի իմը, ետ սիրտն եւ չեյիր ունենա ենչախը. թռղ ելի ետենց խիղճ ըլիս, վուր կանենամ քիզ բարեկամ ասի: Ետ քու մե սրտացավ ձեռն ե մսացի ինձ աշխըքումը, թռղ ետումեն եւ ե մայինց չղրգվիմ: Փորցեցի, դիմ մե որումը փորցեցի: Եւ ոչով չխնահից ինձ վունց բիձա, վհնց ախպեր, վունց բիձու տղեն... Տեսան վուր հոքեվարք իմ, դիմփունքը մետի թողին ինձ ու դոնիրը վըես՝ զայիմ կոխպեցին:

ԳԵՎՈ.—Ա՛րի, եղերա ելի մե իմքին չարա ըլի:

ՈՍԵՓ.—Քու դնշմնին չարա ըլի ենենց, վունցոր ինձ չա-րա կուլի:

ԳԵՎՈ.—Ա՛րի, արի հալա, բան կա:

ՈՍԵՓ.—Եւ ինչ բան պիտի ըլի:

ԳԵՎՈ.—Ա՛րի, մի ուշացնի:

ՈՍԵՓ.—Ի՞նչ ե, մե ասա, Ե,

ԳԵՎՈ.—Ա՛րի, արի, ճամփին կոսիմ:

ՈՍԵՓ.—Ուրիշ հանգն իս ասում. ասա՛ ի՞նչ խաբար ե,

ի՞նչ եւ պատահի. ասա, մի վախենա, մի խնահի ինձ, ինչ
ելավ, ենդու վրա ավելի ի՞նչ պիտի ըլի. թոփի գուլեն դիրիլ եւ
սրտումս, ի՞նչ հաջաթ հիմի թե դոշս ել կու պատռտին ու սպանած
սիրտս մեշեն կու. դուս զջլին. ասա՞ ի՞նչ եւ, ի՞նչ. դուքանս
խո չի՞ն մհրում:

ԳԵՎՈ.—ԱՌԻ, արի ու կու տեսնիս:

ՈՍԵՓ.—Մհրում ին բաս:

ԳԵՎՈ.—Ասում իմ, ելի:

ՈՍԵՓ.—ԱՌ, գեղինը մտի, Ոսեփ: (Մոռանալով իրան
հարծակվում եւ զեպի լոտոյի արկղը, միջից թղթերը հանում
եւ յեվ անկարգ այս ու այն կողմն ածելով:) Խաղացեք, հիմի
խաղացեք... (Ծի քանի թղթեր թափվում են հատակի վրա:
Գնալով:) Խաղացեք, խաղացեք... (Դուրս եւ զնում դահլիճի աջ
կողմից:)

ԳԵՎՈ.—(հետեւվելով:) Հայե՞փ, հայե՞փ մարթ: (Դուրս եւ
զնում Ոսեփի հետեւվից: Դահլիճի ծախս կողմից յերկու ծառա
բերում են մեծ վազաներով դարձյալ մի քանի տեսակ պտուղ-
ներ յեվ զնում են այնտեղ սեղանի վրա. հետո յերկու սենյակ-
ներումն ել բոլոր հանգած մոմերն ու լապտերները վառում.
լոտոյի սեղանի շուրջը աթոռներ դարսում, վայր թափած
թղթերից զարմանքով մի քանիս հավաքում սեղանի վրա
յեն զնում ու դուրս զնում հյուրասենյակի ծախս դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԱ

ՍԱԼՈՄԵ, ՄԱՐԹԱ, ՆԻՆՈ, ՓՈՓՈ, ԲԱԶՄԱԹԻՎ ԿԱՆԱՅՔ, գե-
ղեցկապես զարդարված. մտնում են դահլիճի ծախս կողմից

ՍԱԼՈՄԵ.—(մտնելով:) Համեցեք, համեցեք, գեթա՝ զվա, ա-
նուշ արեք, ով ինչ կամենաք, լոտոն հադիր եւ,

ՄԱՐԹԱ.—(առաջ զալով:) Ուցխո չե՞ն, քա՞ն, թխտիրն եւ
բաժնած: (Մյուս կանայք ցածրածայն խոսելով յեվ ծիծաղե-
լով մոտենում են դահլիճի սեղանին:)

ՍԱԼՈՄԵ.—(առաջ զալով յեվ տեսնելով վոր լոտոյի
թղթերը անկարգ ածած են:) Ես ի՞նչ խաբար եւ, ես ով ե արի:

ՄԱՐԹԱ.—Թային կատու յե ման եկի վրեն, քու արիվը,
Սալոմե:

ՍԱԼՈՄԵ.—Զիմ իմանում թե ևս ի՞նչ է,

ՄԱՐԹԱ.—(*Սալոմեյի ծեռը բռնում ե յեվ առաջ բերելով:*) Ի՞նչ իմ ասում, Սալոմե, (*մյուս հյուրերը խումբ-խումբ հավաքված դահլիճի սեղանի շուրջը, ուտում, խմում, խոսում, ծիծաղում են*) կազմաչեյի *Մաշինկին չշինիս, գեթաղվա:*

ՍԱԼՈՄԵ.—Ի՞նչ խաբար ե,

ՄԱՐԹԱ.—Քա, չի՞ս իմացի. ես որը Խնդոյինց տանը պուրիմպերիալը ձեռաց ծըպըպից:

ՍԱԼՈՄԵ.—Միթամ ետ դժութ ե, ինձ Քալինկեն ասալ:

ՄԱՐԹԱ.—Ի՞նչ ե ասում, քա, աշքարա իմ աճկերով տեսա:

ՍԱԼՈՄԵ.—Վույ, գեղինը պատռե, նրա ստոտանին գեեր տանե, յես վուր չեյի ավտում:

ՄԱՐԹԱ.—Խիստ գուզն ե, ասում իմ, ե, Մեկել որն ել Խիբրոյինց տանը երկու մանեթը նրա առչիվը ստոլի տակը գթա. (*ծեռքով ցույց տալով:*) Եսենց գեղեր եր քաշի: Ստոլի տակը մտիկ անիմ, տեսնիմ, երկու վուտը վրեն՝ զայիմ վրա յե հարի: (*Ծաղըելով:*) «Վույ, քոռանամ, ասում ե, ևս վժնց ե գեղեր ննդի գուր չիմ տեսի», կոսե:

ՆԻՇՈ.—(*մոտենալով Սալոմեյին մյուս կողմից:*) Ի՞նչ իք քչփչում, քա:

ՄԱՐԹԱ.—(*Սալոմեյին ծածուկ:*) Գեթաղվա, Սալոմե ջան, զրան գունչիչ չասիս:

ՍԱԼՈՄԵ.—(*Մարթային:*) Աքա, քիմեն չիմ արմառւ: (*Մարթան հեռանալով Սալոմեյից, մոտենում ե դահլիճի սեղանին, ուտում, խմում ե. հետո վերցնելով մի ափսեյի վրա զանազան մրգեր յեվ քաղցրավենի, զնում խառնվում ե մյուս հյուրերի հետ, վորոնցից միքանիսն արդեն լոտոյի սեղանի մոտ տեղ են բռնել:*)

ՆԻՇՈ.—(*Սալոմեյին:*) Ի՞նչ եր ասում. ումն եր բամբառում:

ՍԱԼՈՄԵ.—Վանչիչ, մե բան եր, Նինո ջան: (*Գնում ե դեպի լոտոյի սեղանը:*)

ՆԻՇՈ.—(*ըթողնելով Սալոմեյին:*) Հալա, Սալոմե ջան, գեթաղվա:

ՍԱԼՈՄԵ.—Վանչիչ, քու արիվը, Նինո ջան, *Մաշինկի վրա յեր խոսում:*

ՆԻՆՈ.—ի՞ն, կրիմ դրա աճկը. ինչ դա ասե, դուն ել ավտան. իրան ասիս վուր զալը փուղը վեր և գալի ու իժում հաշացա յեւ ուտում:

ՍԱԼՈՄԵ.—ի՞ն, դուն ել, ՆԻՆՈ:

ՆԻՆՈ.—Աստուձ գիղենամ: Մուղայիթ կաց, Սալոմե, դրա փուղին:

ՄԱՐԹԱ.—(ափսեն ծեռքին, խնձոր կրծելով յեվ ծամելով, հեռվից կանչում եւ) Արա, չի՞նք կցում, Սալոմե. արի, ելի:

ՍԱԼՈՄԵ.—(հյուրերին,) Համեցեք, համեցեք, գեթաղվա. (Նինոյին) արի, նինո: (Դահլիճի ծախս կողմից մտնում են նատոն յեվ նրա ընկերուհիները թեգթեզի տված:)

ՏԵՍԻ. ԺԲ

ՆՐԱՆՔ, ՆԱՏՈ ՅԵՎ ՆՐԱ. ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐԸ

ՄԱԼՈՄԵ.—(հավաքելով լոտոյի թղթերը, զարմացած:) Ես ովզ ե արի, նետայի գիղենամ: (Նատոյին,) Ես դժւն իս արի, նատո:

ՆԱՏՈ.—Զի, մամաշա, ձեռն ել չխմ տվի:

ՍԱԼՈՄԵ.—Զիմ իմանում թե ես ի՞նչ բան ե: (Հյուրերին,) Համեցեք, նստեցեք. գեթաղվա: (Բոլոր հյուրերը նստում են լոտոյի սեղանի շուրջը: Նրանցից մեծ մասը բերել դրել են իրանց առաջ տեսակ-տեսակ մրգեր յեվ բաղցրավենիք: Նատոն հյուրամիքում ե իր ընկերուհիներին: Սալոմեն կանգնած բաժանում ե լոտոյի թղթերը, վոր հյուրերը ծեռքից ծեռք հասցնում են միմյանց:)

ՓՈՓՈ.—(վոր ամենից շատ քրքրվում ու ծիծաղում եր, այս միջոցին սկսում ե ցածրածայն յերգել թասլիքի յեղանակով:)

«Անտի» զու հաս, դարիք բրլու,

Դու մի՛ լաց՝ լի, յես իմ լալու.

Դու վար պրսոն, յես զոգալին,—

Դու մի՛ լաց՝ լի,

ՓՈՓՈ ՅԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆԱՅՔ.—(Խմբովին:)

Յ'ես իմ լալու:»

ՍԱԼՈՄԵ.—Բացը ասա, բացը, Փոփո ջան, գեթաղվա: (Ճարունակում եւ թղթերը բաժանել:)

ՓՈՓՈ.—(բարձր ծայնով յերգում եւ:)

«Արի՛, բըլըու, խոսի բառըն,
Ախնօվի՛ յու եկած սարըն.
Քի վարըն երից, ինձ իմ յարըն,—
Դու մի լաց՝ լի, յ'ես իմ լալու:

ՓՈՓՈ ՅԵՎ ՄՅՈՒՄՆԵՐ.—

«Դու մի՛ լաց՝ լի, յ'ես իմ լալու:

(Նատոն յեվ նրա ընկերուհիները կամաց զրույց են անում
դաշնակի մոտ, զանազան նոտաներ զննելով:)

ՓԵՓՈ.—(շարունակում եւ:)

«Ման իմ զալի դիդարի նիդ,
Վունց դարիք բըլըու խորի նիդ.
Դու վարքի նիդ, յ'ես յարք նիդ,—
Դու մի՛ լաց՝ լի, յ'ես իմ լալու:

ՓՈՓՈ ՅԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ.—

«Դու վարքի նիդ, յ'ես յարք նիդ,
Դու մի լաց՝ լի յ'ես իմ լալու»)

ԲՈԼՈՐԵՔՑԱՆ.—(ծափ տալով,) Բրամփ, բրամփ, բրամփ,
Փոփու: (Նատոն յեվ նրա ընկերուհիները թեվակցած ման են
գալիս դահլիճում յեվ հետո նստում են լոտոյից հեռու, ազ
կողմը:)

ՍԱԼՈՄԵ.—(տալով վերջին թուղթը:) Արա, թամամ եւ:

ԲՈԼՈՐԵՔՑԱՆ.—Թամամ եւ, թամամ, դիփունքս ունինք:

ՍԱԼՈՄԵ.—(Նստելով սեղանի աջ կողմը:)

*) Այս յերգի շարունակությունն ու վերջը՝

«Սալըոյի նրման կանանց իմ,
Յե՞կ խոսի՛ ձայնըդ նանանչիմ.
Դու վա՛րք կանչե, յ'ես յա՛ր կանչիմ,—
Դու մի՛ լաց՝ լի, յ'ես իմ լալու:
«Պա՛րիք բըլըու՝ ձայնիդ մալում,
Յ'ես ու դու երջինք մե հալում.
Սայար-Նովեն ասաց՝ զա՛լում,—
Դու մի՛ լաց՝ լի, յ'ես իմ լալու»,
Սայար-Նովա

Արա, վեր եկեք, ախչկիրք, ձիր կաղնաշելին յես իմ, 'ղաբուլ
եք:

ԲՈԼՈՐԵՔՅԱՆ.—'Ղաբուլ ինք, 'ղաբուլ:

ՍԱԼՈՄԵ.—(շարունակելով,) Արա մեմե մանեթ վիր գանք
ու մեմե թուման վիկալնինք, երկու խաղ կռնե, լմզ կուլի:
ԲՈԼՈՐԵՔՅԱՆ.—լավ, լավ, լավ:

ՓՈՓՈ.—(ծիծաղելով.) Վճռէ, վճռէ, վճռէ, քանդվի
ձիր ոջախը:

ՍԱԼՈՄԵ.—Դուն ել քու մարթու պես սկուպուի մի ըլի,
քա՞:

ՓՈՓՈ.—Դիմիս, դիմիս, սազ ել գու քա: (Փողը տալով,)
Բոնեցէք, տարեք, տարեք, ձիզմեն հվ կու պրծնի:

ՍԱԼՈՄԵ.—(գրպանից տասը ոուրլիանոց հանելով,) Ես
իմ մանեթի տիդ, թումանուց ե գիդենաք: Արա, բերեք! (Դահ-
լինի աջ կողմից մտնում ե Ալեքսանդրը:)

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԱԼԵՔՍԱՆԴՐ

ՆԱՏՈ.—(մոտենալով Ալեքսանդրին:) Ա՛խ, Սաշա, ինչի՞
ուշացար, (Նատոյի յեվ Ալեքսանդրի այս խոսակցության
ժամանակ ըոլոր հյուրերը կարգով տալիս են Սալոմեյին,
միմյանց հասցնելով փողեր, մատանիք, ապարանջան, մեղա-
լիոն յեվ այլն, Սալոմեն հավաքում ե այդ իրեղենները իր ա-
ռաջ, կարգով դարսում յեվ լորիներով նշանակում:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(գլխարկը մի կողմը դնելով:) Բան ունե-
յի: (Առաջ բերելով նատոյին, շփոթված յեվ կիսածայն:)
Մաւափ, նատաշա, բան իմ ասում:

ՆԱՏՈ.—(նմանապես կիսածայն:) Ի՞նչ խարար ե, ձեռտ
ինչի՞ յե դողում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Քու հոր վրա գանգատ ին տուն տարի:

ՆԱՏՈ.—Ի՞նչս ասում, Սաշա, ի՞նչ գանգատ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ոմքնու փուղ ե պարտ:

ՆԱՏՈ.—Ո՞վ ասավ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Ինքը քու հերը:

ՆԱՏՈ.—(բարձրածայն ծիծաղում ե:) Հա, հա, հա... (Կի-
սածայն:) Իմ հերը պարտկ չունե, Սաշա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—Վաւնց չե վուր ինքն ասավ.

ՆԱՏՈ.—Հանաք ե արի, Սաշա, ինչի՞ր իս ասում. (ծիծաղլով) հա, հա, հա... (Մոտենում ե իր ընկերութիներին.)

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(առանձին, շվարված) ԱՌի ու բան հասկացրու... նետ, դուդկի, բրատ. ինչըր իմ փուղիրը թամամ չտան, ել գուտս չիմ տուն դնի եստի:

ՍՍԼՈՄԵ.—(վերջացնելով փողերի նշանակելը:) Քա, տոպրակն ի՞նչ ելավ:

ՆԱՏՈ.—(իր ընկերութիների հետ մոտենում ե Ալեքսանդրին յեվ թեվ-թեվի տալով.) ԱՌի, Սաշա, Սաշա... (ծիծաղում ե:) Հա, հա, հա... (Գնում են դահլիճը, ուր նատոն հյուրասիրում ե Ալեքսանդրին յեվ կրկին իր ընկերութիներին.)

ՄԱՐԹԱ.—(Նատոյին:) Ի՞նչ խաբրներումն իս, քա՞:

ՍՍԼՈՄԵ.—Ո՞վ ունե տոպրակը,

ՄԱՐԹԱ.—(բարձրացնելով տոպրակը) Յ'ես ունիմ, յ'ես, ամ:

ՍՍԼՈՄԵ.—Ի՞ս տու եստի:

ՄԱՐԹԱ.—Զե, յ'ես պիտի ասիմ ջեր:

ՍՍԼՈՄԵ.—Քա, բի եսթենը, կարքով գու քա, ելի:

ՄԱՐԹԱ.—Զե, չե, ոչովու տուր չիմ տա, պիտի ջեր յ'ես ասիմ:

ՍՍԼՈՄԵ.—(նեղացած) Դե ասա. (առանձին) ախալագութիւն քու գլխին:

ՄԱՐԹԱ.—(շարժելով տոպրակը) Բըխը, բըխը... (Հազում ե, հետո հանելով զարերը յեվ բարձրածայն) Պիտդիսիմա, վժսիմդիսիա:

ՓՈՓՈ.—(ծիծաղելով) Աքա, Մարթա, վունցոր գիդիս մեւ:

ՄԱՐԹԱ.—Տըրոկա, (մեկ քանի խաղացողներ իրանց մեջ լուռ՝ ամբութերնու յեն խաղում) սիմնացեա... տուղի սուղի... ստարիկա... չնիլոխանա. չետիրի յե, գիդենաք... դեսետնիկ բերու... Մարոկա:

ՍՍԼՈՄԵ.—Ի՞նչ ասիր, չիմացա:

ՄԱՐԹԱ.—Մորոկա, քա... Դվանացեա... սեմ... Պետր իվանիչ... Ելի Մարոկա թավիս ջոխիթ: (Բոլոր հյուրերը ծիծաղում են.)

ՓՈՓՈ.—(ծիծաղելով) Ետ ել ի՞նչ վագլախ ե:

ՄԱՐԹԱ.—Մորոկ ադին, քա... Միմդիսիա սեմ... պետլած ե... տրիցե բազնա... Բալաբանի պալկա:

ԱՍԼՈՄԵ. — Կը եմ գըա կլուխը, հա: ՄԱՐԹԱ. — Միմդիսիա դվա:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ԽԱԽՈ

ԽԱԽՈ. — (տուն վազելով հյուրասենյակի ծախս դռնից ու Մարթային ընդհատելով.) Ա՛յ, չոռ ու ցավ ու աստծու կրակ: Մաշա արեք, մաշա արեք, անմքանդնիր, (Ընդհանուր զարմանք:)

ԱՍԼՈՄԵ. — Ի՞նչ խաբար ե, ի՞նչ խաբար, բատոնո:

ԽԱԽՈ. — Ել ի՞նչ խաբար պիտի ըլի, գեղինն ինք մտնում, չուստ մոշա արեք:

ՄԱՐԹԱ. — Ինձ ըստ մեմարթլեբի, վուր չոռ ու ցավ իս ասում:

ԽԱԽՈ. — Են վուր, դուն ել սրանց խելքի հիդ իս ննդի ու վուրդիոր լոտո ըլի բաց, գլխին դուն իս ձքած: (Հեռվից աղմկալի ծայներ ե լսվում) Ա՛յ, հա, չե... Ոսեփի ծայնը՝ Եկեք, եկեք...)

ՄԱՐԹԱ. — (վեր կենալով տեղից, բարկացած:) Յ'ես ես արեդեն չիմ թողնի:

ԽԱԽՈ. — (Մարթային չանչ անելով:) ԼՇ... (Մալոմեյին:) Զիս իմանում, քա:

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ՓԱՐՍԻՂ

ՓԱՐՍԻՂ. — (Ներս ե մտնում դահլիճի աջ կողմից յեվ աջ ձեռքը շարժելով.) Ես լավ ե, յ'ես ու իմ հոքին. յ'ես կընձկընձալի ապրիմ ու դուք եստի իմ փուղերով չընդդան սարքեք:

ԽԱԽՈ. — (Մալոմեյին, մինչդեռ ամենքը շփոթվում են ու շվարվում:) Ե՞ս եյիր ուզում, ելին:

ԱՍԼՈՄԵ. — (վեր կենալով:) Գժվիլ իս, պարուն. դնւս արեք, դնւս:

ՓԱՐՍԻՂ. — Ա՛յ, յ'ես ձիդ կու շանց տամ դնւս արեքը:

ԱՍԼՈՄԵ. — Փեսա ջան, մե դնւս արա ետ մարթուն, ետ:

ԱԼԵՔՍՈՆԴՐ.—(Փարսիղինն) Ի՞նչ իս ուղում, պարուն, ետքնչ քաղաքավարութին եւ:

ՓԱՐՄԻԴ.—Թու բանը չե, պարուն, յ' ես իմ փուղն իմ ուղում ու թե կանաս դուն ել քունն ուղե, մերաշ չհամբրին, ինչ խոստացիւ ին:

ԽԱԽՈ. — (Փարսիղինն) Յ' երգն քեն չի՞ս վախենում:

ՓԱՐՄԻԴ.—Յ' ես իմ պարտկն իմ ուղում, իմ պարտկը... (Դահլիճի աջ կողմից անմիջապես լսվում եւ Ռաբի աղաղակը՝ Եկեք, եկեք...)

ՏԵՍԻԼ Ժ Զ

ՆՐԱՆՔ, ՈՍԵՓ, ԳԵՎՈ, ՍՈՒԴԵԲՆԻ-ՊՐԻՍՏԱՎ, պաշտոնական շղթայով, նրա ԳՐԱԴԻՔԸ, ԴԱՆԱՋԱՆ ՄԱՐԴԻԿ, տեղական յեվ յեվրոպական հագուստով, մտնում են դահլիճի աջ կողմից

ՈՍԵՓ.—(շարունակելով, խելացնոր նետվում եւ հյուրասենյակը) Եկեք... (Մյուսները մնում են խորքում:) Խաղացեք, խաղացեք ու իմ բեարբութենի վրա ծիծաղեցեք, քանի կանաք, (Հյուրերը շիոթված վեր են կենում իրանց տեղերից:)

ԽԱԽՈ.—(առանձին) Հիմի կի բաթմիշ ելանք:

ՍԱԼՈՄԵ.—Ես ի՞նչ խաբար եւ:

ՈՍԵՓ.—Աստուծ վուշ գիգե քու գլուխը, իմն ել հիդը: (Դառնալով դեպի Սուդեբնի Պրիստավը յեվ մյուսները:) Եկեք, վիր գրեցեք, մհրեցեք՝ տնւն, տիզ, ձազ, մհամ ու (ցույց տալով լոտոյի սեղանը) ես դազգեն ել հիդը: (Դահլիճի ծախ կողմից մտնում են ծառաները յեվ մնում են այնտեղ անշարժ մինչեվ վերջը:)

ՓԱՐՄԻԴ.—Վիր գրեցեք, վիր գրեցեք ես սահաթիս:

ԽԱԽՈ.—(առանձին) Ես ի՞նչ աստծու բարգութին եւ. (Սուդեբնի-Պրիստավը իր գրագրի ոգնությամբ սկսում ե վեր գրեք բեմի խորքում գտնված առարկաները յեվ ըստ սովորության նրանց վրա թղթեր կպցնել: Հյուրերը շվարված հավաքվում են լոտոյի սեղանի ծախ կողմը:)

ՍԱԼՈՄԵ.—(գլխին խփելով.) Վհւյ, քնոացի, Սալոմե:

ՄԱՐԹԱ. — Եսենց անպատվութինն ել ի՞նչ եւ:

ԽԱԽՈ.—(Մարթային կիսաձայն) Քա, ձենդ կտրե, եւ:

ՈՍԵՓ.—Իմ պատիվը թաղվեցավ, (Մատնացույց անելով Փարսիղին), Սրան տվեք պատիվ հորեսի դենը, սրան. լավ լուտոն սա կու սարքե ձիզ համա, սա՝ վուր շապիքը վրեսես հանից ու վուղչ կայինքս զավթից,

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(առանձին) Իմ քվիր տունը քանդե աստուծ, վուր ինձ եստի դեղիքը գցից:

ՈՍԵՓ.—(հեզնորեն.) Պարուն փեսա, գլխիտ չարեն տիսել յ'ես փուղ չունիմ քի տալու,

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(սաստիկ վիրավորված) Յ'ես քու մմսիարեն իմ թե ինչ ե, վուր վրես ծիծաղում իս ել. յ'ես քու բարեբար մարթ չիմ, պարուն:

ՈՍԵՓ.—Հային ե, հայիը, (զարկելով գլխարկը լոտոյի սեղանին) հայիը: (Գլխարկը թողնում ե այն սեղանի վրա.)

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(վերցնելով իր գլխարկը, բարկացած) Յ'ես իմ պատիվն ենդու համա չիմ ճարի, վուր եսենց անպատվին:

ՈՍԵՓ.—(դառը ծիծաղով) Հա, հա, հա... Պատիվ... հա, հա, հա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—(մոտենալով Նատոյին) Յ'ես քիզ շատ եյի սիրում, Նատաշա, ամա դուն ինքով տեսնում իս՝ յ'ես միզ չունիմ. մնաս բարով: (Գնում ե: Փարսիղը ուրախություն ե արտահայտում:)

ՈՍԵՓ.—(հարձակվելով դեպի Սալոմեն, վոր շվարված կանգնած ե աջ կողմը, ծախ ծեռքով բռնում ե նրա աջ թեզը, իսկ մյուս ծեռքով մատնացույց ե անում Ալեքսանդրին.) Մտիկ, մտիկ. այ քու չինովնիկը:

ՆԱՏՈ.—(ձախ կողմը ընկողմարանի մոտ կանգնած՝ կանչում ե,) Սաշա, Սաշա... (Ալեքսանդրը դուրս ե զնում դահլիճի աջ կողմից:)

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԱՌԱՆՑ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ՆԱՏՈ.—(շարունակելով) Սաշա... (Ընկնելով ընկողմարանի վրա, յաց ե լինում:)

ՍԱԼՈՄԵ.—(յերկու ծեռքով գլխին խփելով յեվ կիսածայն:) Գեղինը պատռե ու ինձ դեղեր տանեւ:

ՈՍԵՓ. — (Սալոմեյին:) Աճկդ գուս եկավ, (Դառնալով դեպի Փարսիղը:) Հըա, բռնէ, կշամցի: (Կարեն հանում եւ:) Բռնէ, բռնէ, (ծգում եւ Փարսիղի վրա) ես ել քունն ըլի: (Վրա յել ընկնում լոտոյի սեղանից վերցնում ելիր գլխարկը յեվ ծգում Փարսիղի վոտքի տակ:) Ես ել վուտիտ տակը հավսրե, ել ինձ գունչիչ հարկավուր չե: Խելագարի պես այս յեվ այն կողմն ելնկնում:)

ՓԱՐՄԻԴ. — (ցածր ծայնով:) Բի, բի... (Դառնալով Սուդեբնի-Պրիստավին, հետը խորհրդակցում եւ:)

ՈՍԵՓ. — (Լոտոյի սեղանից զանազան առարկաներ դեն ծգելով:) Հըա, հըա, (ծգելով վառ կանդելաբըր) աճկդ դի, հըա...

ՀՅՈՒԽԵՐԸ. — (Նույն միջոցին:) Ո՞հ, ո՞հ, խիլքեն ելավ, խիլքեն ելավ, մտիկ, մտիկ: (Նատոն շարունակ լալիս եւ, ընկերուհիները միսիթարում են նրան: Սալոմեյի սիրտը նեղանում եւ:)

ԽԱԽՈ. — (Վոր գտնվում եւ Ռսեփի աջ կողմը:) Ո՞սեփ ջան, վնարթի ջան:

ԳԵՎՈ. — (Վիաթաթվելով Ռսեփին մյուս կողմից:) Ո՞սեփ ջան, Ո՞սեփ ջան, խիլքի արի, ի՞նչ իս անում:

ՈՍԵՓ. — (Մի փոքր լուռթյունից հետո, ուշքի զալով:) Ա՞խ, ախ, ախ... Ա՞խ, Գեվո ջան, իմ խիլքն ենչախը կորավ, վուր ես քախկումը յես տուն ու տիղ սարքեցի... Զդիմցա, ախպեր ջան, չդիմցա յես ես կինքին, ու թե լավ բարեկամ իս իմը, արի, սաղսաղ ինձ գերեզմանը դի, վուր ել աշխրքի երես չտեսնիմ... Յես փշացա, գնացի, ոջախս քանդվեցավ, ու նա քովլանա հորեսի դենը, ով իր բանն ինձ վրա լավ բերե... (Դուրս եւ գնում հյուրասենյակի աջ դռնից:)

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, առանց ՈՍԵՓԻ

ՍԱԼՈՄԵ. — (ծեռքը ճակատին տանելով յեվ ընկնելով աջ կողմը, բազմոցի վրա, ցածր ծայնով յերկար հոգվոց եւ հանում:) Ա՞խ... (Մնում եւ անշարժ ընկճված դրության մեջ:)

ԳԵՎՈ. — Ափսրւս, ափսրւս իմ Ռսեփ... (ծեռքը գլխին տանելով, մնում եւ տիսրության մեջ յեվ խորասուզված:)

ՓԱՐՄԻԴ.—(վոր խորհրդակցում եր Դարչոյի հետ, նորից դպունում ե Սուդեբնի-Պրիստավլին.) Ել Բնչ իք թամաշա անում, պարուն, վիր գրեցնք գիտ մետի... (Պրիստավլը զզվանքով նայում ե Փարսիղին, հետո առաջ գալով՝ նստում ե լոտոյի սեղանի մոտ յեվ իր պաշտոնը շարունակում.)

ՄԱՐԹԱ.—(նույն միջոցին, հյուրերին.) Մինք ել Բնչ ինք շինում եստի, քա... (Յերկու ձեռքով չանչ ուղարկելով Սալոմեյի ու Խախոյի կողմը յեվ առանձին.) Լավ տարի ձիղ գա, լավ անում գուք վիր արիք. (Գնում ե դեպի դահլիճի աջ կողմը, մի քանի կանայք հետեւում են նրան, մյուսները մնում են ապշած զանազան դիրքով.)

ԽԱԽՈ.—(նայելով դեպի յերկինքը.) Վաղ եյի մեռի ես որը չեյի տեսի: (Տեսարան, զարագույրը կամաց-կամաց իշնում ե.)

Վ Ե Ր Զ

P. C. A. /
P. C. A. /

ՑԱՆԿ

1.	Խաթարաւա	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	90
2.	Գեղու	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	160
3.	Քանդած ոչախ	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	♦	



Պատ. խմբագիր՝ Սերասու
Տեխ. խմբագիր՝ Ա.Ն. Քառորդայան
Սըմագրիչ՝ Ս. Շահբարզյան
Կոնսուլ սըմագրիչ՝ Ս. Փարոսադանյան

Գլավլիտի լիազոր. Ա.-3085 Հրատ. № 4314.
Պատվիր 1188. Տիրաժ 4000. Հետ. 12½ մամ.
Թուղթ 62×94. Տպագր. 15 մամ. Մեկ մամուլում 38400 սեղ.
Հանձնված ե արտադրության 4 հոկտեմբերի 1937 թ.
Ստորագրված ե տպադրություն 19 հունվարի 1938 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035307

